ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մակրոտնտեսական իրավիճակը 4

Փոխհարաբերությունները ՀՀ պետբյուջեի հետ 10

Արտաքին հատված 13

Դրամավարկային քաղաքականություն 16

Ֆինանսական շուկա 25

ՀՀ բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները 30

Վճարահաշվարկային հարաբերություններ 34

Մակրոտնտեսական ցուցանիշները 2003 թ. հունվար – հունիսին 39

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ 48

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անդրանիկ Մամիկոնյան, Արթուր Նախշիկյան

Բանկերի վարկերի տոկոսադրույքների գնահատումը ըստ ծախսային բաղադրիչների 54

ՀՀ բանկերում իրականացված հարցման արդյունքները (2003 թ. հուլիս) 73

Անդրանիկ Գրիգորյան, Կարեն Պողոսյան, Գագիկ Աղաջանյան, Արտակ Հարությունյան

Գյուղմթերքների գնագոյացումը ՀՀ-ում (ԿԲ կողմից իրականացված փորձնական հարցման ամփոփում) 83


Արթուր Նախշիկյան, Անահիտ Թևոսյան

Գյուղատնտեսական մթերքների գնագոյացման մոդելավորում 132

Մակրոտնտեսական իրավիճակը

2003 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում տնտեսական աճի տեմպերը գերազանցել են նախորդ եռամսյակում գրանցված մակարդակը. առաջին եռամսյակում գրանցված 11.4% տնտեսական աճը կիսամյակի արդյունքներով վերաճել է 14.8%-ի: Թեև նման միտումը կանխատեսվել էր ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագրով, այնուամենայնիվ փաստացի ցուցանիշը 6.2 տոկոսային կետով գերազանցել է ծրագրով նախատեսվածը:

Կիսամյակի արդյունքներով՝ շարունակվել է արդյունաբերության և կապիտալ շինարարության ճյուղերի՝ նախորդ տարիներից նկատված աճի բարձր տեմպերի դրսևորումը, որն էլ իր հերթին էապես նպաստել է տնտեսական աճի բարձր մակարդակի ձևավորմանը և ապահովել վերջինիս 8.7 տոկոսային կետը: Կիսամյակի ընթացքում, սպառման և ներդրումների ծավալների զգալի աճով պայմանավորված, ներքին պահանջարկի աճը նույնպես բարձր է եղել և գերազանցել է դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսված ցուցանիշը 6.0 տոկոսային կետով: Այս պայմաններում թեև ժամանակահատվածի միջին սղաճի ցուցանիշը գրեթե համընկել է ծրագրված 3.1%-ին և կազմել 3.2%, այնուամենայնիվ ժամանակահատվածի վերջի դրությամբ սղաճի ցուցանիշը շեղվել է ծրագրից 3.5 տոկոսային կետով և կազմել 6.8%: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ թեև դրամավարկային քաղաքականության ծրագրով սղաճի վարքագծի համեմատաբար հարթ սցենար էր նախատեսված, այդուհանդերձ ինչպես ներքին պահանջարկի զգալի աճը, այնպես էլ սեզոնային որոշ գործոնների և հացի գների աճի ազդեցությունը նպաստել են գների՝ ծրագրվածից բարձր մակարդակի ձևավորմանը:



ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Հաշվետու ժամանակահատվածում ներքին պահանջարկի իրական աճը գերազանցել է ծրագրված մակարդակը 6 տոկոսային կետով և կազմել 15.0%: Նշվածն ամբողջությամբ պայմանավորվել է մասնավոր հատվածի սպառման և կապիտալ ներդրումների ծավալների աճով: Ի տարբերություն մասնավոր հատվածի, պետական հատվածում արձանագրվել է նույն ցուցանիշների՝ ծրագրվածից ցածր մակարդակ:

ՄԱՍՆԱՎՈՐ ՍՊԱՌՈՒՄԸ 2003 թվականի առաջին կիսամյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իրական արտահայտությամբ աճել է 13.1%-ով՝ ծրագրված 4.3%-ի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված 6.1%-ի փոխարեն: Ըստ էության, վերջին երկու տարիներին արձանագրվող բարձր տնտեսական աճի արդյունքում բնակչության եկամուտների ավելացումը որոշակի ժամանակահատվածում կարող է հանգեցնել սպառման աճի տեմպերի արագացման:

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների աճը (իրական արտահայտությամբ)
2002 – 2003 թթ. առաջին կիսամյակներում

Ցուցանիշներ	2002/2001 թ. 1-ին կիսամյակի նկատմամբ, փաստացի (%)	2003/2002 թ. 1-ին կիսամյակի նկատմամբ, փաստացի (%)	2003/2002 թ. 1-ին կիսամյակի նկատմամբ, ծրագրային (%)
Իրական ՀՆԱ	9.6	14.8	8.6
Ներքին պահանջարկ	5.8	15.0	9.0
Սպառում	4.7	14.0	6.5
Պետական	-7.3	22.5	26.7
Մասնավոր	6.1	13.1	4.3
Կապիտալ ներդրումներ	13.6	21.5	24.9
Պետական	41.9	41.4	80.5
Մասնավոր	5.2	13.5	3.9
Ներմուծում	6.8	39.9	14.1
Արտահանում	22.6	27.9	18.2

ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ 2003 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, իրական արտահայտությամբ աճել են 21.5%-ով՝ ծրագրված 24.9%-ի և նախորդ տարվա 13.6%-ի փոխարեն: Ծրագրվածից ցածր ցուցանիշի ձևավորումը պետական հատվածի կապիտալ ներդրումների թերի կատարման արդյունք էր: Վերջինս հիմնականում պայմանավորված էր ԾԻԳ-երի համար նախատեսված միջոցների մոտ 8 մլրդ դրամ և Լինսի հիմնադրամի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցների 4.5 մլրդ դրամ թերստացմամբ: Արդյունքում՝ հաշվետու ժամանակահատվածում պետական կապիտալ ծախսերի աճը 0.5 տոկոսային կետով ցածր է եղել նախորդ տարվա նույն ցուցանիշից, ծրագրված 80.5%-ի փոխարեն կազմելով 41.4%:

Պետական կապիտալ ծախսերի թերի կատարման ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա մասամբ փոխհատուցել է տնտեսության մասնավոր հատվածը, որի կողմից կատարված կապիտալ ներդրումները զգալի գերազանցել են կիսամյակի համար ծրագրված 3.9% աճի ցուցանիշը և կազմել 13.5%՝ նախորդ տարվա 5.4%-ի փոխարեն: Մասնավոր հատվածի կապիտալ ներդրումների աճի տեմպերի արագացում նույնպես կարելի էր ակնկալել, քանզի նախորդ տարիների տնտեսական աճի բարձր ցուցանիշների արդյունքում բնակչության խնայողությունների մակարդակների անընդհատ աճը պետք է որոշ ժամանակ հետո վերածվեր ներդրումների: Դրա հետ մեկտեղ, հաշվետու ժամանակահատվածում մասնավոր մերդրումների աճին աջակցեց նաև կապիտալ ներհոսքը:

ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄԸ[1] 2003 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, իրական արտահայտությամբ աճել է 22.5%-ով՝ ծրագրված 26.7%-ի փոխարեն: Նախորդ տարվա առաջին կիսամյակում արձանագրվել էր նույն ցուցանիշի 7.3%-ով նվազում, որն էլ պատճառ է եղել 2003 թվականի առաջին կիսամյակում պետական սպառման նման բարձր մակարդակի ծրագրման: Իսկ ծրագրից փաստացիի շեղումը հիմնականում արդյունք էր «Ապրանքների և ծառայությունների գնման» գծով պետական ծախսերի 27.5%-ով թերի կատարման:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾԻ արձանագրված զարգացումները էապես տարբերվել են դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսված սցենարից: Այսպես՝ ապրանքների և ծառայությունների արտահանման փաստացի աճը գերազանցել է ծրագրվածը 9.8 տոկոսային կետով և կազմել 27.9%, իսկ ներմուծման ծավալների աճն իր հերթին գերազանցել է ծրագրված մակարդակը 25.8 տոկոսային կետով և կազմել 39.9%:

Այս հաշվետու ժամանակահատվածում ևս արտաքին ապրանքաշրջանառության ծավալների մեջ մեծ կշիռ է կազմել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրերի» հումքի ներմուծումը և դրանցից պատրաստված արտադրանքի արտահանումը: Սակայն ներմուծման ծավալների աճը, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի, ևս գերազանցել է ծրագրված մակարդակը:

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ

Կիսամյակի ընթացքում արձանագրվել են նախորդ երկու տարիներին դրսևորված՝ տնտեսության ճյուղային զարգացումները:

[1] *Ամբողջական պահանջարկի՝ պետական հատվածին վերաբերող ցուցանիշները համախմբված բյուջեի՝ ՀՀ ԿԲ կողմից գնահատված ցուցանիշներն են:*

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: Արդյունաբերության ճյուղում շարունակել են դրսևորվել վերջին երկու տարիներին բնորոշ միտումները. առաջին կիսամյակի վերջին արձանագրվել է 18.6% աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 12.1% աճի փոխարեն:

Դեռևս առաջին եռամսյակում արդյունաբերության ճյուղային կառուցվածքում նկատված փոփոխությունները դրսևորվել են նաև երկրորդ եռամսյակի ընթացքում:

Մասնավորապես, կիսամյակի ընթացքում արձանագրվել է էլեկտրաէներգիայի, գազի և ջրամատակարարման արտադրության իրական ծավալների աճ, որը կիսամյակի արդյունքներով կազմել է 5.6%, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 13.3% նվազում: Մշակող արդյունաբերության թողարկման ծավալների աճը 0.6 տոկոսային կետով զիջել է նախորդ տարվա նույն ցուցանիշին՝ կազմելով 23.9%: Արդյունքում՝ վերջինիս կշիռն ընդհանուր արդյունաբերության մեջ նվազել է 1.1 տոկոսային կետով:

Որոշակի դրական տեղաշարժեր են նկատվել քիմիական արդյունաբերության և մեքենասարքավորումների արտադրության ոլորտներում: Կիսամյակի արդյունքներով՝ քիմիական արդյունաբերությունում նախորդ տարվա 58.7% նվազման փոխարեն այս տարի նվազումը կազմել է ընդամենը 18.5%, մինչդեռ գրանցվել է մեքենասարքավորումների արտադրության զգալի աճ՝ 27.5%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 24.7% նվազման փոխարեն:

Արագ տեմպերով աճ է արձանագրվել սննդի արդյունաբերությունում (աճը կազմել է 11.1%՝ նախորդ տարվա 3.7% -ի փոխարեն), մինչդեռ ոսկերչական արտադրատեսակների արտադրությունում նախորդ տարի գրանցված 142.9% աճի փոխարեն այս տարի աճը կազմել է 33.1%:

Էական աճ է գրանցվել հանքագործական արդյունաբերության ճյուղում (8.6%՝ նախորդ տարվա 2%-ի փոխարեն), որի արդյունքում ճյուղի կշիռը արդյունաբերության կառուցվածքում աճել է 2.9 տոկոսային կետով և կազմել 10.5%:

Արդյունաբերության հիմնական ճյուղերի ցուցանիշները հունվար-հունիսին, %

Արդյունաբերության ճյուղ	Տեսակարար կշիռ*		Իրական աճ (+) / նվազում (-) **	
	2002	2003	2002	2003
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	27.4	25.5	-13.3	5.6
Հանքագործական արդյունաբերություն	7.6	10.5	2.0	8.6
Մշակող արդյունաբերություն, որից՝	65.1	64.0	24.7	23.9
սննդի արդյունաբերություն	36.5	32.4	3.7	11.1
մետաղագործական արդյունաբերություն	11.9	10.6	23.8	33.7
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	5.7	6.2	142.9	33.1
մեքենաների և սարքավորումների արտադրություն	1.2	1.2	-24.7	27.5
քիմիական արդյունաբերություն	1.4	1.1	-58.7	-18.5
գործունեության այլ տեսակներ	8.4	12.5	49.5	65.5
Ամբողջ արդյունաբերություն	100	100	12.1	18.6

** Ընթացիկ տարում տեսակարար կշիռը ողջ արդյունաբերության մեջ:*

*** Տվյալ ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում:*


ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս բնակլիմայական գործոնի ազդեցությունը էական էր ճյուղի ընթացիկ զարգացումների առումով:

Չնայած առաջին եռամսյակը բավականին հաջող էր ամփոփվել ճյուղի համար (թողարկված արտադրանքի իրական աճը 6.7% էր), այնուամենայնիվ երկրորդ եռամսյակում աճի տեմպը էականորեն զսպվել է՝ պայմանավորված վեգետացիոն շրջանի հետաձգմամբ և կիսամյակի արդյունքներով կազմել 3.1%:

Չնայած 2003 թվականի առաջին հինգ ամիսներին կատարված գարնանացանի աշխատանքները 1.7%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը (ըստ նախնական տվյալների՝ հանրապետությունում կատարվել է 113 հազար հեկտար գարնանացան մշակաբույսերի ցանք՝ նախորդ տարվա 111 հազար հեկտարի փոխարեն), այնուամենայնիվ դրանց ծավալները կազմել են 2001 թվականի հունվար-մայիս ամիսներին կատարված աշխատանքների ընդամենը 70%-ը:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: Կիսամյակի ընթացքում կապիտալ շինարարության ծավալների իրական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 45.4%:

Կիսամյակի արդյունքներով՝ կապիտալ շինարարության ծավալների մեծ մասը՝ 66.4%-ը, դարձյալ իրականացվել է բնակարանային տնտեսություններում (ընդհանուր շինարարական աշխատանքների 43.9%-ը) և տրանսպորտի և կապի ոլորտներում (ընդհանուր շինարարական աշխատանքների 22.5%-ը):



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, որոշակի փոփոխություններ են նկատվել իրականացված կապիտալ շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում: Մասնավորապես՝ նվազել են ձեռնարկությունների միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները և ընդհանուրի մեջ կազմել 15.5% (նախորդ տարվա առաջին կիսամյակում կշիռը կազմել էր 29.8 %): 7.4 տոկոսային կետով աճել է նաև մարդասիրական օգնության՝ հիմնականում Լինսի հիմնադրամի միջոցների կշիռը և կազմել ընդհանուր ֆինանսավորման 27.1 %-ը: Իսկ ընդհանուր կապիտալ շինարարության ֆինանսավորման աղբյուրներում բնակչության միջոցների հաշվին կատարված կապիտալ ծախսերի կշիռն ամենաբարձրն է՝ 48%՝ նախորդ տարվա 35.4%-ի փոխարեն:

Արդյունքում, ըստ կիսամյակի արդյունքների, մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորվել է կապիտալ շինարարության 63.5 %-ը, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում մասնավոր հատվածի մասնաբաժինը ընդհանուր ֆինանսավորման մեջ կազմել է 65.3%:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Ճյուղում գրանցված 11.7 % աճը հիմնականում տեղի է ունեցել մանրածախ ապրանքաշրջանառության՝ 12.4 %-ով և բնակչությանը մատուցված ծառայությունների՝ 9.8%-ով աճի հաշվին: Կիսամյակի արդյունքներով՝ զգալի է եղել հատկապես բեռնափոխադրումների ծավալի աճը, որը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ կազմել է 12.7%՝ հիմնականում պայմանավորված երկաթուղային և խողովակաշարային տրանսպորտով իրականացված բեռնափոխադրումների ծավալների՝ համապատասխանաբար 20.8 % և 50.9% աճով:

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

2003 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով սահմանվել էին սղաճի՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ 3% և միջին տարեկան 3.2% մակարդակներ: Ընդ որում, նշված ցուցանիշների 3.3 և 3.1 տոկոսային կետերը նախատեսված էր ապահովել առաջին կիսամյակում:


Ըստ փաստացի արդյունքների՝ կիսամյակի վերջի դրությամբ սղաճը գերազանցել է ծրագրված մակարդակը՝ կազմելով 6.8%, իսկ միջին կիսամյակային սղաճը՝ 3.2%, գրեթե չի տարբերվել ծրագրված մակարդակից:

Սղաճի նման բարձր մակարդակը բացատրվում է մի քանի գործոններով: Հատկապես էական է հացի և հացամթերքի գների բարձրացումը, ինչպես նաև վեգետացիոն շրջանի հետաձգումը:


Դիտարկելով գների փոփոխությունը սպառողական զամբյուղի հիմնական խմբերի՝ պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային և վճարովի ծառայությունների խմբերի կտրվածքով՝ նկատենք, որ կիսամյակի սղաճի վրա մեծ ազդեցություն է ունեցել պարենային ապրանքների գների աճը՝ 11.2%, որը նախորդ երեք տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ ամենաբարձրն է եղել:

2003 թ. (2002 թ. դեկտ. = 100)	ՍԳԻ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	Ոչ պարենային ապրանքներ	Վճարովի ծառայություններ
Հունվար	104.1	106.7	100.4	100.4
Փետրվար	102.5	104.2	100.1	100.5
Մարտ	102.1	103.3	100.4	100.4
Ապրիլ	104.2	106.7	100.3	100.7
Մայիս	105.4	108.7	99.9	101.3
Հունիս	106.8	111.2	99.4	101.6
I կիսամյակ	106.8	111.2	99.4	101.6

Այս խմբում գների աճը շարունակվել է ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ եռամսյակում: Նման միտում ունեն նաև վճարովի ծառայությունների գները, որոնց խմբում կիսամյակի վերջի դրությամբ արձանագրվել է 1.6% սղաճ: Գնանկման միտում է նկատվել միայն ոչ պարենային ապրանքների խմբում: Չնայած մինչև ապրիլ եղել է գնաճ, այնուամենայնիվ կիսամյակի վերջում արձանագրվել է -0.6% գնանկում:



Ինչպես ցույց են տալիս բնականոն սղաճի հաշվարկները, տարվա առաջին կիսամյակի վերջի դրությամբ գրանցված 6.8% սղաճի 3.4 տոկոսային կետը պայմանավորվել է սեզոնային գյուղատնտեսական ապրանքների, ինչպես նաև պետական կարգավորվող և լրիվ կամ մասնակի մենաշնորհային գների աճով: Սղաճին նույնքան մասնակցություն է ունեցել նաև բնականոն սղաճը, որը կազմել է 3.4%:



ՀՆԱ դեֆլյատորը 2003 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրեթե համընկել է միջին սղաճի ցուցանիշին և կազմել 103.1%, որը հատկանշական է նրանով, որ գնային գործոնով պայմանավորված անվանական եկամուտների աճը համընկել է դրանց սպառողական արժեքի արժեզրկմանը: Դեֆլյատորի ձևավորված մակարդակը հիմնականում արդյունաբերական արտադրանքի գների 3.9%-ով և գյուղմթերքների գների 5.3% -ով աճի արդյունք է:

Ինչպես նախորդ երկու տարիների ընթացքում, այս տարի ևս առաջին կիսամյակում բոլոր ճյուղերում արձանագրվել է սղաճ, մինչդեռ 2000 թվականին նկատվել էին գնանկման միտումներ:

Համաձայն ՀՀ մարզերում իրականացված դիտարկումների՝ 2003 թվականի առաջին կիսամյակում Երևանում սղաճը կազմել է 106.3%, ամենաբարձր սղաճը արձանագրվել է Եղեգնաձորում՝ 112.7%, իսկ ամենացածրը՝ Հրազդանում և Չարենցավանում՝ 104.9%:

ԱՇԽԱՏՈՒԺԻ ՇՈՒԿԱ

Չնայած տնտեսական աճի գրանցված բարձր ցուցանիշին, աշխատուժի շուկայում էական տեղաշարժեր չեն արձանագրվել: Օրինակ՝ գործազրկությունը, ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2003 թվականի մայիսին կազմել է 9.1%, որը նույնն է, ինչ մարտին գրանցված ցուցանիշը, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ցուցանիշը նվազել է 0.5 տոկոսային կետով: 2003 թվականի մայիսին 1 թափուր տեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 185 չզբաղված մարդ՝ նախորդ տարվա 162-ի փոխարեն:


Որոշակի փոփոխություն է արձանագրվել պաշտոնապես գրանցված գործազուրկների տարիքային և կրթական խմբերում: Այսպես, 2002 թ. հունիսի համեմատ 2003 թ. հունիսին 0.8 տոկոսային կետով ավելացել է 23 - 30 տարեկան գործազուրկների տեսակարար կշիռը, փոխարենը 0.3 տոկոսային կետով նվազել է 18 - 22 տարեկանների տեսակարար կշիռը: Աճ է նկատվել միջնակարգ մասնագիտական (0.3%) և բարձրագույն (0.2%) կրթությամբ գործազուրկների թվաքանակում:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 19.4%-ով ավելացել է է զբաղվածների միջին անվանական աշխատավարձը և կազմել 29977 դրամ: Ընդ որում, 2003 թվականի առաջին կիսամյակում արտադրողականության աճը գերազանցել է միջին իրական աշխատավարձի աճը, որոնք համապատասխանաբար կազմել են՝ 19.04% և 14.9%[2]: Նշենք նաև, որ աշխատավարձի ամենացածր մակարդակը 2003 թվականի մայիսի դրությամբ դեռևս մշակույթի ոլորտինն է. կազմել է տնտեսության միջին աշխատավարձի 44%-ը:

[2] *Արտադրողականությունը և միջին ամսական աշխատավարձերի իրական աճը հաշվարկվել է ՀՀ ԿԲ կողմից՝ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած ցուցանիշների հիման վրա:*

2003 թվականի առաջին կիսամյակի հարկաբյուջետային քաղաքականությունն առանձնացել է հարկերի հավաքագրման գործընթացում արձանագրված դրական արդյունքներով, որի պայմաններում հաջողվել է ապահովել կիսամյակի համար նախատեսված հարկերի ցուցանիշը: Հարկերը կազմել են տարեկան ծրագրվածի 45.4%-ը[1], պահպանելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված համամասնությունը: Սակայն պետական բյուջեի դրամաշնորհների, մասնավորապես Լինսի հիմնադրամի միջոցների թերստացմամբ, կապիտալ ծախսերի թերակատարմամբ, ինչպես նաև Գանձապետարանի միասնական հաշվում կուտակումների ձևավորմամբ պայմանավորված՝ բյուջեի ծախսերի և պակասուրդի փաստացի ցուցանիշները շեղվել են ծրագրայինից:

Նշվածի հետևանքով կիսամյակում ձևավորվել է հարկաբյուջետային ազդակի 02.% ընդլայնող ցուցանիշ՝ ծրագրված 1.3% ընդլայնող ազդեցության փոխարեն: Ընդ որում, գրանցվել է եկամուտների 0.7% ընդլայնող ազդակի ցուցանիշ՝ ծրագրված 0.5% զսպողականի փոխարեն, իսկ ծախսերի գծով՝ 0.5% զսպող ազդակ՝ ծրագրված 1.8% ընդլայնողականի փոխարեն:




Երկրորդ եռամսյակում պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են եռամսյակային ծրագրի[2] 97%-ը, իսկ կիսամյակի կտրվածքով՝ 97.1%-ը: Շեղումը հիմնականում կապված է Լինսի հիմնադրամի միջոցների թերստացման հետ՝ կիսամյակի փաստացին կազմել է ծրագրվածի 76%-ը: Ընդ որում, հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով եռամսյակի ծրագիրը կատարվել է 102.2%-ով (ծրագրային 53404 մլն դրամի փոխարեն հավաքագրվել է 54543 մլն դրամի եկամուտ), իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտների գծով մուտքերը մոտ երեք անգամ գերազանցել են եռամսյակային ծրագիրը: Կիսամյակի ընթացքում հարկերի փաստացի մակարդակը կազմել է ծրագրվածի 101%-ը՝ պայմանավորված նաև հարկային վարչարարության բարելավմամբ, որը դրական նախադրյալ է ստեղծում նաև տարեկան ծրագրի կատարման համար:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2003 թվականի երկրորդ եռամսյակում պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհներն ավելացել են 7.8%-ով. հարկերն ու տուրքերը՝ 10.9%-ով: Առաջին կիսամյակում նշված ցուցանիշների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ համապատասխանաբար կազմել է 9.0% և 12.2%: Եռամսյակի տվյալներով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ հարկային եկամուտների կառուցվածքում 7%-ով աճել են անուղղակի հարկերը՝ կազմելով հարկերի 67%-ը, իսկ ուղղակի հարկերը՝ 5.8%-ով և կազմել են հարկերի 15.2%-ը:


[1] Հաշվետվությունում օգտագործված են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ ԿԲ ներկայացված՝ պետբյուջեի 2003 թ. առաջին և երկրորդ եռամսյակների փաստացի (նախնական) և Կառավարության որոշմամբ հաստատված՝ 2003 թ. եռամսյակային համամասնությունները:

[2] 2003 թվականի երկրորդ եռամսյակի ծրագիրը ճշգրտված է:

Հարկերի հավաքագրման դրական միտումներին զուգահեռ փոքր-ինչ մեղմվել է նաև նախորդ տարիներին բնորոշ հավաքագրման անհամաչափությունը: Այսպես, երկրորդ եռամսյակի ընթացքում միջին ամսական հարկային եկամուտների 34.7%-ը բաժին է ընկել ամսվա վերջին օրվան, իսկ նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել է 37.3%:




Ըստ կիսամյակի արդյունքների՝ պետբյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 9%-ով, և թերակատարվել է կիսամյակի ծրագիրը 10.5%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը գերակատարվել են 3%-ով, որտեղ էական գերակատարում արձանագրվել է «Ապրանքներ և ծառայություններ» հոդվածի գծով՝ կազմելով 10%, իսկ նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ աճը կազմել է 52%: Նշված հոդվածի կառուցվածքում նկատվել են դրական տեղաշարժեր. առաջանցիկ աճել են կրթության (162%) և առողջապահության (57%) ծախսերը, որը բխում է Կառավարության միջին ժամկետ ծախսերի ծրագրում նախանշված ծախսային քաղաքականության գերակայություններից: Հատկանշական է նաև պետբյուջեի լրահատկացումների 52%-ով աճը, որը վկայում է, որ բյուջեն դեռևս նշանակալի դեր է խաղում տնտեսության վնասի ծածկմանն ուղղված միջոցառումներում: Եռամսյակի ծախսերը կազմել են ծրագրվածի 84.5%-ը, ընդ որում՝ ընթացիկ ծախսերը ծրագրայինի համեմատ կատարվել են 105%-ով, զուտ վարկավորումը՝ 194%-ով, իսկ կապիտալ ծախսերը՝ 51.8%-ով: Վերջին ծախսատեսակի գծով առկա շեղումը պայմանավորված է արտաքին ֆինանսավորման ՕԻԳ-երի, Լինսի դրամաշնորհների թերստացմամբ և ներքին կապիտալ ծախսերի թերակատարմամբ (կիսամյակի փաստացին կազմել է 29 մլրդ դրամ՝ ծրագրված 47.7 մլրդ դրամի փոխարեն): Արդյունքում շեղվել են նաև կիսամյակի կապիտալ ծախսերը՝ կազմելով ծրագրվածի 60.8%-ը:



2003 թվականի երկրորդ եռամսյակում, ինչպես և առաջինում, զգալի միջոցներ են կուտակվել ՀՀ գանձապետարանի միասնական հաշվում, որոնց միջին մեծությունը կազմել է մոտ 14.6 մլրդ դրամ (պայմանավորված ինչպես հարկերի կուտակմամբ, այնպես էլ ԿԲՎ 12.0 մլրդ դրամ վարկի ստացմամբ): Վերջինս գերազանցել է ինչպես նախորդ տարվա նույն ժամանակահատվածում առկա միասնական հաշվի միջոցների միջին մակարդակը՝ 2.3 մլրդ դրամը, այնպես էլ առաջին եռամսյակի մակարդակը, այն է՝ 6.4 մլրդ դրամ: Գանձապետական հաշվի կուտակումները կազմել են եռամսյակի միջին ամսական հարկային եկամուտների 80.3%-ը՝ առաջին եռամսյակի նույն ցուցանիշի 42.7%-ի փոխարեն: Ընդ որում, եռամսյակի վերջի դրությամբ միասնական հաշիվը կազմել է 24.1 մլրդ դրամ:

Այսպիսով, կիսամյակի, մասնավորապես երկրորդ եռամսյակի ընթացքում, բյուջեի միջոցների նշված կուտակումների պայմաններում բանկային իրացվելիության կառավարման նպատակով ՀՀ կենտրոնական բանկը վարել է ընդլայնողական քաղաքականություն:



Պետբյուջեի պակասուրդը երկրորդ եռամսյակում կազմել է 6.3 մլրդ դրամ՝ ծրագրված 17.6 մլրդ դրամի փոխարեն: Շեղումը հիմնականում բացատրվում է «Կապիտալ ծախսեր և զուտ վարկավորում» հոդվածի ծրագրային ցուցանիշի 16.0 մլրդ դրամով թերակատարմամբ և ընթացիկ ծախսերի 2.7 մլրդ դրամով գերակատարմամբ: Բյուջեի կանխիկ պակասուրդը[3] կազմել է 5.3 մլրդ դրամ, որը ներառում է վիճակագրական շեղումը՝ 7.9 մլրդ դրամ (որպես բացված ֆինանսավորման և փաստացի ծախսերի տարբերություն) և նախորդ տարիների պարտքերի մարումը՝ 6.8 մլրդ դրամ (վերջինս շեղվել է ծրագրից մոտ 5.0 մլրդ դրամով, քանի որ իրականում նշված գումարի չափով պարտքային պարտավորություն չի եղել): Պակասուրդի ֆինանսավորման մեջ -11.3 մլրդ դրամ կազմել է ներքին ֆինանսավորումը՝ ծրագրված 7.6 մլրդ դրամի փոխարեն, հիմնականում պայմանավորված միասնական հաշվում միջոցների կուտակմամբ, և 16.6 մլրդ դրամ՝ արտաքին ֆինանսավորումը:

Կիսամյակի ընթացքում հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների փոխհարաբերությունների բարեհաջող ընթացքը նպաստել է պետական արժեթղթերի տոկոսադրույքների նվազմանը (երկրորդ եռամսյակում կազմել է 14%՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակի 15.5%-ի փոխարեն):

Առաջին կիսամյակում բյուջեի կանխիկ պակասուրդը կազմել է 4.3 մլրդ դրամ: Ընդ որում, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է 19.0 մլրդ դրամ, իսկ ներքին աղբյուրների հաշվին՝ -14.7 մլրդ դրամ:

Ամփոփելով նշենք, որ երկրորդ եռամսյակում Գանձապետարանի միասնական հաշվում պետբյուջեի միջոցների նշված կուտակումները երրորդ եռամսյակում ծախսելու պարագայում հարկաբյուջետային քաղաքականությունը կունենա ընդլայնող ազդեցություն:


[3] *Կանխիկ պակասուրդը ներառում է եկամուտների և ծախսերի տարբերությունը, նախորդ տարիների պարտքերի մարումը և վիճակագրական շեղումը:*

2003 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով առաջին կիսամյակում նախատեսվել էր վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի աճ, որը հիմնականում պայմանավորված էր լինելու առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճով: Նախատեսվել էին ապրանքների արտահանման ու ներմուծման գրեթե հավասար աճի տեմպեր, որի դեպքում առևտրի բացասական հաշվեկշռի աճը կազմելու էր 16.4%: Ըստ ծրագրի՝ արտահանման աճը առաջին կիսամյակում կազմելու էր 20%, իսկ ներմուծման աճը՝ 19%: Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների լավացման պայմաններում նախատեսվել էր ընթացիկ հաշվի պակասուրդի աճ 25%-ով և ՀՆԱ-ում 8.4% տեսակարար կշիռ:

Իրականում 2003 թ. առաջին կիսամյակում ապրանքների արտահանումը (կրեդիտ) կազմել է 317 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 89 մլն ԱՄՆ դոլարով (39%-ով): Ապրանքների արտահանման զգալի աճի կեսից ավելին ապահովվել է «Թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, մետաղներ ու դրանցից իրեր» ապրանքախմբի հաշվին, որի արտահանումն աճել է 50 մլն ԱՄՆ դոլարով: Բացի նշված ապրանքախմբից, արտահանման կառուցվածքում զգալի աճի միտում է ունեցել «Ոչ թանկարժեք մետաղներ ու դրանցից իրեր» ապրանքախումբը, որի արտահանման ծավալներն աճել են 22 մլն ԱՄՆ դոլարով: «Սարքեր և ապարատներ» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի արտահանման ծավալները համապատասխանաբար ավելացել են 10 մլն ԱՄՆ դոլարով և 4 մլն ԱՄՆ դոլարով:

Նշված ժամանակահատվածում ապրանքների ներմուծումը (դեբետ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 176 մլն ԱՄՆ դոլարով (49%-ով) և կազմել 538 մլն ԱՄՆ դոլար: Ներմուծման աննախադեպ աճը պայմանավորված է դրանում ընդգրկված բոլոր ապրանքախմբերի (բացառությամբ «Բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբի) ներմուծման ծավալների աճով: Առավել մեծ աճի միտում են ունեցել «Թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, մետաղներ ու դրանցից իրեր» և «Ոչ թանկարժեք մետաղներ ու դրանցից իրեր» ապրանքախմբերը, որոնց ներմուծման ծավալները համապատասխանաբար ավելացել են 103 մլն ԱՄՆ դոլարով և 17 մլն ԱՄՆ դոլարով: Իսկ «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբի ներմուծման ծավալն ավելացել է 19 մլն ԱՄՆ դոլարով:

Ընդ որում, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, արտահանումն աճել է 37%-ով, իսկ ներմուծման աճը կազմել է 26%:




Արտաքին առևտրի նման պայմաններում առևտրային հաշվեկշռի պակասուրդն աճել է շուրջ 109 մլն ԱՄՆ դոլարով (60%-ով) և կազմել 290 մլն ԱՄՆ դոլար:


Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների՝ ծրագրային ցուցանիշներից շեղումներ գրեթե չեն արձանագրվել, միայն «Եկամուտներ» հոդվածի աճը գերազանցել է ծրագրված մակարդակը 6 մլն ԱՄՆ դոլարով: Մասնավորապես, ծառայությունների հաշվեկշիռը լավացել է 3 մլն ԱՄՆ դոլարով: «Եկամուտներ» հոդվածը պահպանել է նախորդ տարվա մակարդակը, մինչդեռ ընթացիկ տրանսֆերտներն ավելացել են 7 մլն ԱՄՆ դոլարով: Արդյունքում, ընթացիկ հաշվի պակասուրդը 2003 թ. առաջին կիսամյակում խորացել է 77 մլն ԱՄՆ դոլարով (130%-ով) և կազմել է 136 մլն ԱՄՆ դոլար: Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2003 թ. առաջին կիսամյակում կազմել է 15%: Առաջին կիսամյակում ադամանդի ներմուծման ծավալների աճը զգալիորեն գերազանցել է արտահանման ծավալների աճը, որը ենթադրում է, որ երկրորդ կիսամյակում տեղի կունենա հակառակ գործընթացը, որն ընթացիկ հաշվի վրա կունենա դրական ազդեցություն:

Կիսամյակի ընթացքում շարունակվել են դեռևս առաջին եռամսյակում նկատված միտումները. աճել են կապիտալ և ֆինանսական հաշվով գրանցված ֆինանսական զուտ հոսքերը՝ կապիտալ տրանսֆերտների և պետական վարկերի աճի հետևանքով: Բացի այդ, ընթացիկ հաշվի ֆինանսավորմանը զգալիորեն մասնակցել է մասնավոր հատվածը: Առաջին կիսամյակում կապիտալ ներհոսքը գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը և հնարավորություն է տվել ԿԲ-ին ու առևտրային բանկերին՝ համալրելու արտաքին ակտիվները:

Առևտրային բանկերի ՁԱԱ-ը եռամսյակի ընթացքում աճել են 10 մլն ԱՄՆ դոլարով՝ հիմնականում առևտրային բանկերի արտարժույթով ավանդների ծավալների աճի հաշվին: Ռեզիդենտների արտարժույթով ավանդները նախորդ եռամսյակի համեմատությամբ ավելացել են մոտ 7 մլն ԱՄՆ դոլարով:



Կենտրոնական բանկի ՁԱԱ-ը առաջին կիսամյակում, նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել են 2 մլն ԱՄՆ դոլարով, ընդ որում, ի տարբերություն նախորդ տարիների, այս տարի ՁԱԱ սեզոնային կրճատումը բավական մեղմ է եղել: Իսկ երկրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատությամբ, ՁԱԱ-ը աճել են 22 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 221 մլն ԱՄՆ դոլար: Կենտրոնական բանկի ՁԱԱ աճը հիմնականում պայմանավորված էր ԿԲՎ վարկային ծրագրի հերթական մասնաբաժնի 21 մլն դոլարի և Լինսի հիմնադրամից 13 մլն ԱՄՆ դոլար միջոցների ստացմամբ:



Եռամսյակի ընթացքում փողի բազայի աստիճանական ավելացմանը զուգընթաց բանկերի թղթակցային հաշիվներում առկա է եղել ավելցուկ իրացվելիություն, որը, սակայն, փոխարժեքի վրա էական ճնշում չի առաջացրել: Երկրորդ եռամսյակում անվանական փոխարժեքն ունեցել է երկակի վարքագիծ. սկզբում բավական արագ տեմպերով արժեքավորվել է, այնուհետև եռամսյակի կեսից դրսևորել է համեմատաբար կայուն վարքագիծ: Կիսամյակի ընթացքում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 586.5 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեզրկվելով 2.3%-ով: Իսկ երկրորդ եռամսյակի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 586.4 դրամ՝ պահպանելով առաջին եռամսյակի մակարդակը: Ավելցուկ իրացվելիության և ընթացիկ հաշվի զգալի պակասուրդի առկայության պայմաններում անվանական փոխարժեքի կայուն վարքագիծը մեկ անգամ ևս վկայում է մեծածավալ կապիտալ ներհոսքի մասին:

2003 թ. առաջին կիսամյակում իրական փոխարժեքն արժեզրկվել է 8.7%-ով՝ պայմանավորված Հայաստանի սղաճի համեմատ գործընկեր երկրների սղաճի բարձր մակարդակով: Հայաստանում միջին կիսամյակային սղաճը կազմել է 3.4%, մինչդեռ գործընկեր երկրների միջին կշռված սղաճը՝ 9.8%: ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքն արժեզրկվել է 2.3%-ով:

Դրամավարկային քաղաքականություն[1]

Դրամավարկային քաղաքականության երկրորդ եռամսյակի ծրագիրը և հիմնական խնդիրները

2003 թվականի երկրորդ եռամսյակի դրամավարկային ծրագրի հիմքում ՀՀ ԿԲ կողմից փողի պահանջարկի վերաբերյալ արված գնահատումների արդյունքներն էին, որոնք արտահայտում էին դրա վարքագծի սեզոնային դրսևորումները, ինչպես նաև ԿԲ գլխավոր նպատակի՝ սղաճի ապահովման գործընթացում փողի առաջարկի կառավարման հիմնական ուղղվածությունը: Այսինքն, ըստ փողի պահանջարկի եռամսյակային տատանումների սեզոնայնության, որը հիմնականում կրում է համախառն պահանջարկի սեզոնայնության ազդեցությունը, առաջին եռամսյակի մեծածավալ անկումից հետո հետագա եռամսյակներում դիտվում են աճի միտումներ: Հետևաբար, Դրամավարկային քաղաքականության ծրագրով երկրորդ եռամսյակում նախատեսվում էր փողի և դրամային զանգվածների՝ համապատասխանաբար 3.6% և 4.8%, իսկ փողի բազայի՝ 3.2% աճ: Այդուհանդերձ, հատկապես վերջին տարիներին, համախառն, հետևաբար և փողի պահանջարկների աճի տեմպերը տարվա առաջին կեսին հիմնականում զիջում են երկրորդ կեսի տեմպերին, երբ ակնկալվող արտաքին ֆինանսական մեծածավալ ներհոսքի գերակշիռ բաժինը ստացվում է երկրորդ կիսամյակում: Ուստի հունվար-փետրվար ժամանակահատվածում փողի ագրեգատների կտրուկ անկումից հետո մինչև հունիսի վերջ դրսևորվելիք աճի միտումները դեռևս չեն վերականգնի տարեվերջի մակարդակները:

Նման դրամավարկային քաղաքականության իրագործման պայմաններում, հաշվի առնելով նաև առաջին եռամսյակում փողի առաջարկի մեծածավալ կրճատման լագային ազդեցությունը գների վրա՝ երկրորդ եռամսյակում ակնկալվում էր գների 1% անկում և կիսամյակի արդյունքներով՝ սղաճի 3.3% մակարդակ:

Կիրառվելիք գործիքակազմը, չնայած փողի առաջարկի ընդլայնմանն ուղղված դրամավարկային քաղաքականության ծրագրային ուղղվածությանը, ներառում էր ներքաշող դրամավարկային գործիքներ, քանի որ այդ ընթացքում սպասվում էին պետբյուջեի միջոցով մեծ ծավալի արտարժութային հոսքեր: Մասնավորապես՝ առաջին եռամսյակից տեղափոխված ԿԲՎ-5-ի հերթական մասնաբաժինը (11.7 մլրդ դրամ), Լիճսի հիմնադրամի և «Պարենային ապահովության ծրագրի» դրամաշնորհները (ընդհանուր 6.7 մլրդ դրամ), որոնք չեզոքացվելու էին ընդամենը 3.4 մլրդ դրամի արտաքին պարտքի սպասարկման գումարով:

Դրամավարկային քաղաքականության զարգացումները

ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Տարեսկզբի կտրուկ անկումից հետո երկրորդ եռամսյակի ընթացքում դրսևորվել է փողի պահանջարկի զգալի աճ՝ հանգեցնելով ժամանակաշրջանի վերջի դրությամբ ծրագրված մակարդակների գերազանցման:

Այսպես, փողի զանգվածը եռամսյակի ընթացքում աճել է 6.3%-ով կամ 11.5 մլրդ դրամով, իսկ դրամային զանգվածը՝ 7.0%-ով կամ 7.5 մլրդ դրամով: Ժամկետի միջին ցուցանիշների շեղումները ծրագրից ձևավորվել էին առաջին եռամսյակում, երբ գրանցվել էր սպասվածից բարձր տնտեսական աճ, և Կենտրոնական բանկը, դրան համապատասխան, նախատեսվածից քիչ էր կրճատել փողի առաջարկը: Արդյունքում՝ ձևավորվել է միջին եռամսյակային բարձր ցուցանիշ, ինչի հետևանքով, ժամանակահատվածի վերջի դրությամբ փողի ագրեգատների՝ երկրորդ եռամսյակում դրսևորված աճի բավականին բարձր տեմպերի[2] պարագայում անգամ, դիտվել է միջին եռամսյակային ցուցանիշի նվազում: Կիսամյակային

[1] Դրամավարկային ամփոփ ցուցանիշների հաշվարկում ներառված են այն բանկերի տվյալները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] Փողի բազայի՝ ծրագրային ցուցանիշի համեմատ արձանագրված ցածր մակարդակը, որպես կանոն, եռամսյակի վերջին օրերին իրականացված հարկահավաքման գործընթացի հետևանք է:

կտրվածքով միտումներն արդեն համընկել են ծրագրվածին հատկապես փողի բազայի գծով՝ 5.2% աճ՝ 5.6%-ի փոխարեն: Ինչ վերաբերում է փողի և դրամային զանգվածների ծրագրային միտումներից շեղումներին, ապա դա հիմնականում բացատրվում է վիճակագրական ճշգրտմամբ, այն է՝ դրամավարկային ամփոփ ցուցանիշների հաշվարկից մեկ բանկի տվյալների զտում:


Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ (ըստ 2003 թ. ֆինանսական ծրագրի)

Ցուցանիշներ	II եռամսյակ		I կիսամյակ	
	Ծրագրային	*Փաստացի*	*Ծրագրային*	*Փաստացի*
Փողի զանգվածի (M2X, ժամ. վերջ) աճի տեմպը, %	3.6	6.3	-2.2	-4.2
Փողի զանգվածի (M2X, ժամ. միջին) աճի տեմպը, %	2..5	1.1	8.7	2.3
Փողի շրջապտույտի արագություն (ժամ. միջին)	1.79	1.9	1.79	1.9
Դրամային զանգվածի (M2, ժամ. վերջ) աճի տեմպը, %	4.8	7.0	-7.7	-8.1
Դրամային զանգվածի (M2, ժամ. միջին) աճի տեմպը, %	2.9	-0.2	8.3	6.2
Դրամի շրջապտույտի արագություն (ժամ. միջին)	3.16	3.27	3.16	3.27
Փողի բազայի (ժամ. վերջ) աճի տեմպը, %	3.2	2.2	-12	-14.3
Փողի բազայի (ժամ. միջին) աճի տեմպը, %	2.4	-1.7	5.6	5.2
Փողի բազմարկիչ (ժամ. միջին)	2..05	1.93	2..05	1.93
Դրամային բազմարկիչ (ժամ. միջին)	1.14	1.13	1.14	1.13

Նշենք նաև, որ փողի բազայի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 28.2%, ինչը գրանցված 14.8% իրական աճի և 3.2% սղաճի պարագայում (ծրագրվածը՝ համապատասխանաբար 8.6% և 3.1%) բավականին բարձր ցուցանիշ է և վկայում է ԿԲ կողմից իրականացված առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության մասին:

Երկրորդ եռամսյակում փողի պահանջարկի աճը դրսևորվել է առանց բացառության փողի ագրեգատների բոլոր բաղադրատարրերի գծով: Այսպես, առաջին եռամսյակի, հատկապես հունվարի կտրուկ նվազումից հետո 1.7 մլրդ դրամով ավելացել է բանկային համակարգից դուրս կանխիկը: Ընդ որում, ըստ ամիսների կանխիկի խոշոր աճ է դիտվել մայիսին՝ 3.0 մլրդ դրամ, որը պայմանավորված է եղել պետբյուջեի ծախսողական ռեժիմով, այն դեպքում, երբ մյուս երկու ամիսներին պետբյուջե ստացված մուտքերի մի մասը խնայվել է՝ կրճատելով նաև շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը (ապրիլին՝ 911 մլն, իսկ հունիսին՝ 413 մլն դրամով):

Դրամով և արտարժույթով ավանդները՝ ըստ ժամկետայնության




Եռամսյակի ընթացքում արձանագրվել է բանկերի կողմից ներգրավված ավանդների մեծածավալ աճ՝ 9.8 մլրդ դրամի, որից 5.8 մլրդ դրամը բաժին է ընկել դրամային ավանդներին: Ավանդների նման աճին ևս մեծապես նպաստել է արձանագրված բարձր տնտեսական աճը:


Ավանդների աճի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել ցպահանջ ավանդները՝ 7.5 մլրդ դրամ կամ ընդհանուրի 77%-ը: Ընդ որում, դրանք գրեթե հավասարաչափ են բաշխվել դրամով և արտարժույթով ավանդների միջև, ինչպես նաև հիմնականում ներգրավվել մասնավոր հատվածից: Սակայն, եթե դրամով ցպահանջ ավանդները հիմնականում ստացվել են մասնավոր ձեռնարկություններից՝ 2.7 մլրդ դրամ, ապա արտարժույթով ներգրավված ցպահանջ ավանդների կազմում մեծ բաժին են

ունեցել տնային տնտեսությունների միջոցները՝ 2.9 մլրդ դրամ: Այլ է ժամկետային ավանդների՝ ըստ մասնավոր և պետական հատվածների ուղղվածության պատկերը, որում գերակշռել են արդեն տնային տնտեսություններից ներգրավված միջոցները՝ ավելի քան 2.3 մլրդ դրամ, որից միայն 2.0 մլրդ դրամը՝ արտարժույթով: Այս միտումների ձևավորմանը մեծապես նպաստել է Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ծախսման ազդեցությամբ գրանցված բարձր տնտեսական աճի արդյունքում բնակչության եկամուտների, հետևաբար և խնայողությունների աճը, որը, ազգային արժույթի նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների և բնակչության վստահության զգալի բարձրացման պարագայում, ներհոսել է բանկային համակարգ:

Եռամսյակի ընթացքում աճել են նաև առևտրային բանկերում ոչ ռեզիդենտների ավանդները՝ 4.1 մլրդ դրամով, որից միայն 3.7 մլրդ դրամը՝ արտարժույթով:



Եռամսյակի ընթացքում դրամային ավանդների առավել արագ տեմպերով աճի արդյունքում մեծացել է փողի զանգվածում դրանց տեսակարար կշիռը՝ 17.3%-ից հասնելով 19.2%-ի, ինչը տեղի է ունեցել շրջանառությունում գտնվող կանխիկի տեսակարար կշռի 1.6 (40.9%-ից 39.4%-ի) և արտարժութային ավանդների տեսակարար կշռի 0.4 (41.8%-ից 41.4%-ի) տոկոսային կետերով նվազման հաշվին:




Հաշվի առնելով գործարար ակտիվության աճի սեզոնայնությունը և փողի պահանջարկի վրա տարեսկզբի տնտեսական դանդաղ զարգացման լագային ազդեցության դրսևորումները, այն է՝ առաջին եռամսյակի ընթացքում արձանագրված տնտեսական անկումը երկրորդ եռամսյակում որոշ չափով կզսպեր փողի պահանջարկի աճը, եռամսյակի համար նախատեսվում էր փողի և դրամի շրջապտույտի արագությունների աճ, որը և փաստացի տեղի է ունեցել: Հիմնականում պահպանելով ծրագրված միտումները՝ փողի և դրամի շրջապտույտի արագությունների միջին եռամսյակային ցուցանիշները գերազանցել են նախատեսված մակարդակները, քանի որ, ինչպես վերը նշվել է, տնտեսական իրական աճը զգալի գերազանցել է նախատեսված տեմպերը, իսկ փողի և դրամային զանգվածների միջին եռամսյակային աճերը զիջել են ծրագրված տեմպերը:

Նշված շեղումները բացատրվում են նաև առաջին եռամսյակի համեմատ կտրուկ աճով. փողի շրջապտույտի արագությունը[3] 1.69-ից հասել է 1.9-ի, իսկ դրամի շրջապտույտի արագությունը՝ 2.84-ից 3.23-ի: Այդուհանդերձ, ըստ կիսամյակային արդյունքների՝ արձանագրվել են փողի և դրամային զանգվածների շրջապտույտի արագությունների նվազման բարձր տեմպեր. դրամային զանգվածի շրջապտույտի արագության նվազումը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 13.5% (միջին հաշվով նախորդ երկու տարվա 9%-ի փոխարեն):

ՓՈՂԻ ԱՌԱՋԱՐԿ

Երկրորդ եռամսյակի ընթացքում փողի առաջարկի աճն ամբողջովին պայմանավորվել է բանկային համակարգի ՁԱԱ աճողական վարքագծով, այն պարագայում, երբ ՁՆԱ-ը շարունակել են նվազել: Ընդ որում, ինչպես և առաջին եռամսյակում, այս եռամսյակի միտումների ձևավորման վրա մեծապես ազդել են առաջին ամսվա շարժերը: Այսպես, բանկային համակարգի ՁԱԱ-ն ավելացել են 19.0 մլրդ դրամով, որից միայն 13.0 մլրդ դրամը՝ ապրիլին, իսկ ՁՆԱ-ը նվազել են 7.5 մլրդ դրամով՝ ապրիլին շուրջ 6.2 մլրդ դրամ: Նշենք, որ երկու ցուցանիշների շարժերում էլ էական կշիռ են ունեցել ՀՀ ԿԲ ՁԱԱ և ՁՆԱ փոփոխությունները (ավելի մանրամասն՝ «Փողի բազա» ենթաբաժնում):

Առևտրային բանկերի ՁԱԱ-ը համալրվել են 5.9 մլրդ դրամով, որը պայմանավորող հիմնական գործոնը ոչ ռեզիդենտ բանկերում գտնվող թղթակցային հաշիվների մնացորդի աճն է՝ ի հաշիվ ռեզիդենտներից բանկերի կողմից արտարժութային ավանդների ներգրավման և արտարժութային շուկայում գնման գործառնությունների իրականացման:



Բանկերի ՁՆԱ-ը ևս աճել են՝ մեծամասամբ պայմանավորված բանկերի հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների և տնտեսության զուտ վարկավորման ցուցանիշների շարժերով:

Բանկերի պահանջները Կառավարության հանդեպ աճել են 2.7 մլրդ դրամով, որն այս եռամսյակում ևս հիմնականում բանկերի արժեթղթերի պորտֆելի համալրման հետևանք է:

Առևտրային բանկերի հանդեպ տնտեսության զուտ պարտավորությունների ցուցանիշը, պայմանավորված տնտեսական աշխուժացման արդյունքում բանկերի կողմից վարկավորման գործընթացի ակտիվացմամբ, եռամսյակի ընթացքում աճել է 4.9 մլրդ դրամով: Չնայած նախորդ երկու տարվա աճի միջին տեմպերի համեմատ դա (1.3 մլրդ դրամ) բավականին բարձր ցուցանիշ է, սակայն կարող էր ավելի բարձր լինել, եթե բանկերը փորձեին վարկավորել եռամսյակի ընթացքում մշտապես պահպանված մեծ ավելցուկային իրացվելիության հաշվին:

Ըստ տնտեսության հատվածների՝ աճել է մասնավոր ձեռնարկությունների և կազմակերպությունների ու տնային տնտեսությունների զուտ վարկավորումը՝ 7.6 մլրդ դրամ, որը դրամով և արտարժույթով ֆինանսավորման մեջ վերաբաշխվել է 3.6 մլրդ և 4.0 մլրդ դրամ համամասնությամբ: Ընդ որում, արտարժույթով վարկերը հիմնականում ուղղվել են տնային տնտեսություններին, իսկ մասնավոր ձեռնարկություններն ու կազմակերպությունները ֆինանսավորվել են առավելապես դրամով: Եռամսյակի կտրվածքով պետական մասնակցությամբ ձեռնարկությունների ու կազմակերպությունների մարումները բանկերին գերազանցել են նրանց կողմից վարկավորման ծավալները 1.7 մլրդ դրամով. գերակշռել են արտարժութային միջոցներով տրված վարկերը: Ներքին վարկավորման այլ ուղղությունների և ոչ ռեզիդենտների վարկավորման ծավալներում էական շարժեր չեն դիտվել:


[3] *Փողի և դրամի շրջապտույտների արագությունը հաշվարկվում է սեզոնային հարթեցման մեթոդով ստացված՝ ՀՆԱ-ի և փողի ու դրամային զանգվածների տվյալների հարաբերակցության հիման վրա:*


Երկրորդ եռամսյակում բանկերը վարկավորել են հիմնականում առևտրի, գյուղատնտեսության և շինարարության ճյուղերը՝ համապատասխանաբար 1.1 մլրդ, 700 մլն և 390 մլն դրամով, սակայն, եթե առաջին երկու ճյուղում գերակշռել են արտարժութային վարկերը, ապա շինարարության վարկավորումը հիմնականում իրականացվել է դրամով: Արդյունաբերության ճյուղի զուտ վարկավորումը նվազել է արտարժույթով վարկերի մարման հաշվին՝ 2.1 մլրդ դրամ, ինչն ուղեկցվել է դրամով վարկավորման 1.9 մլրդ դրամի աճով: Ընդ որում, արդյունաբերության վարկավորման նման միտումների վրա մեծ ազդեցություն են ունեցել էներգետիկայի ճյուղի շարժերը. արտարժույթով վարկերը նվազել են 2.2 մլրդ դրամով, իսկ դրամային վարկերն ավելացել են 1.7 մլրդ դրամով:

Բանկերի ԶՆԱ աճը վերոնշյալ երկու բաղադրատարրերի հաշվին մոտ 5.0 մլրդ դրամով չեզոքացվել է զուտ այլ ակտիվների նվազմամբ, որը հունիսի վերջին ԿԲ-ին արտարժույթի վաճառքի գործարքի հաշվապահական ձևակերպման հետևանք է: Այսինքն, քանի որ արտարժույթը փոխանցվել է գործարքը կատարելուց երկու օր հետո, այն բանկերի հաշվեկշռում հաշվառվել է «Այլ կրեդիտորներ» հաշվում՝ նվազեցնելով բանկերի զուտ այլ ակտիվները: Նույն գործարքը, հակառակ ուղղությամբ, արտահայտվել է ՀՀ ԿԲ հաշվեկշռում՝ համապատասխանաբար ավելացնելով ԿԲ զուտ այլ ակտիվները: Բանկային համակարգի զուտ այլ ակտիվների մնացած հոդվածներով էական շարժեր չեն արձանագրվել:

ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ


Փողի և դրամային բազմարկիչների միջին եռամսյակային մեծությունները համապատասխանաբար կազմել են՝ 1.93 և 1.13, որոնք պահպանել են նախորդ եռամսյակի համեմատ ծրագրված աճի միտումները՝ պայմանավորված ավանդների աճով: Այդուհանդերձ, դրանք երկրորդ եռամսյակում ևս զիջել են ծրագրված մակարդակները, ինչի վրա մի կողմից ազդել է առաջին եռամսյակի կտրուկ անկումը՝ կապված վիճակագրական ճշգրտման հետ, մյուս կողմից՝ ավելցուկ պաշարների ձևավորված բարձր մակարդակը՝ միջին եռամսյակային 3.2 մլրդ դրամ (նախորդ եռամսյակում՝ 3.8 մլրդ և 2002 թ. նույն ժամանակահատվածում՝ 1.3 մլրդ դրամ):





ՓՈՂԻ ԲԱԶԱ

Ինչպես և միջանկյալ նպատակը, ՀՀ ԿԲ գործառնական նպատակը ևս երկրորդ եռամսյակում ԿԲ կողմից կառավարվել է ծրագրված մակարդակների որոշակի գերազանցմամբ, որն արտահայտել է իրականացրած դրամավարկային քաղաքականության ընդլայնողական ուղղվածությունը (թվային հիմնավորումն ու մեկնաբանությունները բերված են «Փողի պահանջարկ» ենթաբաժնի սկզբում): Եռամսյակի ընթացքում փողի բազան աճել է 2.1 մլրդ դրամով և հունիսի վերջի դրությամբ կազմել 95.4 մլրդ դրամ՝ ցածր գտնվելով միջակայքի ստորին սահմանից ավելի քան 1.4 մլրդ դրամով, որը միայն ամսվա վերջին օրը 3.9 մլրդ դրամի կտրուկ նվազման հետևանք է: Փողի բազայի աճն ամբողջապես ապահովվել է ԿԲ ՁԱԱ 13.1 մլրդ դրամով համալրման հաշվին, այն պարագայում, երբ ՁՆԱ-ը նվազել են 11.0 մլրդ դրամով:



ՀՀ կենտրոնական բանկի ՁԱԱ-ը եռամսյակի ընթացքում ավելացել են հիմնականում ապրիլին ստացված ԿԲՎ - 5-ի մասնաբաժնի՝ 12.1 մլրդ, Լինսի հիմնադրամի դրամաշնորհի՝ 8.9 մլրդ, «Պարենային ապահովության ծրագրի» դրամաշնորհի՝ մոտ 1.0 մլրդ և արտաքին պահուստների կառավարումից ստացված եկամուտների՝ 1.6 մլրդ դրամի հաշվին: Միևնույն ժամանակ, իրականացվել է 3.1 մլրդ դրամի արտաքին պարտքի սպասարկում և 7.0 մլրդ դրամի այլ փոխարկումներ հաճախորդների համար:


ՀՀ ԿԲ ՁՆԱ նվազումը առավելապես պայմանավորվել է Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշի շարժերով, որոնք հանգեցրել են աննախադեպ մեծ ծավալի նվազման՝ 15.0 մլրդ դրամ (նախորդ եռամսյակի 3.9 մլրդ և նախորդ տարվա երկրորդ եռամսյակի 3.6 մլրդ դրամ նվազման պարագայում): Դա տեղի է ունեցել ԿԲ-ում Կառավարության միասնական հաշվի մնացորդի 13.9 մլրդ դրամով աճի ազդեցությամբ՝ պայմանավորված արտաքին վարկի և այլ մուտքերի կուտակմամբ, ինչը վկայում է իրականացված հարկաբյուջետային քաղաքականության զսպողական բնույթի մասին (եռամսյակի ընթացքում միասնական հաշվի միջին օրական մնացորդը կազմել է 14.6 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի 6.0 մլրդ դրամի փոխարեն):

Կառավարության զուտ պարտավորությունների հաշվին ԿԲ ՁՆԱ նվազումը 5.0 մլրդ դրամով չեզոքացվել է Կենտրոնական բանկի զուտ այլ ակտիվների աճի ազդեցությամբ, որը, ինչպես նշվել է, հիմնականում ԿԲ կողմից արտարժույթի առքի գործարքի հետևանք էր:


Բանկերի հետ փոխհարաբերություններում երկրորդ եռամսյակում ևս, ինչպես և առաջինում, ակտիվ կիրառություն է ունեցել ավանդային մշտական հնարավորության գործիքը՝ պայմանավորված համակարգում առկա իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակով: Արդյունքում՝ այդ գործիքի միջոցով ԿԲ-ն ստերիլացրել է 1.6 մլրդ դրամի ավելցուկային իրացվելիություն, սակայն, քանի որ դա ուղեկցվել է նաև «Վերականգնման վարկերի բանկի» կողմից ֆինանսավորման ծրագրի շրջանակներում բանկերին 600 մլն դրամի վարկերի տրամադրմամբ, բանկերի պարտավորությունները եռամսյակի ընթացքում նվազել են 1.0 մլրդ դրամով՝ հունիսի վերջին կազմելով 6.5 մլրդ դրամ:

Փողի բազայի կառուցվածքում աճի գերակշիռ մասը՝ 2.0 մլրդ դրամը, բաժին է ընկել ԿԲ-ից դուրս կանխիկին: Թղթակցային հաշվի միջոցները եռամսյակի ընթացքում աճել են ընդամենը 72 մլն դրամով և հունիսի վերջին կազմել 15.0 մլրդ դրամ, որը, ինչպես և նախորդ եռամսյակում, հետևանք է վերջին օրը բանկերի թղթակցային հաշիվներից մեծածավալ հարկերի հավաքագրման: Ընդ որում, առաջին եռամսյակի մյուս ամիսների համեմատությամբ, թղթակցային հաշիվների նման ցածր մնացորդ է արձանագրվել նաև մարտին (14.9 մլրդ դրամ), քանի որ պետբյուջեի հարկերի եռամսյակային ծրագրի կատարման հիմնական ծանրությունն ընկնում է եռամսյակի վերջին ամիսներին:

Փողի բազայի կառավարման գործընթացը երկրորդ եռամսյակում ևս ուղեկցվել է մի շարք խնդիրներով, որոնք հիմնականում առնչվել են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացմանը: Հարկ է առանձնացնել ԿԲ-ում Գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի բարձր մակարդակն ու դրա ծախսման անորոշությունը, որը մի կողմից փոխարինել է ԿԲ ներքաշող գործիքների կիրառմանը, սակայն մյուս կողմից էապես խոչընդոտել է ԿԲ կողմից սահուն դրամավարկային քաղաքականության իրագործմանը, քանի որ մշտապես առկա է եղել դրանց հաշվին ցանկացած պահի մեծածավալ ծախսումների իրականացման մտավախություն:



Այդուհանդերձ, երկրորդ եռամսյակում ԿԲ կողմից փողի առաջարկը մեծամասամբ կառավարվել է տատանման թույլատրելի միջակայքի վերին սահմանի գերազանցմամբ, որը, բարձր տնտեսական աճի պայմաններում, համահունչ է եղել փողի պահանջարկի ձևավորված բարձր մակարդակին:




Ստեղծված մակրոտնտեսական միջավայրում ձևավորվել է համեմատաբար բարձր եռամսյակային սղաճ՝ 4.7% (ծրագրված 1% դեֆլյացիայի պարագայում): Սղաճի շեղումը ծրագրային ցուցանիշից բացատրվում է նրանով, որ այս տարի կրկնվել է գների տատանման՝ նախորդ տարվա սեզոնայնությունը, ինչը, որպես ոչ օրինաչափ և տվյալ տարվան բնորոշ միտում, հաշվի չի առնվել 2003 թվականի ֆինանսական ծրագրման ժամանակ: Գների աճի բարձր տեմպերի վրա հիմնականում անդրադարձել են տնտեսության իրական հատվածի երևույթները, մասնավորապես, արձանագրվել են գյուղատնտեսական արտադրանքի բարձր գներ՝ պայմանավորված վեգետացիոն շրջանի ուշացմամբ, որին այս տարի գումարվել է նաև հունիսին հացի և հացամթերքների գների մոտ 10%-ով բարձրացումը: Այդուհանդերձ,

հաշվի առնելով երրորդ եռամսյակում ակնկալվող խորը դեֆլյացիան՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրանքի գների կտրուկ անկմամբ և հացի ու հացամթերքների գների նախկին մակարդակի վերականգնմամբ, ՀՀ ԿԲ-ն չի վերանայել դրամավարկային քաղաքականության ուղղությունները և այն իրականացրել է համախառն պահանջարկի աճի բարձր տեմպերին համահունչ:


Դրամավարկային պայմանների ինդեքսի[1] և դրամավարկային կանոնների[2] հաշվարկները ևս վկայում են երկրորդ եռամսյակում ԿԲ կողմից իրականացված առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության մասին: Այսպես, դրամավարկային պայմանների ինդեքսը պահպանել է տարեսկզբից ցուցաբերած նվազողական վարքագիծը, սակայն, եթե առաջին եռամսյակում կրել է առավելապես իրական տոկոսադրույքների նվազման ազդեցությունը, ապա երկրորդում նվազման հիմնական գործոնը եղել է իրական փոխարժեքի արժեզրկումը:

Դրամավարկային պայմանների ինդեքսի վարքագիծը



Ինչ վերաբերում է դրամավարկային կանոններին, ապա, չնայած նախորդ եռամսյակի համեմատ փողի բազայի միջին եռամսյակային ցուցանիշը նվազել է՝ 2002թ. վերջին կտրուկ աճի հետևանքով առաջին եռամսյակում բարձր միջին եռամսյակային ցուցանիշի ձևավորմամբ պայմանավորված, այն դեռևս գերազանցում է կանոնով հաշվարկված ցուցանիշը: Այդ արդյունքը գրանցվել է անգամ այն պայմաններում, երբ արձանագրված բարձր տնտեսական աճի ազդեցությամբ բարձր է եղել նաև կանոնով հաշվարկված փողի բազայի մակարդակը, ինչը ևս փաստում է ԿԲ կողմից իրականացված առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության մասին:

Փաստացի և կանոնով հաշվարկված փողի բազաների վարքագիծը



[1] *Դրամավարկային պայմանների ինդեքսի հայեցակարգը հրապարակված է 2001 թվականի 2-րդ եռամսյակի «ԿԲ բանբերում»:*
[2] *Դրամավարկային կանոնների հաշվարկման մեթոդաբանությունը հրապարակված է ՀՀ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրում, առանձին հավելվածով:*


ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարեսկզբից ֆինանսական շուկայում դրսևորված՝ տոկոսադրույքների նվազման միտումները շարունակվել են նաև երկրորդ եռամսյակում, որի վրա մեծ ազդեցություն է ունեցել համակարգում առկա ավելցուկային պաշարների բարձր մակարդակը: Ֆինանսական շուկայի տարբեր հատվածների նվազման միտումների (մանրամասն տե՛ս «Ֆինանսական շուկա» բաժնում) հիման վրա Կենտրոնական բանկը վերանայել է բանկային տոկոսի հաշվարկային դրույքը՝ ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին կշռված մեծությունը, մարտի 19%-ից մայիսին իջեցնելով 18%-ի, իսկ հունիսին՝ 17%-ի:


Չնայած շուկայական տոկոսադրույքների նվազման միտումներին, ԿԲ խորհուրդն անփոփոխ է թողել ԿԲ գործառնությունների դրույքաչափերը. ռեպո համաձայնագրերինը՝ 10%, լոմբարդային վարկերինը՝ 20% և ավանդներինը՝ 5%՝ շուկայի մասնակիցներին տալով ներքաշման խնդրի լուծմանն ուղղված քաղաքականության իրականացման ազդակներ:

Ֆինանսական շուկայի վարկային և ավանդային հատվածներում տոկոսադրույքների նվազման միտումների համադրման արդյունքում նվազել է նաև վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունը (սպրեդը)՝ մարտի 16.6%-ից հունիսին հասնելով 15.5%-ի: Այդուհանդերձ, 0.6 տոկոսային կետով աճել է արտարժութային սպրեդը:


Դրամային և արտարժութային սպրեդների վարքագիծը



2003 թվականի երկրորդ եռամսյակում շարունակվել է նախորդող եռամսյակների ընթացքում ֆինանսական շուկայում դրսևորված՝ տոկոսադրույքների անկման միտումը: Փոքր-ինչ նվազել են առևտրային բանկերի կողմից ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ներգրավված միջոցների տոկոսադրույքները: Այսպես, 2003 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում տոկոսադրույքները տատանվել են. դրամային ավանդներինը 9.87%-ի, իսկ ԱՄՆ դոլարով ավանդներինը՝ 6.09% -ի շրջակայքում:




Ավելի քան 0.5 տոկոսային կետով նվազել են ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքները, կազմելով՝ 22.16%, սակայն դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները մնացել են անփոփոխ՝ կազմելով 24.00%:




2003 թ. երկրորդ եռամսյակում պետական պարտատոմսերի շուկայում արձանագրվել է տոկոսադրույքների միջին մակարդակի նվազում. նախ դրսևորվել է դեռևս նախորդ եռամսյակի վերջում արտահայտված ՊՊ եկամտաբերության աճի միտում, իսկ մայիսից սկսած՝ ՊՊ տոկոսադրույքների հստակ արտահայտված անկում:

ՊՊ առաջնային շուկան դիտարկվող եռամսյակի ընթացքում բնութագրվել է պարտատոմսերի նկատմամբ ձևավորված բավականին բարձր պահանջարկով՝ կազմելով թողարկման ծավալի 217.8%-ը: Հարկ է նշել, որ ապրիլին ՊՊ նկատմամբ պահանջարկը, պայմանավորված բանկային համակարգում առ-

կա ավելցուկային իրացվելիության ընդհանուր մակարդակի իջեցմամբ, զգալիորեն նվազել է՝ կազմելով թողարկման ծավալի մոտ 140%-ը: Այս պայմաններում, ինչպես արդեն նշվեց, ՊՊ տոկոսադրույքների աճը շարունակվել է մինչև մայիս, որից հետո նկատվել է հակառակ միտումը: Արդյունքում՝ ապրիլին ՊԿՊ միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 14.66%, մայիսին՝ 13.75%, հունիսին՝ 11.81%, իսկ ՄՄԺՊ-երինը՝ համապատասխանաբար 17.57%, 16.25% և 15.82%:




2003 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում տեղի է ունեցել պետական կարճաժամկետ պարտատոմսերի 8 թողարկում՝ 4.5 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որից 0.6 մլրդ դրամը՝ 183-273 օր շրջանառության ժամկետով և 3.9 մլրդ դրամը՝ 274-364 օր շրջանառության ժամկետով, պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 6 թողարկում՝ 7.2 մլրդ դրամ ընդհանուր ծավալով:



ՊՊ թողարկումների ծավալների 3.7 մլրդ դրամ աճով պայմանավորված՝ զգալիորեն ավելացել է նաև շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը: Հունիսի 30-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը, նախորդ ժամանակահատվածի (31/03/2003) համեմատությամբ, աճել է 1494.361 մլն դրամով՝ կազմելով 41046.278 մլն դրամ:

Ինչպես նախորդ եռամսյակում, ներդրողների կողմից պետական արժեթղթերում ներդրումների մակարդակի էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Ռեզիդենտ ոչ բանկ ներդրողների պարտատոմսերի տեսակարար կշիռն աճել է 0.42 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջում կազմելով 13.93% կամ 5725.493 մլն դրամ: 0.3 տոկոսային կետով աճել է նաև ոչ ռեզիդենտներին պատկանող ՊՊ տեսակարար կշիռը:


Արդյունքում, հունիսի 27-ի դրությամբ ռեզիդենտներին պատկանող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալի մոտ 95.98%-ը՝ 39443.8 մլն դրամ, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 4.02%-ը կամ 1652.5 մլն դրամ:



Երկրորդային շուկայի գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատությամբ նվազել է 1.0 տոկոսային կետով՝ կազմելով 13.47%: Միևնույն ժամանակ, ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները նախորդ եռամսյակի համեմատությամբ ավելացել են 3.3 մլրդ դրամով՝ կազմելով 12.6 մլրդ դրամ: Երկրորդային շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 980 մլն դրամ:

Երկրորդ եռամսյակի ընթացքում միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործարքների աճ է արձանագրվել: Նախորդ եռամսյակի համեմատությամբ միջբանկային ռեպո գործառնությունների ծավալները աճել են 13.1 մլրդ դրամով՝ կազմելով 28.9 մլրդ դրամ: Գործարքների միջին ժամկետայնությունը կազմել է 17 օր: Միջբանկային ռեպո շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 2.1 մլրդ դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 1.26 տոկոսային կետով և կազմել 7.98 %:


Սկսած երկրորդ եռամսյակի վերջից՝ եկամտաբերության կորը կառուցվում է ավելի երկար ժամանակահատվածի համար: Դա հնարավոր է դարձել կորի կառուցման ընթացքում միջին ժամկետայնության մասնակի մարումներով պետական պարտատոմսերի ներառման արդյունքում: Այս հանգամանքը հնարավորություն կընձեռի ավելի մեծացնել կորի կառուցման միջոցով կատարվող կանխատեսումների ճշտությունը՝ դրանով իսկ նպաստելով ֆինանսական շուկայում գործիքների կիրառման արդյունավետությանը:




Չնայած ժամանակաշրջանի վերջի դրությամբ կորը ընդգրկում է նաև միջին ժամկետայնության մասնակի մարումներով պարտատոմսերը, այնուամենայնիվ, մինչև 365 օր ժամկետայնության պարտատոմսերը համեմատելով՝ կարող ենք ասել, որ տոկոսադրույքները նվազել են (13%-ից դառնալով մոտ 11%):


Երկրորդ եռամսյակում ֆինանսական շուկայում տոկոսադրույքների անկումը մեծամասամբ պայմանավորված էր բանկերի բարձր իրացվելիությամբ: Այդ է վկայում նաև Կենտրոնական բանկի ավանդների նկատմամբ ձևավորված մեծ պահանջարկը: Երկրորդ եռամսյակում ՀՀ առևտրային բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվել է 8400 մլն դրամի ավանդի պահանջարկ, ընդ որում՝ մայիսին ներդրվել է 3450 մլն դրամի ավանդ, իսկ հունիսին՝ 4950 մլն դրամի ավանդ՝ սահմանված 5% եկամտաբերությամբ: Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ լոմբարդային վարկերի նկատմամբ պահանջարկ չի գրանցվել:

Հաշվետու եռամսյակում դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները չեն փոփոխվել: Ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը մնացել է 10%, լոմբարդային վարկերի տոկոսադրույքը՝ 20%, իսկ ավանդներինը՝ 5%: Բանկային տոկոսի հաշվարկային դրույքն ապրիլին սահմանվել է 19%, մայիսին՝ 18%, հունիսին՝ 17% և եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 18%:



ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2003թ. երկրորդ եռամսյակում, տատանումներով հանդերձ, դրսևորել է արժեքավորման միտում: Եռամսյակի վերջում, նախորդ եռամսյակի վերջի համեմատ, գրանցվել է 0.81% արժեքավորում՝ 589.52 դրամից 584.8 դրամ (տատանում՝ 1.98, միջին շեղում՝ 1.41 դրամ, նվազագույնը՝ 584.45 դրամ, առավելագույնը՝ 589.03 դրամ): Արժութային շուկայում նույն ժամանակահատվածում արժեքավորումը կազմել է 0.82%՝ 587.16 դրամից 582.36 դրամ (տատանում՝ 2.23, միջին շեղում՝ 1.49 դրամ, նվազագույնը՝ 581.41 դրամ, առավելագույնը՝ 590.58 դրամ):





Միջբանկային շուկայում երկրորդ եռամսյակի ընթացքում ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի համախառն ծավալները կազմել են մոտ 419.23 մլն ԱՄՆ դոլար՝ 211.90 մլն՝ առք և 207.33 մլն՝ վաճառք: Առքի ծավալները ըստ ամիսների կազմել են՝ 61.86 մլն, 63.01 մլն և 87.03 մլն ԱՄՆ դոլար, վաճառքինը՝ 64.03 մլն, 64.13 մլն և 79.17 մլն ԱՄՆ դոլար՝ համապատասխանաբար 587.91 դրամ, 585.93 դրամ և 585.38 դրամ միջին կշռված ամսական փոխարժեքներով:

ՀՀ բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

2003 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ բանկային համակարգում արձանագրվել են աճի զգալի միտումներ: Հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր՝ 225 մասնաճյուղերով: Եռամսյակի ընթացքում լուծարային գործընթաց է սկսվել հատուկ վերահսկողության դաշտում գործող «Արդշինբանկում», իսկ հատուկ վերահսկողության դաշտում գործող մեկ այլ բանկ՝ «Գլաձոր» բանկը, վերակազմավորվել է վարկային կազմակերպության:

ՀՀ տարածքում գործող 22 բանկերից 2-ը 30.06.03թ. դրությամբ գտնվել են հատուկ վերահսկողության դաշտում և իրենց գործունեությունն իրականացրել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված առողջացման ծրագրերի շրջանակներում: Եռամսյակի ընթացքում շարունակվել են այդ բանկերի ակտիվների հետվերադարձի և ավանդային պարտավորությունների մարման աշխատանքները:

Բանկային համակարգի ներկայացվող վերլուծությունն իրականացվել է 30.06.2003թ. դրությամբ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 20 առևտրային բանկերի տվյալների հիման վրա:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2003 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 3%-ով (1.4 մլրդ դրամ) և 30.06.03թ. դրությամբ կազմել 47.1 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի 355 մլն դրամով փոփոխությունը պայմանավորված է երկու բանկերի կողմից կանոնադրական հիմնադրամի համալրմամբ՝ կապված հուլիսի 1-ից ուժի մեջ մտնող ընդհանուր կապիտալի նոր նվազագույն պահանջի՝ 2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք մեծության հետ: Գլխավոր պահուստը եռամսյակի ընթացքում ավելացել է 60 մլն դրամի չափով՝ նույնպես երկու բանկի գործունեության արդյունքում:

30.06.03թ. դրությամբ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 20 բանկերն ապահովել են 1.7 մլրդ դրամի չափով չբաշխված շահույթ: Շահաբաժիններ է բաշխել մեկ բանկ՝ 71 մլն դրամ գումարի չափով:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշները նախորդ եռամսյակի համեմատ նվազման միտում են ցուցաբերել. ընդհանուր կապիտալի համարժեքությունը նվազել է 4.9 տոկոսային կետով՝ կազմելով 34.3%, հիմնական կապիտալի համարժեքությունը նվազել է գրեթե նույն չափով՝ 4.8 տոկոսային կետով և կազմել 32.6%, որը պայմանավորված է բանկերի կողմից վարկային ներդրումների աճով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում, ի տարբերություն նախորդ եռամսյակի, աճել են 14.7%-ով (31 մլրդ դրամ) և 30.06.2003թ. դրությամբ կազմել 210.8 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 17 բանկերում. աճի 55.5%-ը բաժին է ընկել 2 բանկի: Իսկ 3 բանկերի ընդհանուր պարտավորությունների նվազման 75.9%-ը բաժին է ընկել մեկ բանկի՝ բանկերի նկատմամբ պարտավորությունների նվազման հաշվին:

Ցպահանջ պարտավորությունները, ի տարբերություն ընդհանուր պարտավորությունների, ցուցաբերել են առաջանցիկ աճի միտում. աճել են 20.3%-ով (15 մլրդ դրամ) և 30.06.03թ. դրությամբ կազմել 89.1 մլրդ դրամ: Ընդ որում, իրավաբանական անձանց ցպահանջ ավանդները, ի տարբերություն նախորդ եռամսյակի 20% նվազման, աճել են 24.6%-ով՝ կազմելով 51 մլրդ դրամ: Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներն աճել են 14.9%-ով, որի 93%-ը բաժին է ընկել արտարժութային ավանդներին: Արդյունքում՝ ցպահանջ պարտավորությունների տեսակարար կշիռը ընդհանուր պատրավորություններում աճել է 1.1 տոկոսային կետով՝ կազմելով 42.3%-ը:


Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները եռամսյակի ընթացքում աճել են 15.4%-ով, այն դեպքում, երբ նախորդ եռամսյակում գրեթե փոփոխություններ չէին կրել: 30.06.03թ. դրությամբ կազմել են 45.4 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց ժամկետային ավանդները, ներառյալ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները, ի տարբերություն ցպահանջ ավանդների, աճել են 4.6%-ով՝ կազմելով 29 մլրդ դրամ:

Ավանդների նման վարքագիծը, հատկապես իրավաբանական անձանց ցպահանջ ավանդների աճը, հիմնականում պայմանավորված է սեզոնային գործոնով՝ պայմանավորված գործարար ակտիվության աշխուժացմամբ: Ֆիզիկական անձանց ավանդների աճը ինչպես կապիտալի ներհոսքի, այնպես էլ բանկային համակարգի նկատմամբ վստահության աճի արդյունք է:

31.06.2003 թ. դրությամբ բանկային համակարգի պարտավորություններում դրամային միջոցների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատությամբ աճելով 3.4 տոկոսային կետով՝ կազմել է 28.7%: Ընդ որում, ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում դրամային միջոցների կշիռը կազմել է ընդամենը 9%:

Բանկերից ներգրավված միջոցները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ աճել են 10.8%-ով և կազմել 19.7 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 9.4%-ը:

Բանկային համակարգի ներգրավված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավ. անձանց և այլ ֆին. կազմ-ների ավանդներ, 5. Բանկերից ներգրավված միջոցներ, 6. Վճարվելիք տոկոսներ, 7. Պարտ-ներ կառավարության նկատմամբ, 8. Այլ պարտավորություններ

Ընդհանուր առմամբ, պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված էր ցպահանջ ավանդների զգալի աճով, սակայն ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները նույնպես, նույնիսկ նվազող տոկոսադրույքների պայմաններում, ցուցաբերել են նկատելի աճի տեմպեր:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2003 թ. երկրորդ եռամսյակում բանկային համակարգի ակտիվներն աճել են 12.6%-ով կամ 32.4 մլրդ դրամով՝ կազմելով 257.9 մլրդ դրամ: Ակտիվների աճի մոտ կեսը բաժին է ընկել բանկերում թղթակցային հաշիվների աճին՝ 16.7 մլրդ դրամ: Դրանք նախորդ եռամսյակի համեմատ աճել են 38.2%-ով:

Աճի 31.3%-ը բաժին է ընկել վարկային պորտֆելի աճին՝ 10.1 մլրդ դրամ, որը 30.06.03թ. դրությամբ կազմել է 85.3 մլրդ դրամ կամ ընդհանուր ակտիվների 33.1%-ը: Իրավաբանական անձանց վարկավորումը աճել է 9.8%-ով (4.9 մլրդ դրամ), իսկ ֆիզիկական անձանց վարկավորումը՝ 18.2%-ով (4.1 մլրդ դրամ)՝ հիմնականում պայմանավորված սպառողական վարկերի աճով:


Տոկոսային առումով զգալի աճել են բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 47.7%-ով (1.1 մլրդ դրամ) և կազմել 3.3 մլրդ դրամ կամ ընդհանուր ակտիվների 1.3%-ը:

Պահանջները բանկերի նկատմամբ նվազել են 19.8%-ով (4 մլրդ դրամ) և կազմել 16.3 մլրդ դրամ: Տվյալ հոդվածի նվազումը հիմնականում մեկ բանկի գործունեության արդյունք է:

Եռամսյակի ընթացքում բանկերում արձանագրվել է պետական արժեթղթերի պորտֆելի 11.5% աճ (3.9 մլրդ դրամ), որը 30.06.03թ. դրությամբ կազմել է 34.1 մլրդ դրամ կամ ընդհանուր ակտիվների 13.2%-ը:

Ընդհանուր ակտիվների աճ է արձանագրվել 18 բանկերում, իսկ նվազում՝ 2 այլ բանկերում:

Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը




1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի նկատմամբ
5. Պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր աշխատակիցներին և կապված անձանց
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Ընդհանուր առմամբ, վարկային ներդրումները (ներառյալ միջբանկային վարկերը) ավելացել են 10.9%-ով՝ 30.06.2003թ. դրությամբ կազմելով 107.9 մլրդ դրամ: Նախորդ եռամսյակի համեմատ տնտեսությանը տրված վարկերի ծավալներում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. վարկավորման աճ է արձանագրվել արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, առևտրի, ֆինանսական հատվածի և սպառողական վարկերի ոլորտներում, համապատասխանաբար՝ 6.5%, 11.7%, 28% ,13.4%, 194.6% և 24.7%: 30.06.03թ. դրությամբ այս ճյուղերին բաժին է ընկել տեղաբաշխված միջոցների 92.6%-ը: Նվազել է տրանսպորտի և կապի, ինչպես նաև տնտեսության այլ ճյուղերի վարկավորումը, համապատասխանաբար՝ 2.1% և 28.7%:

Վարկավորումը նվազել է էներգետիկայի, թեթև արդյունաբերության և թանկարժեք իրերի արտադրության ոլորտներում, համապատասխանաբար 4.3%, 3.7% և 20.9%: Զգալի աճել է շինանյութերի արդյունաբերության ոլորտի վարկավորումը՝ 107%:

Բանկային համակարգի վարկային ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Ֆինանսական հատված, 7. Սպառողական վարկեր, 8. Այլ ճյուղեր

Վարկային ներդրումների դասակարգումը ըստ ռիսկի խմբերի ցույց է տալիս, որ եռամսյակի ընթացքում վարկային պորտֆելում 1.8 տոկոսային կետով աճել է դասակարգված վարկերի տեսակարար կշիռը և կազմել վարկային ներդրումների 8.2%-ը: Արդյունքում՝ 30.06.03թ. դրությամբ վարկային պորտֆելն ունի հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը կազմել են 91.8%, «հսկվող» վարկերը՝ 5.2%, «ոչ ստանդարտ» վարկերը՝ 2%, «կասկածելի» վարկերը՝ 1%:

30.06.2003 թ. դրությամբ վարկերի հնարավոր կորուստների պահուստի մեծությունը կազմել է վարկային ներդրումների 2.3%-ը՝ նախորդ եռամսյակի՝ 2.2%-ի փոխարեն:

Բանկային համակարգի իրացվելիությունը եռամսյակի ընթացքում պահպանվել է բավականին բարձր մակարդակի վրա, այդ են վկայում ընդհանուր և ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվների ցուցանիշները. 30.06.2003 թ. դրությամբ $Ն2^1$ ընդհանուր իրացվելիության գործակիցը կազմել է 49.2%, իսկ $Ն2^2$ ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ 114%՝ պահանջվող 20% և 80%-ի փոխարեն:

Ընդհանուր առմամբ, վարկային պորտֆելի աճը առևտրի, ֆինանսական հատվածի և սպառողական վարկերի զգալի աճի արդյունք է:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

2003 թ. առաջին կիսամյակի ընթացքում բանկային համակարգը ստացել է 22.7 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 20.3 մլրդ դրամի չափով ծախսեր: Արդյունքում, 30.06.03թ. դրությամբ բանկերի չբաշխված շահույթը հարկումից և հաշվարկված շահաբաժիններից հետո կազմել է 1.7 մլրդ դրամ:

2003 թ. առաջին կիսամյակի ընթացքում բանկային համակարգը ստացել է 22.7 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 20.3 մլրդ դրամի չափով ծախսեր: Արդյունքում՝ 30.06.03թ. դրությամբ բանկերի չբաշխված շահույթը, հարկումից և հաշվարկված շահաբաժիններից հետո, կազմել է 1.7 մլրդ դրամ:

Տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում 2003 թ. առաջին կիսամյակում կազմել է 47.7%՝ հանդիսանալով բանկերի եկամուտների հիմնական աղբյուրը:

Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձների գծով եկամուտները կազմել են համախառն եկամտի 27.4%-ը, ի տարբերություն առաջին եռամսյակի 29.1%-ի:

Ոչ տոկոսային եկամուտների կշիռը կազմել է համախառն եկամուտների 24.9%-ը, նախորդ եռամսյակի 21.8%-ի համեմատ: Ինչպես և նախորդ ժամանակաշրջաններում, ոչ տոկոսային եկամուտների կազմում գերակշռող են եղել ստացված կոմիսիոն վճարները՝ 67.9%՝ վկայելով բանկային համակարգի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, ինչպես նաև գործարար մթնոլորտի աշխուժացման մասին:

Ընդհանուր առմամբ, 2003 թ. առաջին կիսամյակի ընթացքում շահույթով աշխատել են 14 բանկեր, որոնց շահույթը կազմել է 2.9 մլրդ դրամ: Բացառությամբ 2 բանկի, որոնց բաժին է ընկել շահույթի 38%-ը, մնացած բանկերում շահույթը համեմատաբար հավասարաչափ է բաշխվել: Վնասով աշխատող 6 բանկերի վնասը կիսամյակի ընթացքում կազմել է 1.1 մլրդ դրամ, որի 83.8%-ը բաժին է ընկել երկու բանկի՝ պայմանավորված ակտիվների դասակարգմամբ:


ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման հետ կապված աշխատանքները 2003 թ. 2-րդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակվել են Քարտերով վճարումների միասնական համակարգի, Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի, մանր վճարումների ոլորտի զարգացման ուղղությամբ:

Երկրորդ եռամսյակում գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների աճ: Նախորդ եռամսյակի համեմատ շուրջ 1.5 անգամ ավելացել են նաև միջազգային դրամական փոխանցումների համակարգերով իրականացվող փոխանցումները:

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացվել է 409.4 մլրդ ՀՀ դրամ ծավալով 273351 վճարում: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը, նախորդ տարվա 2-րդ եռամսյակի համեմատությամբ, աճել է 2242 մլն ՀՀ դրամով, իսկ քանակը՝ 1364-ով: 2003 թ. 1-ին եռամսյակի համեմատ միջին օրական փոխանցումների ծավալն աճել է 1833 մլն ՀՀ դրամով (քանակը՝ 1144-ով), ինչը պայմանավորված է դիտարկվող տնտեսական ակտիվությամբ:

Երկրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 51.39%-ը (1-ին եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 1.2 տոկոսային կետով) և քանակի 71.24%-ը (1-ին եռամսյակի համեմատ նվազել է 0.6 տոկոսային կետով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակի և ծավալի դինամիկան



2003 թ. 2-րդ եռամսյակի ընթացքում լրացավ «ԱրՔա» պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգի գործունեության երկրորդ տարին: Երկու տարվա ընթացքում «ԱրՔա» պլաստիկ քարտերով իրականացվել է 11630 մլն ՀՀ դրամի 452197 գործառնություն: Գործունեության երկրորդ տարվա ընթացքում համակարգի քարտային գործառնությունների ծավալն աճել է 3.5 անգամ՝ կազմելով 9046 մլն ՀՀ դրամ, իսկ քանակը աճել է 3.38 անգամ՝ կազմելով 349165: Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերի քանակը երկրորդ տարվա ընթացքում աճել է 2 անգամ՝ կազմելով 17063 քարտ:

Էլեկտրոնային վճարումների համակարգ

2003 թ. 2-րդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 189, այդ թվում՝ ընդգրկվել են ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժան-

մունքներով, 23 առևտրային բանկեր՝ 115 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք. Մոսկվա):

Եռամսյակի ընթացքում վճարումների գերակշիռ մասն իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 81.69%-ը և քանակի 98.49%-ը: Առաջին եռամսյակի համեմատությամբ աճել է էլեկտրոնային վճարումների տեսակարար կշիռը (ծավալը՝ 5.74%-ով, քանակը՝ 0.28%-ով): Առևտրային բանկերի կողմից կատարված էլեկտրոնային վճարումները վերջիններիս ընդհանուր վճարումների կառուցվածքում, նախորդ եռամսյակի համեմատ ավելացել են՝ վճարումների ծավալային կառուցվածքում 0.7 տոկոսով՝ կազմելով մոտ 91.7%, իսկ քանակային կառուցվածքում 0.1 տոկոսով՝ կազմելով մոտ 99.6%:


Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2003 թ. 1-ին եռամսյակի համեմատ աճել է 1136-ով՝կազմելով մոտ 4207, իսկ ծավալն աճել է 1759 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 5226 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը նախորդ եռամսյակի համեմատ աճել է մոտ 113 հազ. ՀՀ դրամով և կազմել 1242 հազ. ՀՀ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են նախաձեռնված վճարումների քանակի 0.07%-ը և ծավալի 0.05%-ը (127 փոխանցում՝ 226 մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ որում, իրացվելիության չբավարարման պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում նախաձեռնված վճարումների ծավալի և քանակի 0.04%-ը (119 փոխանցում՝ 147 մլն ՀՀ դրամ ծավալով):

էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումներն ըստ հաղորդագրության տեսակների

Հաղորդագրության տեսակը	1999	2000	2001	2002	II եռ. 02	I եռ. 03	II եռ. 03
ՀՏ 100 (Վճարման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	236 657	562 399	478 783	590 026	133 373	140 224	222 238
Քանակ	129 508	323 511	216 563	251 794	58 261	67 895	95 290
ՀՏ 120 (Բյուջեի մուտքի հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	64 231	112 008	118 767	156 358	31 792	428 556	57 943
Քանակ	198 764	409 858	364 041	424 288	87 287	99 702	138 058
ՀՏ 122 (Բյուջե բազմակի փոխանցման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	11	14	1	0.01	0	0
Քանակ	0	120	27	4	1	0	0
ՀՏ 123 (Բյուջետային վճարման հավաքական հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	251	4 047	5 128	1 193	930	1 356
Քանակ	0	6 153	112 721	127 122	29 756	23 481	28 287
ՀՏ 131 (Բազմակի փոխանցման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	140	412	534	200	37	70
Քանակ	0	65	526	324	67	50	80
ՀՏ 132 (Հավաքական վճարումների հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	2 927	13 194	610	33	8	8
Քանակ	0	637	749	327	88	65	104
ՀՏ 202 (Միջբանկային վճարման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	24 257	150 299	196 161	45 506	37 838	52 874
Քանակ	0	4 288	19 430	24 506	6 041	5 351	7 398
Ընդամենը							
Գումար (մլն ՀՀ դրամ)	300 888	701 993	765 515	948 818	212 097	221 893	334 488
Քանակ	328 272	744 632	714 057	828 365	181 501	196 544	269 217

էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները 2001 - 2002 թվականներին և 2003 թ. երկու եռամսյակների ընթացքում



Համախառն թղթային վճարումներ

2003 թ. 2-րդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ գանձապետարանը և ՀՀ կենտրոնական բանկը: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջին-ներիս վճարումների ծավալի 4.4%-ը (1-ին եռամսյակի համեմատ նվազել են 2.9 տոկոսային կետով) և քանակի 0.4%-ը (1-ին եռամսյակի համեմատ նվազել են 0.1 տոկոսային կետով):

Թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը 2002 թ. 2-րդ եռամ-սյակի համեմատ նվազել է 3-ով՝ կազմելով 57, իսկ վճարումների ծավալն աճել է 309 մլն դրամով՝ կազ-մելով 829 մլն դրամ: Մեկ թղթային փոխանցման միջին ծավալն աճել է մոտ 5.94 մլն դրամով և կազմել է 14.56 մլն դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակա-հատված	Համախառն				Զուտ		Պետ. արժեթղթ. հաշվառմ. և հաշվարկ. իրակ. համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով	
	էլեկտրոնային		թղթային							
	Գումար (մլն դրամ)	*Քանակ*	*Գումար (մլն դրամ)*	*Քանակ*	*Գումար (մլն դրամ)*	*Քանակ*	*Գումար (մլն դրամ)*	*Քանակ*	*Գումար (մլն դրամ)*	*Քանակ*
Ընդամենը 2001	765515	714057	230516	15638	2844	9218	64123	1757	1062998	740670
տեսակարար կշիռը վճարումներում (%)	72.01	96.41	21.69	2.11	0.27	1.24	6.03	0.24	100	100
Ընդամենը 2002	948818	828365	210930	15185	300	1083	74221	1656	1234269	846289
տեսակարար կշիռը վճարումներում (%)	76.87	97.88	17.09	1.79	0.02	0.13	6.01	0.20	100	100
2002 – II եռ.	212097	181501	33255	3856	65	283	20592	435	266009	186075
տեսակարար կշիռը վճարումներում (%)	79.73	97.55	12.50	2.07	0.03	0.15	7.74	0.24	100	100
2003 – I եռ.	221893	196544	54895	3206	0	0	15393	391	292181	200141
տեսակարար կշիռը վճարումներում (%)	75.94	98.20	18.79	1.60	0.00	0.00	5.27	0.20	100	100
2003 – II եռ.	334488	269217	53059	3643	0	0	21920	491	409467	273351
տեսակարար կշիռը վճարումներում (%)	81.69	98.49	12.96	1.33	0	0	5.35	0.18	100	100

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

2003 թ. 2-րդ եռամսյակում շարունակվել են Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում պետական կարճաժամկետ պարտատոմսերի առք ու վաճառքի, գրա-վադրման գործառնությունների հետ կապված արարողակարգերի և համապատասխան տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները: Իրականացվել են երկրորդային շուկայի ենթահամակարգում գործառնությունների հետ կապված հաշվարկների՝ DVP (առաքում՝ վճարման դիմաց) սկզբունքով գործող ծրագրային ապահովման տեխնոլոգիայի և վերջինիս նախագծման աշխատանքներ:

Եռամսյակի վերջի դրությամբ համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 6 գործակալ և 12 դիլեր բանկեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն և ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Համակարգի կողմից ձևավորվել է 491 հանձնարարական՝ 21920 մլն ՀՀ դրամ ծավալով (1-ին եռամսյակի համեմատ աճել է 6527 մլն ՀՀ դրամով), այդ թվում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 10981 մլն ՀՀ դրամի վճարում, իսկ արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 10939 մլն ՀՀ դրամի փոխանցում:

Գանձապետական պահառու համակարգի կողմից արժեթղթերի դիմաց կատարվել է 348 մլն ՀՀ դրամի վճարում, այդ թվում 184 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի տեղաբաշխման և 164 մլն ՀՀ դրամ՝ արժե-թղթերի մարման դիմաց:

«Արքա» պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգ


2003 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է «Արքա» պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգի զարգացման, ինչպես նաև ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով գործառնությունները խթանելու աշխատանքները: Մասնավորապես միջազգային քարտերով կատարված գործառնությունների վերջնահաշվարկի ապահովման նպատակով աշխատանքներ են կատարվել վերջինիս հետ կապված խնդիրների կարգավորման ուղղությամբ:

Եռամսյակի վերջի դրությամբ «Արքա» քարտերով վճարումների միասնական համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 11 բանկեր, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը: «Արքա» քարտերի սպասարկման նպատակով նոր ավտոմատ գանձման սարքավորումներ են տեղադրվել Երևանում, Արարատի և Կոտայքի մարզերում:

Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող «Արքա» քարտերը թողարկվել և եռամսյակի ընթացքում սպասարկվել են համակարգի անդամ 10 առևտրային բանկերի կողմից:

Շրջանառության մեջ գտնվող «Արքա» քարտերով եռամսյակի ընթացքում իրականացվել է 108250 գործարք՝ 2608 մլն ՀՀ դրամ ծավալով: Տրամադրված «Արքա» քարտերի քանակը եռամսյակի ընթացքում ավելացել է մոտ 1.2 անգամ, իսկ 2002 թ. 2-րդ եռամսյակի համեմատ՝ 2 անգամ: «Արքա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2003 թ. 1-ին եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 1.3 անգամ, սակայն 2002 թ. 2-րդ եռամսյակի համեմատ ավելացել է 2 անգամ: Շրջանառության մեջ գտնվող մեկ «Արքա» քարտով շարունակվել է ամսական իրականացվել միջինը 2 գործառնություն, իսկ մեկ գործառնության միջին ծավալը կազմել է 24 հազ. ՀՀ դրամ:

«Արքա» քարտերի զարգացման դինամիկան



Քարտերի սպասարկման կետերի քանակը
(30.06.2003 դրությամբ)

	Քանակ
Ավտոմատ գանձման սարքեր	33
POS – տերմինալներ	263
Իմպրինտերներ	42
Ընդամենը	**289**

Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով «Արքա» քարտերով կատարված գործարքներ
(2003 թ. 2-րդ եռամսյակ)

	Գումար (մլն դրամ)	*Քանակ*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	1348.8	62514
POS – տերմինալների միջոցով	1258.8	45727
Իմպրինտերների միջոցով	0.4	9
Ընդամենը	**2608.0**	**108250**

Միջազգային փոխանցումների համակարգեր

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը միջազգային դրամական փոխանցումներ իրականացնելու նպատակով օգտագործում են՝ WESTERN UNION, MONEY GRAM, ANELIK, UNISTREAM, EXPRESS և այլ համակարգերը: 2003 թ. 2-րդ եռամսյակի ընթացքում այս համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետություն միջոցների ներհոսքը կազմել է 39577 մլն ՀՀ դրամ, որը 34470 մլն ՀՀ դրամով գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: 2003 թ. 1-ին եռամսյակի համեմատությամբ՝ դիտարկված միջոցների ներհոսքը և արտասահման կատարված փոխանցումների ծավալն աճել է 1.5 անգամ:

Երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ SWIFT համակարգին անդամակցող՝ ՀՀ տարածքում գործող բանկերի քանակը կազմել է 20, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը: Եռամսյակի ընթացքում համակարգի միջոցով փոխանցումներում գերակշռել են Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները՝ ծավալը 25043 մլն ՀՀ դրամով, իսկ քանակը՝ 42439 փոխանցումով: Առաջին եռամսյակի համեմատ, համակարգով իրականացված միջոցների ներհոսքը աճել է 1.15 անգամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը աճել է 1.11 անգամ:

Վճարահաշվարկային բնագավառի կարգավորում և զարգացում

2003 թվականի 2-րդ եռամսյակում շարունակվել են ՀՀ տարածքում վճարահաշվարկային բնագավառի զարգացման աշխատանքները:

ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների բնագավառի զարգացման նպատակով ՀՀ բանկերի կողմից շարունակվել են մանր վճարումների զարգացման և համապատասխան օրենսդրական և նորմատիվային դաշտի կարգավորման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ՀՀ կենտրոնական բանկի 2004 – 2006 թթ. ավտոմատացման ռազմավարության մշակման աշխատանքներ:

Իրականացվել են «Վարկային ռեգիստր» համակարգի վերամշակման, ծրագրային սպասարկման, նորմատիվային փաստաթղթերի լրամշակման աշխատանքներ: Ներկայացված նոր առաջարկների հիման վրա վերամշակվել և տեստավորվել է ծրագրի նոր տարբերակը: Լրամշակվել է «ՀՀ կենտրոնական բանկի քլիրինգային համակարգի միջոցով հաշվարկների իրականացման» հրահանգը:

Հաշվետու եռամսյակի ընթացքում նախագծվել և ներդրվել է ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջի» նոր տարբերակը, իրականացվել են ՀՀ կենտրոնական բանկի տեղեկատվական և այլ համակարգերի զարգացման աշխատանքներ:

Մակրոտնտեսական ցուցանիշները 2003 թ. հունվար-հունիսին

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Ամվանում	*Հունվար - ապրիլ*	*Հունվար – մայիս*	*Հունվար – հունիս*	*2003 թ. հունվար-հունիսի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար-հունիսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	266164.9	371711.9	518189.5	114.8
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	103.5	104.0	103.1	-
Մեկ զբաղվածից բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ)* [1]	208.5	291.2	405.9	115.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	123052.6	154850.4	192051.1	118.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	2008.1	2392.8	2741.5	96.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	45061.8	66525.6	81520.1	103.1
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	173601.8	224633.2	278039.4	112.4
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	22964.4	38726.9	61541.0	145.4
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	279136.4	367626.3	453588.7	109.1[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	293709.5	379264.3	465709.8	110.7[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	28742.0	29566.0	29977	115.7[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1403.9	1404.2	1404.1	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	127.5	127.6	127.3	-
Գործազրկության մակարդակը (%)	9.1	9.1	9.1	-

II. Արտաքին հատված

Ամվանում	*Հունվար - ապրիլ*	*Հունվար – մայիս*	*Հունվար – հունիս*	*2003 թ. հունվար-հունիսը 2002 թ. հունվար-հունիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(FOB. մլն ԱՄՆ դոլար)*	179.0	249.4	312.4	139.4
Ներմուծում *(CIF. մլն ԱՄՆ դոլար)*	356.1	475.7	602.8	148.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	177.0	226.2	290.4	159.6

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	104.1	97.0	100.0	100.2
Փետրվար	98.5	105.7	100.3	102.5
Մարտ	99.5	100.0	100.0	100.0
Ապրիլ	102.0	102.5	100.0	98.3
Մայիս	101.2	108.1	99.9	97.4
Հունիս	101.4	95.0	99.9	81.0
2003 թ. հունվար-հունիսը 2002 թ. հունվար-հունիսի նկատմամբ	103.2	103.9	100.8	105.3

Ժամանակաշրջան	*2001*	*2002*	*2003*	*2003*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.6	2.2	4.1	4.1
Փետրվար	-0.9	-0.7	-1.5	2.5
Մարտ	0.0	-0.6	-0.5	2.1
Ապրիլ	-0.1	2.5	2.0	4.2
Մայիս	1.6	1.7	1.2	5.4
Հունիս	-1.3	-0.5	1.4	6.8
Հուլիս	-2.7	-5.0		
Օգոստոս	-0.7	-3.0		
Սեպտեմբեր	-1.2	-0.6		
Հոկտեմբեր	0.1	0.5		
Նոյեմբեր	1.2	2.2		
Դեկտեմբեր	2.4	3.6		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերների նկատմամբ)*	2.9	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.1	1.1		

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ[3]
	պետական կառավարման մարմինների	պետական ոչ առևտրային կազմակերպությունների	պետ. տնտ. գերակշռող մասնակցությամբ կազմակերպությունների	ընդամենը	կենտրոն. հաշվման և վճարումների համակարգի միջոցով	կենտրոն. հաշվման և վճարումների այլ միջոցով	ՕԻԳ-երի միջոցներ կրող	ՕԻԳ-երի միջոցներ չկրող	ՀՀ սուբյ. պետ. կամ հիմնադրամի միջոցներ	ընդամենը		
2002												
Դեկտեմբեր	0	3437	0	3437	12992	150	5	0	0	13148	-9711	***-9707***
2003												
Հունվար	0	1897	0	1897	14622	150	56	0	0	14828	-12931	-12921
Փետրվար	0	1791	0	1791	11839	151	105	58	0	12153	-10362	-10366
Մարտ	0	1744	0	1744	15150	151	7	0	0	15308	-13564	-13617
Ապրիլ	0	1536	0	1536	25125	151	13	0	0	25288	-23752	-23758
Մայիս	0	1431	0	1431	24004	150	66	0	0	24221	-22790	-22857
Հունիս	0	1247	0	1247	29655	158	11	0	0	29824	-28577	-28751

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և կառավարության ավանդների տարբերությունը:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	Դ - 02	Հ - 03	Փ - 03	Մ - 03	Ա - 03	Մ - 03	Հ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***130616***	***124388***	***123570***	***116338***	***130021***	***132499***	***129437***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-19343***	***-24298***	***-25787***	***-23007***	***-32691***	***-32049***	***-34053***
Կառավարություն	-9711	-12931	-10362	-13564	-23752	-22790	-28577
Կենտրոնական կառավարություն	-9711	-12931	-10362	-13564	-23752	-22790	-28577
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	-58	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0	0	0	0	0
Բանկեր	10392	9642	4981	7500	7650	7500	6500
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0	0	0
ավանդներ (-)	0	-750	-2360	0	0	-300	-1600
Զուտ այլ ակտիվներ	-20024	-21009	-20406	-16943	-16589	-16759	-11976
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***108315***	***101173***	***98802***	***94870***	***97003***	***101528***	***98863***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***111273***	***100090***	***97783***	***93331***	***97330***	***100450***	***95384***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	92088	77756	78573	77965	76782	80450	79967
Պարտադիր պահուստ. (դրամով)	18829	21959	18799	14920	20079	19590	14992
Այլ հաշիվներ	356	375	411	446	469	410	425
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-6228***	***-818***	***-7232***	***13683***	***2478***	***-3062***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-4955***	***-1489***	***2780***	***-9684***	***642***	***-2004***
Կառավարություն	-	-3220	2569	-3202	-10188	962	-5787
Կենտրոնական կառավարություն	-	-3220	2569	-3202	-10188	962	-5787
Բանկեր	-	-750	-4661	2519	150	-150	-1000
այդ թվում՝ ավանդներ (-)	-	750	1610	-2360	0	300	1300
Զուտ այլ ակտիվներ	-	-985	603	3463	354	-170	4783
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-7141***	***-2371***	***-3933***	***2133***	***4525***	***-2664***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-11183***	***-2307***	***-4452***	***3999***	***3120***	***-5066***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-14332	817	-608	-1183	3668	-483
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	3130	-3160	-3879	5159	-489	-4598
Այլ հաշիվներ	-	19	36	35	23	-59	15
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***4.8***	***-0.7***	***-5.9***	***11.8***	***1.9***	***-2.3***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***25.6***	***6.1***	***-10.8***	***42.1***	***-2.0***	***6.3***
Կառավարություն	-	33.2	-19.9	30.9	75.1	-4.1	25.4
Բանկեր	-	7.2	-48.3	50.6	2.0	-2.0	-13.3
Զուտ այլ ակտիվներ	-	4.9	-2.9	-17.0	-2.1	1.0	-28.5
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-6.6***	***-2.3***	***-4.0***	***2.2***	***4.7***	***-2.6***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-10.1***	***-2.3***	***-4.6***	***4.3***	***3.2***	***-5.0***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-15.6	1.1	-0.8	-1.5	4.8	-0.6
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	16.6	-14.4	-20.6	34.6	-2.4	-23.5
Այլ հաշիվներ	-	5.3	9.6	8.5	5.2	12.6	3.7

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱԱ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱԱ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ուսցիա ոսկի= 349.3 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ – 03	Փ - 03	Մ - 03	Ա - 03	Մ - 03	Հ - 03
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**18286**	**15367**	**20373**	**24667**	**23970**	**25678**	**30573**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	70982	83308	73718	75790	78023	83379	87298
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-49365	-65466	-50842	-49028	-51467	-55854	-54151
Արտաքին պարտավորություններ դրամով	-3331	-2476	-2502	-2095	-2586	-1848	-2574
ԶՆԱ	**95940**	**94480**	**89127**	**83426**	**91841**	**92764**	**87365**
Կառավարություն	10569	10626	9140	11246	11580	12478	13937
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	11467	14600	13072	6943	11855	11680	8315
Պահուստային ակտիվներ	22069	25121	23960	17895	22858	22884	19879
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-10601	-10521	-10888	-10951	-11002	-11204	-11563
Տնտեսություն[2]	93993	89563	86579	87719	88957	92333	92585
Ձեռնարկություններ[3]	63218	61063	57647	56514	55822	57148	56934
Դրամով	15414	14356	14949	15137	14357	17322	17630
Արտարժույթով	43675	43211	39497	38365	38896	37589	37457
Արժեթղթեր	4130	3495	3201	3013	2569	2237	1847
Տնային տնտեսություններ	26219	23523	24377	26083	27899	29662	30626
Դրամով	4353	4261	4289	4495	4655	4,740	5120
Արտարժույթով	21866	19262	20088	21589	23244	24922	25505
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	64	71	77	75	89	85	20
Դրամով	64	64	64	62	67	66	6
Արտարժույթով	0	7	13	13	22	19	15
Այլ ֆինանսական կազմակերպություններ[4]	-	4907	4469	4943	5043	5393	4961
Դրամով	-	3286	3077	3378	3744	4195	3889
Արտարժույթով	-	1621	1393	1565	1299	1199	1072
Այլ ռեզիդենտներ[5]	4492	0	8	104	104	45	45
Դրամով	3116	0	0	0	0	0	0
Արտարժույթով	1376	0	8	104	104	45	45
Ջուտ այլ ակտիվներ	-20089	-20309	-19663	-22483	-20551	-23728	-27472
Արտաքին ակտիվներ դրամով	9	36	176	946	861	894	1345
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	2494	1310	4571	1237	3043	1546	2564
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-41	-163	-3496	-229	-160	-269	-912
Ներդրումներ փայաբաժիններում	158	221	225	224	455	455	505
Միջբանկային պահանջներ	4997	4896	3476	6124	3561	3129	3924
Այլ ակտիվներ	30380	29789	28314	29767	30178	30110	31570
Միջբանկային պարտավորություններ	-4671	-4569	-3178	-5747	-3353	-2941	-3580
Դրամական շուկայի գործիքներ	0	-	-277	-479	-741	-770	-777
Կապիտալ հաշիվներ	-42342	-43115	-42217	-45258	-45427	-45434	-46478
Այլ պարտավորություններ	-11166	-8714	-7258	-9068	-8968	-10448	-15634
ԱՎԱՆԴՆԵՐ	**114227**	**109847**	**109500**	**108094**	**115811**	**118442**	**117938**
Դրամով ավանդներ	35190	32276	31931	31321	34269	38517	37150
Ցպահանջ ավանդներ	25682	21580	21953	20163	23030	24693	23309
Ժամկետային ավանդներ	9508	10696	9978	11158	11239	13824	13841
Ավանդներ արտարժույթով	79037	77571	77569	76773	81542	79924	80789
Ցպահանջ ավանդներ	36853	34178	34580	33126	37444	35902	37517
Ժամկետային ավանդներ	41836	43014	42594	43231	43670	43579	42841
Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ	375	378	394	415	429	443	431

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[3] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում հրապարակված ցուցանիշներից:

[4] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմ.» տողում:

[5] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ - 03	Փ - 03	Մ - 03	Ա - 03	Մ - 03	Հ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***148902***	***139755***	***143943***	***141005***	***153991***	***158177***	***160010***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***54236***	***45447***	***41491***	***42337***	***36181***	***37567***	***34833***
Կառավարություն	963	-2305	-1222	-2317	-12172	-10311	-14641
Տնտեսություն [4,5]	94016	89584	86596	87739	88974	92350	92603
Ձեռնարկ. և կազմակերպ.	67710	61063	57655	56618	55926	57193	56979
որից՝ կուտակված տոկոսներ	1041	933	925	961	930	959	1009
Տնային տնտեսություններ	26242	23543	24395	26103	27916	29679	30643
որից՝ կուտակված տոկոսներ	500	499	512	525	489	523	540
Հասարակական կազմակերպություններ	64	71	77	75	89	85	20
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ [6]	0	4907	4469	4943	5043	5393	4961
որից՝ կուտակված տոկոսներ	0	44	57	62	84	64	70
Զուտ այլ ակտիվներ	-40743	-41832	-43883	-43085	-40621	-44472	-43130
ԴՐԱՄԱՅԻՆ ՉԱՆԳՎԱԾ [7]	***123897***	***107407***	***107600***	***106323***	***108378***	***115539***	***113808***
ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***202588***	***184602***	***184788***	***182683***	***189493***	***195021***	***194166***
ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ [8]	***203138***	***185202***	***185434***	***183342***	***190172***	***195744***	***194843***
Շրջանառությունում կանխիկ դրամ	88556	74980	75523	74801	73890	76892	76479
Ցպահանջ ավանդներ [9]	26036	21954	22351	20608	23499	25103	23734
կուտակված տոկոսներ	144	21	28	26	31	46	34
Ժամկետային խնայ. և արտարժ. ավանդ.	88546	88267	87560	87932	92782	93748	94629
կուտակված տոկոսներ	406	579	618	633	648	677	643
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	79038	77572	77582	76774	81543	79924	80789
Ցպահանջ	36854	34178	34593	33126	37445	35902	37517
Ժամկետային	41836	43014	42594	43231	43670	43579	42841
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	347	378	394	415	429	443	431
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-9147***	***4188***	***-2938***	***12986***	***4186***	***1833***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-8789***	***-3956***	***846***	***-6156***	***1386***	***-2734***
Կառավարություն		-3268	1083	-1095	-9855	1861	-4330
Տնտեսություն		-4432	-2988	1143	1235	3376	253
Ձեռնարկ. և կազմակերպ.		-6647	-3408	-1037	-692	1267	-214
որից՝ կուտակված տոկոսներ		-108	-8	36	-31	29	50
Տնային տնտեսություններ		-2699	852	1708	1813	1763	964
որից՝ կուտակված տոկոսներ		-1	13	13	-36	34	17
Հասարակական կազմակերպություններ		0	6	-2	14	-4	-65
որից՝ կուտակված տոկոսներ		0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ		4907	-438	474	100	350	-432
որից՝ կուտակված տոկոսներ		44	13	5	22	-20	6
Զուտ այլ ակտիվներ		-1089	-2051	798	2464	-3851	1343
ԴՐԱՄԱՅԻՆ ՉԱՆԳՎԱԾ		***-16490***	***193***	***-1277***	***2055***	***7161***	***-1732***
ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		***-17986***	***186***	***-2105***	***6810***	***5528***	***-855***
ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ		***-17936***	***232***	***-2092***	***6830***	***5572***	***-901***
Շրջանառությունում կանխիկ դրամ		-13576	543	-722	-911	3002	-413
Ցպահանջ ավանդներ		-4082	397	-1743	2891	1604	-1369
կուտակված տոկոսներ		-123	7	-2	5	15	-12
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-279	-707	372	4850	966	881
կուտակված տոկոսներ		173	39	15	15	29	-34
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1466	10	-808	4769	-1619	865
Ցպահանջ		-2676	415	-1467	4319	-1543	1615
Ժամկետային		1178	-420	637	439	-91	-738
Արտարժույթով ավանդների կուտակ. տոկոսներ		31	16	21	14	14	-12

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ՀՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-6.1***	***3.0***	***-2.0***	***9.2***	***2.7***	***1.2***
ՀՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-16.2***	***-8.7***	***2.0***	***-14.5***	***3.8***	***-7.3***
Կառավարություն		-339.4	-47.0	89.6	425.3	-15.3	42.0
Տնտեսություն		-4.7	-3.3	1.3	1.4	3.8	0.3
Ձեռնարկ. և կազմակերպ.		-9.8	-5.6	-1.8	-1.2	2.3	-0.4
Տնային տնտեսություններ		-10.3	3.6	7.0	6.9	6.3	3.2
Հասարակական կազմակերպություններ		10.9	8.5	-2.6	18.7	-4.5	-76.5
Այլ ֆինանսական կազմակերպություններ		100.0	-8.9	10.6	2.0	6.9	-8.0
Զուտ այլ ակտիվներ		2.7	4.9	-1.8	-5.7	9.5	-3.0
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ [7]		***-13.3***	***0.2***	***-1.2***	***1.9***	***6.6***	***-1.5***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		***-8.9***	***0.1***	***-1.1***	***3.7***	***2.9***	***-0.4***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ [8]		***-8.8***	***0.1***	***-1.1***	***3.7***	***2.9***	***-0.5***
Շրջանառությունում կանխիկ դրամ		-15.3	0.7	-1.0	-1.2	4.1	-0.5
Ցպահանջ ավանդներ		-15.7	1.8	-7.8	14.0	6.8	-5.5
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-0.3	-0.8	0.4	5.5	1.0	0.9
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1.9	0.0	-1.0	6.2	-2.0	1.1
Ցպահանջ		-7.3	1.2	-4.2	13.0	-4.1	4.5
Ժամկետային		2.8	-1.0	1.5	1.0	-0.2	-1.7

[1] *Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:*

[2] *ՁԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ՁԱԱ-ն՝ փաստացի փոխարժեքով:*

[3] *ԿԲ ՁԱԱ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի= 349.3 ԱՄՆ դոլար:*

[4] *Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում հրապարակված ցուցանիշներից:*

[5] *Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:*

[6] *Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:*

[7] *Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):*

[8] *Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):*

[9] *Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	**2001** [3]	**2002** [4]	**2003**					
	Դ	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	329.6	431.3	420.0	417.8	403.6	440.0	453.6	441.2
Համախառն միջազգային պահուստներ	333.2	441.7	430.4	428.2	413.2	448.9	461.1	448.7
Ոսկի	12.4	15.7	16.3	15.9	14.9	14.9	16.2	15.4
ՀՓԻ ԱՄՀ-ում	10.2	30.1	26.2	26.1	26.0	23.6	24.2	20.1
Արտարժույթ [2]	310.6	395.9	387.8	386.3	372.2	410.4	420.7	413.2
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [5]	***331.2***	***432.3***	***421.4***	***419.3***	***405.2***	***441.7***	***455.3***	**442.9**

[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը:*

[4] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2002 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.3595 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2002 թ. դեկտեմբեր, 2003 թ. հունվար և փետրվար ամիսներին «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:*

[5] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2001[3]	2002[3]	2003					
	Դ	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
Վարկեր [1]								
Իրավաբանական անձանց								
ՀՀ դրամով	27.5	23.4	20.0	26.7	20.7	17.5	24.2	20.1
ԱՄՆ դոլարով	20.3	19.4	18.9	20.2	20.2	22.7	14.6	26.4
Ֆիզիկական անձանց								
ՀՀ դրամով	30.2	22.5	22.5	25.6	27.2	25.3	17.5	26.8
ԱՄՆ դոլարով	35.5	33.5	34.6	28.7	35.9	34.6	34.9	34.3
Ավանդներ [1]								
Իրավաբանական անձանցից								
ՀՀ դրամով	15.0	8.3	7.8	8.5	7.9	8.0	7.8	5.5
ԱՄՆ դոլարով	9.7	2.0	4.3	2.3	5.7	3.0	2.3	5.6
Ֆիզիկական անձանցից								
ՀՀ դրամով	14.6	9.8	8.9	8.8	7.8	8.2	9.2	6.7
ԱՄՆ դոլարով	10.8	5.6	4.7	3.5	7.0	6.0	6.4	6.6
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	13.5	13.5	10.0	10.0	10.0	10.0	10.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	6.0	6.0	5.0	5.0	5.0	5.0	5.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	30.0	28.0	28.0	20.0	20.0	20.0	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	16.4	15.6	14.9	12.8	13.5	14.7	13.5	11.8
Սղաճ	2.9	2.0	4.1	-1.5	-0.5	2.0	1.2	1.4

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:
[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:
[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:
[3] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ցուցանիշներ	Միջբանկային ռեպո շուկայի շրջանառությունը									
	մինչև 7 օր		8-14 օր		15-28 օր		28 օր և ավելի		Ընդամենը	
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%
2003										
Հունվար	4738.18	10.95	611.94	11.42	17.00	12.00	1247.95	8.99	**6615.07**	**10.63**
Առավելագույն տոկոսադրույք		13.50		12.00		12.00		10.00		**13.50**
Նվազագույն տոկոսադրույք		9.00		10.50		12.00		6.50		**6.50**
Ստանդարտ շեղում		0.95		0.71		-		1.35		**1.35**
Փետրվար	2696.63	8.81	220.00	7.00	9.34	9.00	279.80	8.99	**3205.77**	**8.70**
Առավելագույն տոկոսադրույք		11.00		7.00		9.00		10.00		**11.00**
Նվազագույն տոկոսադրույք		5.00		7.00		9.00		6.50		**5.00**
Ստանդարտ շեղում		1.66						1.75		**1.62**
Մարտ	5326.93	7.74	29.10	9.00			623.94	10.00	**5979.98**	**7.98**
Առավելագույն տոկոսադրույք		10.00		9.00				10.00		**10.00**
Նվազագույն տոկոսադրույք		6.00		9.00				10.00		**6.00**
Ստանդարտ շեղում		0.88		-				-		**1.14**
Ապրիլ	7042.31	8.62	438.23	8.39	242.08	10.00	211.82	10.00	**7934.44**	**8.69**
Առավելագույն տոկոսադրույք		10.00		9.50		10.00		10.00		**10.00**
Նվազագույն տոկոսադրույք		7.00		8.00		10.00		10.00		**7.00**
Ստանդարտ շեղում		0.89		0.75		-		-		**0.91**
Մայիս	6613.70	7.33	1799.53	8.18	95.84	7.00	1206.06	9.57	**9715.14**	**7.76**
Առավելագույն տոկոսադրույք		10.00		10.00		7.00		10.00		**10.00**
Նվազագույն տոկոսադրույք		6.00		7.00		7.00		9.50		**6.00**
Ստանդարտ շեղում		1.14		1.11		-		0.17		**1.22**
Հունիս	**8977.70**	**7.51**	**1243.63**	**7.78**	**235.70**	**7.00**	**841.31**	**9.61**	**11298.34**	**7.68**
Առավելագույն տոկոսադրույք		10.00		12.00		7.00		10.00		**12.00**
Նվազագույն տոկոսադրույք		4.00		7.00		7.00		9.50		**4.00**
Ստանդարտ շեղում		1.18		1.42		-		0.22		**1.26**
Ընդամենը	**35395.455**	**8.29**	**4342.431**	**8.49**	**599.963**	**8.38**	**4410.883**	**9.46**	**44748.732**	**8.43**
Առավելագույն տոկոսադրույք		13.50		12.00		12.00		10.00		**13.50**
Նվազագույն տոկոսադրույք		4.00		7.00		7.00		6.50		**4.00**

** ԿԲ կողմից իրականացված գործառնություններն ընդգրկված չեն:*

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն դրամ)

ժամկետ	Ավանդի ծավալ*	Տոկոսադրույք	Վարկի ծավալ*	Տոկոսադրույք
2002				
Հունվար	1780	8	-	-
Փետրվար	4524	6.71	-	-
Մարտ	2170	6	250	28
Ապրիլ	45	6	269	28
Հունիս	-	-	4161	28
Հուլիս	-	-	508	28
Օգոստոս	-	-	518	28
Սեպտեմբեր	245	6	-	-
Հոկտեմբեր	100	6	2187	28
Նոյեմբեր	200	6	-	-
Դեկտեմբեր	-	-	-	-
2003				
Հունվար	750	6	-	-
Փետրվար	8110	5.7	-	-
Մարտ	2720	5.0	-	-
Մայիս	-	-	-	-
Հունիս	4950	5.0	-	-

** Մարումները հանված չեն:*

ԿՆՔՎԱԾ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն դրամ)

ժամկետ	Ռեպո համաձայն. ծավալը *	Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	Հակադարձ ռեպո համաձայն. ծավալը*	Հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը
2002				
Հունվար	-	-	-	-
Օգոստոս	2863	13.5	-	-
Հոկտեմբեր	1118	13.5	-	-
Դեկտեմբեր	-	-	-	-
2003				
Հունվար	-	-	-	-
Փետրվար	-	-	159.0	10.0
Մարտ	-	-	-	-
Մայիս	-	-	-	-
Հունիս	-	-	-	-

** Մարումները հանված չեն:*

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ-02	Հ-03	Փ	Մ	Ա	Մ	Հ
1	-	-	-	-	589.02	-	-
2	585.81	-	-	-	588.56	586.70	585.27
3	585.81	-	585.46	588.85	588.56	-	585.27
4	586.51	-	584.65	588.99	588.43	-	585.00
5	586.51	-	585.52	-	-	586.51	585.00
6	586.15	-	584.70	588.99	-	586.51	585.00
7	-	585.10	586.00	588.85	588.21	587.18	-
8	-	586.63	-	-	588.00	587.18	-
9	586.44	579.03	-	-	588.89	-	584.74
10	586.79	582.48	586.41	589.25	589.03	-	584.59
11	586.92	-	586.10	589.88	588.88	-	584.94
12	586.92	-	585.89	590.23	-	586.67	585.07
13	586.35	582.48	586.23	590.93	-	587.13	585.07
14	-	582.48	585.81	591.53	588.69	586.60	-
15	-	582.17	585.81	591.53	588.11	586.73	-
16	585.51	581.00	585.81	591.53	588.31	586.12	585.42
17	585.15	582.00	585.96	591.76	588.23	-	585.12
18	584.88	-	585.96	591.76	588.01	-	585.48
19	584.00	-	-	591.76	-	585.96	585.48
20	582.52	582.00	586.21	591.61	-	585.80	585.48
21	582.52	582.00	586.56	591.51	587.54	585.38	-
22	-	582.00	586.56	-	587.67	585.33	-
23	582.16	582.25	-	-	587.67	585.11	585.97
24	582.16	584.00	587.36	591.22	-	-	585.74
25	582.22	584.00	587.70	590.64	587.54	-	585.54
26	582.00	-	587.81	590.55	587.54	585.00	585.10
27	582.20	584.23	588.12	590.23	-	584.45	585.16
28	582.20	-	588.46	589.52	587.37	-	585.16
29	583.65	584.44	-	589.52	587.15	584.69	585.16
30	584.89	584.64	-	589.52	587.01	585.04	584.80
31	-	584.73	-	589.52	-	585.04	-
ժամանակահատվածի վերջ	584.89	584.73	588.46	589.52	587.01	585.04	584.80
ժամանակահատվածի միջին	584.59	583.03	586.32	590.40	588.11	585.96	585.20

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(2003 թ. հունիսի 30-ի դրությամբ)

Եկամուտների և ծախսերի հաշվետվություն

(հազար ՀՀ դրամ)

	Ծանոթագրություն	6 ամիս		3 ամիս	
		30.06.03	30.06.02	30.06.03	30.06.02
Եկամուտներ					
Եկամուտներ բանկարժեք մետաղներից և արտարժութային գործառնություններից	1	2,605,323	2,037,586	1,534,994	658,883
Եկամուտներ դրամով գործառնություններից	2	448,549	914,372	214,594	409,765
Այլ եկամուտներ	3	526,469	514,090	217,766	342,460
Ընդամենը եկամուտներ		**3,580,341**	**3,466,048**	**1,967,354**	**1,411,108**
Ծախսեր					
Ծախսեր արտարժութային գործառնություններից	4	454,665	489,447	255,630	242,129
Վարկերի և տրամադրված երաշխիքների արժեզրկման կորուստներ		0	0	0	0
Թղթադրամի տպագրման և մետաղադրամի հատման ծախսեր		298,045	317,810	82,072	2,012
Ծախսեր դրամով գործառնություններից	5	613,578	347,843	352,702	162,804
Այլ ծախսեր	6	1,441,059	1,278,542	706,404	616,853
Ընդամենը ծախսեր		**2,807,347**	**2,433,642**	**1,396,808**	**1,023,798**
Շահույթ՝ համաձայն ՀՀ օրենսդրության		**772,994**	**1,032,406**	**570,546**	**387,310**
Արտարժույթի և թանկարժեք մետաղների վերագնահատումից չիրացված շահույթ (վնաս)		1,605,793	6,566,190	413,582	1,628,869
Շահույթ՝ համաձայն ՄՀՀՍ-ի		**2,378,787**	**7,598,596**	**984,128**	**2,016,179**
Շահույթի բաշխում՝					
Կառավարությանը		0	0	0	0
Գլխավոր պահուստին		0	0	0	0
Վերագնահատման պահուստին		(1,605,793)	(6,566,190)	(413,582)	(1,628,869)

Եկամուտների և ծախսերի հաշվետվությանը կից ծանոթագրությունները կազմում են նրա անբաժանելի մասը:

Եկամուտների և ծախսերի հաշվետվությունը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2003 թվականի օգոստոսի 12-ին և ստորագրվել:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագահ

ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

Հաշվեկշիռ

(հազար ՀՀ դրամ)

	Ծանոթագրություն	*30.06.03*	*31.03.03*	*31.12.02*
Ակտիվներ				
Ակտիվներ ոսկով և արտարժույթով				
Ոսկի	7	9,019,442	8,808,969	9,175,734
ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ	8	87,135,066	89,449,985	90,829,824
Արտարժութային ակտիվներ	9	247,688,596	220,602,917	234,144,032
Ակտիվներ ՀՀ դրամով				
Պետական արժեթղթեր	10	1,254,658	1,777,739	3,498,572
Վարկեր և ավանդներ	11	8,250,216	7,642,886	5,693,896
Այլ ակտիվներ	12	1,162,002	1,110,936	1,147,843
Հիմնական միջոցներ	13	4,688,384	4,704,504	4,925,602
Ընդամենը ակտիվներ		**359,198,364**	**334,097,936**	**349,415,503**
Պարտավորություններ				
Պարտավորություններ արտարժույթով				
Բանկեր		8,253,416	7,775,213	8,151,003
ԱՄՀ	8	110,215,264	102,823,240	102,808,962
Հայաստանի կառավարություն		4,542,041	5,838,765	6,233,249
Այլ	14	50,150	36,072	71,706
Պարտավորություններ ՀՀ դրամով				
Թղթադրամներ և մետաղադրամներ		79,967,370	77,964,823	92,088,496
Հայաստանի կառավարության ավանդներ և հաշիվներ		29,666,167	15,156,512	12,997,502
Բանկերի ավանդներ և հաշիվներ		16,600,209	14,922,479	18,833,173
Այլ ավանդներ և հաշիվներ		425,088	445,478	353,801
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	8	84,588,552	84,242,329	84,341,665
Այլ պարտավորություններ	15	473,025	1,460,071	1,497,651
Ընդամենը պարտավորություններ		**334,781,282**	**310,664,982**	**327,377,208**
Կապիտալ և պահուստներ				
Կանոնադրական կապիտալ		100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ		9,335,186	9,335,186	9,335,186
Արտարժույթի և թանկարժեք մետաղների վերագնահատման պահուստներ		14,208,902	13,795,320	12,603,109
Շահույթ		772,994	202,448	0
Ընդամենը կապիտալ և պահուստներ		24,417,082	23,432,954	22,038,295
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		**359,198,364**	**334,097,936**	**349,415,503**

Հաշվեկշռին կից ծանոթագրությունները կազմում են նրա անբաժանելի մասը:

Հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2003 թվականի օգոստոսի 12-ին և ստորագրվել:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագահ

ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

Ծանոթագրություն 1. Եկամուտներ բանկարժեք մետաղներից և արտարժութային գործառնություններից

(հազար ՀՀ դրամ)

	6 ամիս		*3 ամիս*	
	30.06.03	*30.06.02*	*30.06.03*	*30.06.02*
Ներդրված ավանդներ արտարժույթով	1,451,880	1,253,875	737,706	624,281
Հավատարմագրային կառավարման հաշիվներ	419,930	61,698	419,930	(331,446)
Օտարերկրյա արժեթղթեր	424,623	487,180	222,785	245,335
Թղթակցային հաշիվներ	162,246	148,252	81,965	76,088
Տրամադրված վարկեր արտարժույթով	0	19,244	0	15,926
Ներդրված ավանդներ ոսկով	1,777	24,829	61	10,135
Այլ	144,867	42,508	72,547	18,564
	2,605,323	**2,037,586**	**1,534,994**	**658,883**

Ծանոթագրություն 2. Եկամուտներ դրամով գործառնություններից

(հազար ՀՀ դրամ)

	6 ամիս		*3 ամիս*	
	30.06.03	*30.06.02*	*30.06.03*	*30.06.02*
Դրամային արժեթղթեր	148,779	741,851	59,942	314,029
Վարկեր և ռեպո համաձայնագրեր բանկերին	299,770	166,503	154,652	91,284
Ներդրված ավանդներ	0	6,018	0	4,452
	448,549	**914,372**	**214,594**	**409,765**

Ծանոթագրություն 3. Այլ եկամուտներ

(հազար ՀՀ դրամ)

	6 ամիս		*3 ամիս*	
	30.06.03	*30.06.02*	*30.06.03*	*30.06.02*
Արտարժույթի առք ու վաճառք	338,909	375,373	141,677	286,497
ՀՀ ԿԲ-ին նվիրատվություն	22,793	52,669	12,092	24,212
Տուգանքներ	1,053	25,482	11	(631)
Վարձավճարներ	4,930	4,095	2,782	2,253
Այլ եկամուտներ	158,784	56,471	61,204	30,129
	526,469	**514,090**	**217,766**	**342,460**

Ծանոթագրություն 4. Ծախսեր արտարժութային գործառնություններից

(հազար ՀՀ դրամ)

	6 ամիս		*3 ամիս*	
	30.06.03	*30.06.02*	*30.06.03*	*30.06.02*
ԱՄՀ-ի վարկերի դիմաց հաշվեգրված տոկոս	372,339	390,306	192,935	203,801
Հաշվեգրված տոկոսներ	32,365	14,197	15,461	7,135
Այլ	49,961	84,944	47,234	31,193
	454,665	**489,447**	**255,630**	**242,129**

Ծանոթագրություն 5. Ծախսեր դրամով գործառնություններից

(հազար ՀՀ դրամ)

	6 ամիս		*3 ամիս*	
	30.06.03	*30.06.02*	*30.06.03*	*30.06.02*
Բանկերի հաշիվների, ավանդների, վարկերի և հակադարձ ռեպո տոկոսներ	233,844	193,391	114,363	91,478
Այլ կազմակերպությունների ավանդների տոկոսներ	317,146	82,748	200,860	35,821
Կոմիսիոն վճարներ	23,948	19,399	15,059	10,440
Այլ	38,640	52,305	22,420	25,065
	613,578	**347,843**	**352,702**	**162,804**

Ծանոթագրություն 6. Այլ ծախսեր

(հազար ՀՀ դրամ)

	6 ամիս		*3 ամիս*	
	30.06.03	*30.06.02*	*30.06.03*	*30.06.02*
Աշխատակիցների վարձատրություն	538,541	496,087	273,533	254,799
Հիմնական միջոցների մաշվածք	373,394	342,396	187,133	177,937
Վարչական ծախսեր	165,756	125,423	102,089	82,140
Ծախսեր արտարժույթի առք ու վաճառքից	12,988	140,231	6,021	57
Այլ ծախսեր	350,380	174,405	137,628	101,920
	1,441,059	**1,278,542**	**706,404**	**616,853**

Ծանոթագրություն 7. Ոսկի

(հազար ՀՀ դրամ)

	30.06.03	*31.03.03*	*31.12.02*
Ոսկով ավանդներ և հաշիվներ	9,019,442	8,807,698	9,173,146
Հաշվեգրված տոկոսներ*	0	1,271	2,588
	9,019,442	**8,808,969**	**9,175,734**

** Ոսկով ավանդների դիմաց տոկոսագումարները հաշվեգրվում և ստացվում են ԱՄՆ դոլարով:*

Ծանոթագրություն 8. Արժույթի միջազգային հիմնադրամի հաշիվներ

ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.03	*31.03.03*	*31.12.02*
Ակտիվներ ՀՓԻ-ով	11,728,163	15,351,842	17,607,924
ԱՄՀ-ին անդամակցություն	75,368,426	74,051,720	73,155,798
Հաշվեգրված տոկոսներ	38,477	46,423	66,102
	87,135,066	**89,449,985**	**90,829,824**

ՀՀ դրամով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.03	*31.03.03*	*31.12.02*
ԱՄՀ-ի արժեթղթերի հաշիվ	83,680,147	76,652,431	77,692,249
ԱՄՀ-ի նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների կարգավորման հաշիվ	707,763	7,389,625	6,449,143
ԱՄՀ-ի թիվ 1 հաշիվ	196,796	196,796	196,796
ԱՄՀ-ի թիվ 2 հաշիվ	3,846	3,477	3,477
	84,588,552	**84,242,329**	**84,341,665**

ՀՓԻ-ով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.03	*31.03.03*	*31.12.02*
Վարկեր	109,908,874	102,656,209	102,756,065
Հաշվեգրված տոկոսներ	306,390	167,031	52,897
	110,215,264	**102,823,240**	**102,808,962**

Ծանոթագրություն 9. Արտարժութային ակտիվներ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.03	*31.03.03*	*31.12.02*
Արտարժույթով ավանդներ և հաշիվներ	136,686,387	124,548,902	137,573,657
Հավատարմագրային կառավարման հաշիվներ	62,958,021	63,067,178	62,593,615
Արժեթղթեր	41,235,121	31,127,947	30,758,359
Արտարժույթով վարկեր	0	0	2,392,200
Արտարժույթով վարկերի արժեզրկման կորուստներ	0	0	(741,582)
Ակրեդիտիվների հաշիվներ	454,661	430,901	413,414
Հաշվեգրված տոկոսներ	949,860	946,511	587,036
Դեբիտորական պարտքեր արտարժույթով	5,066,369	190,177	353,708
Կանխիկ արտարժույթ	337,092	290,273	212,639
Այլ արտարժութային ներդրումներ	1,085	1,028	986
	247,688,596	**220,602,917**	**234,144,032**

Ծանոթագրություն 10. Պետական արժեթղթեր

(հազար ՀՀ դրամ)

	30.06.03	*31.03.03*	*31.12.02*
Հայաստանի Կառավարության արժեթղթեր	1,247,046	1,744,034	3,437,473
Հաշվեգրված տոկոսներ	7,612	33,705	61,099
	1,254,658	**1,777,739**	**3,498,572**

Ծանոթագրություն 11. Վարկեր և ավանդներ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.03	*31.03.03*	*31.12.02*
Վարկեր	8,117,351	7,519,556	8,023,054
Հաշվեգրված տոկոսներ	154,792	145,257	157,989
Վարկերի արժեզրկման կորուստներ	(21,927)	(21,927)	(2,487,147)
	8,250,216	**7,642,886**	**5,693,896**

Ծանոթագրություն 12. Այլ ակտիվներ ՀՀ դրամով

(հազար ՀՀ դրամ)

	30.06.03	*31.03.03*	*31.12.02*
Դեբիտորական պարտքեր	82,090	42,693	26,926
Դրամագիտական արժեքներ	265,576	288,965	337,257
Ներդրումներ	657,574	660,247	660,247
Այլ ակտիվներ	156,762	119,031	123,413
	1,162,002	**1,110,936**	**1,147,843**

Ծանոթագրություն 13. Հիմնական միջոցներ

(հազար ՀՀ դրամ)

	Հող, շենք և շինություններ	Համակարգչ. և ցանցային սարքավոր.	Համակարգչ. ծրագրեր	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Արժեք կամ գնահատում					
		3 ամիս			
Առ 1 ապրիլ, 2003 թ.	3,906,177	1,639,943	219,970	2,163,586	7,929,676
Ավելացում	58,768	0	14,894	97,351	171,013
Հաշվների կարգավորում	0	(43,537)	0	43,537	0
Օտարում	0	0	0	0	0
Առ 30 հունիս, 2003 թ.	3,964,945	1,596,406	234,864	2,304,474	8,100,689
Մաշվածք					
Առ 1 ապրիլ, 2003 թ.	544,766	1,364,217	193,850	1,122,339	3,225,172
Կուտակված մաշվածք	46,454	33,549	4,075	103,055	187,133
Հաշվների կարգավորում		(37,515)	0	37,515	0
Օտարում	0	0	0	0	0
Առ 30 հունիս, 2003 թ.	591,220	1,360,251	197,925	1,262,909	3,412,305
Հաշվեկշռային արժեք					
Առ 31 մարտ, 2003 թ.	3,361,411	275,726	26,120	1,041,247	4,704,504
Առ 30 հունիս, 2003 թ.	3,373,725	236,155	36,939	1,041,565	4,688,384
		6 ամիս			
Առ 1 հունվար, 2003 թ.	3,976,104	1,629,705	218,906	2,155,148	7,979,863
Ավելացում	62,570	11,302	15,958	107,518	197,348
Հաշվների կարգավորում	0	(44,601)	0	43,537	(1,064)
Օտարում	(73,729)	0	0	(1,729)	(75,458)
Առ 30 հունիս, 2003 թ.	3,964,945	1,596,406	234,864	2,304,474	8,100,689
Մաշվածք					
Առ 1 հունվար, 2003 թ.	515,056	1,331,500	190,075	1,017,630	3,054,261
Կուտակված մաշվածք	91,514	66,266	7,850	207,764	373,394
Հաշվների կարգավորում	0	(37,515)	0	37,515	0
Օտարում	(15,350)	0	0	0	(15,350)
Առ 30 հունիս, 2003 թ.	591,220	1,360,251	197,925	1,262,909	3,412,305
Հաշվեկշռային արժեք					
Առ 31 դեկտեմբեր, 2002 թ.	3,461,048	298,205	28,831	1,137,518	4,925,602
Առ 30 հունիս, 2003 թ.	3,373,725	236,155	36,939	1,041,565	4,688,384

Ծանոթագրություն 14. Այլ պարտավորություններ արտարժույթով

(հազար ՀՀ դրամ)

	30.06.03	*31.03.03*	*31.12.02*
Կրեդիտորական պարտքեր արտարժույթով	49,779	20,236	70,435
Հաշվեգրված տոկոսներ	312	14,716	155
Այլ պարտավորություններ ՀՀ ռեզիդենտների նկատմամբ	59	1,120	1,116
	50,150	**36,072**	**71,706**

Ծանոթագրություն 15. Այլ պարտավորություններ ՀՀ դրամով

(հազար ՀՀ դրամ)

	30.06.03	*31.03.03*	*31.12.02*
Կրեդիտորական պարտքեր	17,427	1,088,388	1,143,274
Հաշվեգրված տոկոսներ	187,131	91,122	63,903
Երաշխիքների արժեզրկման կորուստներ	162,696	162,696	162,696
Այլ	105,771	117,865	127,778
	473,025	**1,460,071**	**1,497,651**

ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԸՍՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԲԱԶԱԴՐԻՉՆԵՐԻ

Անդրանիկ Մամիկոնյան, Արթուր Նախշիկյան
Դրամավարկային քաղաքականության վարչություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի տնտեսության զարգացման գերխնդիրներից մեկը ֆինանսական շուկայի կայունությունն է, որը կապիտալի ներհոսքի, ներդրումների աճի, տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևոր նախապայման է: Ֆինանսական կայունության արդյունքում իջնում են տնտեսության վարկերի անվանական տոկոսադրույքները և փոքրանում են վարկային ռիսկերը, մեծանում են միջինժամկետ և երկարաժամկետ վարկերի ծավալները, որոնք հանգեցնում են տնտեսության աշխուժացման: Միևնույն ժամանակ, տոկոսադրույքների իջեցումը ազդում է բանկերի եկամուտների վրա և ոչ բոլոր դեպքերում է, որ բանկերը կարողանում են կորուստներ չկրել, հարմարվել և շարունակել գործել վարկային շուկայի նոր պայմաններում:

Այսպիսով, վարկերի անվանական տոկոսադրույքները վարկային շուկայի հիմնական բնութագրիչներից են և որպես շուկայական տոկոսադրույք, ներառում են սղաճի հավելավճարը և վարկավորման հետ կապված բոլոր տեսակի ծախսերը: Տնտեսական վերափոխումների ժամանակ ոչ միշտ են պահպանվում տեսական սկզբունքները, և բանկերի վարկերի տոկոսադրույքները չեն համապատասխանում շուկայական տոկոսադրույքներին՝ վարկերի ծախսերով գնահատված և շուկայական տոկոսադրույքների միջև կան էական տարբերություններ:

Աշխատանքում փորձ է արվել վիճակագրորեն հետազոտել բանկերի վարկերի տոկոսադրույքների գնագոյացումը, գնահատել վարկային անվանական տոկոսադրույքի բաղադրիչ մասերը: Հետազոտության նպատակն է՝ գնահատումների միջոցով որոշել շուկայում վարկերի ձևավորված տոկոսադրույքները իրատեսական են, թե՝ ոչ: Այսինքն՝ վարկավորման գործընթացը փոխշահավետ է, թե՝ ոչ: Հարցադրումը շատ հետաքրքիր է, քանի որ վարկի գինը ենթադրում է փոխհատուցել վարկավորման հետ կապված բոլոր ծախսերը և բանկերին ապահովել որոշակի հավելավճարի մակարդակ: Միևնույն ժամանակ, ճիշտ չէ տոկոսադրույքների հաշվին վարկավորման հետ կապված ծախսերը և շահույթի չափը ուռճացնելը:

Բանկերի տնտեսության վարկերի տոկոսադրույքների գնահատականների հաշվարկման համար օգտագործվել է բանկերի ամսական թիվ 1, ՀՀ կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ թիվ 4, բանկերի եկամուտների և ծախսերի վերաբերյալ թիվ 5, վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ թիվ 6, ներգրավված և տեղաբաշխված միջոցների կառուցվածքի վերաբերյալ թիվ 8 հաշվետվությունները: Հաշվարկները կատարվել են 33 բանկերի տեղեկատվությանը համապատասխան և ընդգրկում են 1999 թվականի փետրվարից մինչև 2002 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածը:

Վերլուծությունների համար ընտրվել են 18 բանկեր, որոնց ընդհանուր ակտիվները նշված ժամանակահատվածում կազմել են բանկային համակարգի ակտիվների 57-88 տոկոսը: Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ բանկերի վարկերի տարեկան ծախսերը 1999 – 2002թթ. 24.90 տոկոսից նվազել են մինչև 14.58 տոկոս: Ծախսերում համեմատաբար մեծ են սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ բանկի վարչական և վարկերի ռիսկերի ծախսերը, որոնց մեծությունները համապատասխանաբար կազմել են 5.17 և 1.66 տոկոս (2002 թ. ընդհանուր գումարայինը՝ 14.58 %):

Ստացված արդյունքներով հաշվարկվել են տարբեր ցուցանիշներ և ներկայացվել աղյուսակներով և գրաֆիկորեն, ինչպես նաև կազմվել է դրանց զարգացման դինամիկան ըստ ժամանակի: Կատարվել են գործոնային վերլուծություններ և տրվել համապատասխան եզրակացություններ, նշվել դրանց հնարավոր կիրառություններ:

---

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշման հետ:*

ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացնենք բանկերի վարկերի տոկոսադրույքների տնտեսագիտորեն հիմնավորված արժեքների հաշվարկման մեթոդը: Ըստ մեթոդի՝ հաշվարկները կատարվում են բանկերի հաշվետվությունների ցուցանիշների և Հայաստանի ֆինանսատնտեսական միջավայրի փոփոխականների փոփոխությունների հիման վրա:

Կիրառված սկզբունքները

Մեթոդը մշակվել և զարգացվել է՝ ելնելով հետևյալ հիմնական սկզբունքներից:

- Հաշվի առնել բանկերի գործունեության համար առկա ֆինանսատնտեսական պայմանները, որոնք ներառում են Հայաստանի կենտրոնական բանկի սահմանած նորմատիվային չափանիշների փոփոխությունները, ֆինանսական շուկայի կառուցվածքի վերափոխումները և ռեսուրսների ներգրավման պայմանների փոփոխությունները:
- Ռիսկերի հետ կապված ծախսերի փոխհատուցումը: Սա նշանակում է գնահատել վարկավորման տոկոսադրույքի այնպիսի մակարդակ, որը կապահովի վարկավորող կազմակերպության ռիսկերի և հարկային պարտավորությունների հետ կապված ծախսերին համապատասխան եկամուտ:
- Ծախսերի համար սահմանափակումների ներմուծումը: Որպեսզի խուսափենք վարչական և այլ ծախսերի հաշվին տնտեսությանը տրամադրված վարկերի տոկոսադրույքների արհեստական բարձրացումից, կարելի է կիրառել մի շարք սահմանափակումներ: Մասնավորապես, աշխատավարձի ֆոնդի ներառումը վարկերի տոկոսադրույքներից ստացված եկամուտներում կարելի է սահմանափակել որևէ առավելագույն անվանական մեծությամբ կամ եկամուտների տոկոսային մասով: Սահմանափակման առավելագույն արժեքը կարելի է որոշել վիճակագրական եղանակով: Վերցնել արդյունավետ աշխատող որևէ բանկի կամ բանկերի աշխատավարձի ֆոնդի միջին մակարդակը կամ գնահատել որպես բանկային համակարգի աշխատավարձի ֆոնդի միջին արժեք: Քանի որ տարբեր ֆոնդերին կատարվող հատկացումները կախված են ոչ միայն հատկացումների համար որոշված նորմատիվային արժեքներից, այլև աշխատավարձի ֆոնդից, ուստի կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության և այլ ֆոնդերին կատարվող հատկացումների համար նույնպես հնարավոր է գնահատել որոշակի սահմանային արժեքներ:
- Ծախսերի դասակարգումը ըստ տարբեր խմբերի և ընդհանուր ծախսերի ներկայացումը դասակարգված խմբերի ծախսերի հանրագումարի տեսքով: Տվյալ դասակարգումը ենթադրում է բանկերի տրամադրած վարկերի տոկոսադրույքը հիմնավորել նախ և առաջ հարաբերական օբյեկտիվ գործոններով պայմանավորված ծախսերով, որոնք թելադրված են ֆինանսատնտեսական շուկայի ընդհանուր պայմաններով, և երկրորդ՝ առանձին բանկի սուբյեկտիվ գործունեությամբ բացատրվող ծախսերով:
- Բանկի վարկավորման գործունեության համար օգտագործված միջոցների տարբերակումը՝ ըստ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների, որը կատարվում է տոկոսադրույքների մակարդակի նվազեցման տնտեսագիտորեն հիմնավորված մեխանիզմի մշակման նպատակով: Դրան կարելի է հասնել բանկի ներքին ռեսուրսների արդյունավետ կառավարման արդյունքում՝ բարելավելով ներբանկային ղեկավարման ռազմավարությունը: Այս իմաստով կարևորվում են սուբյեկտիվ գործոններով պայմանավորված ծախսերը, որոնք հիմնականում կախված են տվյալ բանկի գործունեությունից և ունեն կառավարելիության ավելի մեծ լայնություն:

Ծախսերի բաղկացուցիչ խմբերը

Ծախսերը, որոնք կատարվում են բանկերի գործունեության ժամանակ և իրենց արտահայտությունն են գտնում տոկոսադրույքի մակարդակում, կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի.

1. **Բանկերի ռեսուրսների ներգրավման և պահուստավորման գործարքներով պայմանավորված ծախսեր:**

Այս ծախսերը ներառում են ներգրավված միջոցների դիմաց կատարված վճարումները, որոնք կախված են ներքին և միջազգային շուկաների տոկոսադրույքներից: Այստեղ ներառվում են նաև Կենտրո-

նական բանկի կողմից սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվային մասհանման և ավելցուկ պաշարների մակարդակներից կախված ծախսերը, որոնք դիտարկվում են որպես չստացված եկամուտներ:

2. **Կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության և այլ հասարակական կազմակերպություններին կատարվող հատկացումներ, ինչպես նաև հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարումներ:**

3. **Բանկի վարչական գործունեությամբ և վարկերի ռիսկերով պայմանավորված ծախսեր:**

Այս ծախսերը պայմանավորված են առանձին բանկի կառավարման յուրահատկություններով, որոնք ներառում են վարկավորման գործունեության վարչական և վարկավորման ռիսկի հետ կապված պահուստավորման ֆոնդերի ձևավորման ծախսերը:

4. **Շահաբաժինների վճարում և կապիտալացման հետ կապված ծախսեր:**

Վարկային կազմակերպությունների ծախսերի խմբերը դիտարկենք ավելի մանրամասն՝ միաժամանակ կատարելով համապատասխան նշանակումներ և տալով անհրաժեշտ նկարագրություններ: Գնահատվող տոկոսադրույքը նշանակենք r_L, որը ներկայացվում է հետևյալ գումարի տեսքով՝

$$r_L = \left(r_R + r_{\mathrm{Re}s}\right) + \left(r_{Tax} + r_{Adm}\right) + r_{Fund} + r_{Div}$$

որտեղ՝ r_R-ը ներգրավված ռեսուրսների համար կատարված, $r_{\mathrm{Re}s}$-ը պարտադիր և ավելցուկ պահուստների չստացված հնարավոր եկամուտների հետ կապված, r_{Tax}-ը հարկերի, տուրքերի վճարումների և կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության և այլ հասարակական կազմակերպություններին կատարվող հատկացումների հետ կապված, r_{Adm}-ը վարչական գործունեությամբ պայմանավորված, r_{Fund}-ը պահուստավորման ֆոնդերին կատարված հատկացումների հետ կապված, r_{Div}-ը շահաբաժինների և կապիտալացմամբ պայմանավորված ծախսերի մասնաբաժիններն են:

Ինչպես նշվեց, առաջին խմբի ծախսերը հաշվի են առնում ներգրավված միջոցների տոկոսադրույքները, որոնք ներառում են՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի թղթակցային հաշիվների դիմաց վճարված տոկոսները, ցպահանջ ավանդների և այլ պարտավորությունների դիմաց վճարված տոկոսները, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսները, ժամկետային ավանդների և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսները, բանկի կողմից թողարկված արժեթղթերի տոկոսային ծախսերը և այլ տոկոսային ծախսեր:

Այսպիսով, եթե հաշվետու ժամանակաշրջանի համար i-րդ տեսակի ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսները նշանակենք P_i, իսկ միջին մնացորդը՝ R_i, ապա $\left(P_i / R_i\right)$ հարաբերությունը ցույց կտա, թե տվյալ տեսակի ներգրավված միջոցների որ մասն է ծախսվում վճարված տոկոսների համար, իսկ $\left(P_i / R_i\right) \times 100$ մեծությունը՝ տվյալ տեսակի միջոցների ներգրավման միջին տոկոսադրույքը:

Այժմ, ենթադրենք՝ ունենք *m* տեսակի խմբավորված ներգրավված միջոցներ (այս աշխատանքում դրանց թիվը հավասար է հինգի): Այս դեպքում բանկի վարկավորման գործունեության իրականացման համար անհրաժեշտ ներգրավված միջոցների դիմաց վճարված ծախսերի կշռված միջինը՝ r_R-ը կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$r_R = \sum_{i=1}^{m} \left[\left(\frac{\mathrm{P}_i}{R_i} \right) \left(\frac{R_i}{\sum_{i=1}^{m} R_i} \right) \right] \times 100$$

Առաջին խմբի ծախսերի շարքն են դասվում նաև պարտադիր պահուստավորման և ավելցուկ պաշարների միջոցների չստացված եկամուտները, որոնք աշխատանքում դիտարկվում են առանձին-առանձին: Ենթադրենք՝ պարտադիր պահուստավորման նորմատիվի համաձայն՝ բանկը իր միջոցների մի մասը՝ *RR*-ը, պահում է Կենտրոնական բանկում, որի դիմաց ստանում է $RR \times r_{RR}$ տոկոսավճար: r_{RR}-ը

պարտադիր պահուստավորման դիմաց վճարվող տոկոսադրույքն է, որը համեմատաբար ցածր է շուկայի բարձր իրացվելի ակտիվների տոկոսադրույքից, նշանակենք $TB_{\%}$: Այսպիսով, բանկը պարտադիր պահուստավորման միջոցները Կենտրոնական բանկում պահելու փոխարեն հնարավորություն ունի դրանք ներդնելու այլ իրացվելի ակտիվներում: Բանկը կարող էր ստանալ $RR \times TB_{\%}$ եկամուտ, բայց իրականում ստանում է $RR \times r_{RR}$ տոկոսավճար: Բանկի՝ չստացված եկամուտները հավասար կլինեն հնարավոր ներդրումների և ստացված եկամուտների տարբերությանը, որն էլ դիտարկվում է որպես ծախս: Ծախսերը փոխհատուցելու համար անհրաժեշտ է, որ վարկավորող կազմակերպությունը բարձրացնի վարկերի տոկոսադրույքը համապատասխան չափով: Այդ մեծությունը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով՝

$$\frac{RR\left(TB_{\%} - r_{RR}\right)}{Loan} \times 100$$

որտեղ $Loan$-ը բանկի տեղաբաշխված վարկերի մակարդակն է հաշվետու ժամանակաշրջանում:

Նույն տրամաբանությամբ կարելի է հաշվարկել ավելցուկ պաշարների դիմաց չստացված եկամուտները և դրանց հետ կապված ծախսերի փոխհատուցման տոկոսադրույքը: Օգտվելով հաշվարկի եղանակից և հաշվի առնելով, որ ավելցուկ պաշարների դիմաց վարկավորող կազմակերպությունը տոկոսավճար չի ստանում, փոխհատուցման տոկոսադրույքի համար կստանանք հետևյալ բանաձևը՝

$$\frac{ER \times \left(TB_{\%}\right)}{Loan} \times 100$$

Այսպիսով, պարտադիր և ավելցուկ պահուստների չստացված հնարավոր եկամուտների հետ կապված ծախսերը (r_{Res}), կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$r_{\mathrm{Re}s} = \frac{RR\left(TB_{\%} - r_{RR}\right) + ER \times \left(TB_{\%}\right)}{Loan} \times 100$$

r_{Res} -ի համար որպես առավելագույն արժեք ենք սահմանել ER-ի՝ տվյալ բանկի պարտադիր պահուստավորման մակարդակին համապատասխան r_{Res} -ի հաշվարկված արժեքը: Եթե ER-ի մակարդակը գերազանցում է պարտադիր պահուստավորման նորմատիվային արժեքը, ապա գերազանցող մասի համար ծախսերը չեն հաշվարկվում, այսինքն՝ r_{Res} -ի առավելագույն արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$r_{\mathrm{Re}s,Max} = \frac{RR\left(TB_{\%} - r_{RR}\right) + RR \times \left(TB_{\%}\right)}{Loan} \times 100$$

Երկրորդ խմբի՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների, կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության և այլ հասարակական կազմակերպություններին կատարվող հատկացումների ծախսերի մասնաբաժինը հաշվարկվում է ըստ բանկերի ընդհանուր ակտիվների, քանի որ հնարավոր չէ տարանջատել, թե ծախսերը ինչպիսի (տոկոսային, թե՝ ոչ տոկոսային) եկամուտներից են մասհանված: Ելնելով վերոշարադրյալից՝ երկրորդ խմբի ծախսերը՝ r_{Tax}, կարելի է հաշվարկել հետևյալ արտահայտությամբ՝

$$r_{Tax} = \frac{Tax}{Assets} \times 100$$

որտեղ Tax-ը բանկերի վճարված հարկերն են, իսկ $Assets$-ը՝ ակտիվները:

Վարչական ծախսերի մասնաբաժինը, որը դասվում է երրորդ խմբին, նույնպես հաշվարկվում է ըստ բանկերի ընդհանուր ակտիվների և կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$r_{Adm} = \frac{AdmExp}{Assets} \times 100$$

որտեղ $AdmExp$-ը բանկերի աշխատավարձի, գործուղման, հիմնական միջոցների ամորտիզացիոն, շենքերի վարձակալության, գովազդային, աուդիտային և խորհրդատվական ծառայության, տույժերի և տուգանքների և այլ ծախսերն են:

Երրորդ խմբի ծախսերից են նաև ռիսկային վարկերի պահուստավորման ֆոնդերին կատարվող մասհանումները: Դրանք հաշվարկվում են ըստ բանկերի տեղաբաշխված վարկերի, քանի որ վերաբերում են միայն վարկերին: Հաշվարկման բանաձևը հետևյալն է՝

$$r_{Fund} = \frac{Fund}{Loans} \times 100$$

որտեղ $Fund$-ը պահուստավորման ֆոնդերին կատարված մասհանումներն են:

Չորրորդ խմբի՝ շահաբաժինների և կապիտալացման ծախսերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$r_{Div} = \frac{Div_0}{\Pr ofit_0} \times \frac{\mathrm{Re}\, v_{\%}}{\mathrm{Re}\, venue}$$

որտեղ Div_O-ը նախորդ տարվա շահաբաժինների միջին մակարդակն է, $Profit_O$-ը՝ նախորդ տարվա շահույթի միջին մակարդակը, $Rev_{\%}$-ը՝ տոկոսային եկամուտներն են: Շահաբաժինների և կապիտալացման ծախսերի համար տրվում է նաև առավելագույն սահմանային արժեք, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$r_{Div}^{\max} = \frac{Div_0}{\Pr ofit_0}$$

Աշխատանքում շահաբաժինների և կապիտալացման ծախսերը չեն դիտարկվել, քանի որ բանկերի մեծ մասում նման ծախսեր չեն կատարվել: Նշված ծախսերի արժեքը հաշվարկներում ուղղակի գնահատվել է զրո:

ՓՈՓոխականները և դրանց նկարագրությունները

Բանկերի կողմից տրամադրվող վարկերի տնտեսագիտորեն հիմնավորված տոկոսադրույքի գնահատումը կարելի է ներկայացնել հետևյալ արտահայտությամբ՝

$$r_L = r_R + r_{\mathrm{Re}\, s} + r_{Tax} + r_{Adm} + r_{Fund} + r_{Div},$$

որտեղ՝

- r_L-ը՝ վարկերի գնահատվող տոկոսադրույքն է,
- r_R -ը՝ ներգրավված միջոցների համար կատարված ծախսերի մասնաբաժինը,
- r_{Res} -ը՝ պարտադիր և ավելցուկ պահուստների չստացված հնարավոր եկամուտների հետ կապված ծախսերի մասնաբաժինը,
- r_{Tax} -ը՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների, կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության և այլ հասարակական կազմակերպություններին կատարվող հատկացումների հետ կապված ծախսերի մասնաբաժինը,
- r_{Adm} -ը՝ վարչական գործունեության հետ կապված ծախսերի մասնաբաժինը,
- r_{Fund} -ը՝ պահուստավորման ֆոնդերին կատարված հատկացումներով պայմանավորված ծախսերի մասնաբաժինը,
- r_{Div} -ը՝ շահաբաժինների և կապիտալացման հետ կապված ծախսերի մասնաբաժինը:

Ներկայացված փոփոխականների հաշվարկները կատարվում են հետևյալ բանաձևերով՝

1. $$r_R = \sum_{i=1}^{m} \left[\left(\frac{\mathrm{P}_i}{R_i} \right) \left(\frac{R_i}{\sum_{i=1}^{m} R_i} \right) \right] \times 100$$

- P_i -ը՝ i-րդ տեսակի ներգրավված միջոցի համար վճարված տոկոսային գումարն է,
- m -ը՝ միջոցների տեսակների քանակն է,
- R_i -ը՝ i-րդ տեսակի միջոցի միջին մնացորդն է հաշվետու ժամանակաշրջանում:

2. $$r_{\mathrm{Re}\,s}=\frac{RR(TB_{\%}-r_{RR})+ER\times(TB_{\%})}{Loan}\times 100$$

RR -ը՝ պարտադիր պահուստների միջին մակարդակն է,

ER -ը՝ ավելցուկ պահուստների միջին մակարդակն է,

r_{RR} -ը՝ պարտադիր պահուստների համար վճարվող տոկոսները,

Loan -ը՝ վարկերի միջին մակարդակը:

3. $$r_{Tax}=\frac{Tax}{Assets}\times 100$$

Tax -ը՝ վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների, կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության և այլ հասարակական կազմակերպություններին կատարվող հատկացումների մակարդակը,

Revenue -ը՝ եկամուտների մակարդակը,

Assets -ը՝ ընդհանուր ակտիվների մակարդակը:

4. $$r_{Adm}=\frac{AdmExp}{Assets}\times 100$$

որտեղ՝

AdmExp -ը՝ վարչական ծախսերն են:

5. $$r_{Fund}=\frac{Fund}{Loans}\times 100$$

որտեղ՝

Fund -ը՝ պահուստավորման ֆոնդերին հատկացված գումարներն են:

6. $$r_{Div}=\frac{Div_0}{\mathrm{Pr}\,ofit_0}\times\frac{\mathrm{Re}\,v_{\%}}{\mathrm{Re}\,venue};\qquad r_{Div}^{\max}=\frac{Div_0}{\mathrm{Pr}\,ofit_0}$$

որտեղ՝

Div_O -ը՝ նախորդ տարվա շահաբաժինների միջին մակարդակն է,

$Profit_O$ -ը՝ նախորդ տարվա շահույթի միջին մակարդակը,

$Rev_{\%}$ -ը՝ տոկոսային եկամուտները:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքում մշակված վիճակագրական տեղեկատվության աղբյուրը առևտրային բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններն են: Հաշվարկներում օգտագործվել են թիվ 1, ՀՀ կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ թիվ 4, բանկերի եկամուտների և ծախսերի վերաբերյալ թիվ 5, վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ թիվ 6, ներգրավված և տեղաբաշխված միջոցների կառուցվածքի վերաբերյալ թիվ 8 ամսական հաշվետվությունների տվյալները: Հաշվարկները կատարվել են 33 բանկերի ներկայացրած տեղեկատվությանը համապատասխան և ներառում են 1999 թվականի փետրվարից մինչև 2002 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածի ցուցանիշները:

ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Օգտվելով բանկերի հաշվետվական ձևերից՝ ներկայացած մեթոդով գնահատվել են բանկերի կողմից տրամադրված վարկերի համար կատարված ծախսերի մասնաբաժինները և ընդհանուր ծախսերը: Գնահատումները կատարվել են 33 բանկերի համար: Այնուհետև ընտրվել են այն բանկերը, որոնց ակտիվների և տրամադրած վարկերի ծավալները համեմատաբար մեծ են եղել, խնամակալության տակ չեն գտնվել և գործել են 1999 – 2002 թթ.: Վերլուծությունների համար ընտրվել են 18 բանկեր, որոնց ընդհանուր ակտիվները նշված ժամանակահատվածում կազմել են բանկային համակարգի ակտիվների 57 - 88 տոկոսը: Հաշվարկվել են այդ բանկերի ծախսերի միջին կշռված արժեքները: Գնահատումներն

ավելի մանրամասն ներկայացնելու համար հաշվարկվել են առանձին բանկերի ծախսերի բաղկացուցիչ մասերի մասնաբաժինները, վերջիններիս կշիռները ընդհանուր ծախսերում և բաղկացուցիչ մասերի միջին արժեքները: Ծախսերի ավելի խորը վերլուծությունների նպատակով՝ ստացված արդյունքների միջոցով հաշվարկվել են տարբեր ցուցանիշներ: Տրվել են վարչական ծախսեր - ակտիվներ և վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդին կատարված զուտ մասհանումներ - վարկեր հարաբերությունները: Տոկոսային եկամուտների վերլուծությունների ժամանակ կարևորվել են տոկոսային եկամուտների անվանական մեծությունները, դրանց փոփոխությունները և տոկոսային եկամուտներ - ակտիվներ հարաբերակցությունը: Տոկոսային եկամուտներ - ակտիվներ հարաբերակցությունը համեմատվել է ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսադրույքների գնահատումների և այլ փոփոխականների հետ: Դիտարկվել են նաև բանկերի միջոցների ձեռքբերման տոկոսային ծախսեր - վարկեր, ներգրավված միջոցների տեղաբաշխման՝ ներգրավված ռեսուրսներ - վարկեր, բանկերի գործունեության և կառավարման արդյունավետության գործակիցները:

Վերլուծություններն ավելի հիմնավոր դարձնելու նպատակով նշված բանկերը բաժանվել են երկու ենթախմբի: Բաժանումը կատարվել է հետևյալ սկզբունքով: Հաշվարկվել է 18 բանկերի տեղաբաշխված միջոցների համար կատարված ընդհանուր ծախսերի միջին կշռված արժեքը՝ ըստ տեղաբաշխված միջոցների ծավալների: Առաջին խմբում ընդգրկվել են այն բանկերը, որոնց ծախսերի ընդհանուր գումարը փոքր է 18 բանկերի տեղաբաշխված միջոցների ընդհանուր ծախսերի միջին կշռված արժեքից, իսկ երկրորդ խմբում՝ որոնց ծախսերի ընդհանուր գումարը գերազանցում է միջին կշռված արժեքը: Երկու խմբերի բանկերի համար տրվել են վերը նշված բոլոր գնահատումներն ու գործակիցները:

Այնուհետև գնահատված արդյունքները համեմատվել են բանկերի վարկերի և ավանդների տոկոսադրույքների հետ, որոնք հաշվարկված են որպես բանկային համակարգի 30 - 365-օրյա վարկերի և ավանդների տոկոսադրույքների միջին կշռված մեծություններ: Վերջում տրվել է համապատասխան եզրակացություն:

Ընդհանուր ծախսերի արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում: Ծախսերը հաշվարկված են ամսական կտրվածքով և ներկայացնում են կուտակային ցուցանիշներ՝ տվյալ տարվա հունվար ամսից սկսած: Օրինակ՝ աղյուսակ 1-ի 3-րդ սյան Օգոստոս-99 տողում նշված 13.2 թիվը նշանակում է, որ թիվ 3 բանկը 1999 թվականին հունվար-օգոստոս ամիսների ընթացքում իր կողմից տեղաբաշխված վարկերի գումարի 13.2 տոկոսը կամ 0.132 մասը ծախսել է վարկային միջոցների ներգրավման և տրամադրման համար:

Աղյուսակ 1

Բանկերի վարկերի ծախսերի կուտակային ցուցանիշներ


Բանկ	*1*	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*	*18*	*Կշռ. միջ.*
Հ 99	4.4	0.5	1.1	3.4	2.5	0.0	4.6	3.2	2.9	3.7	2.1	5.0	2.9	2.3	0.0	0.0	1.5	1.1	2.59
Փ	6.9	2.0	2.0	14.7	4.1	0.0	7.7	4.9	8.0	7.9	4.1	10.4	6.3	4.4	0.0	0.0	2.6	2.2	4.63
Մ	11.5	3.3	3.1	20.4	6.5	0.0	11.5	7.3	11.4	12.1	7.6	14.4	9.6	7.4	0.0	0.0	6.3	4.1	7.23
Ա	15.8	5.4	5.3	23.8	9.4	10.6	15.1	9.5	17.6	17.2	10.9	20.5	6.2	10.6	0.0	0.0	12.8	7.7	9.96
Մ	16.8	5.5	6.8	24.9	10.2	12.2	18.2	10.6	19.9	21.8	11.8	26.0	8.7	12.5	0.0	0.0	13.5	9.3	11.32
Հ	19.8	6.3	11.6	30.9	11.5	13.0	22.3	10.8	22.2	25.0	12.3	34.3	11.7	12.3	0.0	0.0	18.1	9.4	13.21
Հ	23.4	7.4	12.7	33.6	14.2	98.8	26.2	13.5	21.7	32.6	14.3	35.7	12.9	14.0	0.0	0.0	22.7	10.6	15.71
Օ	35.0	9.0	13.2	42.1	14.2	20.5	27.8	17.3	20.8	38.0	14.6	47.5	14.4	12.1	0.0	0.0	33.3	11.6	17.42
Ս	27.6	8.6	15.2	36.0	16.4	58.8	38.0	17.6	21.4	50.8	16.1	48.6	11.5	13.8	0.0	0.0	44.8	12.1	17.79
Հ	34.7	9.1	12.7	44.9	22.1	20.1	45.0	23.7	21.9	45.6	18.1	52.9	12.6	10.3	0.0	0.0	84.1	12.8	19.72
Ն	42.6	10.6	16.3	47.6	23.0	21.5	41.0	25.3	21.7	44.9	21.6	62.3	13.9	9.1	0.0	0.0	50.3	13.3	21.68
Դ	47.8	12.2	22.3	55.4	22.6	41.2	45.2	27.3	25.1	66.7	24.9	60.4	16.1	7.4	0.0	0.0	40.8	14.8	24.90
Հ 00	3.3	2.0	2.7	4.9	6.3	1.9	5.1	2.9	3.0	5.5	3.3	6.4	2.6	1.8	17.6	0.0	0.6	4.0	3.07
Փ	9.6	2.9	4.9	7.9	7.1	3.3	10.8	4.5	5.3	8.9	5.5	10.3	4.4	2.3	17.9	0.0	1.5	4.8	4.79
Մ	10.8	3.8	6.8	10.9	8.0	6.7	17.9	7.5	7.5	13.9	7.7	15.2	6.6	2.4	35.1	0.0	1.8	6.5	7.03
Ա	13.5	5.0	7.9	13.0	9.1	21.4	18.3	7.7	14.9	15.0	9.9	25.2	7.4	3.5	9.6	0.0	3.2	8.1	9.11
Մ	12.6	5.8	10.2	16.6	10.2	26.1	17.7	7.9	18.6	16.4	11.9	30.6	9.0	3.6	14.2	0.0	5.1	9.2	10.17
Հ	16.8	6.8	11.6	18.5	11.6	18.4	16.5	9.1	19.7	17.4	12.9	18.5	14.9	3.8	19.5	0.0	5.9	10.9	11.63
Հ	18.7	8.1	9.3	20.1	12.9	14.3	22.8	13.4	23.1	19.4	15.6	23.9	17.0	4.2	68.3	0.0	6.6	12.3	13.75
Օ	21.0	8.7	10.4	22.1	14.9	16.9	25.3	15.7	25.5	19.3	18.2	25.8	18.8	4.5	34.8	0.0	7.0	14.7	15.04
Ս	22.8	9.2	13.1	23.2	17.1	17.4	25.3	16.9	28.1	20.9	21.2	31.0	20.3	4.7	70.2	0.0	7.2	16.1	16.62
Հ	26.7	9.8	13.8	27.9	18.6	20.0	26.9	18.4	30.8	24.1	24.7	24.0	21.2	4.9	27.4	0.0	8.0	18.0	17.79
Ն	29.0	10.6	14.0	29.2	19.4	20.1	25.3	21.2	32.2	25.3	27.2	32.7	23.0	5.1	56.3	0.0	9.6	18.6	19.29
Դ	26.1	11.0	15.0	30.7	24.7	24.6	31.9	23.0	37.9	27.4	28.0	35.5	22.7	5.5	22.6	0.0	10.9	20.3	20.48

Բանկ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	Կշռ. միջ.
Հ 01	2.8	1.9	2.3	5.1	2.5	2.7	4.1	3.1	3.1	4.7	2.8	4.7	3.1	1.3	0.4	0.0	2.0	2.6	2.69
Փ	3.7	2.8	3.4	7.7	4.0	4.3	7.6	4.4	5.1	5.8	4.8	7.2	4.9	1.2	1.9	0.0	3.2	3.8	4.07
Մ	6.2	4.0	4.9	9.5	5.8	6.0	12.1	6.1	5.6	7.9	7.3	9.7	7.2	1.6	3.8	0.0	6.6	5.0	5.59
Ա	9.5	5.4	5.8	13.3	7.2	8.5	15.5	8.3	7.8	10.3	9.7	13.4	9.8	1.8	4.6	0.0	0.0	5.9	7.82
Մ	11.1	6.5	6.6	14.9	8.5	9.0	18.2	12.5	9.4	11.7	11.7	17.2	12.5	2.0	7.8	0.0	1.0	7.3	9.93
Հ	13.2	8.3	7.4	18.0	9.6	9.0	21.0	14.1	11.4	12.6	13.8	23.9	15.6	2.4	4.7	0.0	0.5	8.6	10.86
Հ	14.8	9.4	8.4	19.7	11.4	10.5	21.5	17.3	13.9	13.3	15.5	30.7	20.2	2.6	3.3	0.0	1.1	10.2	12.46
Օ	17.4	8.9	8.9	22.3	12.6	11.2	28.3	20.2	16.6	12.8	16.5	30.4	23.7	2.8	4.2	0.0	5.4	11.4	13.49
Ս	19.6	9.0	10.7	23.4	14.0	12.5	26.1	22.6	18.9	15.5	18.0	38.9	25.5	2.9	6.2	0.0	9.5	13.0	14.91
Հ	20.3	8.7	12.4	24.0	16.0	11.6	25.0	24.5	19.2	12.9	19.6	33.4	26.6	1.9	6.1	29.5	8.7	14.4	15.43
Ն	21.4	9.3	13.5	26.1	16.9	12.5	21.3	25.2	28.7	15.0	23.6	31.8	25.8	2.0	-2.0	4.0	12.8	15.2	16.72
Դ	23.2	11.2	13.0	31.5	18.4	14.6	26.5	23.6	35.6	15.4	26.4	32.3	22.9	2.2	-4.4	1.2	2.2	17.3	18.37
Հ 02	6.3	1.8	2.7	4.9	2.4	3.1	3.8	3.2	17.2	4.2	3.2	8.5	4.4	-0.7	3.1	18.0	3.1	3.0	4.27
Փ	4.2	2.2	6.3	7.1	4.0	3.0	6.2	5.3	11.1	6.9	4.9	5.0	6.5	-0.5	3.8	14.0	14.8	4.3	5.18
Մ	2.8	2.9	7.1	9.4	5.6	4.8	7.3	7.2	11.7	7.5	5.8	7.5	7.9	-1.6	11.8	7.5	6.4	5.6	6.07
Ա	4.3	3.2	9.1	11.7	6.7	5.4	8.9	9.2	13.7	9.0	8.4	8.2	14.3	4.8	27.4	9.8	10.0	6.4	7.66
Մ	4.8	3.7	8.4	16.3	8.1	6.7	8.7	14.3	17.6	10.3	10.3	10.7	14.6	5.8	23.6	8.5	7.9	7.5	9.28
Հ	3.8	4.4	10.1	16.8	15.3	7.7	10.6	14.7	19.7	10.9	13.3	10.8	14.9	8.1	15.5	9.1	6.4	9.1	10.37
Հ	4.6	5.3	12.4	15.2	17.3	8.6	12.5	13.5	23.9	10.5	14.2	12.2	15.7	16.4	9.2	9.6	8.3	10.5	11.75
Օ	10.0	6.4	11.8	21.1	18.9	10.2	14.7	14.4	19.9	11.9	15.0	22.4	15.4	8.5	2.5	13.4	14.6	11.2	13.25
Ս	11.6	5.6	13.1	21.1	20.0	10.8	11.5	14.6	21.7	11.8	18.2	16.8	17.2	9.5	5.3	14.5	9.5	11.7	13.00
Հ	15.6	6.2	12.2	22.6	20.9	11.7	14.9	15.2	22.0	12.5	22.0	15.8	19.9	10.4	7.0	14.7	10.2	13.1	13.91
Ն	15.0	7.0	12.7	23.3	23.1	12.2	16.1	17.4	26.0	13.9	29.2	15.1	21.2	10.9	7.2	14.0	12.5	13.5	15.05
Դ	16.4	7.0	12.9	23.3	26.7	12.5	22.5	5.5	25.6	17.0	22.1	17.4	22.4	11.9	8.7	12.3	12.7	13.6	14.58

Բանկերի գնահատված տոկոսադրույքները և դրանց կառուցվածքը

Բանկերի վարկային ծախսերը արտահայտված են տոկոսներով և հաշվարկվել են որպես բանկերի ծախսերի կշռված միջին՝ ըստ տվյալ ժամանակահատվածում նրանց կողմից տրամադրված վարկերի ծավալների: Օրինակ՝ 2001 թվականի դեկտեմբերի միջին կշռված արժեքը՝ 18.37, 18 բանկերի կողմից տրամադրված վարկերի գնահատված ծախսերի ու վարկերի ծավալների արտադրյալների գումարի և վարկերի ծավալների գումարի հարաբերակցությունն է:

Գրաֆիկ 1. 18 բանկերի վարկային տարեկան ծախսերի միջին կշռված արժեքները



Ինչպես նշվել է գնահատման մեթոդի նկարագրության մեջ, առանձնացվել են ծախսերի չորս հիմնական խմբեր.

- բանկերի ռեսուրսների ներգրավման և պահուստավորման գործարքներով պայմանավորված ծախսեր,

- կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության և այլ հասարակական կազմակերպություններին կատարվող հատկացումներ, ինչպես նաև հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարումների ծախսեր,
- բանկի վարչական գործունեությամբ և վարկերի ռիսկերով պայմանավորված ծախսեր,
- շահաբաժինների վճարում և կապիտալացման հետ կապված ծախսեր:


Ծախսերի հիմնական խմբերը, իրենց հերթին, բաժանվել են ենթախմբերի:

Աղյուսակ 2

Տարի	Ներգրավված միջոցների ծախսեր	Պաշարների ծախսեր	Հարկեր	Վարչական ծախսեր	Կորուստներ	1+4	4+5	Ընդամենը
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
1999	16.2	1.1	0.7	6.6	0.4	22.8	7.0	24.90
2000	12.0	1.0	0.6	5.7	1.3	17.6	7.0	20.48
2001	10.4	1.0	0.5	5.4	1.1	15.8	6.5	18.37
2002	6.2	1.1	0.5	5.2	1.7	11.4	6.8	14.58

Ըստ գնահատումների՝ օբյեկտիվ գործոններով պայմանավորված պարտադիր պահուստավորման, կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների ծախսերի մասնաբաժինները համեմատաբար փոքր են: Դրանց ընդհանուր գումարը չի գերազանցում երկու տոկոսը: Ծախսերում առավելագույն մասնաբաժին ունեն միջոցների ներգրավման հետ կապված ծախսերը, որոնց կշռված միջինը 18 բանկերի համար 1999 – 2002 թթ. 16.16 տոկոսից նվազել է մինչև 6.20 տոկոս: Բանկերի վարկային ծախսերում համեմատաբար մեծ են սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ բանկի վարչական և վարկերի ռիսկերի ծախսերը, որոնց մեծությունները 2002 թվականի գումարային 14.58 տոկոսում համապատասխանաբար կազմել են 5.17 և 1.66 տոկոս:


Գրաֆիկ 2. Բանկերի վարկային ծախսերը




Դիտարկված ամբողջ ժամանակահատվածում բանկերի ներգրավված միջոցների և վարչական ծախսերը մեծ կշիռ են կազմել վարկերի տոկոսադրույքներում: Միևնույն ժամանակ, 1999 – 2002 թթ. տոկոսադրույքների նվազումը հիմնականում տեղի է ունեցել բանկերի ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսադրույքների և վարչական գործունեությամբ պայմանավորված ծախսերի կրճատման հաշվին: Այդ ծախսերի և վարկերի տոկոսադրույքների 10.32 անկման մեջ ներգրավված միջոցների և բանկերի վարչական ծախսերի նվազումները համապատասխանաբար կազմել են 9.96 և 1.45 տոկոս: Եթե ներգրավված միջոցների համար սահմանված տոկոսադրույքների մեծությունը պայմանավորված է օբյեկտիվ գործոններով, ապա բանկերի վարչական ծախսերը կախված են սուբյեկտիվ գործոններից: Այսինքն, բարձրացնելով բանկերի վարչարարության և կառավարման արդյունավետությունը, կարելի է հասնել վարկերի տոկոսադրույքների իջեցման:

Այժմ դիտարկենք վարկերի ծախսերի մասնաբաժին կշիռներն ընդհանուր ծախսերում և դրանց զարգացման տենդերը: Հաշվարկվել են կշիռների տարեկան մեծությունները, որոնք ներկայացված են գրաֆիկ 3-ում: Գրաֆիկ 4-ում ներկայացված են վարչական, միջոցների ներգրավման և սուբյեկտիվ գործոնների գումարային ծախսերի կշիռներն ընդհանուր ծախսերում:

Գրաֆիկ 3. Ծախսերի մասնաբաժինների կշիռներն ընդհանուր ծախսերում



Գրաֆիկ 4. Վարչական, միջոցների ներգրավման և սուբյեկտիվ գործոնների գումարային ծախսերի կշիռներն ընդհանուր ծախսերում



Ինչպես երևում է գրաֆիկներից, վարչական և միջոցների ներգրավման հետ կապված ծախսերը մեծ կշիռ ունեն ընդհանուր ծախսերում, ընդ որում՝ դիտարկված ժամանակահատվածում առաջինը միշտ աճել, իսկ երկրորդը՝ նվազել է:

Նշված երկու ծախսերի կշիռների գումարը 1999 թվականին կազմել է ընդհանուր ծախսերի 91.5 տոկոսը: Դիտարկված ժամանակահատվածում այն նվազել և 2002 թվականին կազմել է 78.0 տոկոս: Բանկերի հարկերի և պաշարների հետ կապված ծախսերի կշիռները 1999-2002 թթ. էական փոփոխություն չեն կրել, դրանց գումարը նշված ժամանակահատվածում չի գերազանցել 10.6 տոկոսը: Վարկերի հնարավոր կորուստների պահուստին կատարված մասհանումների ծախսերի կշիռը համարյա միշտ աճել է և 2002 թվականին կազմել 11.4 տոկոս: Այսպիսով, սուբյեկտիվ գործոններով պայմանավորված վարչական և կորուստների պահուստին կատարված մասհանումների ծախսերի գումարային կշիռը աստիճանաբար աճելով՝ 2002 թվականին կազմել է 46.9 տոկոս: Եթե վարկերի կորուստների ծախսերի նվազեցումը կախված է բանկերի արդյունավետ գործունեությունից, ապա նույնը չի կարելի ասել վարչական ծախսերի վերաբերյալ, քանի որ բանկերի արդյունավետ գործունեությունը ենթադրում է նաև վարչական ծախսերի աճ: Հետևաբար, հնարավոր չէ միանշանակ պնդել, որ վարչական ծախսերի նվազումը կհանգեցնի վարկերի տոկոսադրույքների իջեցման:

Աղյուսակ 3


Բանկերի վարկային ծախսերի կշիռները ընդհանուր ծախսերում (%)

Տարի	Ներգրավված միջոցների ծախսեր	Պաշարների ծախսեր	Հարկեր	Վարչական ծախսեր	Կորուստներ	1+4	4+5	Ընդամենը
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
1999	64.9	4.3	2.7	26.6	1.5	91.5	28.1	100.0
2000	58.4	4.8	2.7	27.7	6.4	86.1	34.0	100.0
2001	56.5	5.6	2.6	29.3	6.1	85.8	35.3	100.0
2002	42.6	7.3	3.3	35.5	11.4	78.0	46.9	100.0

Գնահատված տոկոսադրույքները և դրանց կառուցվածքը բանկերի խմբերի համար


Մինչև այժմ փոփոխականների վերաբերյալ կատարված հաշվարկները և գնահատումները միջին կշռված մեծություններ են՝ վերլուծությունների համար ընտրված 18 բանկերի համար: Վերլուծությունները և եզրակացությունները ավելի մանրամասնելու համար նշված բանկերը բաժանվել են երկու խմբի: Բաժանումը կատարվել է հետևյալ սկզբունքով: Հաշվարկվել է 18 բանկերի տեղաբաշխված միջոցների համար կատարված ընդհանուր ծախսերի միջին կշռված արժեքը՝ ըստ տեղաբաշխված միջոցների ծավալների: Առաջին խմբում ընդգրկվել են այն բանկերը, որոնց ծախսերի ընդհանուր գումարը փոքր է 18 բանկերի տեղաբաշխված միջոցների ընդհանուր ծախսերի միջին կշռված արժեքից, իսկ երկրորդ խմբում՝ որոնց ծախսերի ընդհանուր գումարը գերազանցում է միջին կշռված արժեքը: Արդյունքում, առաջին խմբում ընդգրկվել են ութ, իսկ երկրորդում՝ տասը բանկեր: Չնայած առաջին խմբում ընդգրկված բանկերն ավելի քիչ են երկրորդ խմբի համեմատ, բանկային համակարգի ընդհանուր ակտիվներում խմբերի ընդհանուր ակտիվների ծավալները միմյանցից շատ չեն տարբերվում: Ավելին, դիտարկված ժամանակահատվածի վերջում առաջին խմբի ակտիվների ընդհանուր գումարը գերազանցել է երկրորդ խմբի ցուցանիշը: Դրանք 2002 թվականի դեկտեմբերի դրությամբ համապատասխանաբար կազմել են 45.74 և 40.91 տոկոս:

Գրաֆիկ 5. Խմբերի ակտիվները բանկերի ընդհանուր ակտիվներում (%)




Գրաֆիկ 5-ում ներկայացված են երկու խմբերի ակտիվները բանկերի ընդհանուր ակտիվներում: 1999-2002 թթ. ընթացքում երկրորդ խմբի բանկերի ակտիվների մասնաբաժինը բանկային համակարգում աճել է մոտ 6.44 տոկոսով (1999 թվականի սկզբին՝ 36.47 տոկոս): Իսկ առաջին խմբի մասնաբաժինը միշտ աճել է հաստատուն տեմպով և գումարային աճը նշված ժամանակահատվածում կազմել է մոտ 24.54 տոկոս: Միևնույն ժամանակ, երկրորդ խմբի տեղաբաշխված միջոցների ընդհանուր ծախսերի միջին արժեքը գերազանցում է առաջին խմբի ծախսերի միջին արժեքը (գրաֆիկ 6): 2002 թվականի համար առաջին և երկրորդ խմբերի ծախսերը համապատասխանաբար կազմել են 10.58 և 18.6 տոկոս:

Գրաֆիկ 6. Խմբերի ծախսերի կշռված միջինները




Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ առաջին խմբի բանկերի վարկային գործունեությունը ավելի արդյունավետ է եղել և համապատասխանում է բանկային համակարգի՝ միջոցների տեղաբաշխման քաղաքականության զարգացման միտումներին: Այսինքն, առաջին խմբի բանկերի վարքագիծը կարելի է նույնացնել բանկային համակարգի վարքագծի հետ:

Գրաֆիկ 7. Առաջին խմբի բանկերի ծախսերի մասնաբաժինները



Այժմ համեմատենք երկու խմբերի ծախսերի մասնաբաժինները և դրանց զարգացման ընթացքները (գրաֆիկ 7, 8): Երկու խմբերի համար պաշարների և հարկերի հետ կապված ծախսերի մասնաբաժինները համարյա նույնն են և քիչ փոփոխություն են կրել 1999-2002 թթ. ժամանակահատվածում: Միևնույն ժամանակ, 1999-2002 թթ. առաջին խմբի ներգրավված միջոցների և վարչական ծախսերի մասնաբաժինները նվազել են, չնայած վերջինս աճել է 2002 թվականին: Առաջին խմբի կորուստների ծախսերը պարբերաբար տատանվել են և 2002 թվականին կազմել են մոտ 0.5 տոկոս: Երկրորդ խմբի համար նվազել են միայն ներգրավված միջոցների ծախսերը, իսկ վարչական ծախսերի մասնաբաժինները համարյա չեն փոխվել: Աճել են կորուստների պահուստաֆոնդ կատարվող մասհանումների հետ կապված ծախսերը և 2002 թվականին կազմել են 2.83 տոկոս:

Գրաֆիկ 8. Երկրորդ խմբի բանկերի ծախսերի մասնաբաժինները




Այս միտումների պայմաններում, եթե հաշվի առնենք նաև, որ առաջին խմբի ակտիվներն աճել են, իսկ երկրորդինը՝ նվազել կամ մնացել անփոփոխ, ապա մեկ անգամ ևս կարելի է պնդել, որ առաջին խմբի բանկերի գործունեությունը ավելի արդյունավետ է եղել:

Գրաֆիկ 9-ում և 10-ում ներկայացված են առաջին և երկրորդ խմբերի ծախսերի մանաբաժինների կշիռները ընդհանուր ծախսերում: Առաջին խմբի պաշարների և հարկերի ծախսերի գումարային կշիռը 1999 - 2002 թթ. ընթացքում մեծացել է, չնայած նշված ծախսերի մանաբաժինները համարյա փոփոխություն չեն կրել: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ այս ծախսերը պայմանավորված են օբյեկտիվ գործոններով, այսինքն՝ ընդհանուր ծախսերի նվազման պայմաններում դրանց կշիռը մեծանում է,


քանի որ ծախսերի անվանական մեծությունները էական փոփոխություններ չեն կրում: Նույնը չի կարելի ասել երկրորդ խմբի համար՝ պաշարների և հարկերի ծախսերի գումարային կշիռը էական փոփոխություն չի կրել: Առաջին խմբի ներգրավված միջոցների և վարչական ծախսերի գումարային կշիռը 1999-2002 թթ. ընթացքում փոփոխություն գրեթե չի կրել:

Գրաֆիկ 9. Առաջին խմբի բանկերի ծախսերի մասնաբաժինների կշիռներն ընդհանուր ծախսերում



Դիտարկվող ժամանակահատվածում նվազել է երկրորդ խմբի ներգրավված միջոցների ծախսերի կշիռը (67.6-ից՝ 44.3 տոկոս), որը պայմանավորված է բանկային համակարգում ավանդների տոկոսադրույքների նվազման միտումներով, իսկ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված վարչական և կորուստների ծախսերը և դրանց գումարային կշիռը միշտ աճել են:

Գրաֆիկ 10. Երկրորդ խմբի բանկերի ծախսերի մասնաբաժինների կշիռներն ընդհանուր ծախսերում



Երկրորդ խմբի կորուստների ծախսերի կշիռը մեծ է առաջին խմբի ցուցանիշներից: Դա հաշվի առնելով, կարելի է եզրակացնել, որ երկրորդ խմբի բանկերը հնարավորություն ունեն բարելավելու իրենց գործունեության արդյունավետությունը, որը կհանգեցնի վարկերի ծախսերի նվազման:


Այսպիսով, բանկերի երկու խմբերի միջինացված ցուցանիշների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆինանսական շուկայի տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների նվազման պայմաններում, խմբերի տեղաբաշխված միջոցների ծախսերի փոփոխականները նման չեն և ունեն զարգացման տարբեր միտումներ: Համարժեք չեն նաև բանկերի խմբերի գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները:

Վարկերի գնահատված և շուկայական տոկոսադրույքների համեմատական վերլուծություններ

Գնահատված արդյունքները համեմատենք բանկերի վարկերի և ավանդների տոկոսադրույքների հետ: Տոկոսադրույքները հաշվարկված են որպես բանկային համակարգի 30-365-օրյա վարկերի և ավանդների տոկոսադրույքների միջին կշռված մեծություններ: Դիտարկված ժամանակահատվածում նշված երեք ցուցանիշները անընդհատ նվազել են: Միևնույն ժամանակ, ավանդների և վարկերի տոկո-

սադրույքների նվազման արագությունները ավելի մեծ են բանկերի վարկերի ծախսերի կշռված միջինի համեմատ: Բացի այդ, վերջինիս մակարդակը ընկած է վարկերի և ավանդների տոկոսադրույքների մակարդակների միջև:

Գրաֆիկ 11. Վարկերի ծախսերի և ավանդների ու վարկերի տոկոսադրույքներ



Ժամանակին զուգընթաց մեծանում են գնահատված ծախսերի ու ավանդների և փոքրանում գնահատված ծախսերի ու վարկերի տոկոսադրույքների տարբերությունները: Փոքրանում է նաև վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունը:

Բանկերի վարկային ծախսերի գնահատականների և վարկերի տոկոսադրույքների մակարդակների տարբերությունները պայմանավորված են հետևյալ գործոններով.

- Վարկային ծախսերի գնահատման մեթոդը պարունակում է սահմանափակումներ, որոնք նվազեցնում են ծախսերը: Մասնավորապես, եթե բանկի ավելցուկ պաշարները գերազանցում են պարտադիր պաշարների մակարդակը, ապա գերազանցող մասի համար ծախս՝ որպես չստացված եկամուտ, չի հաշվարկվում: Ենթադրվում է, որ բանկը այլ նպատակներ է հետապնդում կամ ոչ արդյունավետ գործունեություն է իրականացնում:
- Դիտարկված ժամանակահատվածում բանկերի ներգրավված միջոցներ-վարկեր հարաբերակցությունը գերազանցում է միավորից (2002 թ.՝ 1.78): Միաժամանակ, ներգրավված միջոցների ծախսերի մասնաբաժինը վարկերի ծախսերում գնահատված է ըստ ներգրավված միջոցների ծավալների, ոչ թե՝ ըստ վարկերի: Բարձրացնելով բանկերի վարկային գործունեության արդյունավետությունը, որը ենթադրում է ներգրավված միջոցներ - վարկեր հարաբերակցության նվազում, կարելի է հասնել վարկերի ծավալների մեծացման և տոկոսադրույքների իջեցման: Սա իր հերթին կհանգեցնի վարկային ծախսերի գնահատականների և վարկերի տոկոսադրույքների մակարդակների տարբերության փոքրացման:
- Բանկերի վարկավորման գործընթացը ներառում է տարբեր տեսակի ռիսկեր, որոնք կարող են վերածվել ծախսերի: Վերջիններիս գնահատումը գործնականում շատ դժվար է, և դրանք ներառված չեն բանկերի վարկային ծախսերի գնահատականներում:

Հաշվի առնելով նշված միտումները և ենթադրելով, որ ստացված գնահատականները իրատեսական են, այսինքն՝ ճիշտ են ներկայացնում բանկերի վարկային միջոցների ներգրավման և տեղաբաշխման հետ կապված բոլոր ծախսերը, կարելի է եզրահանգել որ վարկերի տոկոսադրույքները պետք է նվազեն և կազմեն 14.58 տոկոս:

Բանկերի վարկային ծախսերում համեմատաբար մեծ են սուբյեկտիվ գործոններով պայմանավորված վարչական ծախսերը, որոնց մեծությունը 2002 թվականի գումարային 14.58 տոկոսում կազմել է 5.17 տոկոս: Չնայած 1999-2002 թթ. ընթացքում վարչական ծախսերի մասնաբաժինները նվազել են, այնուհանդերձ դրանց կշիռը ընդհանուր ծախսերում միշտ աճել է և 2002 թվականին կազմել 35.5 տոկոս: Վարկերի հնարավոր կորուստների պահուստին կատարված մասհանումների ծախսերի կշիռը նույնպես աճել է և 2002 թվականին կազմել 11.4 տոկոս: Նշված երկու ծախսերի գումարային կշիռը աճելով՝ 2002 թվականին կազմել է 46.9 տոկոս: Եթե վարկերի կորուստների ծախսերի նվազեցումը միշտ կախված է բանկերի արդյունավետ գործունեությունից, ապա նույնը չի կարելի ասել վարչական ծախսերի վերաբերյալ, քանի որ բանկերի արդյունավետ գործունեությունը ենթադրում է նաև վարչական ծախսերի աճ: Հետևաբար, հնարավոր չէ միանշանակ պնդել, որ վարչական ծախսերի նվազումը կհանգեցնի վարկերի տոկոսադրույքների իջեցման:

Ֆինանսական վերլուծություններ

Ծախսերի և եկամուտների վերլուծություններ

Ստացված արդյունքների հիման վրա կատարվել են ֆինանսական ցուցանիշների վերլուծություններ: Դիտարկվել են բանկերի առանձին և միասնական տոկոսային եկամուտներ - ակտիվներ հարաբերակցության գործակիցները, որոնք համեմատվել են այլ փոփոխականների հետ: Տոկոսային եկամուտներ - ակտիվներ, տոկոսային եկամուտներ - վարկեր, տոկոսային ծախսեր - ակտիվներ, տոկոսային ծախսեր - վարկեր հարաբերությունների փոփոխականների տարեկան գնահատումները ներկայացված են աղյուսակ 4-ում:


Աղյուսակ 4

Փոփոխականների ցուցանիշները

Տարեթիվ	*Տոկոսայի եկամուտ/վարկ*	*Տոկոսային եկամուտ/ակտիվ*	*Տոկոսայի ծախս/վարկ*	*Տոկոսային ծախս/ակտիվ*
1999	37.5	16.8	16.2	7.2
2000	23.6	12.7	12.0	6.5
2001	22.4	10.6	11.0	5.2
2002	17.4	8.2	7.0	3.3

Տոկոսային եկամուտների վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հաշվարկել տոկոսային եկամուտների անվանական մեծությունները և դրանց փոփոխությունները, հաշվարկված փոփոխականները համեմատել բանկերի ընդհանուր եկամուտների հետ և գնահատել դրանց զարգացման տեմպերը: Կարելի է տոկոսային եկամուտներ - ակտիվներ հարաբերակցությունը համեմատել ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսադրույքների և այլ փոփոխականների հետ, գնահատել նշված փոփոխականների փոխկախվածությունը: Գրաֆիկ 12-ում ներկայացված են տոկոսային եկամուտներ - ակտիվներ, տոկոսային եկամուտներ - վարկեր հարաբերությունների և ներգրավված միջոցների տոկոսադրույքներ փոփոխականները:

Գրաֆիկ 12. Տոկոսային եկամուտներ-ակտիվներ, տոկոսային եկամուտներ-վարկեր հարաբերակցություններ և ներգրավված միջոցների ծախսեր




Երեք փոփոխականներն էլ 1999 – 2002 թթ. ընթացքում ունեցել են նվազման միտում: Նվազման ամենամեծ արժեք նկատվել է տոկոսային եկամուտներ-վարկեր հարաբերակցության համար, որը 1999 թվականի 37.5 տոկոսից նվազելով 2002 թվականին կազմել է 17.4 տոկոս, իսկ ամենաքիչը նվազել է տոկոսային եկամուտներ - ակտիվներ հարաբերակցությունը՝ 16.8–ից՝ 8.2 տոկոս: Այս երեք փոփոխականներից միշտ նվազագույն մակարդակ են ունեցել բանկերի ներգրավված միջոցների համար սահմանված տոկոսադրույքները: Միևնույն ժամանակ, վերջինիս միավոր նվազմանը համապատասխանում է վարկերի տոկոսադրույքների 2.02 տոկոս անկում, այսինքն՝ ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսադրույքների փոքր փոփոխությունների միջոցով կարելի է հասնել վարկերի տոկոսադրույքների համեմատաբար մեծ փոփոխության:

Բանկերի վարկերի, ակտիվների կառուցվածքը

Ներկայացնենք վարկեր - ակտիվներ հարաբերակցություն փոփոխականը և դրա փոխկապվածությունը այլ փոփոխականների հետ:


Գրաֆիկ 13. Բանկերի վարկեր / ակտիվներ արդյունավետության գործակից



Վարկեր - ակտիվներ հարաբերակցությունը 1999 թվականին կազմել է 44.8 տոկոս և նախ՝ աճել մինչև 2001 թվականի սկիզբը, ապա նվազել է մինչև 2002 թվականի կեսերը, հետո կրկին աճել և 2002 թվականի դեկտեմբերին հասել է 47.1 տոկոս մակարդակի: Դիտարկված ժամանակահատվածում տոկոսային եկամուտներ - վարկեր հարաբերակցությունը աստիճանաբար նվազելով՝ 2002 թվականին կազմել է 17.4 տոկոս, իսկ 2000 – 2002 թթ. վարկերի ծավալների փոփոխությունները 18 բանկերի համար համապատասխանաբար կազմել են –14.9, 3.0 և 25.0 տոկոս: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ նախ՝ տոկոսադրույքների նվազումը հանգեցնում է վարկերի ծավալների մեծացման, այսինքն՝ տնտեսության աշխուժացման: Երկրորդ՝ բանկերը, կորուստներ չկրելով, կարողանում են հարմարվել և շարունակել գործունեությունը վարկային շուկայի նոր պայմաններում:


Կարևոր ցուցանիշներ են նաև վարչական ծախսեր - ակտիվներ և վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդին կատարված զուտ մասհանումներ - վարկեր հարաբերակցությունները: Նշված փոփոխականները հիմնականում կախված են առանձին բանկի սուբյեկտիվ ռազմավարությունից և վարչարարությունից: Մասնավորապես, զուտ մասհանումներ - վարկեր հարաբերակցություն փոփոխականի մակարդակը կախված է բանկի վարկային գործունեության արդյունավետությունից և վարկերի զամբյուղի որակից: Փոփոխականի արժեքի փոքր մեծությունը համապատասխանում է տվյալ բանկի արդյունավետ վարկային գործունեությանը և վարկային զամբյուղի բարձր որակին: Հակառակը կարելի է ասել զուտ մասհանումներ - վարկեր հարաբերակցության մեծ արժեքների համար՝ այն համապատասխանում է բանկի ոչ արդյունավետ կառավարմանը և վարկային զամբյուղի ցածր որակին:

Գրաֆիկ 14. Վարչական ծախսեր - ակտիվներ, կորուստներ - վարկեր հարաբերակցությունը



Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ չնայած 1999 - 2002 թթ. ընթացքում վարչական ծախսեր - ակտիվներ և վարկերի կորուստների պահուստաֆոնդ - վարկեր հարաբերակցությունների գումարը նվազել է՝ 7.0-ից դարձել է 6.8 տոկոս, այնուհանդերձ վարչական և վարկերի կորուստների հետ կապված ծախսերի գումարային կշիռը բանկերի վարկերի ընդհանուր ծախսերում աճել է՝ 28.1-ից հասել է 46.9 տոկոս մակարդակին:

Գրաֆիկ 15. Բանկերի երկու խմբերի վարկեր - ակտիվներ հարաբերակցությունը




Երկրորդ խմբի վարկեր - ակտիվներ հարաբերակցությունը դիտարկված ամբողջ ժամանակահատվածում համարյա միշտ գերազանցում է առաջին խմբի համանուն գործակիցը: Իսկ եթե վարկերի մեջ ներառենք նաև բանկերի թղթակցային հաշիվները, ապա կունենանք հակառակ պատկերը՝ առաջին խմբի վարկեր - ակտիվներ հարաբերակցությունը կգերազանցի երկրորդի ցուցանիշը:

<u>Բանկերի գործունեության արդյունավետության գործակիցներ</u>

Դիտարկվել են նաև ներգրավված միջոցների կառավարման արդյունավետության գործակիցները: Առաջինը ներգրավված ռեսուրսներ - վարկեր հարաբերակցությունն է: Այս փոփոխականը կարևորվում է, քանի որ վարկերի տեղաբաշխումը բանկի հիմնական գործառնություններից է և ցույց է տալիս, թե որքանով են արդյունավետ օգտագործվել ներգրավված միջոցները: Եթե հարաբերակցության արժեքը տոկոսային արտահայտությամբ մեծ է հարյուրից, ապա բանկը ոչ լիարժեք է օգտագործել իր ներգրավված միջոցները: Այն դեպքում, երբ հարաբերակցության արժեքը հավասար է միավորի, ապա բանկի ներգրավված միջոցների օգտագործման արդյունավետության աստիճանն առավելագույնն է, այսինքն՝ ներգրավված միջոցների ամբողջ ծավալը տեղաբաշխվել է: Իսկ եթե հարաբերակցությունը փոքր է միավորից, ապա տեղաբաշխված միջոցները գերազանցում են ներգրավված միջոցները և այդ տարբերությունը ծածկվում է բանկի սեփական միջոցների հաշվին: Այս դեպքում անհրաժեշտ է պարզել՝ չե՞ն վտանգվել արդյոք բանկի կապիտալի պաշտպանական և կարգավորման գործառույթները:


Գրաֆիկ 16. Բանկերի գործունեության արդյունավետության գործակիցներ



Դիտարկված ժամանակահատվածում ներգրավված միջոցներ - վարկեր հարաբերակցությունը ընտրված 18 բանկերի համար տատանվել և գտնվել է 155 - 204 տոկոսի միջակայքում: 1999 թ. սկզբից սկսած այն նվազել է և 2001 թ. մարտին կազմել մոտ 160 տոկոս: Այնուհետև, տարբեր փոփոխություններ կրելով, 2002 թ. վերջին կազմել է 178 տոկոս: Դա նշանակում է, որ բանկերի ներգրավված ռեսուրսների


ծավալները գերազանցել են վարկերը, այսինքն՝ բանկերը ոչ լիարժեք են օգտագործել ներգրավված միջոցները, հետևաբար՝ արդյունավետ չեն աշխատել: Միևնույն ժամանակ, արդյունքները ցույց են տալիս, որ վարկերի տոկոսադրույքների իջեցումը զուգակցվում է ներգրավված միջոցներ - վարկեր հարաբերակցության ոչ զգալի աճի և վարկերի ծավալների փոփոխության արագության մեծ աճի հետ: Ներգրավված միջոցներ - վարկեր հարաբերակցության ժամանակավոր աճը կարելի է բացատրել նաև վարկերի կորուստների պահուստաֆոնդի ձևավորման պայմանների խստացմամբ: Վարկային ռիսկերը և հատկացումները նվազեցնելու համար բանկերը ավելի զգույշ են գործում: Հաշվի առնելով վերոնշյալները՝ կարելի է ենթադրել, որ հետագայում տոկոսադրույքների իջեցումը կբարձրացնի բանկերի գործունեության արդյունավետությունը:

Գրաֆիկ 17. Բանկերի գործունեության արդյունավետության գործակիցներ



Բանկի կառավարման արդյունավետության մյուս գործակիցը տոկոսային ծախսեր - վարկեր հարաբերակցությունն է, որը բնութագրում է միջոցների ներգրավման կամ ձեռքբերման արդյունավետությունը: Արդյունքները ներկայացված են գրաֆիկ 17-ում: Տոկոսային ծախսեր - վարկեր հարաբերակցությունը 1999 – 2002 թթ. ամբողջ ժամանակահատվածում նվազել է՝ 16.16 տոկոսից դարձել է 7.04 տոկոս:

Գրաֆիկ 18. Բանկերի երկու խմբերի ներգրավված միջոցներ - վարկեր հարաբերակցությունը



Գրաֆիկ 18-ում ներկայացված են երկու խմբերի ներգրավված միջոցների օգտագործման ցուցանիշները:

Եթե վարկերի մեջ ներառենք նաև բանկերի թղթակցային հաշիվները, ապա կտեսնենք, որ 1999 - 2001 թթ. ընթացքում բանկերի առաջին խմբի ներգրավված միջոցներ - վարկեր հարաբերակցության արդյունավետության գործակիցը տատանվում է միավորի շուրջը, իսկ երկրորդ խմբի բանկերի համար այդ ցուցանիշը միավորից մեծ է մոտ տասը տոկոսով: Այսինքն, նշված ժամանակահատվածում առաջին խմբի բանկերի ներգրավված միջոցների օգտագործման արդյունավետությունն ավելի բարձր է, քան երկրորդ խմբինը: 2002 թվականի սկզբին առաջին խմբի ներգրավված միջոցներ - վարկեր հարաբերակցությունը կտրուկ աճել է, ապա դանդաղորեն նվազելով, հասել նախկին մակարդակին: Երկրորդ խմբի

համար այդ ցուցանիշը 2002 թվականի ընթացքում անընդհատ նվազել է և տարվա վերջին ունեցել միավորից փոքր արժեք: Այս դեպքում ևս կարելի է եզրակացնել, որ երկրորդ խմբի բանկերի ներգրավված միջոցների կառավարման արդյունավետությունը ցածր է, քանի որ վտանգվել է սեփական կապիտալի պաշտպանական գործառույթը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքում գնահատվել են բանկերի տեղաբաշխված վարկերի ծախսերը, հաշվարկվել են վարկային անվանական տոկոսադրույքի բաղադրիչ մասերը: Վերլուծությունների գնահատումների միջոցով կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- Դիտարկված ժամանակահատվածում բանկերի վարկային ծախսերի հիմնական կշիռ ունեցող բաղադրիչ մասերի անվանական արժեքները ունեն նվազման միտում:
- Բանկերի վարկային ծախսերում համեմատաբար մեծ են սուբյեկտիվ գործոններով պայմանավորված վարչական և վարկերի ռիսկերի ծախսերը, որոնց մեծությունները 2002 թվականի գումարային 14.58 տոկոսում համապատասխանաբար կազմել են 5.17 և 1.66 տոկոս: Ժամանակահատվածի վերջում նշված ծախսերի գումարային կշիռը բանկերի վարկերի ընդհանուր ծախսերում կազմել է 47 տոկոս:
- Բանկերի գործունեության արդյունավետությունը մեծ չէ: Բանկերի ներգրավված ռեսուրսների ծավալները գերազանցում են վարկերը, այսինքն՝ բանկերը ոչ լիարժեք են օգտագործում ներգրավված միջոցները:
- 1999 – 2002 թթ. տոկոսադրույքների նվազումը հանգեցրել է վարկերի ծավալների մեծացմանը: Բանկերը կորուստներ չկրելով, կարողանում են հարմարվել և շարունակել գործունեությունը վարկային շուկայի նոր պայմաններում:
- Բանկերի խմբերի տեղաբաշխված միջոցների ծախսերի փոփոխականները և խմբերի գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներն ունեն զարգացման տարբեր միտումներ: Զարգացման այս պայմաններում, եթե հաշվի առնենք նաև, որ առաջին խմբի ակտիվները աճել են, իսկ երկրորդինը՝ նվազել կամ մնացել անփոփոխ, ապա կարելի է պնդել, որ առաջին խմբի բանկերի գործունեությունը ավելի արդյունավետ է:
- Ժամանակին զուգընթաց մեծանում են գնահատված ծախսերի ու ավանդների և փոքրանում գնահատված ծախսերի ու վարկերի տոկոսադրույքների տարբերությունները: Փոքրանում է նաև վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունը:

Արժեքների հաշվարկման մեթոդը կարելի է օգտագործել բանկերի վարկերի տոկոսադրույքների կանխատեսման նպատակով:

ԳՅՈՒՂԱԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԱԳՈՅԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ)*

Անդրանիկ Գրիգորյան, Կարեն Պողոսյան, Գագիկ Աղաջանյան, Արտակ Հարությունյան

Վիճակագրության վարչություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գյուղմթերքների գնագոյացման վերաբերյալ ՀՀ մարզերում իրականացված հարցումն առաջինն է, որը բացահայտում է գյուղատնտեսական ապրանքների գնագոյացման մեխանիզմները ու կառուցվածքը: Ինչպես գիտենք, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) հիմնական խնդիրը հանրապետությունում գների կայունության ապահովումն է: Նշված խնդիրը լուծելու նպատակով Կենտրոնական բանկին անհրաժեշտ է պարբերաբար տեղեկատվություն ստանալ ապրանքների և ծառայությունների գների միտումների, կառուցվածքի, ինչպես նաև գնագոյացման վրա ազդող գործոնների վերաբերյալ:

Ելնելով գների վերաբերյալ առավել ընդգրկուն տեղեկատվություն հավաքագրելու անհրաժեշտությունից՝ ՀՀ ԿԲ վիճակագրության և դրամավարկային քաղաքականության վարչությունները 2002 թ. նոյեմբեր - դեկտեմբեր ամիսներին նախաձեռնեցին գյուղմթերքների գնագոյացման մեխանիզմների ուսումնասիրման փորձնական ընտրանքային հետազոտություններ հանրապետության գյուղացիական տնտեսություններում, ֆերմաներում և Երևանի սպառողական շուկաներում: Բացի այդ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից մասնագիտացված կազմակերպությանը պատվիրվել է վերամշակող ձեռնարկությունների (պարենային ապրանքներ արտադրող) ընտրանքային հարցում: Նշենք նաև, որ ԿԲ տրամադրած հարցաթերթիկներով Հայգյուղփոխբանկն իրականացրել է վարկառու գյուղացիական տնտեսությունների հարցում և լրացված հարցաթերթիկները տրամադրել ՀՀ ԿԲ-ին:

Հետազոտության ամփոփումը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում համառոտ ներկայացվում է գյուղացիական տնտեսությունների, ֆերմաների և սպառողական շուկաների փորձնական հարցման նախապատրաստման և իրականացման գործընթացի նկարագրությունը: Երկրորդ մասում ամփոփ (քանակական գուգանիշների և որակական գնահատականների միջոցով) ներկայացվում են ՀՀ-ում գյուղմթերքների գնագոյացման հիմնական սկզբունքները, գնագոյացման կառուցվածքը և մեխանիզմները: Վերջապես, երրորդ մասում համեմատվում են հարցման իրականացման ծախսերը և ստացված արդյունքները, ներկայացվում է տարբեր եղանակներով (հարցում՝ սեփական ուժերով, հարցման պատվիրում մասնագիտացված կազմակերպությանը, հարցում միջնորդ կազմակերպության կողմից՝ այս դեպքում Հայգյուղփոխբանկի կողմից) կատարված հարցումների արդյունքների համեմատական վերլուծություն, ինչպես նաև քննարկվում է հարցումների իրականացման առավել նպատակահարմար տարբերակը:

ՄԱՍ I. ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հետազոտության նպատակը և առանձնահատկությունները

ՀՀ կենտրոնական բանկի կողմից գյուղմթերքների գնագոյացման փորձնական հարցման հիմնական նպատակն է հետազոտել Հայաստանի Հանրապետությունում գյուղմթերքների գնագոյացման հիմնական սկզբունքները, գնագոյացման կառուցվածքն ու մեխանիզմները, ինչը հնարավորություն կտա գների կայունության ապահովմանն ուղղված միջոցառումները դարձնել առավել նպատակային և արդյունավետ: Մասնավորապես, հարցման արդյունքները կօգտագործվեն գների բազարձակ մակարդակի ձևավորման և տարվա ընթացքում տարբեր գործոնների ազդեցության հետևանքով փոփոխման վերլուծության համար:

---

* *Հեղինակներն իրենց խորին շնորհակալությունն են հայտնում ՀՀ ԿԲ խորհրդի անդամ Վ. Գաբրիելյանին, ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչությանը՝ հարցման հայեցակարգի վերաբերյալ արժեքավոր առաջարկությունների համար, ինչպես նաև հետազոտական խմբի բոլոր անդամներին, մասնավորապես՝ Սերգեյ Միքայելյանին, Արմեն Մելյանին, Տիգրան Բաղդասարյանին, Վարազդատ Հարությունյանին, Ինգա Ղուկասյանին:*

Հարցումն իրականացվել է մի քանի եղանակների համատեղմամբ: Նախ, ՀՀ ԿԲ աշխատակիցների և պայմանագրային սկզբունքով ներգրավված հարցազրուցավարների միջոցով հետազոտվել են հանրապետության գյուղացիական տնտեսությունները, ֆերմաները և սպառողական շուկաները: Բացի այդ, մասնագիտացված կազմակերպությանը պատվիրվել է վերամշակող ձեռնարկությունների ընտրանքային հարցում՝ ՀՀ ԿԲ աշխատակիցների կողմից պատրաստված հարցաթերթիկներով: Միևնույն ժամանակ, կրկին ՀՀ ԿԲ աշխատակիցների կողմից նախապես պատրաստված հարցաթերթիկներով, մարզերում գյուղացիական տնտեսությունների հարցում է իրականացվել Հայգյուղփոխբանկի մասնաճյուղերի կողմից: Հարցման հիմնական նպատակն էր իրականացված երկու հարցումների արդյունքների միջև խաչաձև ստուգումներ անցկացնելը:

Կենտրոնական բանկի կողմից իրականացված՝ գյուղմթերքների գնագոյացման հարցումը զգալիորեն տարբերվում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) նմանատիպ հարցումներից (դիտարկումներից): Նախ, եթե ՀՀ ԱՎԾ-ն հարցումների միջոցով փորձում է պարզել փաստացի իրավիճակի քանակական պատկերը, ապա ԿԲ կողմից կատարված հարցումների ընթացքում մեծ ուշադրություն է հատկացվում նաև սուբյեկտների գործունեության որակական գնահատականներին: Այլ կերպ ասած, ՀՀ ԱՎԾ (որպես գների վերաբերյալ վիճակագրության պաշտոնական պատասխանատու մարմին) կողմից հրապարակվող տեղեկատվությունն ընդհանուր է բոլոր սպառողների համար և, չնայած բավականին խորը և նպատակային հետազոտություններին, ուղղված է հիմնականում գների մակարդակի գնահատմանը և ընդհանուր միտումների բացահայտմանը, ինչը, ըստ էության, հնարավորություն չի տալիս բացատրելու կարճաժամկետ գնային տատանումները, դրանց էությունը, հիմնական գործոնները և տրամաբանությունը: Բացի այդ, ԿԲ կողմից իրականացվող հարցումներն ուղղված են նաև տնտեսական միտումների կանխատեսման համար տեղեկատվության ձեռքբերմանը և, հետևաբար, ընդգրկում են համապատասխան հարցեր՝ տնտեսավարող սուբյեկտների սպասումների բացահայտման և գնահատման նպատակով:

ԿԲ կողմից իրականացված հարցումների միջոցով ստացվող տեղեկատվության օբյեկտիվության և հավաստիության մակարդակը կարելի է բավականին բարձր համարել, քանզի տեղեկատվությունը ստացվել է ամենիջապես տնտեսավարող սուբյեկտներից՝ առանց միջնորդների մասնակցության: Բացի այդ, հարցումն իրականացվել է մեր կողմից ընտրված և նախապատրաստված հարցազրուցավարների միջոցով:

Deleted: ներ

Deleted: վում

Deleted: են

Deleted: ում

Deleted: ում

Գյուղմթերքների գնագոյացման վերաբերյալ փորձնական հարցման մեթոդաբանությունը և իրականացման փուլերը

Գյուղմթերքների գնագոյացման վերաբերյալ ՀՀ մարզերում գյուղացիական տնտեսությունների հարցումներն իրականացվել են 2002 թ. նոյեմբերի 11-ից դեկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում:

Հարցման օբյեկտների ընտրանքն իրականացվել է երկու ուղղությամբ: Նախ՝ որոշվել է գյուղմթերքների գնագոյացման հետազոտության մեջ ընդգրկվող գյուղմթերքների ցանկը, հետևյալ երկու սկզբունքներից ելնելով. հաշվի է առնվել տվյալ գյուղմթերքի տեսակարար կշիռը ՀՀ-ում արտադրված գյուղմթերքների իրացման ընդհանուր ծավալներում և դրա տեսակարար կշիռը սպառողական զամբյուղում: Ըստ այս սկզբունքների՝ ընտրվել են առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող մթերքները: Այնուհետև իրականացվել է մարզերի, գյուղացիական տնտեսությունների և կազմակերպությունների ընտրություն հետևյալ սկզբունքներով և հաջորդականությամբ: Առաջին փուլում որոշվել է հետազոտության օբյեկտների ընտրանքում ընդգրկվելիք գյուղացիական տնտեսությունների և կազմակերպությունների քանակն այնպես, որ հնարավորինս ապահովվի հետազոտության ներկայացուցչականությունը: Երկրորդ փուլում իրականացվել է մարզերի ընտրություն, որից հետո գյուղացիական տնտեսությունները և կազմակերպությունները բաշխվել են ըստ ընտրված մարզերի:

Ընտրանքի չափը որոշելու համար անհրաժեշտ է ունենալ գլխավոր համակցության օբյեկտների ընդհանուր քանակը և ուսումնասիրվող ցուցանիշի ստանդարտ շեղումը գլխավոր համակցության մեջ: Հարկ է նշել, որ ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների ընդհանուր քանակը հայտնի է, սակայն սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվող ցուցանիշների ստանդարտ շեղումները՝ ոչ, քանի որ գյուղմթերքների գնագոյացման մեխանիզմների վերաբերյալ վիճակագրական հարցում իրականացվում է առաջին անգամ: Հաշվի առնելով այն, որ մեզ հայտնի չեն գլխավոր համակցության համապատասխան ցուցանիշների ստանդարտ շեղումների մեծությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ հարցման արդյունքներն ամփոփելիս միջինացվելու են հիմնականում տեսակարար կշիռներ բնութագրող ցուցանիշներ՝ գյուղացիական տնտեսությունների ընտրանքի կազմավորումն իրականացվել է հետևյալ տրամաբա-

նությամբ. կատարվել է ենթադրություն, որ գլխավոր համակցության համապատասխան ցուցանիշի (օրինակ, շուկայում իրացված գնի) տատանման գործակիցը կլինի 30-40% միջակայքում: Հիմնվելով այդ միջակայքերի վրա՝ հաշվարկվել են ընտրանքի ներքին և վերին սահմանները: Դրա համար կիրառվել է մաթեմատիկական վիճակագրության մեջ հայտնի հետևյալ բանաձևը.

$$n = \frac{Nv^2t^2}{(N-1)\Delta_x^2 + v^2t^2} \quad (1)$$

որտեղ՝

v - գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշի տատանման գործակիցն է (%),

t - ընտրված t չափանիշի մեծությունը,

Δ_x - գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշի սխալի հարաբերական մեծությունն է (սխալի բացարձակ մեծությունը՝ հարաբերած ընտրանքի միջինին, %):

Այսպիսով, կիրառելով վերոհիշյալ բանաձևը՝ փորձենք որոշել ընտրանքի չափն այնպես, որ ընտրանքի և գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշների միջև սխալը 95% հավանականությամբ չգերազանցի 5% սահմանը: Կիրառելով (1) բանաձևը և ենթադրելով, որ գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշի տատանման գործակիցը տատանվում է 30% - 40%-ի միջակայքում՝ կգտնենք ընտրանքի համապատասխան չափը.

$$n_1 = \frac{334759 * 1.96^2 * 30^2}{(334759-1) * 5^2 + 30^2 * 1.96^2} = 138 \qquad n_2 = \frac{334759 * 1.96^2 * 40^2}{(334759-1) * 5^2 + 40^2 * 1.96^2} = 246$$

Հաշվարկների արդյունքում ստանում ենք, որ գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշի 30% տատանման գործակցի մեծության դեպքում ընտրանքի անհրաժեշտ քանակը 138 գյուղագիական տնտեսություն է, իսկ 40%-ի դեպքում՝ 246: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրվելու են առանձին գյուղմթերքների գնագոյացմանը վերաբերող ցուցանիշներ, և առանձին գյուղագիական տնտեսություններ զբաղվում են միայն որոշակի գյուղմթերքների արտադրությամբ, ինչը կարող է իրականում փոքրացնել ընտրանքը, ընտրանքի չափը մեծացվել է մինչև 250 գյուղագիական տնտեսություն: Ընդ որում, հետազոտվող գյուղերի քանակը որոշվել է յուրաքանչյուր գյուղում միջինը 5 գյուղագիական տնտեսության հաշվարկով, այսինքն, ընդհանուր առմամբ, հետազոտվող գյուղերի քանակը ստացվել է 50:

Այսպիսով, ներկայացուցչականությունն ապահովող ընտրանքի չափը որոշելուց հետո գյուղմթերքների անվանացանկի հիման վրա իրականացվել է համապատասխան մարզերի և գյուղերի ընտրություն: Ընտրանքում ընդգրկվել են այն մարզերը, որտեղ համեմատաբար մեծ ծավալներով արտադրվում են հարցման ընթացքում դիտարկվող մի քանի գյուղմթերքներ միաժամանակ: Այնուհետև ընտրանքում ընդգրկված 50 գյուղերը բաշխվել են ըստ մարզերի՝ օգտագործելով մաթեմատիկական վիճակագրության մեջ հայտնի օպտիմալ բաշխման (Նեյմանի) բանաձևը: Ընդ որում, որպես օպտիմալ բաշխման չափանիշներ՝ վերցվել են գյուղագիական տնտեսությունների քանակը յուրաքանչյուր մարզում և յուրաքանչյուր մարզի գյուղմթերքների թողարկման տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն թողարկման մեջ (քանի որ համապատասխան ցուցանիշների ստանդարտ շեղումները հայտնի չեն):

$$n_j = n\frac{N_j\sigma_j}{\sum N_j\sigma_j}$$

Նշված բանաձևի օգնությամբ կատարվել են հաշվարկներ՝ ըստ համապատասխան չափանիշների: Ընտրանքի մեջ ընդգրկված գյուղերի քանակը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Մարզի անվանումը	Գյուղագիական տնտեսությունների քանակը*	Համախառն արտադրանքը, մլրդ դրամ	Օպտիմալ բաշխման կշիռները՝ հաշվարկված ըստ Նեյմանի բանաձևի	Հետազոտության մեջ ընդգրկված գյուղերի քանակը	Հետազոտության մեջ ընդգրկված գյուղագիական տնտեսությունների փաստացի քանակը
Արարատ	52497	45	0.23	11	55
Արմավիր	50332	50	0.24	12	60
Գեղարքունիք	46210	50	0.22	11	48
Լոռի	32542	36	0.11	6	30
Կոտայք	37611	31	0.11	5	25
Շիրակ	28151	34	0.09	5	25
Ընդամենը	*247343*	*245*	*1.00*	*50*	*243*

Deleted: *243*

** Գյուղագիական տնտեսությունների քանակը ըստ մարզերի տրամադրվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից:*

Այնուհետև, յուրաքանչյուր մարզից ընտրանքի մեջ ընդգրկվող գյուղերի քանակը հաշվարկելուց հետո, որոշվել է այն գյուղերի զանկը, որոնք պետք է մասնակցեն հարցմանը: Այդ գյուղերի զանկը որոշելու համար օգտագործվել է գյուղերի բնակչության թվաքանակի զուգահիշը և ընտրվել են ամենամեծ բնակչություն ունեցող գյուղերը: Գյուղերի ընտրությունը կատարելուց հետո, պահպանելով «մարզի յուրաքանչյուր գյուղում միջինը 5 գյուղագիական տնտեսություն» սկզբունքը, իրականացվել է յուրաքանչյուր մարզում հետազոտվող գյուղագիական տնտեսությունների տեղաբաշխումն ըստ ընտրված գյուղերի՝ հաշվի առնելով տվյալ գյուղի բնակչության թվաքանակը: Հարցման մեջ ընդգրկված գյուղերի զանկը, գյուղագիական տնտեսությունների և ֆերմաների քանակը ներկայացված են Հավելված 3-ում:

Հարցումն անց է կացվել ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրության ինչպես նաև դրամավարկային քաղաքականության վարչությունների կողմից մշակված հարցաթերթիկներով: Հարցաթերթիկում ընդգրկված բոլոր հարցերն ընտրվել են այնպես, որ հնարավորություն տան պարզելու գյուղմթերքների գնագոյացման կառուցվածքը, գների ձևավորման մեխանիզմները և դրանց վրա ազդող գործոնները:

Հարցումների անցկացման համար ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից ներգրավվել են պայմանագրային աշխատողներ, որոնք այցելել են ընտրանքում ընդգրկված գյուղագիական տնտեսություններ, ֆերմաներ և սպառողական շուկաներ՝ տեղում իրականացնելով հարցումները և հարցման մասնակցի (ռեսպոնդենտի) ներկայությամբ լրացնելով հարցաթերթիկները:

Հավաքագրված տվյալները խմբավորվել են և ենթարկվել վիճակագրական վերլուծության՝ քանակական օրինաչափություններ բացահայտելու և որակական գնահատականներ տալու նպատակով:


ՄԱՍ II. ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարցման արդյունքները ամփոփվել են համակարգչային EXCEL և SPSS10.1 ծրագրային փաթեթների միջոցով: Ամփոփումն իրականացվել է ըստ ապրանքատեսակների և մարզերի: Ընդ որում, իրականացվել է գյուղագիական տնտեսությունների դասակարգում, ինչի արդյունքում վերջիններս բաշխվել են երեք խմբի՝ խոշոր, միջին և փոքր: Բուսաբուծական արտադրանք թողարկող գյուղագիական տնտեսությունների համար դասակարգման չափանիշ են հանդիսացել արտադրված գյուղմթերքների ծավալները և մշակված հողատարածքները (դասակարգումն իրականացվել է կլաստերային վերլուծության միջոցով), իսկ միս և կաթ արտադրողների համար՝ միայն արտադրանքի ծավալները[1]:

Մշակաբույսերի արտադրություն

Ցորեն: Ցորենը և հացահատիկային մշակաբույսերի մեջ ընդգրկված այլ գյուղմթերքները ՀՀ գյուղատնտեսության կարևորագույն ապրանքներից են: Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 1998 – 2002 թթ. հացահատիկային մշակաբույսերի զբաղեցրած տարածությունները կազմել են միջինը 190 հազար հա կամ ընդհանուր ցանքատարածության շուրջ 60%-ը:

Ցորենի արտադրության կառուցվածքը ըստ դասակարգված տնտեսությունների
(տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ)



Deleted: ...

Deleted: Գ

Deleted: ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼԳ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸԳ Գ

Deleted: ը

Deleted: Լ


Deleted: ստ ապրանքատեսակների ամփոփման ժամանակ գյուղացիական տնտեսությունները, հիմնվելով

Deleted: ի վրա, կլաստերային վերլուծության միջոցով բաժանվել են երեք հիմնական խմբերի՝ խոշոր, միջին և փոքր, որոնց վրա և հիմնված է ամբողջ վերլուծությունը:Գ

Deleted: գ

ՀՀ ԿԲ կողմից իրականացված հարցման մեջ ընդգրկված 243 գյուղացիական տնտեսություններից ցորենի արտադրությամբ զբաղվում է 54%-ը (132 գյուղացիական տնտեսություն): Նշված տնտեսություններից 84%-ը փոքր տնտեսություններ են: Միջին և խոշոր դասի մեջ են ընդգրկվել տնտեսությունների համապատասխանաբար 12% և 4%-ը: Նշենք, որ փոքր տնտեսությունները, կազմելով տնտեսությունների ընդհանուր քանակի գերակշռող մասը, արտադրել են ընդհանուր արտադրանքի ընդամենը 40.9%-ը: Մեկ տնտեսության հաշվով ցորենի արտադրության միջին ծավալներն, ըստ հարցման արդյունքների, կազմում են շուրջ 4636 կգ, ընդ որում, խոշոր տնտեսություններում այն 11 անգամ գերազանցում է փոքր տնտեսությունների և երկու անգամ՝ միջինների արտադրանքը:

Ինչպես երևում է ստորև ներկայացված գրաֆիկում, արտադրված ցորենի մոտ կեսն իրացվել է շուկայում, միջնորդին և վերամշակող ձեռնարկությանը[2]: Նշված ուղղություններով ցորենի իրացումն իրականացվել է մեծամասամբ (66%) երրորդ եռամսյակում, ինչը բացատրվում է բնակլիմայական պայմաններով՝ ցորենը դաշտից հավաքվում է հիմնականում հուլիս - օգոստոս ամիսներին:



Ուշագրավ է, որ շուկայում և միջնորդի միջոցով է իրացվում խոշոր գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված ցորենի մոտ 45.9%-ը, իսկ մնացածը սպառվում է տնտեսությունում[3] կամ կուտակվում՝ տնտեսությանը սերմացուով ապահովելու և հետագայում իրացնելու նպատակով: Միևնույն ժամանակ, փոքր տնտեսությունների կողմից տնտեսությունում սպառվում և կուտակվում է արտադրված ցորենի մոտ 60.2%-ը, ինչը պայմանավորված է բերքի սակավությամբ, որն էլ ուղղվում է հիմնականում հացամթերքի նկատմամբ անձնական պահանջարկի բավարարմանը և հաջորդ տարվա համար տնտեսությանը սերմացուով ապահովմանը: Նշված տնտեսություններում միջնորդի միջոցով ցորենի իրացումը մոտ երկու անգամ գերազանցում է շուկայում իրացված ցորենի ծավալները, ինչը հիմնականում պայմանավորված է շուկայում իրացման հետ կապված ծախսերով, որը կարող է էական ազդեցություն ունենալ փոքր գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված ցորենի եկամտաբերության վրա: Տնտեսությունների չափերի մեծացմանը զուգընթաց նվազում է շուկայում ցորենի իրացման տեսակարար կշիռը՝ միաժամանակ էականորեն աճում միջնորդի միջոցով բերքի իրացման ծավալը:


Չնայած ցորենի իրացման գների աոաավել ցածր մակարդակը գրանցվում է երրորդ եռամսյակում, փոքր և միջին տնտեսությունները նախընտրում են արտադրված ցորենն իրացնել հիմնականում այդ ժամանակահատվածում՝ արտադրության ժամանակ: Հավանաբար դա առավելապես պայմանավորված է պահեստավորման դժվարություններով, տարվա ընթացքում կուտակված պարտքերի մարման անհրաժեշտությամբ և ապրանքափոխանակման իրականացմամբ: Միևնույն ժամանակ նշենք, որ համաձայն ԿԲ կողմից հետազոտված՝ գործող արտադրող ֆերմաների պատասխանների, նրանք իրենց արտադրանքի մոտ 95%-ն իրացնում են շուկայում և վերամշակող ձեռնարկությանը և միայն 5%-ն է իրացվում այլ ուղղություններով:

ՀՀ-ում ցորենի արտադրված ծավալի և իրացման գների միջև գոյություն ունեցող կապն այնքան էլ արտահայտված չէ, քանզի ցորենի իրացման ներքին գների վրա էական ազդեցություն ունի ցորենի

[1] Հարցման արդյունքների վերաբերյալ թվային տեղեկատվությունն առավել մանրամասն ներկայացված է Հավելվածներ 1-ում և 2-ում:
[2] Իրացման ուղղություններ ասելով նկատի է առնվում շուկայում, միջնորդին, վերամշակող ձեռնարկությանը իրացումը, ինչպես նաև տնտեսությունում մթերքի սեփական սպառումը և կուտակումը:
[3] Տնտեսությունում սպառված մասը ներառում է նաև 2002 թ. արդեն ցանված աշնանացան ցորենի սերմացուն:

Deleted: Հ
Deleted: 242
Deleted: 55
Deleted: խմբավոր
Deleted: տոկոսը
Deleted: նաև
Comment [G1]: Միջի՞ն արտադրանքը թե ընդհանուր
Deleted: արտադրանքը
Deleted: 49.5% կամ
Deleted:
Deleted: տրամաբանական է՝ կապված Հայաստանում
Deleted: ի հետ, երբ
Deleted: մ
Deleted: գ
ց
Deleted: վերաբերյալ նշենք (ՀՀ ԱՎԾ կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության համաձայն), որ դրանք էականորեն աճում են առաջին երկու եռամսյակների ընթացքում և տարվա վերջին, սակայն, ի տարբերություն խոշորների,
Deleted: ը
Deleted: ցորենն իրացնել
Deleted: Այդ
Deleted:
Deleted: այս ժամանակահատվածում գյուղերում ապրանքային առևտրի գերակայմամբ, երբ ընթացիկ պահանջմունքների բավարարման նպատակով իրացվում է արտադրված ցորենի գերակշիռ մասը:
Deleted: ներքին տնտեսությունում
Deleted: և սպառումը

ներմուծումը[4]: Այս առումով կարելի է պնդել, որ Հայաստանում ցորենի գները առաձգական են առավելա-



պես ներմուծման, քան ներքին արտադրության նկատմամբ:

Գյուղացիական տնտեսությունների կողմից ցորենի իրացման միջին գները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2

Տնտեսություններ		*Շուկայում*	*Միջնորդին*	*Վերամշակող ձեռնարկությանը*
Փոքր	միջին թվաբանական, դրամ	80.4	77.5	80.0
	ստանդարտ շեղում, դրամ	10.7	6.7	2.9
	տատանման գործակից, %	13.3	8.6	3.6
Միջին	միջին թվաբանական, դրամ	75.0	75.8	80.0
	ստանդարտ շեղում, դրամ	-	4.7	-
	տատանման գործակից, %	-	6.2	-
Խոշոր	միջին թվաբանական, դրամ	80.0	77.0	-
	ստանդարտ շեղում, դրամ	-	2.4	-
	տատանման գործակից, %	-	3.2	-
Ընդամենը, դրամ		**78.2**	**77.2**	**80.0**
Վստահելիության միջակայք		**75.8 - 80.6**	**76.3 - 78.1**	**78.4 - 81.7**

Ինչպես երևում է աղյուսակից, գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված ցորենի գների տատանման գործակիցները բավականին ցածր են: Նշվածը վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է ցորենի մրցակցային շուկա:

Ընտրանքի մեջ ներգրավված ցորենի արտադրությամբ զբաղվող 132 տնային տնտեսություններից տարվա ընթացքում ցորենի գինը վերանայել է միայն 16%-ը, ինչը նշանակում է, որ ցորենի գները տարվա ընթացքում համեմատաբար կայուն են: Ընդ որում, վերանայման հիմնական պատճառներ են հանդիսացել սեզոնային առաջարկի և պահանջարկի փոփոխությունները, ինչպես նաև ներմուծվող գների փոփոխության ազդեցությունը: Գնի վերանայման վրա ազդում են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են մրցակցի գների փոփոխությունները, փոխարժեքը և այլն:

Ինչ վերաբերում է ցորենի արտադրության ինքնարժեքին, ապա խոշոր տնտեսություններում ցորենի ինքնարժեքի նվազագույն մակարդակը գերազանցում է փոքր և միջին տնտեսություններում գրանցված նվազագույն մակարդակը, ինչը հիմնականում պայմանավորված է փոքր և միջին տնտեսությունների ծախսերի այնպիսի չնչին ծավալներով, ինչպիսիք են պահեստավորման, աշխատավարձի և «Այլ» հոդվածով նախատեսված ծախսերը[5]: Միևնույն ժամանակ, տնտեսությունների չափերի մեծացմանը զուգընթաց, նվազում է նաև օգտագործվող թունաքիմիկատների ծավալը:

Deleted: պատասխանների
Deleted: ն
Deleted: այնքան էլ մեծ չեն
Deleted: , ինչը
Deleted: Իրացման բոլոր ուղղություններով գնի լայնքի մեծությունը կազմում է 35 դրամ:
Deleted: գինը
Deleted: ը եղել են
Deleted: ունները
Deleted: նվազագույն
Deleted: ը
Deleted: ի
Deleted:
Deleted: ինքնարժեքին

[4] *Մթերքների արտադրության ծավալների և Հանրապետությունում իրացման գների վերաբերյալ տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ հրապարակումներից:*
[5] *Նշված տարբերությունը, ըստ տնտեսությունների չափերի, նկատելի է գրեթե բոլոր գյուղմթերքների համար:*

Հարցման ընթացքում հետազոտված ֆերմերային տնտեսություններում ցորենի արտադրության ինքնարժեքը գրեթե համընկնում է ՀՀ ԿԲ և Հայգյուղփոխբանկի[6] կողմից հետազոտված գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված ցորենի ինքնարժեքի միջին կշռված մակարդակին, ինչը վկայում է տնտեսությունում գյուղմթերքների գների ձևավորման ընդհանուր սկզբունքների առկայության մասին՝ անկախ գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների կարգավիճակից:

Ցորենի արտադրության վրա կատարված ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն «Այլ ծախսերը», որոնք ներառում են հիմնականում այնպիսի ծախսեր, ինչպիսիք են՝ տրակտորների (վար, ցանք), կոմբայնների, վառելիքի և տրանսպորտային ծախսերը: Այս ծախսերի կշիռն հատկապես մեծ է փոքր տնտեսություններում, ինչը մեծամասամբ պայմանավորված է բերքի, սերմերի և այլնի տեղափոխման հետ կապված տրանսպորտային ծախսերով, որոնք, անկախ բերքի ծավալից և մշակվող հողատարածքից, ունեն հաստատուն արժեք: Ցորենի արտադրության վրա կատարված ծախսերում էական կշիռ ունեն նաև սերմերը[7]:

Հատկանշական է թունաքիմիկատների վրա կատարված ծախսերի ծավալը, ինչը նվազում է տնտեսությունների չափերի աճին զուգընթաց: Դա վկայում է, որ բերքատվության մեծացման համար փոքր տնտեսությունները, ի տարբերություն մեծերի, հիմնականում շեշտը դնում են թունաքիմիկատների կիրառման վրա, այն դեպքում, երբ խոշոր տնտեսություններն ունեն հողերը պարբերաբար չմշակելու հնարավորություն՝ վերջիններիս կենսաբանական հատկությունների վերականգնման նպատակով, ինչը էականորեն բարձրացնում է բերքատվությունը:

Ցորենի արտադրության համար կատարված ծախսերի կառուցվածքը մեր կողմից հետազոտված ֆերմաներում և Հայգյուղփոխբանկի կողմից հետազոտված գյուղացիական տնտեսություններում, ընդհանուր առմամբ, նույնն է:

Ամփոփելով նշենք, որ ցորեն արտադրողների մեծ մասը փոքր տնտեսություններ են, որոնք դա արտադրում են առաջին հերթին սեփական կարիքները բավարարելու համար: Ընդ որում, արտադրված ցորենի 39%, 26% և 22%-ն արտադրվել է համապատասխանաբար Շիրակի, Արմավիրի և Արարատի մարզերում:

Ցորենի ինքնարժեքը և շուկայում ձևավորված գները թույլ են ազդում արտադրության վերաբերյալ որոշումների կայացման վրա: Ինքնարժեքի կառուցվածքում գերակշռում են այնպիսի ծախսեր, որոնք վերաբերում են ներմուծվող ապրանքներին (սերմեր, վառելիք, թունաքիմիկատներ): Հետևապես, մեծ է ներմուծման ծավալների և գների, ինչպես նաև փոխարժեքի ազդեցությունը ինքնարժեքի վրա: Ինչ վերաբերում է իրացման գներին, ապա դրանք հիմնականում թելադրվում են գնորդի կողմից[8], քանի որ ցորենի նկատմամբ հանրապետության կարիքների մի զգալի մասը բավարարվում է ներմուծման հաշվին:

Կարտոֆիլ: ՀՀ գյուղատնտեսության համար առաջնային է նաև կարտոֆիլագործությունը: Ըստ պաշտոնական տվյալների՝ 1998 - 2002 թթ. հանրապետության ցանքատարածությունների շուրջ 10%-ը կամ միջինը 32 հազար հա օգտագործվել է կարտոֆիլի մշակման համար: Ընդ որում, կարտոֆիլի մշակումը ՀՀ-ում ունի զարգացման բավականին մեծ ներուժ և ապագայում կարող է դառնալ արտահանվող հիմնական գյուղմթերքներից մեկը: Հարկ է նշել, որ 2002 թ. ընթացքում հավաքված կարտոֆիլի բերքը եղել է բավականաչափ հարուստ:

Հետազոտության մեջ ընդգրկված 243 գյուղացիական տնտեսություններից 107-ը կամ 44%-ը զբաղվում է կարտոֆիլի արտադրությամբ, դրանց 53.3%-ը դասակարգվում է որպես փոքր, 39.3%-ը՝ միջին և 7.4%-ը՝ խոշոր տնտեսություն:

Խոշոր տնտեսություններում կարտոֆիլի արտադրության ծավալը, մեկ տնտեսության հաշվով, մոտավորապես 15 անգամ գերազանցում է փոքր տնտեսությունների արտադրանքի ծավալը, իսկ միջին տնտեսություններում՝ 4 անգամ: Ընդ որում, կարտոֆիլի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների մեծ մասը զբաղվում է այդ գործունեությամբ անձնական կարիքների բավարարման նպատակով, իսկ խոշոր տնտեսությունները՝ շահույթ ստանալու: Փոքր տնտեսություններում կարտոֆիլի արտադրության միջին ծավալները մեկ տնտեսության հաշվով կազմում են 1267 կգ (ինչը հիմնականում բավարարում է գյուղական մեկ ընտանիքի կարտոֆիլի նկատմամբ տարեկան պահանջարկը և ապահո-

[6] *Հայգյուղփոխբանկի կողմից իրականացված հետազոտությունն ուներ բազմաթիվ թերություններ (թերլրացումներ, մեխանիկական կոկնությունները և այլն), ինչն էապես դժվարացնում էր հարցման արդյունքների ամփոփումը:*

[7] *Սերմերի կշռի որոշակի տատանումներն ըստ տնտեսությունների չափերի բացատրվում է այն հանգամանքով, որ մեկ հեկտարի հաշվով ցանվող ցորենի փաստացի ծավալը տարբերվում է նորմատիվայինից՝ տատանվելով որոշակի միջակայքում (220-300 կգ): Այստեղ իր ազդեցությունն ունեն նաև տեղական և ներմուծված սերմերի որակական տարբերությունները:*

[8] *Այստեղ և հետագայում այս կարգի դատողությունները վերաբերում են միայն գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղմթերքների իրացման գներին:*

Deleted: Միջին չափի տնտեսությունների մոտ մեծ կշիռ ունի պայմանագրային հիմունքներով գնորոշումը, ինչը խոսում է այն մասին, որ այս տնտեսություններն ունեն որոշակի միջանկյալ դիրք գնորոշման հարցում, այսինքն այստեղ գինը կարող է որոշվել նշված սկզբունքներից յուրաքանչյուրով՝ առանց նախապատվություն տալու դրանցից որևէ մեկին:Գ

Deleted: , բոլոր չափի տնտեսություններում,

Deleted: և այլ ծախսեր

Deleted: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հատկապես ծախսերում

Deleted: կշռին կառուցվածքում, ինչը

Deleted: է

Comment [G2]: Ու՞մ նկատմամբ է մեծ:

Deleted: Գ
Գ

Deleted: զգալիորեն

Deleted: Միևնույն ժամանակ հավաքված բերքը գերազանցել է հացահատիկային մշակաբույսերի բերքին՝ պայմանավորված հիմնականում կարտոֆիլի առավել բերքատվությամբ:

Deleted: Գ

Deleted: 242

Deleted: .....մեկ տնտեսության հաշվով արտադրանքի ծավալը.., ...արտադրության սեզանայնությունըԳ

Deleted: 12

Deleted: իՆ

Deleted: 3

Deleted: (փ

Deleted: 635

Deleted:

Deleted: (

Deleted: հազիվ կ

Deleted: ի

Deleted: իՆ

Deleted: գ

Deleted: *կարելի է*

Deleted: *եվ*

Deleted: *ի առկայությամբ*

Deleted: *250*

վում է տնտեսությանը սերմացուով), այն դեպքում, երբ կարտոֆիլ արտադրող փոքր տնտեսությունները կազմում են մեր ընտրանքի մոտ 53%-ը:

Տնտեսությունների կողմից վերամշակող ձեռնարկությանը կարտոֆիլի վաճառքը որպես իրացման ուղղություն բացակայում է, փոխարենն էական տեսակարար կշիռ ունեն միջնորդի միջոցով իրացումը և տնտեսությունում կուտակված կարտոֆիլի ծավալը:

Տնտեսություններում սպառված կարտոֆիլի ծավալը տնտեսությունների չափերի մեծացմանը զուգընթաց նվազում է, ինչը հիմնականում պայմանավորված է փոքր տնտեսություններում հավաքված քիչ բերքով, որի գերակշիռ մասն ուղղվում է անձնական կարիքների բավարարմանը և տնտեսությանը սերմացուով ապահովմանը: Խոշոր տնտեսություններում, պայմանավորված բերքի մեծ քանակով, տնտեսությունում սպառված կարտոֆիլն ունի համեմատաբար փոքր տեսակարար կշիռ: Ինչպես և ցորենի դեպքում, ի տարբերություն փոքր տնտեսությունների, խոշորները նախընտրում են իրենց արտադրանքն իրացնել միջնորդի միջոցով: Ըստ ամենայնի, դա պայմանավորված է հիմնականում այն հանգամանքով, որ խոշոր տնտեսություններին ավելի ձեռնտու է իրացվող բերքն ամբողջությամբ վաճառել միջնորդին (թեկուզ ավելի էժան գնով), քան մաս-մաս՝ ամբողջ տարվա ընթացքում շուկայում:

Deleted: ապահովմանը

Deleted: հաճնումը,

Deleted:), իսկ խոշոր տնտեսությունները՝ շահույթ ստանալու:

Deleted: ն


Deleted: Այդ

Deleted: միջնորդի միջոցով բերքի իրացման համեմատաբար ցածր գներով մի կողմից, իսկ մյուս կողմից


Deleted: միանգամից

Deleted: միջոցով

Deleted: այն վաճառել



Հայգյուղփոխբանկի կողմից իրականացված՝ վարկառու գյուղացիական տնտեսությունների հարցման արդյունքները արտադրված կարտոֆիլի իրացման ուղղությունների վերաբերյալ համընկնում են ՀՀ ԿԲ կողմից իրականացված հարցման արդյունքներին: Սակայն ՀՀ ԿԲ կողմից իրականացված՝ ֆերմերների հետազոտության արդյունքներն էապես տարբերվում են այդ հարցման արդյունքներից: Ֆերմերներն իրենց արտադրանքի 92%-ն իրացնում են միջնորդի միջոցով:



Բոլոր տնտեսություններում էական կշիռ ունի կարտոֆիլի կուտակումը, սակայն տնտեսությունների չափերից կախված՝ դրա նպատակը կարող է էապես տարբերվել: Ինչպես արդեն նշվել է, փոքր տնտեսու-

թյունների կողմից կարտոֆիլի արտադրության միջին ծավալները կազմում են 1267 կգ: Միևնույն ժամանակ, խոշոր տնտեսություններում միջին ծավալը կազմում է 18.7 տ, ինչը միանշանակ ենթադրում է արտադրված բերքի մի մասի կուտակում՝ հետագայում ավելի բարձր գնով իրացնելու նպատակով:

Կարտոֆիլի իրացումն ըստ եռամսյակների հաջորդաբար աճում է՝ առավելագույն մակարդակին հասնելով 4-րդ եռամսյակում: Առաջին եռամսյակում կարտոֆիլի իրացումն ունի նվազագույն ծավալ՝ կապված այդ ժամանակահատվածում կարտոֆիլի պաշարների նվազման հետ, այսինքն՝ այս ամիսներին արդեն վերջանում են նախորդ տարվա ընթացքում կուտակված պաշարները, իսկ նոր բերք դեռևս գոյություն չունի: Չորրորդ եռամսյակում կարտոֆիլի իրացման ծավալներն ամենաշատն են, քանզի այս ժամանակաշրջանում հավաքվում է կարտոֆիլի բերքի մեծ մասը, միևնույն ժամանակ էականորեն աճում է այս մթերքի նկատմամբ բնակչության պահանջարկը՝ կապված ձմեռվա համար պաշարների կուտակման հետ (ինչով և պայմանավորված է չորրորդ եռամսյակում կարտոֆիլի գների աճը): Նշենք, որ ի տարբերություն փոքր և միջին տնտեսությունների, որոնք իրենց արտադրանքի մի մասն իրացնում են առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում, խոշոր տնտեսությունները նախընտրում են ամբողջ բերքն իրացնել երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում, երբ գներն արդեն աճում են:

Գյուղացիական տնտեսությունների կողմից կարտոֆիլի իրացման միջին գները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 3

Տնտեսություններ		*Հունվարին*	*Միջնորդին*
Փոքր	միջին թվաբանական	93.8	94.4
	ստանդարտ շեղում	27.7	25.0
	տատանման գործակից	29.6	26.4
Միջին	միջին թվաբանական	110.3	97.0
	ստանդարտ շեղում	30.0	20.7
	տատանման գործակից	27.2	21.4
Խոշոր	միջին թվաբանական	112.5	105.0
	ստանդարտ շեղում	3.5	8.4
	տատանման գործակից	3.1	8.0
Ընդամենը, դրամ		110.7	99.7
Վստահելիության միջակայք		**99.5 - 121.9**	**93.6 - 105.8**

Կարտոֆիլի իրացման գնի լայնքի ցուցանիշը (գնի առավելագույն և նվազագույն մակարդակների տարբերությունը) փոքր և միջին տնտեսություններում էականորեն գերազանցում է խոշոր տնտեսությունների լայնքի ցուցանիշը, ինչը վկայում է այն մասին, որ խոշոր տնտեսություններն իրենց արտադրանքն իրացնում են հիմնականում մեկ կամ մի քանի (թվով քիչ) գնորդների՝ որոշակի գնով:

Կարտոֆիլի արտադրությամբ զբաղվող 107 գյուղացիական տնտեսություններից տարվա ընթացքում գները վերանայել են մոտ 45%-ը, դրանցից մեծ մասը՝ 2-3 անգամ: Կարտոֆիլի գնի վերանայման հիմնական պատճառ են հանդիսացել սեզոնային առաջարկի (մոտ 51%) և պահանջարկի փոփոխությունները (մոտ 27%): Մնացած գործոնների ազդեցությունն ունի գրեթե համաչափ բաշխվածություն: Նշենք նաև, որ սպառողական շուկայում[9] կարտոֆիլի գինը տարվա ընթացքում կտրուկ փոփոխվում է երկու անգամ. նախ բարձրանում է մարտին, այնուհետև նվազում մինչև հունիսի վերջ, ապա սկսում է նորից բարձրանալ հուլիսից:

Կարտոֆիլի արտադրության վրա կատարված ծախսերում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն սերմերի և թունաքիմիկատների ձեռքբերմանն ուղղված ծախսերը: Միևնույն ժամանակ նշենք, որ ոռոգման, թունաքիմիկատների վրա կատարված ծախսերը և հողի հարկը նվազում են տնտեսությունների չափերի մեծացմանը զուգընթաց: Նման երևույթ կարող ենք անվանել «մասշտաբի էֆեկտ», այսինքն՝ տնտեսությունների չափերի մեծացման հետ մեկտեղ նվազում է հարաբերական ծախսատարությունը: Այսպիսով, դիտարկելով կարտոֆիլի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքը և կարտոֆիլի ինքնարժեքն ըստ մարզերի, նշենք, որ նվազագույն ինքնարժեք գրանցվել է Կոտայքի մարզում, իսկ առավելագույն՝ ինքնարժեք՝ Լոռու մարզում (ինքնարժեքի լայնքի ցուցանիշը կազմել է 55.4 դրամ): Ինքնարժեքների միջև նման տարբերությունը հիմնականում պայմանավորված է Լոռու մարզում այնպիսի

[9] *Համաձայն 1998 – 2002 թթ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության սպառողական գների տասնօրյա դիտարկումների, ինչպես նաև ՀՀ ԿԲ շաբաթական դիտարկումների տվյալների:*

Deleted: 635կ

Deleted: , ինչը հազիվ թե բավարարի տնտեսության կողմից կարտոֆիլի նկատմամբ անձնական պահանջարկին և հաջորդ տարվա սերմացուին

Deleted: 7.6

Deleted: բնականաբար ենթադրում է, որ այն կուտակվում է

Deleted: է

Deleted: հիմնականում հասնում կարտոֆիլի բերքը մի կողմից,

Deleted: ,

Deleted: ի

Deleted: ընթացքում

Deleted: *2*

Deleted: 85.7

Deleted: 97

Deleted: 1

Deleted: 2

Deleted: 7

Deleted: 4

Deleted: 0

Deleted: .0

Deleted: 28.1

Deleted: 03.3

Deleted: 98.1

Deleted: 27.6

Deleted: 22.4

Deleted: 26.7

Deleted: 22.9

Deleted: միանգամից

Deleted: , իսկ փոքր տնտեսությունները, ինչպես վերը նշվել է, արտադրանքն իրացնում են շուկայում՝ սակարկվող գնով:

Deleted: Ինչ վերաբերում է կարտոֆիլի իրացման գներին, ապա խոշոր տնտեսությունների մոտ բոլոր ուղղություններով իրացման գներն ընկնում են փոքր և միջին տնտեսությունների իրացման գների նվազագույն և առավելագույն արժեքների միջակայքի մեջ:Գ Կարտոֆիլի արտադրության վրա կատարված ծախսերում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն սերմերի և թունաքիմիկատների ձեռքբերմանն ուղղված ծախսերը: Միևնույն ժամանակ նշենք, որ ոռոգման, թունաքիմիկատների վրա կատարված ծախսերը և հողի հարկը նվազում են տնտեսությունների չափերի մեծացմանը զուգընթաց, ինչը վկայում է այն մասին, որ այստեղ տնտեսությունների չափերի մեծացման հետ մեծանում է նաև նրանց մոտ բերքատվությունը:Գ


ծախսերի գերակայությամբ, ինչպիսիք են սերմերի և քունաքիմիկատների ձեռքբերմանն ուղղված ծախսերը և հողի հարկը: Իրացման ամենացածր գները գրանցվել են Արարատի և Արմավիրի մարզերում:

Այսպիսով, ինչպես պարզվում է հարցման արդյունքներից, հետազոտության ընտրանքում ընդգրկված մարզերից կարտոֆիլի արտադրության մեջ մասնագիտացել են հիմնականում Շիրակի (արտադրված կարտոֆիլի 43%-ը) և Գեղարքունիքի (36%-ը) մարզերը: Ընդ որում, կարտոֆիլի բերքի գերակշիռ մասն արտադրվում է միջին չափի տնտեսությունների կողմից (մոտ 46%), ինչը գրեթե ոչ մի ազդեցություն չի ունեցել արտադրված կարտոֆիլի իրացման գների և ինքնարժեքի ձևավորման վրա: Ընդ որում, կարտոֆիլի մեծ մասը սպառվել և կուտակվել է տնտեսությունում՝ հետագայում իրացնելու նպատակով, իսկ իրացման ուղղություններից նախընտրելի է եղել միջնորդի միջոցով իրացումը: Նշենք, որ կարտոֆիլի իրացման գնի վրա գրեթե ազդեցություն չունեն նաև արտադրության վրա կատարված ծախսերը, որոնց կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն սերմերի, քունաքիմիկատների ձեռքբերման համար կատարված և տրանսպորտային ծախսերը: Կարտոֆիլի իրացման գների ձևավորման վրա էական ազդեցություն ունեն շուկայական գործոնները՝ առաջարկի և պահանջարկի փոխազդեցությունը:

Լոլիկ: Վերջին տարիներին ՀՀ-ում զգալիորեն մեծացել են բանջարանոցային մշակաբույսերի արտադրության ծավալները: Ընդ որում, նշանակալիորեն ավելացել է բանջարանոցային մշակաբույսերի ածեցման համար օգտագործվող հողատարածքների բերքատվությունը (1998 թ.՝ 202.3 գ/հա, 2002 թ.՝ 232.3 գ/հա): Միևնույն ժամանակ, նշված գյուղմթերքների արտադրության բնագավառում մեր հանրապետության մրցակիցներն են Թուրքիան և Իրանը:


Հարցման մեջ ընդգրկված 243 գյուղացիական տնտեսություններից 67-ը կամ 28%-ը զբաղվում է լոլիկի արտադրությամբ: Ընդ որում, նշված տնտեսությունների շուրջ 76%-ը լոլիկի արտադրությամբ զբաղվող փոքր չափի տնտեսություն է, 22%-ը՝ միջին, իսկ մնացած 2%-ը՝ խոշոր:

Հետազոտության մեջ ընդգրկված տնտեսությունների կողմից արտադրված լոլիկի մոտ 52%-ն արտադրվել է միջին չափի տնտեսությունների կողմից, 33%-ը՝ խոշոր, իսկ մնացած 15%-ը՝ փոքր տնտեսությունների կողմից:



Տնտեսությունում կուտակված լոլիկի տեսակարար կշիռը լոլիկի ընդհանուր ծավալում կազմում է 0.03%:

Արտադրված լոլիկի գերակշռող մասը (71.4%) գյուղացիական տնտեսությունների կողմից հանձնվում է վերամշակող ձեռնարկությանը: Իրականացված դասակարգման համաձայն՝ լոլիկ արտադրող խոշոր տնտեսությունների շարքն է դասվել միայն մեկ գյուղացիական տնտեսություն, որն իր արտադրանքի միայն 2.3%-ն է իրացրել շուկայում, իսկ մնացած բերքն ամբողջությամբ հանձնել է վերամշակող ձեռնարկությանը: Ինչ վերաբերում է փոքր և միջին գյուղացիական տնտեսություններին, ապա նրանցում էական կշիռ ունի նաև շուկայում իրացված բերքը:



Ոչ բանջարաևոցային պայմաններում աճեցրած լոլիկի իրացում առաջին եռամսյակի ընթացքում գոյություն չունի, ինչը պայմանավորված է այս մթերքի համեմատաբար երկարաժամկետ պահեստավորման անհնարինությամբ: Լոլիկի իրացումն առավելագույն ծավալների է հասնում երրորդ եռամսյակի ընթացքում:

Լոլիկի իրացման ուղղությունները ՀՀ ԿԲ կողմից հետազոտված ֆերմաներում և Հայգյուղփոխբանկի կողմից հետազոտված վարկառու գյուղացիական տնտեսություններում գրեթե համընկնում են (հիմնականում իրացվում է շուկայում և վերամշակող ձեռնարկությանը): Սակայն նշենք, որ ՀՀ ԿԲ կողմից հետազոտված գյուղացիական տնտեսություններում իրացման հիմնական ուղղություններն են գլխավորապես վերամշակող ձեռնարկությունները (71%) և միջնորդները (17%), այն դեպքում, երբ Հայգյուղփոխբանկի կողմից հետազոտված տնտեսություններում միջնորդների միջոցով իրացվում է արտադրված լոլիկի ընդամենը 2%-ը:

Արտադրության ծավալներից կախված՝ լոլիկի իրացման գնի առավել բարձր մակարդակը գրանցվում է երկրորդ եռամսյակում, երբ լոլիկը նոր է դուրս բերվում շուկա: Այս ժամանակահատվածում լոլիկի գինը հասնում է իր առավելագույն մակարդակին՝ այնուհետև նվազելով՝ երկրորդ եռամսյակի վերջին հասնում է իր նվազագույն մակարդակին: Այդ մակարդակը պահպանվում է մինչև նոյեմբեր, երբ ներքին տնտեսությունում դադարում է լոլիկի արտադրությունը:

Գյուղացիական տնտեսությունների կողմից լոլիկի իրացման միջին գները 2002 թ. ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 4

Տնտեսություններ		*Շուկայում*	*Միջնորդին*	*Վերամշակող ձեռնարկությանը*
Փոքր	միջին թվաբանական	51.9	33.8	23.2
	ստանդարտ շեղում	17.6	11.2	2.9
	տատանման գործակից	33.9	33.2	12.6
Միջին	միջին թվաբանական	42.0	38.9	24.7
	ստանդարտ շեղում	11.0	6.5	2.7
	տատանման գործակից	26.1	16.8	10.9
Խոշոր[10]	միջին թվաբանական	40.0	--	26.5
	ստանդարտ շեղում	--	--	--
	տատանման գործակից	--	--	--
Ընդամենը, դրամ		41.4	**36.9**	**25.4**
Վստահելիության միջակայք		**34.2-48.6**	**33.0-40.9**	**24.3-26.5**

Համեմատության համար նշենք, որ ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված՝ գյուղացիական տնտեսությունների և ֆերմաների հարցման արդյունքները իրացման միջին գների վերաբերյալ բա-

[10] *Համաձայն իրականացված դասակարգման՝ լոլիկ արտադրող խոշոր տնտեսությունների խմբում ընդգրկվել է միայն մեկ տնտեսություն:*

Deleted: Գ
Deleted: խիստ սեզոնային բնույթով
Deleted: երկրորդ և
Deleted: ներ
Deleted: նն
Deleted: իր
Deleted: գագաթնակետին է հասնում
Deleted: ի ընթացք
Deleted: նոր
Deleted: `
Deleted: *3*
Deleted: մտնում է

վականին մոտ են միմյանց: Սակայն նշված զուգահիշերում բավականին մեծ շեղումներ են գրանցվում վերջիններս Հայգյուղփոխբանկի կողմից իրականացված հարցումների արդյունքների հետ համեմատելիս, հատկապես միջնորդին և շուկայում լոլիկի իրացման գների մասով (մեր կարծիքով, առկա շեղումները հիմնականում իրականացված հետազոտությունների ընտրանքների տարբերության արդյունք են):


Հետազոտության ընթացքում պարզվել է, որ լոլիկ արտադրող գյուղացիական տնտեսություններից տարվա ընթացքում գները վերանայվել են 60%-ի կողմից՝ մեծամասամբ 2-3 անգամ: Գների վերանայման հիմնական պատճառներ են հանդիսացել սեզոնային առաջարկի և պահանջարկի փոփոխությունները: Համաձայն սպառողական շուկայի դիտարկումների, լոլիկի գինը տարվա ընթացքում նույնպես կտրուկ փոփոխվում է 2 անգամ. կտրուկ նվազում է մայիսին, այնուհետև սկսում է արագորեն բարձրանալ օգոստոսին:

Լոլիկի արտադրության վրա կատարված ծախսերում որոշիչ դեր են խաղում սերմերի ձեռքբերման ծախսերը (13.8%), վարձու աշխատողների աշխատավարձը (38.7%) և այլ ծախսերը (28.0%), որոնք ներառում են հիմնականում վառելիքի և տրանսպորտային ծախսերը: Խոշոր տնտեսություններում ծախսերի կեսից ավելին կազմում է աշխատավարձը: Լոլիկի ինքնարժեքի ձևավորման ընթացքում վարձու աշխատողների հետ կապված ծախսերն էական նշանակություն ունեն:

Լոլիկի արտադրության վրա կատարված ծախսերն ըստ մարզերի էականորեն տարբերվում են: Լոլիկի արտադրության նվազագույն ինքնարժեք է գրանցվել Լոռվա մարզում, իսկ առավելագույն ինքնարժեք՝ Կոտայքում (այն դեպքում, երբ նշված մարզերից յուրաքանչյուրում արտադրվել է լոլիկի՝ հետազոտված տնտեսությունների կողմից արտադրված ծավալի 0.02-ական տոկոսը[11]): Այստեղ որոշիչ դեր են խաղացել հատկապես վարձու աշխատողներին, վառելիքի, տրանսպորտի և սերմերի ձեռքբերմանն ուղղված ծախսերը:

Այսպիսով, ամփոփելով հարցման արդյունքները, պարզվում է, որ Հայաստանի Հանրապետությունում լոլիկի արտադրության մեջ մասնագիտացել են հիմնականում Արմավիրի (ընդհանուր ծավալի 61%-ը) և Արարատի (39%-ը) մարզերը (մնացած երեք մարզերում լոլիկի արտադրության ընդհանուր ծավալը չի գերազանցում հետազոտված տնտեսությունների կողմից արտադրված լոլիկի 0.06%-ը): Գեղարքունիքի մարզում լոլիկի արտադրություն ընդհանրապես չի գրանցվել: Նշենք նաև, որ արտադրված լոլիկի գերակշիռ մասն իրացվում է վերամշակող ձեռնարկությանը՝ հիմնականում գնորդի կողմից թելադրվող գնով: Չնայած լոլիկի ինքնարժեքի կառուցվածքում էական կշիռ ունեն աշխատավարձի հետ կապված, տրանսպորտային և վառելիքի ձեռքբերմանն ուղղված ծախսերը, դրանք գրեթե ոչ մի ազդեցություն չունեն իրացման գների ձևավորման վրա:

Վարունգ: Հետազոտության մեջ ընդգրկված 243 գյուղացիական տնտեսություններից 22-ը կամ 9%-ը զբաղվում է վարունգի արտադրությամբ: Նշված տնտեսությունների 86%-ը դասակարգվել են որպես փոքր, 9%-ը՝ միջին և 5%-ը՝ խոշոր արտադրողներ: Փոքր տնտեսությունների կողմից արտադրվել է վարունգի ընդհանուր ծավալի 23.7%-ը, միջին տնտեսությունների կողմից՝ 45.9%-ը և խոշոր տնտեսությունների կողմից՝ 30.4%-ը: Մեկ տնտեսության հաշվով վարունգի արտադրության ծավալը խոշոր տնտեսություններում 24 անգամ գերազանցում է փոքր տնտեսությունների արտադրանքի և մոտ 3 անգամ՝ միջին չափի տնտեսությունների արտադրանքի ծավալը: Հետազոտվող տնտեսությունների կողմից վարունգի հրացումն իրականացվել է հետևյալ ուղղություններով.



[11] ՀՀ ԿԲ իրականացրած հետազոտության ընտրանքում ընդգրկված գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված լոլիկի

Deleted: Ընդ որում, գ

Deleted: եղել

Deleted: եր

Comment [A3]: Ի՞նչ ես ուզում ասել այս նախադասությամբ:

Deleted: փոքր տնտեսությունների ծախսերի կառուցվածքում: Ընդհանուր առմամբ նշենք, որ լոլիկի ծախսերի կառուցվածքը բոլոր չափի տնտեսություններում հիմնված է հստակ ձևավորված միտումների վրա:

Deleted: ն

Deleted: 2


Deleted: .....մեկ տնտեսության հաշվով արտադրանքի ծավալը.., ...արտադրության սեզանայնությունըգ

Հետազոտության մեջ ընդգրկված՝ վարունգ արտադրող 22 գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված վարունգի 30%-ը հանձնվել է վերամշակող ձեռնարկություններին: Միևնույն ժամանակ, արտադրված վարունգի շուրջ կեսն իրացվել է շուկայում: Ինչպես երևում է ստորև ներկայացված գրաֆիկից, փոքր տնտեսությունների կողմից վարունգի իրացումը միջնորդի միջոցով կամ շուկայում ունի գրեթե նույն նշանակությունը, մինչդեռ միջին չափի տնտեսությունները միանշանակ նախընտրում են արտադրված բերքն իրացնել շուկայում: Ինչ վերաբերում է խոշոր տնտեսություններին, ապա հարկ է նշել, որ մեր կողմից իրականացված դասակարգման համաձայն, հետազոտության մեջ ընդգրկված է վարունգ արտադրող միայն մեկ խոշոր տնտեսություն, որն էլ նախընտրում է իր արտադրանքն ամբողջությամբ հանձնել վերամշակող ձեռնարկությանը:

Deleted: ուղիղ

Deleted: ի

Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված վարունգի մոտ 90%-ն իրացվում է երրորդ եռամսյակում, ինչը պայմանավորված է վարունգի արտադրության խիստ սեզոնային բնույթով: Առաջին եռամսյակի ընթացքում վարունգի և լոլիկի արտադրությունը լիովին բացակայում է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ընտրանքում ընդգրկված գյուղացիական տնտեսություններում չկան ջերմոցային տնտեսություններ:



Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված վարունգի իրացման միջին գները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 5

Deleted: 4

Տնտեսություններ		Շուկայում	Միջնորդին	Վերամշակող ձեռնարկությանը
Փոքր	միջին քվաբանական	60.0	64.7	-
	ստանդարտ շեղում	10.6	42.0	-
	տատանման գործակից	17.7	64.9	-
Միջին	միջին քվաբանական	65.0	70.0	-
	ստանդարտ շեղում	21.2	-	-
	տատանման գործակից	32.6	-	-
Խոշոր	միջին քվաբանական	-	-	26.5
	ստանդարտ շեղում	-	-	-
	տատանման գործակից	-	-	-
Ընդամենը, դրամ		59.3	54.2	26.5
Վստահելիության միջակայք		50.0 - 68.5	29.6 - 78.7	-

Վարունգի իրացման նվազագույն գները գրանցվել են Արմավիրի մարզում՝ վերամշակող ձեռնարկությանը վարունգ հանձնելիս և Շիրակի մարզում՝ շուկայում վաճառելիս: Ընդ որում, Շիրակի մարզում գրանցվել է վարունգի արտադրության նվազագույն ինքնարժեք, իսկ առավելագույն՝ Արմավիրի մարզում:

արտադրանքի ընդհանուր ծավալում:

Դա հիմնականում պայմանավորված է Արմավիրում մեկ կիլոգրամ վարունգի արտադրության համար կատարված այնպիսի ծախսերի մեծ ծավալով, ինչպիսիք են սերմերի ձեռքբերման, վարձու աշխատողներին վճարման և այլ ծախսերը:

Տարվա ընթացքում վարունգի գինը վերանայվել է վարունգ արտադրող տնտեսությունների 36%-ի կողմից: Ընդ որում, նշված տնտեսությունների կեսն արտադրանքի գինը վերանայել է ընդամենը երկու անգամ: Նշենք, որ գնի վերանայման հիմնական պատճառ են հանդիսացել սեզոնային առաջարկի և պահանջարկի փոփոխությունները: Սպառողական շուկայում վարունգի գինը դրսևորում է գրեթե նույն միտումները, ինչ որ՝ լոլիկի գինը, կտրուկ նվազելով ապրիլին և բարձրանալով սեպտեմբերին:

Գյուղացիական տնտեսությունների կողմից վարունգի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքում տնտեսությունների չափերի մեծացմանը զուգընթաց մեծանում է աշխատավարձի տեսակարար կշիռը: Միևնույն ժամանակ, նվազում է քունաքիմիկատների և ոռոգման ծախսերի տեսակարար կշիռը, ինչը վկայում է, որ տնտեսությունների մեծացման հետ ավելանում է նաև հողերի բերքատվությունը: Նշվածը հաստատվում է նաև նրանով, որ չնայած տնտեսությունների մեծացմանը, «Այլ ծախսերի» կշիռը (հիմնականում վառելիք և տրանսպորտային ծախսեր) մնում է անփոփոխ, իսկ նման պայմաններում տնտեսությունների չափերի մեծացումը հնարավոր է միայն բերքատվության աճի պայմաններում:

Deleted: մեծացել է

Ասպիսով, հետազոտության մեջ ընդգրկված գյուղացիական տնտեսություններից վարունգի արտադրությամբ զբաղվել են միայն Արարատի, Արմավիրի և Շիրակի մարզերում: Արտադրված վարունգի մոտ 95%-ը բաժին է ընկել Արմավիրի մարզին: Հարկ է նշել, որ վարունգի իրացումը հիմնականում իրականացվում է շուկայում և միջնորդների միջոցով: Ընդ որում, վարունգի իրացման գինը հիմնականում որոշվում է շուկայական գործոնների՝ առաջարկի և պահանջարկի ազդեցությամբ, ինչը վկայում է այն մասին, որ այս մթերքի իրացման գները ձևավորվում են հիմնականում շուկայի թելադրանքով, իսկ արտադրության վրա կատարված ծախսերի ազդեցությունն այստեղ չնչին է:

Deleted: Գ


Deleted: մփոփելով ասվածը, նշենք, որ

Կաղամբ: Հետազոտության մեջ ընդգրկված 243 գյուղացիական տնտեսություններից կաղամբի արտադրությամբ զբաղվում է 19%-ը (46 գյուղացիական տնտեսություն), որոնց 70%-ը հանդիսանում է փոքր, 17%-ը՝ միջին և 13%-ը՝ խոշոր տնտեսություն: Նշված տնտեսությունների կողմից արտադրված կաղամբի ծավալները ըստ տնտեսությունների չափերի ներկայացված են ստորև բերված գրաֆիկում:

Deleted: 2


Արտադրված կաղամբի ծավալն ըստ տնտեսությունների չափերի

(տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ)



Նշենք, որ խոշոր տնտեսություններում արտադրության ծավալները, մեկ տնտեսության հաշվով, մոտ 17 անգամ գերազանցում են փոքր և 3 անգամ՝ միջին տնտեսությունների արտադրության ծավալները:


Արտադրված կաղամբի իրացման ուղղությունները *(տոկոսով ընդհանուրի մեջ)*



Արտադրված կաղամբի գերակշռող մասն իրացվել է շուկայում կամ կուտակվել տնտեսությունում: Կուտակումը, ինչպես մնացած գյուղմթերքների, այնպես էլ այս դեպքում, հիմնականում պայմանավորված է մթերքների սեզոնային բնույթով՝ հետագայում ավելի բարձր գնով իրացնելու նպատակով:

Կաղամբի իրացումը շուկայում մեծ կշիռ ունի բոլոր չափի տնտեսություններում: Այստեղ հարկ է նշել նաև տնտեսությունում սպառված կաղամբի ծավալի մասին, ինչը տնտեսությունների չափերի աճին զուգընթաց նվազում է: Նշվածը պայմանավորված է ըստ տնտեսությունների չափերի արտադրանքի ծավալի մեծացմամբ: Արտադրված կաղամբի մոտ 80%-ն իրացվում է չորրորդ եռամսյակի ընթացքում՝

Կաղամբի իրացման ուղղություններն ըստ տնտեսությունների չափերի



պայմանավորված բերքահավաքի ժամանակաշրջանով:

Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված կաղամբի իրացման միջին գները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 6

Տնտեսություններ		Շուկայում	Միջնորդին
Փոքր	միջին թվաբանական, դրամ	25.0	31.0
	ստանդարտ շեղում, դրամ	--	18.6
	տատանման գործակից, %	--	59.9
Միջին	միջին թվաբանական, դրամ	28.3	30.0
	ստանդարտ շեղում, դրամ	2.9	--
	տատանման գործակից, %	10.2	--
Խոշոր	միջին թվաբանական, դրամ	22.5	30.0

ստանդարտ շեղում, դրամ	3.5	13.5
տատանման գործակից, %	15.7	45.1
Ընդամենը, դրամ	**24.6**	**30.9**
Վստահելիության միջակայք	**21.5 - 27.6**	**23.2 - 38.5**

Կաղամբի իրացման գների տատանման գործակիցները բավականին մեծ են, ինչը պայմանավորված է ինչպես տնտեսությունների չափերով, այնպես էլ տարածաշրջանային բնակլիմայական պայմաններով և այլ յուրահատկություններով:

Նշենք, որ կաղամբը հիմնականում իրացվել է միջնորդների միջոցով. առավելագույն գին գրանցվել է Արմավիրի մարզում՝ մոտ 80 դրամ, իսկ նվազագույն գին՝ Շիրակում՝ 23 դրամ:

Կաղամբի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների 41%-ը տարվա ընթացքում վերանայել է արտադրանքի իրացման գինը: Ընդ որում, նշված տնտեսությունների մոտավորապես 90%-ը գները վերանայել է առավելագույնը 3 անգամ: Կաղամբի գնի վերանայման պատճառ են հանդիսացել սեզոնային առաջարկի և պահանջարկի փոփոխությունները:

Կաղամբի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքում տնտեսությունների չափերի մեծացմանը զուգընթաց նվազում է սերմերի և քունաքիմիկատների տեսակարար կշիռը: Միևնույն ժամանակ, տնտեսությունների համար էական նշանակություն ունեն աշխատավարձի ուղղությամբ կատարված և այլ ծախսերը, որոնք հիմնականում ներառում են տրանսպորտային և վառելիքի հետ կապված ծախսերը: Չնայած կաղամբը շուտ փչացող գյուղմթերք է, դրա արտադրությունը բոլոր չափի տնտեսությունների համար շարունակում է մնալ բավականին շահութաբեր:

Ըստ մարզերի կաղամբի արտադրության վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռն ինքնարժեքի կառուցվածքում գրեթե նույնն է, բացառությամբ Արմավիրի մարզում վառելիքի ձեռքբերմանը և տրանսպորտին ուղղված ծախսերի (մոտ 52%՝ մարզի ընդհանուր ծախսերի կառուցվածքում): Նշենք, որ կաղամբի ինքնարժեքներն ըստ մարզերի բավականին մոտ են միմյանց:

Այսպիսով, ընդհանրացնելով հարցման արդյունքները, նշենք, որ արտադրված կաղամբի մոտ 67%-ը բաժին է ընկնում Շիրակի և 30%-ը՝ Գեղարքունիքի մարզերին: Միևնույն ժամանակ, հարցման ընտրանքում ընդգրկված Կոտայքի և Արարատի մարզերում արտադրությունը բացակայում է: Կաղամբի գերակշիռ մասն արտադրվում է խոշոր գյուղացիական տնտեսությունների կողմից: Արտադրված բերքը հիմնականում իրացվում է շուկայում կամ միջնորդի միջոցով: Իրացման գինը սահմանվում է «Շուկայում առաջարկվող առավելագույն գին» և «Գնորդի կողմից առաջարկվող գին» սկզբունքների հիման վրա: Այստեղ ևս կաղամբի արտադրության վրա կատարված ծախսերը քիչ ազդեցություն ունեն իրացման գնի վրա: Նշենք նաև, որ կախված սեզոնային առաջարկի և պահանջարկի տատանումներից, կաղամբի արտադրությամբ զբաղվող տնտեսություններից մեծ մասում իրացման գինը տարվա ընթացքում մի քանի անգամ վերանայվել է:

Մրգի արտադրություն


Խաղող: Խաղողագործությունը ՀՀ գյուղատնտեսության ավանդական ճյուղերից մեկն է: Չնայած այն հանգամանքին, որ 90-ականների ընթացքում զգալիորեն նվազել են խաղողի մշակման հողատարածքները (1990 թ.՝ 29.2 հազ. հա, 2001 թ.՝ 14.8 հազ. հա), խաղողի արտադրությունը և վերամշակումը մնում է տնտեսության զարգացման առաջնային ուղղություններից մեկը՝ պայմանավորված հայկական խաղողի բարձր որակական հատկանիշներով և ՀՀ-ում գինու, կոնյակի արտադրության զարգացմամբ, որոնք էական տեսակարար կշիռ ունեն արտահանման ծավալներում:

Հետազոտության ընտրանքի մեջ ընդգրկված 243 գյուղացիական տնտեսությունների 25%-ը (61 տնտեսություն) զբաղվում է խաղողի արտադրությամբ, որոնց 56%-ը փոքր, 24%-ը՝ միջին և 20%-ը՝ խոշոր գյուղացիական տնտեսություններ են: Խաղողի մոտ 21.8%-ը արտադրվել է փոքր տնտեսությունների կողմից, իսկ 36.6%-ը և 41.6%-ը՝ համապատասխանաբար միջին և խոշոր տնտեսությունների կողմից: Խոշոր տնտեսություններում խաղողի արտադրության ծավալը մեկ տնտեսության հաշվով մոտ 6 անգամ գերազանցում է փոքր տնտեսությունների և 2 անգամ՝ միջին տնտեսությունների արտադրանքի ծավալը:

Deleted: Գ
Deleted: Գ
Deleted: տեսնում ենք, որ կ
Deleted:
Deleted: անկախ
Deleted: ից, դրանք գրեթե ոչ մի
Deleted: չ
Deleted: կաղամբի
Deleted: Գ
.....ցորենի նման ամփոփում.....Գ
Deleted: Գ
Գ
Deleted: 2001թ.
Deleted: կ
Deleted:
Deleted: 2


Տնտեսությունների կողմից արտադրված խաղողի իրացման ուղղությունները ներկայացված են ստորև բերված գրաֆիկում:

Deleted: .....մեկ տնտեսության հաշվով արտադրանքի ծավալը.., ...արտադրության սեզանայնությունըԳ



Խաղողի գերակշիռ մասը գյուղացիական տնտեսությունների կողմից հանձնվել է վերամշակող ձեռնարկություններին: Այդ հանգամանքը հիմնականում պայմանավորված է Հայաստանում կոնյակի արտադրությամբ և գինեգործությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից խաղողի մթերման աշխատանքներով: Նույն միտումներն են գրանցվել ֆերմաներում և Հայգյուղփոխբանկի կողմից հետազոտված վարկառու գյուղացիական տնտեսություններում, որոնք իրենց արտադրության համապատասխանաբար 61%-ը և 100%-ը հանձնել են վերամշակող ձեռնարկությանը: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ բոլոր տնտեսությունները նախընտրում են իրենց արտադրանքն իրացնել միանգամից՝ հանձնելով վերամշակող ձեռնարկություններին՝ անկախ առաջարկվող գնից:

Այստեղ ևս, տնտեսությունների չափերի աճին զուգընթաց, աճում է վերամշակող ձեռնարկությանը խաղողի հանձնման տեսակարար կշիռը, ինչը վկայում է, որ տնտեսությունները հիմնականում հակված են իրենց արտադրանքը հանձնել մթերող կազմակերպություններին: Միևնույն ժամանակ, նվազում են միջ-



նորդին հանձնվող և տնտեսությունում սպառվող մթերքի տեսակարար կշիռները:

Խաղողն ամբողջությամբ իրացվում է երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում: Խաղողի գները երրորդ եռամսյակի վերջին և չորրորդ եռամսյակի սկզբին նվազում են՝ հասնելով իրենց նվազագույնին: Ընդ որում, խաղողի թողարկման ծավալների և իրացման գների հարաբերակցությունը դիտարկելով՝ տեսնում ենք, որ դրանց միջև առկա են զարգացման զուտ շուկայական տրամաբանությանը վրա հիմնվող միտումներ (գին-ծավալ հարաբերակցություն): Գյուղացիական տնտեսությունների կողմից խաղողի իրացման միջին գները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Deleted:

Deleted: սկզբունքների

Deleted: շուկայական

Աղյուսակ 7

Տնտեսություններ		Ընկայում	Միջնորդին	Վերամշակող ձեռնարկությանը
Փոքր	միջին քվաբանական	122.8	149.2	78.7
	ստանդարտ շեղում	30.9	52.0	7.9
	տատանման գործակից	25.2	34.9	10.0
Միջին	միջին քվաբանական	200.0	115.0	82.5
	ստանդարտ շեղում	--	21.2	4.0
	տատանման գործակից	--	18.4	4.8
Խոշոր	միջին քվաբանական	--	75.0	84.0
	ստանդարտ շեղում	--	35.4	9.7
	տատանման գործակից	--	47.1	11.5
Ընդամենը, դրամ		**157.0**	**113.0**	**81.9**
Վստահելիության միջակայք		**133.5 - 180.6**	**81.1 - 144.9**	**79.3 - 84.5**

Վերամշակող ձեռնարկությանը խաղողի իրացման միջին գինը գրեթե նույնն է ՀՀ ԿԲ կողմից հետազոտված գյուղացիական տնտեսություններում, ֆերմաներում և Հայգյուղփոխբանկի կողմից հետազոտված վարկառու գյուղացիական տնտեսություններում, ինչը հիմնականում պայմանավորված է խաղողի մթերմամբ զբաղվող կազմակերպությունների սակավաթվությամբ: Ասվածը վկայում է, որ անկախ հետազոտված տնտեսությունների քանակից, խաղողի արտադրության և իրացման գների վերաբերյալ ստացված արդյունքները բավականին մոտ են իրականությանը:

Խաղողի իրացման գինը վերանայել է խաղողի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների շուրջ 54%-ը: Ընդ որում, 39%-ը փոփոխել է տարեկան մեկ անգամ, իսկ մոտ 42%-ը՝ տարեկան երկու անգամ: Գնի վերանայման հիմնական պատճառ են հանդիսացել տարվա ընթացքում խաղողի առաջարկի և պահանջարկի փոփոխությունները: Սպառողական շուկայում խաղողի գինը սկսում է նվազել հուլիսին, այնուհետև զգալիորեն բարձրանում է հոկտեմբերին:

Խաղողի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքում տնտեսությունների չափերի մեծացմանը զուգընթաց մեծանում է աշխատավարձի տեսակարար կշիռը: Էական կշիռ ունեն նաև հողի հարկը և ոռոգման վրա կատարված ծախսերը: Խաղողի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն թունաքիմիկատների վրա կատարված ծախսերը: Այնուամենայնիվ, համադրելով խաղողի արտադրության ինքնարժեքը և իրացման գները, տեսնում ենք, որ խաղողի արտադրությունը եկամտաբեր է բոլոր չափի տնտեսությունների համար:

Խաղողի արտադրության նվազագույն ինքնարժեք գրանցվել է Կոտայքի մարզում (12 դրամ), իսկ առավելագույն ինքնարժեք՝ Արարատի մարզում (84 դրամ): Նման տարբերությունը պայմանավորված է հիմնականում այն հանգամանքով, որ Արարատում էական կշիռ ունեն այնպիսի ծախսերը, ինչպիսիք են աշխատավարձի, պահեստավորման և այլ ծախսերը (նույնը նկատվում է նաև Արմավիրի մարզում), որոնք Կոտայքում ընդհանրապես բացակայում են կամ ունեն չնչին ծավալներ: Արարատում և Արմավիրում այն հիմնական գործունեության տեսակ է: Այլ կերպ ասած՝ Արարատի և Արմավիրի մարզերում զարգացած է խաղողի արտադրությունը, ինչով և բացատրվում է նման ծախսերի կատարումը:

Խաղողի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքը ՀՀ ԿԲ կողմից հետազոտված գյուղացիական տնտեսություններում, ֆերմաներում և Հայգյուղփոխբանկի կողմից հետազոտված վարկառու գյուղացիական տնտեսություններում գրեթե նույնն է:

Այսպիսով, պարզվում է, որ արտադրված խաղողի մոտ 95%-ը բաժին է ընկնում Արարատի (44.2%) և Արմավիրի (50.8%) մարզերին: Միևնույն ժամանակ, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում խաղողի արտադրությունը ընդհանրապես բացակայում է: Խաղողի իրացման գնի ձևավորման վրա հիմնականում ազդում է «Գնորդի կողմից առաջարկվող գին» սկզբունքը՝ կապված վերամշակող ձեռնարկությունների կողմից խաղողի մթերման հետ:

Միրգ՝ բացի խաղողից: Ներկայացվող հետազոտությունում «Միրգ՝ բացի խաղողից» կատեգորիայի մեջ ներառվել են տանձը և խնձորը: Նշված մթերքների արտադրությամբ զբաղվում են հարցման ընտրանքում ընդգրկված գյուղացիական տնտեսությունների 19%-ը (45 գյուղացիական տնտեսություն), որոնց շուրջ 65%-ը՝ փոքր, 33%-ը՝ միջին և 2%-ը՝ խոշոր գյուղացիական տնտեսություն է:

Deleted: եր

Deleted: ն

Deleted: .....ցորենի նման ամփոփում.....Գ

Deleted: Գ


Deleted: էփ

Deleted:

Deleted: Գ

Deleted: .....մեկ տնտեսության հաշվով արտադրանքի ծավալը.., ...արտադրության սեզանայնությունըԳ

Արտադրված մրգի կառուցվածքն ըստ տնտեսությունների չափերի
(տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ)




Գյուղացիական տնտեսություններում ստացված մրգի կեսից ավելին արտադրվել է միջին չափի տնտեսությունների կողմից: Միևնույն ժամանակ, դասակարգված մեկ խոշոր գյուղացիական տնտեսության կողմից արտադրվել է մրգի մոտ 31%-ը:


Comment [G4]: Ոնց որ թե ընդամենը 1-կն է:

Deleted: խոշոր գյուղացիական տնտեսությունների կողմից, որոնց քանակը մի քանի անգամ զիջում է միջին տնտեսությունների քանակին, արտադրվել է մրգի մոտ 30 տոկոսը

Արտադրված մրգի իրացման ուղղությունները
(տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ)



Մրգի շուրջ 76%-ն իրացվել է միջնորդի միջոցով և կուտակվել տնտեսությունում՝ հետագա սպառման և իրացման նպատակով: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ տնտեսությունների կողմից վերամշակող ձեռնարկությանը հանձնվում է արտադրված մրգի միայն 6%-ը, ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանում դեռևս զարգացած չեն խնձորի և տանձի մթերմամբ և վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունները, ինչը չի կարելի ասել խաղողի վերաբերյալ:



Ինչպես երևում է գրաֆիկից, տնտեսությունների չափերի մեծացմանը զուգընթաց նվազում է տնտեսությունում սպառված մրգի տեսակարար կշիռը և աճում տնտեսությունում կուտակվածը: Իրականացված խմբավորման համաձայն՝ որպես խոշոր է դասակարգվել միայն մեկ տնտեսություն:

Արտադրված մրգի մոտ 94%-ն իրացվում է երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում: Խոշոր տնտեսությունը միրգ իրացրել է միայն վերջին երկու եռամսյակների ընթացքում, իսկ փոքր և միջին տնտեսություններն իրենց արտադրանքի որոշակի մասն իրացրել են նաև առաջին երկու եռամսյակներում:

Գյուղացիական տնտեսությունների կողմից մրգի իրացման միջին գները ներկայացված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

Տնտեսություններ		*Շուկայում*	*Միջնորդին*	*Վերամշակող ձեռնարկությանը*
Փոքր	միջին քվաբանական	120.0	96.0	--
	ստանդարտ շեղում	35.6	35.1	--
	տատանման գործակից	***29.7***	***36.5***	--
Միջին	միջին քվաբանական	154.4	125.6	13.0
	ստանդարտ շեղում	80.1	79.2	4.5
	տատանման գործակից	***51.9***	***63.1***	***34.4***
Խոշոր	միջին քվաբանական	--	120.0	--
	ստանդարտ շեղում	--	--	--
	տատանման գործակից	--	--	--
Ընդամենը, դրամ		**181.7**	**142.8**	**13.0**
Վստահելիության միջակայք		**142.9 - 220.5**	**110.2 - 175.3**	**9.1 - 16.9**

Ի տարբերություն գյուղատնտեսական այլ մթերքների, մրգերի իրացման գների տատանման գործակիցները բավականին մեծ են, ինչը հիմնականում պայմանավորված է մարգերի և տարածաշրջանների յուրահատկություններով, ինչպես նաև մրգի տեսակների և որակական հատկությունների տարբերություններով: Ինչպես տեսնում ենք, վերամշակող ձեռնարկությանը միրգ հանձնվել է միայն միջին չափի տնտեսությունների կողմից, որի իրացման գինն էականորեն զիջում է այլ ուղղություններով մրգի իրացման գներին: Դա պայմանավորված է ձեռնարկություններին հանձնված մրգի համեմատաբար ցածր որակով:

Մրգի իրացման նվազագույն գին (45 դրամ) գրանցվել է Արմավիրի մարզում. իրացվել է միջնորդին (հաշվի չառնելով Կոտայքի մարզում վերամշակող ձեռնարկությանը հանձնված ցածրորակ միրգը), ինչը էականորեն գիջել է դրա ինքնարժեքը: Մրգի իրացման առավելագույն գինը գրանցվել է Կոտայքի մարզում՝ 178 դրամ: Իսկ ընդհանուր առմամբ, մրգի իրացման գներն ըստ մարզերի բավականին զրված են:

Մրգի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների մոտ 49%-ի կողմից տարվա ընթացքում վերանայվել են մրգի գները: Ընդ որում, մեկ անգամ վերանայվել է միայն չորս տնտեսության կողմից, իսկ տարվա ընթացքում երկու անգամ՝ վերանայող տնտեսությունների 45%-ի կողմից: Նշենք նաև, որ սպառողական շուկայում խնձորի գինը տարվա ընթացքում զգալիորեն փոփոխվում է 3 անգամ (բարձրանում է մարտին, այնուհետև կտրուկ նվազում հունիսին, ապա սկսում նորից բարձրանալ հոկտեմբերին), իսկ տանձի գինը՝ 2 անգամ (կտրուկ նվազում է հունիսին և բարձրանում հոկտեմբերին):

Մրգի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռ ունեն թունաքիմիկատները և այլ ծախսերը, որոնք ներառում են հիմնականում վառելիքի և տրանսպորտի հետ կապված ծախսերը: Աշխատավարձը մեծ կշիռ ունի հատկապես խոշոր տնտեսություններում: Միևնույն ժամանակ նշենք, որ պահեստավորման ծառայություններից օգտվել են միայն միջին և խոշոր տնտեսությունները:

Մրգի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքը Հայգյուղփոխբանկի և ՀՀ ԿԲ կողմից հետազոտված գյուղացիական տնտեսություններում գրեթե նույնն է. ամենամեծ տեսակարար կշիռ ունեն թունաքիմիկատները և այլ ծախսերը:

Այսպիսով, պարզվում է, որ մրգի արտադրությամբ զբաղվում են մեր կողմից հետազոտված բոլոր մարզերը: Մրգի (տանձ և խնձոր) մոտ 76%-ն արտադրվում է Կոտայքի, իսկ 24%-ը՝ մնացած հինգ մարզերում: Մրգի իրացման գները նույնպես բավականին տատանողական են տարվա ընթացքում: Ընդ որում, այստեղ ևս գնագոյացման վրա էական ազդեցություն չունեն արտադրությանն վրա կատարված ծախսերը, այլ գինը հիմնականում ձևավորվում է շուկայական առաջարկ-պահանջարկի հետ կապված գործոնների ազդեցությամբ:

Deleted: Դիտարկելով վերը բերված աղյուսակում ներկայացված տվյալները՝ կտեսնենք, որ իրացման բոլոր ուղղություններով միրգն իրացնելու դեպքում այն շահավետ է, բացի վերամշակող ձեռնարկությանը միրգ հանձնելուց, որը բերքը մթերում է ինքնարժեքից ցածր գնով:Գ

Deleted: պարզապես

Deleted: ի

Deleted: ր

Deleted: ¶

Deleted: նաև


Մսի և կաթի արտադրություն

Տավարի միս: Հանրապետության թարմ մսի պահանջները հիմնականում բավարարվում են տեղական մսի արտադրության հաշվին: Ներմուծված մսեղենը, որի գինը համեմատաբար ցածր է, օգտագործվում է գերազանցապես մսամթերք վերամշակող ձեռնարկությունների կողմից: Նշենք, որ 90-ականների ընթացքում զգալիորեն նվազել է մսի արտադրությունը՝ 1990 – 2001 թթ. 92.8 հազ. տոննայից հասնելով 30.3 հազ. տոննայի:


Հետազոտության մեջ ընդգրկված 243 գյուղացիական տնտեսություններից տավարի մսի արտադրությամբ զբաղվում է մոտ 38%-ը (93 գյուղացիական տնտեսություն), որոնց 84.9%-ը փոքր, իսկ 11.8% և 3.2%-ը՝ համապատասխանաբար միջին և խոշոր տնտեսություններ են:

Deleted: 2


Deleted: .4



Մեկ տնտեսության հաշվով տավարի մսի արտադրության ծավալները խոշոր տնտեսություններում շուրջ 6 անգամ գերազանցում են փոքր տնտեսությունների և մոտ 2 անգամ՝ միջին չափի տնտեսությունների արտադրանքի ծավալները:



Արտադրված մսի կեսից ավելին իրացվում է միջնորդի միջոցով: Այստեղ միջնորդ են հանդիսանում այն մսավաճառները, որոնք գյուղացիական տնտեսություններից գնված միսն իրացնում են մանրածախ շուկայում: Պարզվում է, որ տնտեսությունների ընդամենը 21%-ն է նախընտրում արտադրված միսն անձամբ իրացնել շուկայում:



Տավարի մսի իրացման ուղղությունները թե՛ ՀՀ ԿԲ կողմից հետազոտված և թե՛ Հայգյուղփոխբանկի կողմից հետազոտված տնտեսություններում նույնն են (շուկայում կամ միջնորդի միջոցով), սակայն ԿԲ կողմից հետազոտված ֆերմաներում բավականին մեծ տեսակարար կշիռ ունի (մոտ 40%) մսի իրացումը վերամշակող ձեռնարկությանը:

Եթե փորձենք դիտարկել տավարի մսի իրացման սեզոնայնությունը, կտեսնենք, որ ըստ եռամսյակների՝ տավարի մսի իրացման ծավալներն աճում են՝ առավելագույնին հասնելով չորրորդ եռամսյակի ընթացքում: Նման միտումներ նկատվում են բոլոր չափի տնտեսություններում: Սա հիմնականում պայմանավորված է նրանով, որ առաջին երկու եռամսյակների ընթացքում տավարի մորթը հասնում է նվազագույնի՝ կապված առաջին եռամսյակում ծնի սեզոնի և երկրորդ եռամսյակում կաթնատվության բարձր մակարդակի հետ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ պահանջարկի սեզոնայնության հետ, ինչն աճում է հատկապես չորրորդ եռամսյակում:

Ընտրանքում ընդգրկված են եղել տնտեսություններ, որոնք մասնագիտացել են տավարի մսի արտադրության մեջ: Նշված տնտեսություններն առաջին եռամսյակում գնում են գլիկներ՝ բտելու նպատակով, իսկ երրորդ եռամսյակի կեսերից (հիմնականում սեպտեմբերից) սկսում են անասունների մորթը և իրացումը: Մսի իրացումն իր գագաթնակետին է հասնում Նոր տարվա նախաշեմին, ինչով և պայմանավորվում է չորրորդ եռամսյակում մսի իրացման ծավալների կտրուկ աճը:

Գյուղացիական տնտեսությունների կողմից տավարի մսի իրացման միջին գները ներկայացված են աղյուսակ 9-ում:

Deleted: վ

Աղյուսակ 9

Տնտեսություններ		Շուկայում	Միջնորդին	Վերամշակող ձեռնարկությանը
Փոքր	միջին թվաբանական գին, դրամ	925.0	847.7	750.0
	ստանդարտ շեղում, դրամ	140.6	133.6	-
	տատանման գործակից, %	15.2	15.8	-
Միջին	միջին թվաբանական գին, դրամ	850.0	825.0	-
	ստանդարտ շեղում, դրամ	86.6	100.0	-
	տատանման գործակից, %	10.2	12.1	-
Խոշոր	միջին թվաբանական գին, դրամ	850.0	850.0	-
	ստանդարտ շեղում, դրամ	-	70.7	-
	տատանման գործակից, %	-	8.3	-
Ընդամենը, դրամ		891.4	841.6	750.0
Վստահելիության միջակայք		836.0 - 946.9	807.6 -875.6	-

Ինչպես երևում է աղյուսակից, բոլոր չափի գյուղացիական տնտեսություններում տավարի մսի իրացման գները գրեթե նույնն են, ինչը խոսում է այն մասին, որ հանրապետությունում մսի շուկան մրցակցային է: Նշենք նաև, որ հարցման արդյունքներով տավարի մսի արտադրության եկամտաբերությունը գյուղացիական տնտեսություններում կազմում է 20-40%, ինչը գյուղատնտեսության համար բավականին բարձր զուգանիշ է: Տավարի մսի իրացման գները մարզերում ըստ ուղղությունների այնքան էլ չեն տարբերվում միմյանցից: Բացառություն են կազմում Արարատի և Կոտայքի մարզերը, որտեղ տավարի մսի իրացման գինը շուկայում գերազանցում է 1000 դրամի սահմանը: Հարկ է ավելացնել նաև, որ սպառողական շուկաներում վաճառողների ծախսերը 1 կգ իրացվող մսի հաշվով կազմում են շուրջ 14.1 դրամ, իսկ շահութաբերության մակարդակը՝ 15.2%[12]:

Նշենք, որ տավարի մսի իրացման միջին գները ԿԲ կողմից հետազոտված տնտեսություններում, ֆերմաներում և Հայգյուղփոխբանկի կողմից հետազոտված վարկառու գյուղացիական տնտեսություններում բավականին մոտ են միմյանց:

Տարվա ընթացքում տավարի միս արտադրող տնտեսությունների կողմից մսի գինը վերանայվել է մսի արտադրությամբ զբաղվող տնտեսությունների ընդամենը 22%-ի կողմից, որոնց 70%-ի կողմից գինը վերանայվել է ընդամենը երկու անգամ: Նշենք, որ գնի վերանայման հիմնական պատճառները են եղել սեզոնային առաջարկի և պահանջարկի փոփոխությունները: Սպառողական շուկայում տավարի մսի գինը բարձրանում է որպես կանոն փետրվարին, այնուհետև զգալիորեն նվազում հունիս-հուլիս ամիսներին, ապա նորից սկսում է բարձրանալ հոկտեմբերին:

Տավարի մսի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն անասնակերի ձեռքբերմանն ու անասնապահին վճարվող ծախսերը: Անասնակերի վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռը կազմում է մոտ 70%:

Համեմատության համար նշենք, որ տավարի մսի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքում, համաձայն ԿԲ կողմից իրականացված հարցման, թե՛ գյուղացիական տնտեսություններում և թե՛ ֆերմաներում ամենամեծ տեսակարար կշիռն ունի անասնակերը: Սակայն համաձայն Հայգյուղփոխբանկի կողմից իրականացված հետազոտության արդյունքների, տավարի մսի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքում բավականին մեծ կշիռ ունեն նաև այլ ծախսերը (հիմնականում կերի տեղափոխման, դեղորայքի ձեռքբերման): Նշենք, որ տավարի մսի արտադրության նվազագույն ինքնարժեք գրանցվել է Արմավիրի մարզում՝ 577 դրամ, իսկ առավելագույն ինքնարժեք Արարատում՝ 777 դրամ:

Ամփոփելով՝ նշենք, որ տավարի մսի արտադրությամբ զբաղվում են հետազոտության մեջ ընդգրկված բոլոր մարզերը: Ընդ որում, արտադրության ամենամեծ ծավալ գրանցվել է Լոռիում (տավարի մսի ամբողջ ծավալի 24%-ը): Այսպիսով, պարզվում է, որ տավարի մսի արտադրությունը բավականին եկամտաբեր է գյուղացիական տնտեսությունների համար, բայց և այնպես, արտադրանքի իրացման գինը որոշվում է շուկայական առաջարկ-պահանջարկի միջոցով: Այստեղ, կարելի է ասել, հիմնականում թելադրող է պահանջարկի գործոնը: Գյուղացիական տնտեսությունների կարծիքով իրացման գինը մոտ 50%-ի չափով որոշվում է գնորդների կողմից առաջարկվող գնով: Գյուղացիական տնտեսություններից մսի առաջնային գնորդներ են միջնորդները, որոնք և հանդիսանում են գին թելադրողներ: Այսպիսով պարզվում է, որ մսի արտադրության մեջ (նաև խոզի մսի) նույնպես գյուղացիական տնտեսությունների կողմից կատարված ծախսերն էական ազդեցություն չունեն իրացման գների ձևավորման գործում, դա որոշվում է պահանջարկի ազդեցությամբ:

[12] *Շահութաբերության մակարդակը հաշվարկվել է՝ զուտ շահույթը հարաբերելով իրացման գնին:*


Deleted: 8

Deleted: վերը նշվածը,


Deleted: տեսնում ենք


Deleted:

Խոզի միս: Խոզի մսի արտադրությամբ զբաղվում են հետազոտության ընտրանքի մեջ ընդգրկված գյուղացիական տնտեսությունների 29%-ը (70 գյուղացիական տնտեսություն), ընդ որում, դրանց 94%-ը փոքր տնտեսություններ են:



Ինչպես տավարի մսի, այնպես էլ խոզի մսի գերակշիռ մասն արտադրվել է փոքր գյուղացիական տնտեսությունների կողմից: Ընդ որում, խոշոր տնտեսություններում մեկ տնտեսության հաշվով արտադրված խոզի մսի ծավալները մոտ 9 անգամ գերազանցում են փոքր տնտեսությունների և մոտ 2 անգամ՝ միջին չափի տնտեսությունների արտադրության ծավալները:





Արտադրված մսի գերակշիռ մասն իրացվել է միջնորդների միջոցով: Սպառողներն ավելի հակված են միսը գնել մասնագիտացված մսավաճառներից, քան գյուղացիներից, որոնք միսն իրացնում են ճամփեզրերին կամ շենքերի բակերում, ինչով և պայմանավորված է միջնորդի միջոցով տավարի և խոզի մսի իրացման գերակայությունը այլ ուղղությունների նկատմամբ:

Ինչպես երևում է գրաֆիկից, փոքր և խոշոր տնտեսություններում խոզի միսն իրացվում է հիմնականում միջնորդի միջոցով, մինչդեռ միջին չափի տնտեսությունները նախընտրում են իրենց մթերքն իրացնել շուկայում:

Նշենք, որ ՀՀ ԿԲ կողմից հետազոտված ֆերմաներում և Հայգյուղփոխբանկի կողմից հետազոտված վարկառու գյուղացիական տնտեսություններում էական կշիռ ունի վերամշակող ձեռնակությանը հանձնված խոզի միսը, ինչը ԿԲ կողմից հետազոտված գյուղացիական տնտեսություններում բացակայում է: Վերջինս պայմանավորված է նրանով, որ վերամշակող ձեռնարկությունների կողմից մսի մթերման գինը բավականին ցածր է, և գյուղացիական տնտեսություններում մսի արտադրության ծավալները գիջում են ֆերմաների արտադրության ծավալները, ավելի ձեռնտու է միսն իրացնել շուկայում, քան հանձնել վերամշակող ձեռնարկությանը:

Խոզի մսի իրացումը գյուղացիական տնտեսությունների կողմից նույնպես ունի տարվա ընթացքում ըստ եռամսյակների աճի միտում, ինչը թերևս պայմանավորված է նույն հանգամանքներով, ինչ որ՝ տավարի մսի դեպքում:

Գյուղացիական տնտեսությունների կողմից խոզի մսի իրացման միջին գները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

Տնտեսություններ		*Շուկայում*	*Միջնորդին*
Փոքր	միջին թվաբանական գին, դրամ	885.7	874.4
	ստանդարտ շեղում, դրամ	129.2	63.4
	տատանման գործակից, %	14.6	7.2
Միջին	միջին թվաբանական գին, դրամ	850.0	900.0
	ստանդարտ շեղում, դրամ	--	--
	տատանման գործակից, %	--	--
Խոշոր	միջին թվաբանական գին, դրամ	--	950.0
	ստանդարտ շեղում, դրամ	--	--
	տատանման գործակից, %	--	--
Ընդամենը		867.8	888.3
Վստահելիության միջակայք		**820.1 - 946.5**	**857.9 - 895.6**

Խոզի մսի իրացման գները՝ ըստ տնտեսությունների, տարբեր ուղղություններով գրեթե նույնն են, ինչը վկայում է հանրապետությունում մսի մրցակցային շուկայի ձևավորման մասին:

Այստեղ հարկ է նկատել, որ ՀՀ ԿԲ և Հայգյուղփոխբանկի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Միևնույն ժամանակ, դիտարկելով խոզի մսի իրացման միջին գներն ըստ մարզերի, տեսնում ենք, որ մարզերում դրանք բավականին մոտ են միմյանց: Շուկայում իրացման առավելագույն գինը գրանցվել է Արարատի մարզում՝ կազմելով 1017 դրամ (միջին հաշվարկով): Ընդ որում, սպառողական շուկայում վաճառողի միջին ծախսերը 1 կգ մսի հաշվով կազմում են 15.6 դրամ՝ շահութաբերության 13.7%-ի պայմաններում:

Տարվա ընթացքում խոզի միս արտադրող տնտեսությունների մեծ մասի կողմից մսի գինը վերանայվել է 2-3 անգամ: Նշենք նաև, որ սպառողական շուկայում խոզի մսի գինը բարձրանում է մարտին, այնուհետև զգալիորեն նվազում սեպտեմբերին և բարձրանում նոյեմբերին:

Խոզի մսի արտադրության վրա կատարված ծախսերի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն աճասնակերի ձեռքբերման և այլ ծախսերը: Նշենք, որ խոզի մսի արտադրության ինքնարժեքը բավականին բարձր է տավարի մսի ինքնարժեքի համեմատ: Պարզվում է, որ ինքնարժեքն ամենաբարձրն է Կոտայքի մարզում (1047 դրամ), իսկ ամենացածրը՝ Արարատում (746 դրամ):

Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ այնուամենայնիվ նշենք, որ մսի գինը որոշվում է գերազանցապես շուկայական գործոնների՝ առաջարկի և պահանջարկի ազդեցությամբ, իսկ դրանց արտադրության վրա կատարված ծախսերը թույլ ազդեցություն ունեն իրացման գների վրա: Ընդ որում, մսի գնման գնի ձևավորման գործում ամենամեծ կշիռն ունեն միջնորդները, որոնք իրենց շահույթի մեծությունը պահպանում են՝ կարգավորելով գյուղացիներից մսի ձեռքբերման գները:

Deleted: ական տնտեսություն
Deleted: , իսկ մնացածն
Deleted: ուղղվում է
Deleted: պահպանվում է հիմնականում
Deleted: կուտակման՝ բազմացման կամ
Deleted: հետագայում իրաց
Deleted: ման նպատակով
Deleted: նելու նպատակով
Deleted: 9
Deleted: պատկանում է
Deleted: ի


Ապպիսով, դիտարկելով հարցման արդյունքները, կարող ենք հանգել այն եզրակացության, որ խոզի միս արտադրվում է ընտրանքում ընդգրկված բոլոր մարզերում, իսկ ամենախոշոր արտադրողներն են Լոռվա և Արմավիրի մարզերը: Խոզի մսի արտադրության ծավալը գրանցվել է Կոտայքի մարզում: Նշենք, որ ինչպես տավարի, այնպես էլ խոզի մսի իրացման գինը գլխավորապես որոշվում է սեզոնային պահանջարկի և առաջարկի ազդեցությամբ, ընդ որում, այստեղ հիմնականը «Գնորդի կողմից առաջարկվող գին» սկզբունքն է, որը որոշիչ դեր է խաղում բոլոր չափի տնտեսությունների համար:

Deleted: Գ

Կաթ: Հետազոտության մեջ ընդգրկված 243 գյուղացիական տնտեսություններից կաթի արտադրությամբ զբաղվում է մոտ 63%-ը (154 գյուղացիական տնտեսություն), որոնց մոտ 75%-ը փոքր, իսկ 15%-ը և 10%-ը՝ համապատասխանաբար միջին և խոշոր տնտեսություններ են: Տնտեսություններն ըստ չափերի դասակարգվել են արտադրված կաթի ծավալների հիման վրա:

Deleted: 2

Deleted: 4




Ի տարբերություն մսի, կաթի գերակշիռ մասն արտադրվում է խոշոր գյուղացիական տնտեսությունների կողմից: Մեկ տնտեսության հաշվով կաթի արտադրության ծավալները մոտ 8 անգամ գերազանցում են փոքր տնտեսությունների և մոտ 3 անգամ՝ միջին տնտեսությունների արտադրության ծավալները:


Deleted: .....մեկ տնտեսության հաշվով արտադրանքի ծավալը., մեկ կովի կաթնատվությունը, ...արտադրության սեզանայնությունըԳ

?

Կաթի իրացման ուղղություններից ամենամեծ տեսակարար կշիռ ունի տնտեսությունում սպառվածը: Էական կշիռ ունի նաև կաթի կուտակումը, որն իրենից ներկայացնում է վերամշակված կաթնամթերք (պանիր, յուղ, կարագ և այլն):



Տնտեսությունների չափերի մեծացմանը զուգընթաց մեծանում է վերամշակող ձեռնարկությանն իրացվող կաթի տեսակարար կշիռը: Խոշոր տնտեսությունները նախընտրում են իրենց արտադրանքի գերակշիռ մասն իրացնել՝ հանձնելով վերամշակող ձեռնարկությանը, մինչդեռ փոքր տնտեսություններում մեծ տեսակարար կշիռ ունի անձնական կարիքների բավարարման նպատակով տնտեսությունում սպառված կաթը:



Հայգյուղփոխբանկի կողմից իրականացված հետազոտության համաձայն՝ վարկառու գյուղացիական տնտեսությունները կաթի կեսից ավելին իրացնում են շուկայում, այն դեպքում, երբ ԿԲ կողմից իրականացված հետազոտության համաձայն՝ շուկայում է իրացվում արտադրված կաթի միայն 7%-ը: Միևնույն ժամանակ, ԿԲ կողմից հետազոտված ֆերմաներն իրենց արտադրանքի մոտ 71%-ն իրացնում են միջնորդին և հանձնում վերամշակող ձեռնարկությանը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ կաթի արտադրության ծավալները ֆերմաներում էականորեն գերազանցում են գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված կաթի ծավալները, ինչը ֆերմաների համար խթան է հանդիսանում արտադրված կաթը նույնիսկ ավելի էժան գնով, միջնորդների միջոցով իրացնելու կամ վերամշակող ձեռնարկություններին հանձնելու համար:

Կաթի իրացումն ըստ եռամսյակների էականորեն չի տատանվում՝ կապված կաթնատվության երկար ժամանակաշրջանի հետ: Այն ըստ եռամսյակների գրեթե հավասարաչափ է բաշխված:

Գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման միջին գները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 11

Deleted: *0*

Տնտեսություններ		*Շուկայում*	*Միջնորդին*	*Վերամշակող ձեռնարկությանը*
Փոքր	միջին թվաբանական գին, դրամ	120.0	116.0	90.0
	ստանդարտ շեղում, դրամ	36.1	34.1	11.5
	տատանման գործակից, %	30.0	29.4	12.8
Միջին	միջին թվաբանական գին, դրամ	113.6	93.3	92.5
	ստանդարտ շեղում, դրամ	30.9	28.0	28.0
	տատանման գործակից, %	27.2	30.1	30.3
Խոշոր	միջին թվաբանական գին, դրամ	150.0	99.4	79.3
	ստանդարտ շեղում, դրամ	--	12.7	6.1
	տատանման գործակից, %	--	12.7	7.7
Ընդամենը		**119.5**	**99.3**	**82.4**
Վստահելիության միջակայք		**104.9 - 133.6**	**93.7 - 115.9**	**78.4 - 95.8**

Կաթի իրացման գները նվազում են վերամշակող ձեռնարկությանը հանձնելիս (պայմանավորված այն հանգամանքով, որ վերամշակող ձեռնարկությունների կողմից մթերման է ընդունվում հիմնականում մեծ քանակությամբ կաթ), ինչը միանգամայն բնական է և դիտվում է բոլոր տնտեսություններում: Ընդհանուր առմամբ, ըստ իրացման ուղղությունների գների տարբերությունը տնտեսություններում այնքան էլ մեծ չէ:

Կաթի իրացման միջին գներից ամենաբարձրը գրանցվել է շուկայում իրացնելու ժամանակ, սակայն գնի մակարդակների վերաբերյալ Հայգյուղփոխբանկի և ԿԲ կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները որոշակի տարբերություն ունեն (Հայգյուղփոխբանկի հետազոտությունից ստացվել է միջին գնի բավականին բարձր մակարդակ, ինչը, մեր կարծիքով, կաթի արտադրության համար այնքան էլ

իրատեսական չէ[13]): Միևնույն ժամանակ նշենք, որ ըստ մարզերի կաթի իրացման գները բավականին մոտ են միմյանց:

Կաթի իրացման գինը վերանայվել է կաթի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների 18%-ի կողմից, որոնց 54%-ը կաթի իրացման գինը վերանայել է առավելագույնը երկու անգամ: Ընդ որում, վերանայման հիմնական պատճառներն են եղել սեզոնային առաջարկի և պահանջարկի տատանումները և մրցակցի գների փոփոխությունները: Սպառողական շուկաներում կաթի գինը նույնպես փոփոխվում է 2 անգամ՝ կտրուկ նվազելով ապրիլին և այնուհետև նշանակալիորեն բարձրանալով սեպտեմբերին:

Կաթի արտադրության ծախսերի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն անասնակերի ձեռքբերման, անասնապահին և կթվորներին վճարված ծախսերը: Նշենք, որ կաթի ինքնարժեքի վերաբերյալ ԿԲ և Հայգյուղփոխբանկի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները միմյանցից որոշ չափով տարբերվում են: Ինքնարժեքի հաշվարկման առումով հարկ է նշել, որ ԿԲ կողմից այն իրականացվել է հետևյալ սկզբունքով. ենթադրվել է, որ արդեն կթվող անասունները հիմնականում քաշաճ չեն տալիս, և դրանց վրա կատարվող ծախսերի գերակշիռ մասը հիմնականում նպաստում է կաթի արտադրությանը: Այստեղ մենք արել ենք նաև այն ենթադրությունը, որ կաթնատու կովերը պահվում են հիմնականում կաթի արտադրության նպատակով: Միևնույն ժամանակ, մսի արտադրության ծախսերը հաշվարկվել են երինջների, հորթերի (որոնք ենթակա են մորթման) վրա կատարված ծախսերով: Նշենք նաև, որ ԿԲ և Հայգյուղփոխբանկի կողմից իրականացված հետազոտություններում կաթի ինքնարժեքները կարող են միմյանցից տարբերվել՝ պայմանավորված ընտրանքների տարբերությամբ: Այսպիսով, կաթի արտադրության նվազագույն ինքնարժեքը գրանցվել է Լոռվա մարզում, իսկ առավելագույնը՝ Արմավիրում:

Ամփոփելով կաթի արտադրության վերաբերյալ գյուղացիական տնտեսությունների հարցումների արդյունքները՝ նշենք, որ կաթի արտադրությամբ զբաղվում են հետազոտության մեջ ընդգրկված բոլոր մարզերը, ընդ որում, արտադրության ամենամեծ ծավալները գրանցվել են Լոռվա և Շիրակի մարզերում: Կաթի գները ձևավորվում են հիմնականում «Շուկայում առաջարկվող առավելագույն գին» և «Գնորդի կողմից առաջարկվող գին» սկզբունքների հիման վրա: Ընդ որում, կաթի իրացման գների վրա նույնպես ամենամեծ ազդեցություն ունեն սեզոնային առաջարկի և պահանջարկի տատանումները:

Deleted: Ամփոփելով կաթի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների հետազոտության արդյունքները՝ տեսնում ենք, որ ինչպես այլ գյուղմթերքների մոտ, այնպես էլ այստեղ, արտադրության վրա կատարված ծախսերը գրեթե ոչ մի ազդեցություն չունեն մթերքների իրացման գների վրա: Այդ հիմնականում ձևավորվում է առաջարկ-պահանջարկի գործոնների ազդեցության ներքո, որոնք նպաստում են տարվա ընթացքում կաթի գների տատանումներին:Գ


Deleted: .....գորենի նման ամփոփում.....Գ

Գյուղմթերքների իրացման գների ձևավորման հիմնական սկզբունքները

Համաձայն հարցման արդյունքների՝ Հայաստանի Հանրապետությունում գյուղմթերքների իրացման գները ձևավորվում են գերազանցապես շուկայական գործոնների ազդեցությամբ:

Բուսաբուծական մթերքների իրացման գնի ձևավորման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի

(տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ)




Հետազոտության արդյունքում պարզվել է, որ բուսաբուծական մթերքների իրացման գները ձևավորվում են հիմնականում «Շուկայում առաջարկվող առավելագույն գին», «Գնորդի կողմից առաջարկվող գին» և «Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում» սկզբունքների

[13] *ՀՀ կենտրոնական բանկի և Հայգյուղփոխբանկի կողմից իրականացված հետազոտության արդյունքների միջև շեղումները հիմնականում պայմանավորված են հետազոտությունների ընտրանքով: Եթե ԿԲ կողմից իրականացված հետազոտության ընտրանքն իրականացվել է առաջին մասում ներկայացված վիճակագրական մեթոդներով, ապա Հայգյուղփոխբանկի ընտրանքում ներկայացված են միայն իրենց հաճախորդ գյուղացիական տնտեսությունները:*

հիման վրա: Միևնույն ժամանակ, իրացման գները ձևավորվում են նաև պայմանագրային հիմունքներով,[14] ինչն էական ազդեցություն ունի հատկապես լոլիկի իրացման գների ձևավորման ընթացքում:

Անասնապահական մթերքների իրացման գները ձևավորվում են «Այլ սկզբունքներ» և «Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին» սկզբունքներից ելնելով: Միևնույն ժամանակ, էական ազդեցություն ունեն նաև «Գնորդի կողմից առաջարկվող գին», «Մրցակցի կողմից թելադրվող գին» և «Շուկայում առաջարկվող առավելագույն գին» սկզբունքները, որոնք վկայում են մրցակցային գների առկայության մասին:



Այսպիսով, ամփոփելով գյուղմթերքների գնագոյացման սկզբունքների վերաբերյալ հետազոտության արդյունքները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական մթերքների իրացման գները ձևավորվում են մրցակցային շուկայի պայմաններում:

Գյուղատնտեսության զարգացման հիմնական խոչընդոտները

Գյուղացիական տնտեսությունների հարցման արդյունքում բացահայտվեցին նաև որոշ հիմնախնդիրներ, որոնք ներկայումս, հարցման մասնակիցների կարծիքով, Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման համար լուրջ խոչընդոտներ են: Դրանցից կարևորները դասակարգվել են մի քանի խմբերի:

Նախ, նշվում է որոշ գյուղմթերքների իրացման հնարավորությունների սահմանափակությունը: Այս խնդրի լուծման հնարավոր նախապայմաններից մեկը, մեր կարծիքով, գյուղմթերքների մթերմամբ և վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունների թվի հետագա աճը և գյուղմթերքների մթերման հնարավորությունների ընդլայնումն է: Բացի այդ, գյուղմթերքների և վերամշակող արդյունաբերության կողմից թողարկվող պարենային ապրանքների արտահանման ընդլայնման հարցում համապատասխան պետական աջակցությունը ևս կարող է նպաստել վերոնշյալ խնդրի կարգավորմանը:

Հաջորդ հիմնախնդիրը, որն անհանգստացնում է գյուղացիական տնտեսություններին, կապված է վառելիքի, թունաքիմիկատների և անասնակերի ձեռքբերման գների և ոռոգման ջրի վարձի բարձր մակարդակի հետ՝ գյուղմթերքների իրացման համեմատաբար ցածր գների պայմաններում:

Ներկայումս Հայաստանում գյուղատնտեսության զարգացման համար էական խոչընդոտ է նաև գյուղտեխնիկայի բարոյական և ֆիզիկական բարձր մաշվածությունը: Շահագործվող տեխնիկան, հայտնի պատճառներով, բավարար չէ գյուղաշխատանքները լիովին սպասարկելու և մրցունակ գյուղմթերքների արտադրության համար: Նշենք նաև, որ նոր տեխնիկայի գինը բավականին բարձր է և հիմնականում հասու չէ գյուղացիական տնտեսությունների մեծ մասին:

Հացահատիկային և այլ մշակաբույսերի աճեցման համար էական խոչընդոտ է սերմնացուների ծերացումը՝ նույն բերքը շարունակաբար մի քանի տարվա ընթացքում որպես սերմ օգտագործելը, ինչը մի քանի անգամ նվազեցնում է բերքատվությունը: Ինչ վերաբերում է ներմուծված սերմի տեսակներին,

[14] «Այլ սկզբունքները» ներառում են հիմնականում պայմանագրային գները:

ապա դրանք կամ չեն համապատասխանում Հայաստանի բնակլիմայական պայմաններին (ինչի արդյունքում նվազում է հողերի բերքատվությունը), կամ բավականին թանկ են:

Խորհրդային Միության օրոք գյուղատնտեսության զարգացման գործում էական դեր էր խաղում հակակարկտային համակարգը, ինչը ներկայումս գրեթե չի գործում: Գյուղացիների կարծիքով անհրաժեշտ է հակակարկտային համակարգի շուտափույթ վերականգնում, ինչը բավականին կկրճատի գյուղատնտեսական բերքի կորուստը:

Գյուղմթերքների վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների հետազոտության արդյունքները

ՀՀ-ում գյուղմթերքների գնագոյացման վերաբերյալ իրականացված հետազոտությանը զուգընթաց, ՀՀ ԿԲ պատվերով, մասնագիտացված կազմակերպության կողմից անցկացվել է մշակող արդյունաբերության ճյուղում գյուղմթերքների վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունների հարցում: Հարցումն իրականացվել է Կենտրոնական բանկի աշխատակիցների կողմից նախօրոք մշակված հարցաթերթիկների և կազմակերպությունների ընտրանքի հիման վրա:

Հետազոտվել են մսամթերքի, կաթնամթերքի, հացաբուլկեղենի, ալկոհոլային խմիչքների, ձվի արտադրությամբ և մրգերի վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններ, որոնց ընտրությունն իրականացվել է ձեռնարկությունների վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրված տեղեկատվության հիման վրա: Ընտրվել են գյուղմթերքների վերամշակմամբ զբաղվող համեմատաբար խոշոր կազմակերպությունները:

Մսամթերքի արտադրություն

Հարցմանը մասնակցել է մսամթերք արտադրող երեք կազմակերպություն: Նշված կազմակերպությունների կողմից 2002 թ. ընթացքում արտադրության մեջ օգտագործված հումքի 63%-ը ներմուծված է և միայն 37%-ն է տեղական արտադրության (տավարի միս, խոզի ճարպ): Մսամթերքի արտադրությամբ զբաղվող կազմակերպություններն արտադրության հումքը ձեռք են բերում հիմնականում (մոտ 78%-ով) «Վաճառողի կողմից առաջարկվող գին» սկզբունքով՝ պայմանավորված հիմնականում այն հանգամանքով, որ հումքի գերակշիռ մասը ներմուծված է: «Շուկայում ձևավորված գին» սկզբունքն այստեղ գրեթե ազդեցություն չունի կամ ազդում է միայն տեղական հումքի առումով: Հումքի գնի փոփոխման հիմնական պատճառները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 12

	Սեզոնայնություն	Փոխարժեք	Սղաճ
Ազդեցության չափը (%)	48	42	10

Հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13

Ծախսի տեսակը	Ներմուծված հումք	Տեղական հումք	էլ. էներգիա	Վառելիք	Աշխատավարձ	Այլ
Տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ	50.2	32.4	4.0	1.3	7.3	4.7

Հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների կողմից տարվա ընթացքում շուրջ 2-3 անգամ իրականացվել են արտադրանքի իրացման գների փոփոխության վերաբերյալ քննարկումներ: Ընդ որում, քննարկումների հիմնական պատճառներն են եղել ընթացիկ ծախսերի փոփոխությունը, արտադրողականությունը, սեզոնայնությունը և փոխարժեքը, ինչպես նաև ներմուծված մսամթերքի գնի փոփոխությունը: Սակայն նշենք, որ վերջին երեք տարիներին գների փաստացի փոփոխությունների քանակը էականորեն զիջում է հարցաթերթիկներում նշված քննարկումների քանակին: Ընդ որում, կարելի է եզրակացնել, որ կազմակերպությունների կողմից արտադրանքի իրացման գների փոփոխության հիմնական պատճառները հումքի գների փոփոխություններն են:

Կազմակերպությունների կողմից արտադրանքի իրացման գների ձևավորման հիմնական սկզբունքները ներկայացված են աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14

Գնի ձևավորման սկզբունքները	Շուկայի առավելագույն գին	Մրցակցի կողմից թելադրվող գին	Ինքնարժեք՝ գումարած հաստատուն գումար	Ինքնարժեք՝ գումարած գործարքի գումար	Գնորդի կողմից առաջարկվող գին
Տոկոսով՝ ընդհ. նկատմամբ	29	3	21	41	6

Կաթի և կաթնամթերքի արտադրություն

Հարցման ընտրանքում ընդգրկվել են կաթ և կաթնամթերք արտադրող չորս կազմակերպություններ: Վերջիններիս կողմից 2002 թ. ընթացքում օգտագործված հումքի մոտ 70%-ը կազմել է տեղական և 30%-ը՝ ներմուծված հումքը[15]: Հումքը վերոնշյալ կազմակերպությունների կողմից ձեռք է բերվում հիմնականում «Շուկայում ձևավորված գին» (մոտ 43%-ով), «Վաճառողի կողմից առաջարկվող գին» (մոտ 37%-ով) և «Պայմանագրային գին» (մոտ 10%-ով) սկզբունքներով: Հումքի ձեռքբերման գինը որոշվում է հիմնականում «Շուկայում ձևավորված գին» սկզբունքի հիման վրա՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հումքի գերակշիռ մասը տեղական է:

Հումքի գների փոփոխման հիմնական պատճառները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 15

	Սեզոնայնություն	Փոխարժեք	Սղաճ	Այլ
Ազդեցության չափը (%)	35	26	14	25

Հումքի գների փոփոխման վրա հիմնականում ազդում են սեզոնայնությունը և փոխարժեքը: Դա պայմանավորված է հիմնականում հումքի ընդհանուր ծավալում տեղական և ներմուծված հումքի տեսակարար կշիռներով (համապատասխանաբար՝ 70% և 30%):

Կաթի և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16

Ծախսի տեսակը	Ներմուծված հումք	Տեղական հումք	Էլ. էներգիա	Վառելիք	Աշխատավարձ	Այլ
Տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ	13.1	47.6	10.4	6.2	13.8	8.9

Հետազոտվող չորս կազմակերպություններից տարվա ընթացքում գների փոփոխությունների վերաբերյալ քննարկումներ իրականացրել են միայն երկուսը: Ընդ որում, նրանցից մեկի կողմից քննարկումներն անց են կացվել ամսական, իսկ մյուսի կողմից՝ կիսամյակային կտրվածքով: Նշենք, որ իրացման գների փոփոխությունների վերաբերյալ քննարկումների հիմնական պատճառներն են եղել ընթացիկ ծախսերի, արտադրողականության փոփոխությունները, սեզոնայնությունը և պահանջարկի գործոնը: Մեկ ձեռնարկության կողմից որպես գների փոփոխության վերաբերյալ քննարկումների պատճառ նշվել է նաև մրցակցության գործոնը:

Կազմակերպությունների կողմից արտադրանքի իրացման գների ձևավորման հիմնական սկզբունքները ներկայացված են աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17

Գնի ձևավորման սկզբունքները	Շուկայի առավելագույն գին	Մրցակցի կողմից թելադրվող գին	Ինքնարժեք՝ գումարած հաստատուն գումար	Ինքնարժեք՝ գումարած գործարքի գումար	Գնորդի կողմից առաջարկվող գին
Տոկոսով ընդհանուրի նկատմամբ	21.3	11.2	56.3	11.2	-

Նշենք նաև, որ չնայած կաթի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների համեմատաբար մեծ քանակին, կաթի նկատմամբ բնակչության պահանջարկը մասամբ բավարարվում է գյուղացիական տնտեսությունների կողմից շուկայում իրացվող կաթի միջոցով:

Մրգի և բանջարեղենի վերամշակում

Հետազոտությունն իրականացվել է մրգեր և բանջարեղեն վերամշակող չորս ձեռնարկություններում: Այդ ձեռնարկությունների կողմից արտադրական գործընթացում օգտագործված հումքի 87%-ը ներքին արտադրության է, իսկ մնացած 13%-ը՝ ներմուծված: Մրգերի և բանջարեղենի վերմշակմամբ զբաղվող ձեռնարկությունների կողմից հումքը ձեռք է բերվում հիմնականում «Շուկայում ձևավորված գին» սկզբունքով (մոտ 65%), ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ որպես հումք օգտագործվող մրգերի և բանջարեղենի գերակշիռ մասը տեղական է: Վերամշակող ձեռնարկություններին

[15] *Ներմուծված հումքը հիմնականում կաթի փոշին է:*

մրգով ապահովում են մեծ մասամբ գյուղացիական տնտեսությունները, որոնց կողմից իրացման գները ձևավորվում են «Շուկայում առաջարկվող առավելագույն գին» և «Գնորդի կողմից առաջարկվող գին» սկզբունքների հիման վրա:

Հումքի գների փոփոխման հիմնական պատճառները ներկայացված են աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 18

	Սեզոնայնություն	Փոխարժեք	Այլ
Ազդեցության չափը (%)	65	17	18

Այսպիսով, ձեռնարկությունների կողմից ձեռք բերվող հումքի գների փոփոխման հիմնական պատճառը սեզոնայնությունն է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հումքը հիմնականում տեղական է: Միևնույն ժամանակ, հումքի գների փոփոխությունների վրա էական ազդեցություն ունի նաև տարվա բերքատվությունը (աղյուսակում ներկայացված է «Այլ» սյունակում): Այստեղ որոշակի ազդեցություն ունի նաև փոխարժեքը, քանզի օգտագործվող հումքի 13%-ը ներմուծված է:

Մրգի և բանջարեղենի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19

Ծախսի տեսակը	Ներմուծված հումք	Տեղական հումք	Էլ. էներգիա	Վառելիք	Աշխատավարձ	Այլ
Տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ	4.3	46.5	7.7	6.7	6.6	28.2

Հետազոտված ձեռնարկությունների կողմից գների փոփոխման վերաբերյալ քննարկումներ կատարվում են տարեկան միջին հաշվով երկու անգամ: Քննարկումների հիմնական պատճառներն են ընթացիկ ծախսերի և պահանջարկի փոփոխությունները: Պայմանավորված ներմուծվող հումքի ծավալներով՝ քննարկումների անհրաժեշտություն է առաջանում նաև փոխարժեքի տատանումների հետ կապված:

Կազմակերպությունների կողմից արտադրանքի իրացման գների ձևավորման հիմնական սկզբունքները ներկայացված են աղյուսակ 20-ում:

Աղյուսակ 20

Գնի ձևավորման սկզբունքները	Շուկայի առավելագույն գին	Մրցակցի կողմից թելադրվող գին	Ինքնարժեք՝ գումարած հաստատուն գումար	Ինքնարժեք՝ գումարած գործարքի գումար	Գնորդի կողմից առաջարկվող գին
Տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ	40	8	36	15	1

Ոգելից խմիչքների արտադրություն

Հետազոտության մեջ ընդգրկված են ոգելից խմիչքներ արտադրող վեց ձեռնարկություններ, որոնցից չորսը հիմնականում զբաղվում է կոնյակի արտադրությամբ (հումք է հանդիսանում խաղողը), իսկ մնացած երկուսը՝ հիմնականում օղու արտադրությամբ (հումք է հանդիսանում ցորենը): Հիշյալ ձեռնարկությունների կողմից օգտագործվող հումքի 70%-ը տեղական է, իսկ 30%-ը՝ ներմուծված: Ձեռնարկությունների կողմից հումքը ձեռք է բերվում հիմնականում «Շուկայում ձևավորված գին» և «Պայմանագրային գին» սկզբունքներով:

Հումքի գների փոփոխման գլխավոր պատճառները ներկայացված են աղյուսակ 21-ում:

Աղյուսակ 21

	Սեզոնայնություն	Այլ
Ազդեցության չափը (%)	67	33

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձեռնարկությունների կողմից օգտագործվող հումքի գերակշիռ մասը ցորեն և խաղող է՝ լիովին տրամաբանական է, որ հումքի գների փոփոխությունը մեծամասամբ պայմանավորված է սեզոնայնությամբ: Միևնույն ժամանակ, ձեռնարկությունների կարծիքով էական ազդեցություն ունի նաև մրցակցությունը:

Հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 22-ում:

Աղյուսակ 22

Ծախսի տեսակը	Ներմուծված հումք	Տեղական հումք	էլ. էներգիա	Վառելիք	Աշխատավարձ	Այլ
Տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ	-	77.7	1.3	3.9	3.3	13.8

Նշենք, որ հումք ներմուծող ձեռնարկությունը հրաժարվել է պատասխանել այս հարցին, ինչի հետևանքով աղյուսակում ներկայացված են միայն երկու ձեռնարկությունների պատասխանների ամփոփ արդյունքները:

Ձեռնարկությունների կողմից գների փոփոխման վերաբերյալ քննարկումներ իրականացվել են տարեկան մոտ վեց անգամ: Քննարկումների պատճառ են հանդիսացել հիմնականում հարկային քաղաքականությունը և օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև ընթացիկ ծախսերի փոփոխությունները: Միևնույն ժամանակ, էական ազդեցություն են ունեցել նաև պահանջարկի և ներմուծվող գների փոփոխությունները:

Ոգելից խմիչքներ արտադրող ձեռնարկությունների կողմից արտադրանքի իրացման գների ձևավորման հիմնական սկզբունքները ներկայացված են աղյուսակ 23-ում:

Աղյուսակ 23

Գնի ձևավորման սկզբունքները	Շուկայի առավելագույն գին	Ինքնարժեք՝ գումարած հաստատուն գումար	Ինքնարժեք՝ գումարած գործարքի գումար	Այլ
Տոկոսով՝ ընդհ. նկատմամբ	36	20	24	20

Ինչպես պարզվում է հետազոտության արդյունքում, ձեռնարկությունների իրացման գների վրա ազդեցություն չունեն «Մրցակցի կողմից թելադրվող գին» և «Գնորդի կողմից առաջարկվող գին» սկզբունքները, ինչը վկայում է հետազոտվող ձեռնարկությունների գերակայող դիրքերի մասին:

Հացաբուլկեղենի արտադրություն

Հարցման ընտրանքում ընդգրկվել է հացաբուլկեղեն արտադրող հինգ ձեռնարկություն: Ձեռնարկությունների կողմից ձեռք բերվող հումքի մոտ 83%-ը տեղական է, իսկ մնացած 17%-ը՝ ներմուծված: Ընդ որում, հումքի ձեռքբերման գինը որոշվում է «Վաճառողի կողմից առաջարկվող գին» (72%) և «Պայմանագրային գին» (28%) սկզբունքներով:

Հումքի գների փոփոխման հիմնական պատճառները ներկայացված են աղյուսակ 24-ում:

Աղյուսակ 24

	Սեզոնայնություն	Փոխարժեք	Սղաճ
Ազդեցության չափը (%)	51	18	31

Հումքի գների փոփոխության հիմնական պատճառները սեզոնայնությունը և սղաճն են, քանզի հումքի գերակշիռ մասը տեղական է:

Հետազոտության մեջ ընդգրկված ձեռնարկությունների արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 25-ում:

Աղյուսակ 25

Ծախսի տեսակը	Ներմուծված հումք	Տեղական հումք	էլ. էներգիա	Վառելիք	Աշխատավարձ	Այլ
Տոկոսով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ	8	52	11	9	11	9

Հացաբուլկեղեն արտադրող ձեռնարկությունների կողմից տարվա ընթացքում միջին հաշվով յոթ անգամ գների փոփոխության վերաբերյալ քննարկումներ են իրականացվել: Նման քննարկումները հիմնականում պայմանավորված են եղել ընթացիկ ծախսերի, մրցակցի գնի և պահանջարկի փոփոխություններով: Սակայն այդ ձեռնարկությունների կողմից վերջին երեք տարիների ընթացքում իրացման գների փաստացի փոփոխություններ գրանցվել են միջին հաշվով երկու անգամ: Ընդ որում, ձեռնարկությունների պատասխաններից կարելի է եզրակացնել, որ գների փաստացի փոփոխման հիմնական պատճառ են եղել հումքի գները:

Հացաբուլկեղեն արտադրող ձեռնարկությունների կողմից արտադրանքի իրացման գների ձևավորման հիմնական սկզբունքները ներկայացված են աղյուսակ 26-ում:

Աղյուսակ 26

Գնի ձևավորման սկզբունքները	Շուկայի առավելագույն գին	Մրցակցի կողմից թելադրվող գին	Ինքնարժեք՝ գումարած հաստատուն գումար
Տոկոսով՝ ընդհ. նկատմամբ	63	17	20

Ձեռնարկությունների կողմից հացաբուլկեղենի իրացման գները ձևավորվում են հիմնականում «Շուկայի առավելագույն գին» սկզբունքով: Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված շուկայում գործում են բավականին մեծ թվով ձեռնարկություններ, որոնց՝ իրացման գների ձևավորման հիմնական սկզբունքը շուկայում ձևավորված գինն է, ինչպես նաև գոյություն չունեն շուկա մուտք գործելու արգելքներ, կարելի է եզրակացնել, որ հացաբուլկեղենի շուկան հանրապետությունում գործում է մրցակցության պայմաններում:

Արտադրողների շուկայի տեսակներն ըստ ապրանքատեսակների

	Մրցակցային	Մենաշնորհային մրցակցություն	Մենաշնորհ
Մսամթերք	X		
Կաթնամթերք		X	
Միրգ և բանջարեղեն		X	
Ոգելից խմիչքներ			X
Հացաբուլկեղեն	X		

ՄԱՍ III. ՎԵՐՋԱԲԱՆ


Ինչպես արդեն նշվել է, գյուղմթերքների գնագոյացման վերաբերյալ փորձնական հարցումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից կազմակերպվել և իրականացվել է 2002 թ. նոյեմբեր - դեկտեմբեր ամիսներին: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ընտրանքում ընդգրկված գյուղմթերքների գնագոյացումը ՀՀ-ում հիմնված է հիմնականում «Շուկայում առաջարկվող առավելագույն գին» և «Գնորդի կողմից առաջարկվող գին» սկզբունքների վրա: Այսինքն՝ հետազոտված գյուղմթերքների արտադրությունը բավականին մրցակցային է, իսկ դրանց իրացման գների վրա որոշիչ ազդեցություն է ունենում սպառողը՝ վերամշակող կազմակերպությունը, տնային տնտեսությունը և արտահանողը: Նշվածի հետևանք է արտադրության վրա կատարված ծախսերի համեմատաբար ցածր մասնաբաժինը ապրանքների վերջնական գների գնագոյացման գործընթացում: Այսպիսով, առաջարկի ազդեցությունը գյուղմթերքների գների մակարդակի վրա առավելապես պայմանավորվում է արտադրության սեզոնայնությամբ և բնակլիմայական գործոններով: Այս պայմաններում բավականին ռիսկային է դառնում գյուղատնտեսության ճյուղում ներդրումների իրականացումը, մանավանդ ապահովագրման մեխանիզմների բացակայության պայմաններում:


Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է նաև գյուղացիական տնտեսությունների 2002 թ. անձնական սպառման կառուցվածքը: Արդյունքում պարզվել է, որ սպառողական ծախսերում մոտ 44%-ը կազմում են պարենային ապրանքները (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), մոտ 15%-ը՝ հագուստ և կոշիկը, իսկ մնացածն ուղղվում է այլ ապրանքների ձեռքբերմանը և ծառայությունների դիմաց վճարմանը: Նշենք նաև, որ գյուղացիական տնտեսությունները հրաժարվել են պատասխանել ստացած դրամական օգնությունների վերաբերյալ հարցին:


Deleted: Կաթի իրացման գները ևվազում են վերամշակող ձեռնարկությանը հանձնելիս, ինչը միանգամայն բնական է և դիտվում է բոլոր տնտեսությունների մոտ: Ընդհանուր առմամբ, գների տարբերությունները իրացման ուղղություններով տնտեսությունների մոտ այդքան էլ մեծ չէ, ինչը կրկին անգամ վկայում է այն մասին, որ կաթի գները ձևավորվում են ընդհանուր շուկայական միտումների հիման վրա: Նշենք, որ համածայն հարցման արդյունքների, գների ձևավորման վրա հիմնականում ազդել են »Շուկայում առաջարկվող առավելագույն գին« և »Գնորդի կողմից առաջարկվող գին« սկզբունքները: Նշված սկզբունքների ազդեցությունը մեծ է բոլոր չափի տնտեսություններում, բացի միջին տնտեսություններից, որոնք առաջնորդվում են նաև »Մրցակցի կողմից թելադրվող գին« սկզբունքով:Գ
Կաթի իրացման գինը վերանայվել է կաթի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների 18%-ի կողմից, որոնց 54%-ը կաթի իրացման գինը վերանայել է առավելագույնը երկու անգամ: Ընդ որում, վերանայման հիմնական պատճառներն են եղել սեզոնային առաջարկի և պահանջարկի տատանումները և մրցակցի գների փոփոխությունները:Գ
Գ
Այսպիսով, ուսումնասիրելով հետազոտության մեջ ընդգրկված գյուղացիական տնտեսությունների պատասխանները, պարզվում է, որ Հայաստանի Հանրապետությունում գյուղմթերքների գնագոյացումը հիմնված է հիմնականում »Շուկայում առաջարկվող առավելագույն գին« և »Գնորդի կողմից առաջարկվող գին« սկզբունքների վրա: Այսինքն այս ոլորտում գործում է շուկայական գործոնների ազդեցության ներքո գնագոյացման ազդեցությունը, ընդ որում, գլխավոր դերն այստեղ պատկանում է պահանջարկի գործոնին: Անկախ արտադրության վրա կատարված ծախսերից, գյուղացիական տնտեսությունները ստիպված են համակերպվել շուկայի կողմից թելադրվող սկզբունքներին: Այստեղ նշենք, որ շուկայի կողմից թելադրվող սկզբունքներն էլ ավելի ծանր են նստում գյուղացիների վրա հատկապես բնակլիմայական պայմանների ազդեցության ներքո (ֆորս-մաժոր): Այսինքն Հայաստանում գյուղատնտեսությունում գնագոյացումը հիմնված չէ արտադրության վրա կատարված ծախսերի, հետևաբար և առաջարկի գործոնի վրա, ինչը դարձնում է այս ճյուղն ավելի ռիսկային և ոչ արդյունավետ:Գ
Վերը նշվածից ելնելով՝ կարելի է պնդել, որ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի ... [1]


Deleted: Գ


ՑՈՐԵՆ



Ցորենի իրացումը բոլոր տնտեսությունների կողմից (%)
20.1%
1.3%
12.6%
66.0%
I եռամսյակ
II եռամսյակ
III եռամսյակ
IV եռամսյակ



Ցորենի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)
80
60
40
20
0
Փոքր
Միջին
Խոշոր
Շուկայում առաջարկվող առավելագույն գին
Մրցակցի կողմից թելադրվող գներ
Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին
Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում
Գնորդի կողմից առաջարկվող գին
Այլ սկզբունքներից ելնելով



Ցորենի արտադրության ծախսերը (%)
21.4%
0.5%
17.0%
21.4%
18.5%
19.2%
1.9%
Սերմեր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Պահեստավորում
Այլ ծախսեր



Ցորենի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)
80
60
40
20
0
Փոքր
Միջին
Խոշոր
Շուկայում առաջարկվող առավելագույն գին
Մրցակցի կողմից թելադրվող գներ
Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին
Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում
Գնորդի կողմից առաջարկվող գին
Այլ սկզբունքներից ելնելով



Կարտոֆիլի իրացումը բոլոր տնտեսությունների կողմից (%)
0.7%
10.8%
67.3%
21.2%
I եռամսյակ
II եռամսյակ
III եռամսյակ
IV եռամսյակ



Կարտոֆիլի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)
70
60
50
40
30
20
10
0
Փոքր
Միջին
Խոշոր
Շուկայում առաջարկվող առավելագույն գին
Մրցակցի կողմից թելադրվող գներ
Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին
Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում
Գնորդի կողմից առաջարկվող գին
Այլ սկզբունքներից ելնելով



Կարտոֆիլի արտադրության ծախսերը (%)
0.0%
5.1%
13.6%
1.8%
2.9%
10.9%
65.7%
Սերմեր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Պահեստավորում
Այլ ծախսեր



Կարտոֆիլի արտադրության ծախսերն ըստ տնտեսությունների չափերի (%)
80
70
60
50
40
30
20
10
0
Փոքր
Միջին
Խոշոր
Սերմեր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Պահեստավորում
Այլ ծախսեր



Լոլիկի իրացումը բոլոր տնտեսությունների կողմից (%)
4.1%
17.7%
78.2%
II եռամսյակ
III եռամսյակ
IV եռամսյակ



Լոլիկի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)
100
80
60
40
20
0
Փոքր
Միջին
Խոշոր
Շուկայում առաջարկվող առավելագույն գին
Մրցակցի կողմից թելադրվող գին
Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին
Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում
Գնորդի կողմից առաջարկվող գին
Այլ սկզբունքներից ելնելով



Լոլիկի արտադրության ծախսերը (%)
28.0%
13.8%
7.7%
9.2%
2.7%
38.7%
Սերմեր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Այլ ծախսեր


Լոլիկի արտադրության ծախսերն ըստ տնտեսությունների չափերի (%)
60
50
40
30
20
10
0
Փոքր
Միջին
Խոշոր
Սերմեր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Այլ ծախսեր



Վարունգի իրացումը բոլոր տնտեսությունների կողմից (%)
1.5%
8.8%
89.7%
II եռամսյակ
III եռամսյակ
IV եռամսյակ


Վարունգի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)
100
80
60
40
20
0
Փոքր
Միջին
Խոշոր
Շուկայում առաջարկվող առավելագույն գին
Մրցակցի կողմից թելադրվող գին
Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին
Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում
Գնորդի կողմից առաջարկվող գին
Այլ սկզբունքներից ելնելով



Վարունգի արտադրության ծախսերը (%)
25.9%
16.4%
8.1%
13.1%
2.0%
34.5%
Սերմեր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Այլ ծախսեր


Վարունգի արտադրության ծախսերն ըստ տնտեսությունների չափերի (%)
60
50
40
30
20
10
0
Փոքր
Միջին
Խոշոր
Սերմեր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Այլ ծախսեր


Խաղողի իրացումը բոլոր տնտեսությունների կողմից (%)




Խաղողի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)





Խաղողի արտադրության ծախսերը (%)





Խաղողի արտադրության ծախսերն ըստ տնտեսությունների չափերի (%)






Մրգի իրացումը բոլոր տնտեսությունների կողմից (%)
0.5%
42.1%
5.9%
51.5%
I եռամսյակ
II եռամսյակ
III եռամսյակ
IV եռամսյակ



Մրգի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)
100
80
60
40
20
0
Փոքր
Միջին
Խոշոր
Շուկայում առաջարկվող առավելագույն գին
Մրցակցի կողմից թելադրվող գին
Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին
Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում
Գնորդի կողմից առաջարկվող գին
Այլ սկզբունքներից ելնելով



Մրգի արտադրության ծախսերը (%)
25.8%
0.2%
5.6%
11.3%
5.7%
8.6%
42.7%
Սերմեր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Պահեստավորում
Այլ ծախսեր


Մրգի արտադրության ծախսերն ըստ տնտեսությունների չափերի (%)
60
50
40
30
20
10
0
Փոքր
Միջին
Խոշոր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Պահեստավորում
Այլ ծախսեր



Կաղամբի իրացումը բոլոր տնտեսությունների կողմից (%)
11.0%
4.4%
4.3%
80.3%
I եռամսյակ
II եռամսյակ
III եռամսյակ
IV եռամսյակ


Կաղամբի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)
80
60
40
20
0
Փոքր
Միջին
Խոշոր
Շուկայում առաջարկվող առավելագույն գին
Մրցակցի կողմից թելադրվող գին
Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին
Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում
Գնորդի կողմից առաջարկվող գին
Այլ սկզբունքներից ելնելով


Կաղամբի արտադրության ծախսերը (%)
27.0%
12.1%
0.3%
15.2%
2.2%
21.9%
21.3%
Սերմեր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Պահեստավորում
Այլ ծախսեր



Կաղամբի արտադրության ծախսերն ըստ տնտեսությունների չափերի (%)
35
30
25
20
15
10
5
0
Փոքր
Միջին
Խոշոր
Սերմեր
Թունաքիմիկատներ
Աշխատավարձ
Հողի հարկ
Ոռոգում
Պահեստավորում
Այլ ծախսեր

Տավարի մսի իրացման ծավալներն ըստ եռամսյակների (%)




I եռամսյակ II եռամսյակ III եռամսյակ IV եռամսյակ

Տավարի մսի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)




Շուկայում առաջարկվող առավելագույն գին
Մրցակցի կողմից թելադրվող գին
Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին
Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում
Գնորդի կողմից առաջարկվող գին
Այլ սկզբունքներից ելնելով

Տավարի մսի արտադրության ծախսերը (%)





Անասնակեր Անասնապահ Անասնաբույժ Այլ ծախսեր


Տավարի մսի արտադրության ծախսերն ըստ տնտեսությունների չափերի (%)





Անասնակեր Անասնապահ Անասնաբույժ Այլ ծախսեր



Խոզի մսի իրացումը բոլոր տնտեսությունների կողմից (%)
15.7%
22.1%
7.1%
55.1%
I եռամսյակ
II եռամսյակ
III եռամսյակ
IV եռամսյակ



Խոզի մսի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)
100
80
60
40
20
0
Փոքր
Միջին
Խոշոր
Շուկայում առաջարկվող առավելագույն գին
Մրցակցի կողմից թելադրվող գին
Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին
Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում
Գնորդի կողմից առաջարկվող գին
Այլ սկզբունքներից ելնելով



Խոզի մսի արտադրության ծախսերը (%)
7.4%
1.7%
89.3%
1.6%
Անասնակեր
Անասնապահ
Անասնաբույժ
Այլ ծախսեր


Խոզի մսի արտադրության ծախսերն ըստ տնտեսությունների չափերի (%)
100
90
80
70
60
50
40
30
20
10
0
Փոքր
Միջին
Խոշոր
Անասնակեր
Անասնապահ
Անասնաբույժ
Այլ ծախսեր


Կաթի իրացումը բոլոր տնտեսությունների կողմից (%)
34.0%
16.5%
29.4%
20.0%
I եռամսյակ
II եռամսյակ
III եռամսյակ
IV եռամսյակ


Կաթի գնագոյացման հիմնական սկզբունքներն ըստ ազդեցության աստիճանի (%)
80
60
40
20
0
Փոքր
Միջին
Խոշոր
Շուկայում առաջարկվող առավելագույն գին
Մրցակցի կողմից թելադրվող գին
Ինքնարժեք՝ գումարած նախապես որոշված հաստատուն գին
Ինքնարժեք՝ գումարած որոշակի գումար, որը որոշվում է գործարքի ընթացքում
Գնորդի կողմից առաջարկվող գին
Այլ սկզբունքներից ելնելով


Կաթի արտադրության ծախսերը (%)
12.5%
2.3%
2.2%
79.8%
3.2%
Անասնակեր
Անասնապահ
Անասնաբույժ
Կթվող
Այլ ծախսեր


Կաթի արտադրության ծախսերն ըստ տնտեսությունների չափերի (%)
100
90
80
70
60
50
40
30
20
10
0
Փոքր
Միջին
Խոշոր
Անասնակեր
Անասնապահ
Անասնաբույժ
Կթվող
Այլ ծախսեր

Աղյուսակ 1

Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված գյուղմթերքների իրացման ուղղությունները 2002 թ.
(տեսակարար կշիռն ընդհանուր իրացման մեջ, %)

Տնտեսություն	Ընդամենը (կգ)	Շուկայում	Միջնորդին	Վերամշակող ձեռնարկությանը	Սպառվել է տնտեսությունում	Կուտակվել է տնտեսությունում
			Ցորեն			
Փոքր	287,295	12.6	20.2	6.9	41.8	18.4
Միջին	193,000	6.7	48.2	11.9	15.4	17.8
Խոշոր	159,200	3.1	42.7	--	27.8	26.4
Ընդամենը	639,495	8.5	34.3	6.7	30.4	20.2
			Կարտոֆիլ			
Փոքր	71,770	7.0	18.5	--	44.4	30.1
Միջին	194,950	15.9	26.8	--	17.1	40.3
Խոշոր	158,800	5.0	51.0	--	11.2	32.7
Ընդամենը	425,520	10.4	34.4	--	19.5	35.8
			Լոլիկ			
Փոքր	284,580	15.4	49.4	28.4	6.6	0.2
Միջին	1,005,300	13.8	17.8	66.9	1.5	--
Խոշոր	640,300	2.3	--	97.6	0.05	--
Ընդամենը	1,930,180	10.2	16.6	71.4	1.8	0.03
			Վարունգ			
Փոքր	32,010	42.2	47.5	--	10.3	--
Միջին	62,000	88.7	11.3	--	--	--
Խոշոր	41,100	--	--	99.8	0.2	--
Ընդամենը	135,110	50.7	16.4	30.3	2.5	--
			Խաղող			
Փոքր	35,200	18.1	19.6	30.8	28.7	2.8
Միջին	59,200	10.1	15.2	60.0	10.6	4.1
Խոշոր	67,200	--	10.4	85.3	4.3	--
Ընդամենը	161,600	7.6	14.2	64.1	11.9	2.1
			Միրգ՝ բացի խաղողից (տանձ և խնձոր)			
Փոքր	16,635	9.0	33.1	--	47.7	10.2
Միջին	49,300	10.0	58.3	11.6	4.3	15.8
Խոշոր	29,000	--	10.3	--	3.4	86.2
Ընդամենը	94,935	6.8	39.2	6.0	11.6	36.3
			Կաղամբ			
Փոքր	55,400	14.4	35.6	--	21.5	28.5
Միջին	131,625	42.5	0.5	--	9.2	47.7
Խոշոր	164,200	27.4	44.7	--	2.1	25.8
Ընդամենը	351,225	31	27	--	8	34
			Տավարի միս			
Փոքր	15,172	22.2	56.0	0.9	9.5	11.4
Միջին	7,500	14.1	50.1	--	7.3	28.4
Խոշոր	3,765	27.6	69.7	--	2.7	--
Ընդամենը	26,437	20.7	56.3	0.5	7.9	14.6
			Խոզի միս			
Փոքր	13,935	20.9	57.4	--	14.5	7.1
Միջին	2,267	50.7	10.6	--	2.2	36.5
Խոշոր	3,900	--	38.5	--	--	61.5
Ընդամենը	20,102	20.2	48.5	--	10.3	21.0
			Կաթ			
Փոքր	271,035	6.8	3.0	2.0	83.4	4.8
Միջին	165,860	17.9	10.6	13.4	50.2	7.8
Խոշոր	300,800	1.7	30.1	36.9	27.5	3.9
Ընդամենը	737,695	7.2	15.7	18.8	53.1	5.1

Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված գյուղմթերքների ինքնարժեքը (1 կգ հաշվով)

(ՀՀ դրամ)

Տնտեսություն	Սերմեր	Թունաքիմիկատներ	Աշխատավարձ	Հողի հարկ	Ոռոգում	Պահեստավորում	Այլ ծախսեր	Ընդամենը ինքնարժեք
				Ցորեն				
Փոքր	11.7	10.5	0.7	4.7	6.8	0.0	22.2	56.7
Միջին	11.0	6.9	0.7	3.6	8.5	0.0	17.8	48.6
Խոշոր	14.1	6.4	5.8	7.6	6.0	0.3	19.0	59.3
Ընդամենը	12.0	8.5	1.9	5.0	7.2	0.1	20.1	54.8
				Կարտոֆիլ				
Փոքր	45.0	9.7	0.5	2.4	5.7	-	8.6	71.9
Միջին	37.0	6.5	2.2	1.4	3.7	-	9.8	60.7
Խոշոր	49.7	6.7	2.1	0.4	1.7	-	7.9	68.5
Ընդամենը	43.0	7.2	1.9	1.2	3.3	-	8.9	65.5
				Լոլիկ				
Փոքր	4.0	4.0	1.2	0.4	1.2	-	6.5	17.4
Միջին	1.9	2.5	4.5	0.6	1.1	-	4.0	14.5
Խոշոր	4.1	0.2	17.6	0.7	2.7	-	8.7	34.1
Ընդամենը	2.9	2.0	8.3	0.6	1.6	-	6.0	21.4
				Վարունգ				
Փոքր	4.3	7.2	1.2	0.7	2.9	-	5.6	21.9
Միջին	5.5	4.5	7.8	0.3	0.9	-	7.0	26.1
Խոշոր	4.1	0.2	17.5	0.7	2.7	-	8.7	33.9
Ընդամենը	4.6	3.7	9.6	0.6	2.2	-	7.2	27.9
				Կաղամբ				
Փոքր	3.59	3.26	0.76	0.48	1.19	-	3.34	12.6
Միջին	2.08	3.43	4.04	0.18	2.25	0.12	3.45	15.6
Խոշոր	0.49	2.07	2.43	0.25	1.84	-	3.16	10.2
Ընդամենը	1.46	2.65	2.58	0.27	1.84	0.03	3.27	12.1
				խաղող				
Փոքր	-	14.9	0.3	4.0	6.4	--	9.2	34.9
Միջին	-	17.4	4.6	5.9	10.1	1.9	12.2	52.1
Խոշոր	-	13.1	5.4	2.8	4.4	0.0	5.3	31.0
Ընդամենը	-	15.0	4.0	4.1	6.9	0.7	8.6	39.3
				Միրգ՝ բացի խաղողից				
Փոքր	-	18.4	0.3	2.8	6.1	--	5.4	33.1
Միջին	-	13.9	0.8	2.8	4.9	1.8	4.1	28.3
Խոշոր	-	20.7	10.3	0.4	2.1	4.1	25.0	62.7
Ընդամենը	-	16.3	3.3	2.2	4.3	2.1	9.9	38.1

Տնտեսություն	Անասնակեր	Անասնապահ	Անասնաբույժ	Կթվոր	Այլ ծախսեր	Ընդամենը ինքնարժեք
			Միս տավարի			
Փոքր	472.0	89.0	17.9	-	93.6	672.6
Միջին	515.6	94.5	18.7	-	106.5	735.4
Խոշոր	562.0	106.1	13.6	-	97.7	779.3
Ընդամենը	**478.2**	**90.0**	**17.8**	**-**	**94.7**	**680.8**
			Միս խոզի			
Փոքր	697.9	58.0	13.3	-	12.6	781.8
Միջին	782.1	56.3	13.1	-	9.6	861.0
Խոշոր	588.1	55.7	16.7	-	12.8	673.2
Ընդամենը	**694.5**	**57.8**	**13.4**	**-**	**12.5**	**778.3**
			Կաթ			
Փոքր	40.0	4.0	1.2	0.1	1.2	46.5
Միջին	31.2	2.5	0.8	1.0	0.5	35.9
Խոշոր	27.7	7.7	0.9	1.7	1.9	39.8
Ընդամենը	**33.0**	**5.2**	**1.0**	**0.9**	**1.3**	**122.2**

Աղյուսակ 3

Գյուղմթերքների արտադրության ինքնարժեքը՝ ըստ մարզերի (1 կգ հաշվով)

(ՀՀ դրամ)

Մարզեր	Սերմեր	Թունաքիմիկատներ	Աշխատավարձ	Հողի հարկ	Ոռոգում	Պահեստավորում	Այլ	Ընդամենը
				Ցորեն				
Արարատ	11.6	9.2	4.6	6.9	10.7	3.0	22.7	68.7
Արմավիր	10.9	13.3	10.2	5.1	9.8	-	21.7	71.1
Գեղարքունիք	42.3	21.0	-	6.0	12.7	-	36.6	118.6
Լոռի	29.3	18.0	80.0	12.1	-	-	54.1	193.5
Կոտայք	23.4	13.3	5.0	4.1	7.5	-	26.7	79.9
Շիրակ	12.0	7.5	4.5	5.8	4.3	1.3	20.9	56.2
				Կարտոֆիլ				
Արարատ	28.6	-	24.3		23.6	-	8.4	84.9
Արմավիր	24.8	22.5	17.4	7.1	6.0	-	8.0	85.7
Գեղարքունիք	42.2	4.3	7.9	4.3	2.7	-	9.4	70.8
Լոռի	75.9	8.7	12.4	12.6	3.5	-	5.0	118.1
Կոտայք	33.3	-	16.7		6.0	-	6.7	62.7
Շիրակ	47.7	3.3	8.0	9.8	1.3	-	3.0	73.1
				Լոլիկ				
Արարատ	8.7	3.0	9.1	4.2	3.4	5.1	11.4	44.9
Արմավիր	6.6	3.0	6.6	6.7	1.4	2.8	7.7	34.9
Գեղարքունիք	-	-	-	-	-	-	-	-
Լոռի	2.3	-	2.5	-	2.4	3.5	-	10.7
Կոտայք	13.3	-	25.0	-	6.3	8.4	20.0	73.0
Շիրակ	14.2	-	7.5	-	0.9	2.9	-	25.5
				Վարունգ				
Արարատ	5.1	12.0	6.7	2.0	3.6	-	10.0	39.2
Արմավիր	7.5	12.5	13.7	3.1	4.6	-	14.2	55.6
Գեղարքունիք	-	-	-	-	-	-	-	-
Լոռի	-	-	-	-	-	-	-	-
Կոտայք	-	-	-	-	-	-	-	-
Շիրակ	10.3	5.8	3.3	0.6	3.6	-	3.3	27.0
				Խաղող				
Արարատ	7.2	16.4	16.6	6.4	9.7	16.1	11.4	83.9
Արմավիր	3.2	18.3	7.9	9.3	7.7	-	13.0	59.5
Գեղարքունիք	-	-	-	-	-	-	-	-
Լոռի	-	6.0	-	2.3	5.0	-	-	13.3
Կոտայք	-	7.5	-	0.6	3.8	-	-	11.9
Շիրակ	-	-	-	-	-	-	-	-
				Միրգ՝ բացի խաղողից				
Արարատ	-	26.4	-	6.8	14.4	-	28.6	76.3
Արմավիր	-	26.7	6.7	6.4	10.4	-	7.0	57.2
Գեղարքունիք	-	11.4	-	2.9	7.3	-	2.6	24.2
Լոռի	-	25.3	-	4.4	-	-	-	29.8
Կոտայք	-	27.8	14.3	3.9	10.8	2.9	31.6	91.1
Շիրակ	-	8.7	-	0.7	4.0	-	-	13.5
				Կաղամբ				
Արարատ	-	-	-	-	-	-	-	-
Արմավիր	5.0	5.0	-	0.7	1.7	-	16.7	29.0
Գեղարքունիք	4.9	6.5	2.1	1.0	1.6	0.7	5.1	21.7
Լոռի	8.8	9.1	-	1.2	-	-	4.9	23.9
Կոտայք	-	-	-	-	-	-	-	-
Շիրակ	3.5	4.1	7.4	1.6	3.5	-	4.5	24.6

Աղյուսակ 3
(շարունակություն)

Գյուղմթերքների արտադրության ինքնարժեքը՝ ըստ մարզերի (1 կգ հաշվով)
(ՀՀ դրամ)

Մարզեր	Անասնակեր	Անասնապահ	Անասնաբույժ	Կթվոր	Այլ ծախսեր	Ընդամենը
			Միս տավարի			
Արարատ	518.6	91.1	22.2	-	145.1	777
Արմավիր	399.4	68.3	17.5	-	91.6	577
Գեղարքունիք	470.4	102.6	19.6	-	95.6	688
Լոռի	507.9	90.4	17.9	-	70.8	687
Կոտայք	483.7	89.8	13.4	-	83.0	670
Շիրակ	464.7	88.6	15.2	-	77.4	646
			Միս խոզի			
Արարատ	656.0	66.4	13.1	-	11.0	746
Արմավիր	671.5	61.7	13.0	-	14.9	761
Գեղարքունիք	731.4	54.7	13.2	-	12.0	811
Լոռի	697.4	45.5	13.5	-	11.3	768
Կոտայք	968.8	49.9	17.5	-	10.5	1047
Շիրակ	684.2	45.1	13.4	-	9.2	752
			Կաթ			
Արարատ	59.0	1.9	2.4	0.4	0.7	64
Արմավիր	37.3	2.0	1.5	-	38.8	80
Գեղարքունիք	40.8	6.1	1.1	0.4	0.6	49
Լոռի	33.6	2.9	0.6	0.1	1.2	38
Կոտայք	42.8	6.4	1.5	-	1.7	52
Շիրակ	31.7	5.8	0.7	0.4	0.8	39

Աղյուսակ 4

Արտադրված գյուղմթերքների տեսակարար կշիռներն ըստ մարզերի
(տոկոսով ընդհանուրի նկատմամբ)

Մարզեր	Ցորեն	Կարտոֆիլ	Լոլիկ	Վարունգ	Խաղող
Արարատ	22.3	0.8	38.7	2.8	44.2
Արմավիր	26.4	7.0	61.3	94.9	50.8
Գեղարքունիք	2.9	35.8	-	-	-
Լոռի	7.4	13.4	0.02	-	3.1
Կոտայք	2.4	0.1	0.02	0.1	1.8
Շիրակ	38.6	42.9	0.02	2.2	-
Ընդամենը	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**

Մարզեր	Միրգ	Կաղամբ	Տավարի միս	Խոզի միս	Կաթ
Արարատ	2.0	-	11.0	17.4	8.1
Արմավիր	11.4	1.9	16.1	29.2	7.8
Գեղարքունիք	8.8	29.9	17.6	9.3	19.4
Լոռի	0.5	1.4	23.9	32.4	25.5
Կոտայք	75.9	-	14.1	3.3	14.0
Շիրակ	1.4	66.8	17.4	8.5	25.1
Ընդամենը	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**

Աղյուսակ 5

Մեկ տնտեսության հաշվով արտադրանքի թողարկման ծավալը (կգ)

Տնտեսություն	Ցորեն	Կարտոֆիլ	Լոլիկ	Վարունգ	Խաղող	Միրգ, բացի խաղողից	Միս տավարի	Միս խոզի	Կաթ	Կաղամբ
Փոքր	2532	1267	5581	1685	1049	529	199	206	2367	1616
Միջին	11700	4575	68040	16000	3947	4287	682	1134	7219	10138
Խոշոր	28740	18725	640300	41100	6050	29000	1255	1950	20053	27333
Ընդամենը	**4636**	**3871**	**29038**	**4778**	**2745**	**2414**	**290**	**282**	**4814**	**6452**

Աղյուսակ 6

Ֆերմերների կողմից արտադրված 1 կգ գյուղմթերքների ինքնարժեքը

(ՀՀ դրամ)

Գյուղմթերք	Սերմեր	Թունաքիմիկատներ	Աշխատավարձ	Հողի հարկ	Ոռոգում	Պահեստավորում	Այլ ծախսեր (հիմնականում՝ տրանսպորտ և վառելիք)	Ընդամենը
Ցորեն	22.7	10.0	3.3	6.5	1.8	-	18.6	62.9
Կարտոֆիլ	18.7	0.5	1.3	0.5	0.7	0.2	5.2	27.1
Լոլիկ	2.3	2.3	4.5	1.3	1.8	-	4.4	16.6
Խաղող	-	8.0	-	2.8	2.0	-	5.0	17.8

Գյուղմթերք	Անասնակեր	Անասնապահ	Անասնաբույժ	Կթվող	Այլ ծախսեր	Ընդամենը
Տավարի միս	465.0	38.2	8.5	-	40.5	552.3
Խոզի միս	300.1	62.4	53.7	-	13.5	429.7
Կաթ	7.5	7.9	1.4	7.1	1.8	25.7

Աղյուսակ 7

Սպառողական շուկաներում մսի վաճառքը կազմակերպելու համար կատարվող միջին օրական ծախսերը 1 կգ հաշվով *(դրամ)*

Ծախսեր		Տեղի վարձ	Անասնաբույժի վճար	Սառնարանների վճար	Տեղափոխման վճար	Այլ ծախսեր	Ընդամենը
Տավարի միս	դրամ	2.2	4.3	3.1	4.4	0.1	14.1
	% ընդհ. ծախսերում	15.5	30.3	21.7	31.4	1.0	
Խոզի միս	դրամ	2.4	4.7	3.4	4.9	0.2	15.6
	% ընդհ. ծախսերում	15.5	30.3	21.7	31.4	1.0	

Աղյուսակ 8

Մսի ձեռքբերման և իրացման միջին գները, շահութաբերության մակարդակը *(դրամ)*

Տեսակը	Ձեռքբերման գին	Վաճառքի գին	Վաճառքի ծախսեր շուկայում	Առևտրային վերադիր	Զուտ շահույթ	Զուտ շահույթը իրացման մեջ (%)
	1	2	3	4 (2 - 1)	5 (4 - 3)	6 (5 x 100 : 2)
Տավարի միս	900.0	1078.4	14.1	178.4	164.3	15.2
Խոզի միս	904.5	1066.5	15.6	161.9	146.4	13.7

Աղյուսակ 9

Մրգի և բանջարեղենի վաճառքը կազմակերպելու համար կատարվող միջին օրական ծախսերը 1 կգ հաշվով *(դրամ)*

Ծախսեր		Կարտոֆիլ	Բանջարեղեն	Խաղող	Միրգ	Ցիտրուս
Տեղի վարձ	դրամ	5.6	1.9	0.8	1.4	1.1
	% ընդհ. ծախսերում	34.1	34.1	34.1	34.1	34.1
Տեղափոխման վճար	դրամ	4.3	1.4	0.6	1.1	0.9
	% ընդհ. ծախսերում	26.2	26.2	26.2	26.2	26.2
Պահեստավորման վճար	դրամ	1.3	0.4	0.2	0.3	0.3
	% ընդհ. ծախսերում	7.9	7.9	7.9	7.9	7.9
Այլ ծախսեր	դրամ	5.2	1.7	0.8	1.3	1.0
	% ընդհ. ծախսերում	31.8	31.8	31.8	31.8	31.8
Ընդամենը ծախսեր	դրամ	16.3	5.5	2.4	4.2	3.3
	% ընդհ. ծախսերում	100.0	100.0	100.0	100.0	100.0

Գյուղմթերքների գնագոյացման հարցման մեջ ընդգրկված ՀՀ մարզերի, գյուղերի և ֆերմաների անվանումները

Արարատի մարզ

	Բնակավայր	*Բնակչ.*	*Գյուղացիական տնտ. քանակը*
1	Արարատ	7930	8
2	Այնթապ	7297	7
3	Նոր Խարբերդ	5967	6
4	Ավշար	5058	5
5	Մխչյան	4786	5
6	Ոսկետափ	4719	4
7	Վերին Արտաշատ	4522	4
8	Այգավան	4295	4
9	Շահումյան	4272	4
10	Տափերական	4014	4
11	Հովտաշատ	3698	4
	Ընդամենը	***56558***	***55***

Գեղարքունիքի մարզ

	Բնակավայր	*Բնակչ.*	*Գյուղացիական տնտ. քանակը*
1	Վարդենիկ	9614	7
2	Սարուխան	8825	7
3	Ներքին Գետաշեն	8298	6
4	Ջոլաքար	6725	5
5	Գեղահովիտ	6348	5
6	Նորադուզ	6231	5
7	Երանոս	6055	5
8	Կարմիրգյուղ	5819	4
9	Ծովինար	4858	4
	Ընդամենը	***62773***	***48***

Արմավիրի մարզ

	Բնակավայր	Բնակչ.	Գյուղացիական տնտ. քանակը
1	Հոկտեմբեր	5788	7
2	Մրգաշատ	5647	7
3	Փարաքար	5315	6
4	Նալբանդյան	4733	5
5	Դալարիկ	4728	5
6	Քարակերտ	4465	5
7	Արշալույս	4003	5
8	Բամբակաշատ	3700	4
9	Մյասնիկյան	3692	4
10	Բաղրամյան	3499	4
11	Գայ	3405	4
12	Աղավնատուն	3320	4
13	Արտամետ	1685	3 ֆերմա
14	Վաղարշապատ	65500	2 ֆերմա
15	Քարակերտ	4465	1 ֆերմա
16	Մաքսիֆրուտ		1 ֆերմա
	Ընդամենը	***119480***	***67***

Լոռու մարզ

	Բնակավայր	Բնակչ.	Գյուղացիական տնտ. քանակը
1	Գուգարք	5451	7
2	Օձուն	5130	6
3	Մրգահովիտ	4366	5
4	Ջրաշեն	3340	4
5	Շնող	3206	4
6	Շիրակամուտ	2560	4
7	Ստեփանավան	24600	1 ֆերմա
	Ընդամենը	***48713***	***31***

Շիրակի մարզ

	Բնակավայր	Բնակչ.	Գյուղացիական տնտ. քանակը
1	Ախուրյան	9807	10
2	Ազատան	4741	5
3	Սառնաղբյուր	3149	4
4	Փանիկ	2852	3
5	Առափի	2714	3
	Ընդամենը	***23263***	***25***

Կոտայքի մարզ

	Բնակավայր	Բնակչ.	Գյուղացիական տնտ. քանակը
1	Գառնի	7502	7
2	Քասախ	5053	5
3	Նոր Գեղի	4974	5
4	Ջովունի	4576	4
5	Գեղաշեն	3995	4 + 1 ֆերմա
6	Արզնի	3008	1 ֆերմա
7	Հրազդան	63800	1 ֆերմա
	Ընդամենը	***92908***	***28***

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

Արթուր Նախշիկյան, Անահիտ Թևոսյան

Դրամավարկային քաղաքականության վարչություն

ՀՀ կենտրոնական բանկի աշխատանքային մի շարք փաստաթղթերում փորձ էր արվել ձևակերպել և տեսականորեն հիմնավորել գյուղատնտեսական մթերքների շուկաներում գնագոյացման վերաբերյալ հիպոթեզներ: Այս վերլուծության մեջ կփորձենք ներկայացնել այդ հիպոթեզների ստուգման և մոդելավորման արդյունքները:

Հիպոթեզների ստուգման համար օգտագործվել է տարբեր աղբյուրների և բնույթի տեղեկատվություն: Մասնավորապես, կներկայացնենք էկոնոմետրիկական վերլուծությունների արդյունքները, որտեղ օգտագործվել են Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկատվությունը, ՀՀ ԿԲ և Հայգյուղփոխբանկի կողմից գյուղացիական տնտեսություններում և սննդի վերամշակող ձեռնարկություններում իրականացված վիճակագրական հարցումների ամփոփ տեղեկատվությունը:

Ըստ որոշակի ապրանքների կամ ապրանքախմբերի շուկաների՝ նախ ներկայացվում է հիմնական հիպոթեզի էկոնոմետրիկական նկարագրությունը (specification), այնուհետև այդ նկարագրության գնահատականը և, վերջապես, վիճակագրական հարցումների արդյունքները տվյալ հիպոթեզի վերաբերյալ:

ՑՈՐԵՆ

- Սպառողական ապրանքների զամբյուղում հացահատիկի կշիռը կազմում է 0.04%:
- Վերջին հինգ տարիներին հացահատիկի թողարկումը գյուղատնտեսական մշակաբույսերի թողարկման ծավալներում կազմել է մոտ 20%:
- Ցորենի գների տատանման գործակիցը գյուղատնտեսական մթերքների գների տատանման գործակցի համեմատ կազմել է 70%:

Հիպոթեզի նկարագրությունը

Համաձայն ներկայացված հիպոթեզի՝ հացահատիկի շուկան մրցակցային է: Գնագոյացման գործընթացը պայմանավորող գործոնների շարքում հարկ ենք համարում առանձնացնել կարճաժամկետ հատվածում հացահատիկի պահանջարկի կայունությունը: Կարճաժամկետ հատվածում ներքին առաջարկի տատանումները հիմնականում բնակլիմայական գործոնի հետևանք են, և շուկայում ընդհանուր առաջարկը կարգավորվում է ներմուծման միջոցով:

Որպես առանձնահատկություն նշենք նաև, որ տարվա ընթացքում գնի սեզոնային տատանումները համեմատաբար թույլ են՝ պայմանավորված թողարկման, պահպանման համեմատաբար ցածր ծախսատարությամբ և պահանջարկի թույլ սեզոնայնությամբ:

Մրցակցային շուկայի պարագայում նախ անհրաժեշտ է հետևյալ պայմանի[1] առկայությունը՝

$$P_1^S = P_2^S = P_3^S .... = P_n^S = P^E \qquad (1.1)$$

որտեղ՝

Pn^S – ը՝ գինն է ըստ արտադրողների,
P^E – ը՝ հաշվեկշռված գինն է:

[1] *Այս պայմանը դրվել և ստուգվել է նաև մյուս մրցակցային շուկաների համար, չնայած այն հանգամանքին, որ տեքստում այլևս չի հիշատակվում:*

Այժմ հացահատիկի շուկայի համար կազմենք առաջարկի և պահանջարկի հավասարումները, որոնք, ըստ գնի՝ մեկ համակարգում լուծելու դեպքում, կստանանք շուկայի հաշվեկշռված գինը: Գնի կախվածությունը պահանջարկից կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$p = \alpha_1 q^D + a \qquad (1.2)$$

որտեղ՝

p – ը՝ հացահատիկի գինն է,
q^D – ը՝ հացահատիկի պահանջարկը,
a – ը՝ ազատ անդամ:

Ինչպես նշվեց, շուկան բաց է ներմուծման համար, և շուկայի առաջարկի մի մասը կազմում է ներմուծված հացահատիկը: Այս փաստը ենթադրում է, որ հացահատիկի համաշխարհային գնի փոփոխությունը իր ազդեցությունը կունենա ներքին շուկայում ձևավորվող գնի վրա: Մասնավորապես՝ համաշխարհային գնի նվազման դեպքում, ներմուծված հացահատիկի կշիռը ներքին շուկայում կաճի, ինչը մրցակցության պայմաններում կհանգեցնի ներքին գնի նվազման ևս: Համաշխարհային շուկայում հացահատիկի գնի աճը իր հերթին կհանգեցնի ներքին գնի աճի: Հետևաբար ստացվում է՝

$$p = \beta_1 q^S + \beta_2 p^F + b \qquad (1.3)$$

որտեղ՝

p – ը՝ գինն է,
q^S – ը՝ հացահատիկի առաջարկը,
p^F – ը՝ համաշխարհային շուկայում հացահատիկի գինը,
b – ը՝ ազատ անդամ:

Այսպիսով, հավասարումների համակարգը կստանա հետևյալ տեսքը՝

$$\begin{cases} p = \alpha_1 q^D + a \\ p = \beta_1 q^S + \beta_2 p^F + b \end{cases} \qquad (1.4)$$

Ներկայացված համակարգը երկարաժամկետ հաշվեկշռվածությունը գնահատելու համար լիովին ընդունելի տարբերակ է: Սակայն, հաշվի առնելով մեր տրամադրության տակ եղած տարեկան շարքերի անբավարարությունը, ստիպված ենք օգտագործել եռամսյակային շարքեր և դիտարկել բավականին կարճ ժամանակահատված՝ 1997 - 2002 թվականները, ուստի անհրաժեշտություն է առաջանում ձևափոխել ներկայացված հավասարումների համակարգը[2]:

Մասնավորապես՝ ինչպես ցորենի, այնպես էլ մյուս գյուղատնտեսական մթերքների դեպքում կարելի է ընդունել, որ առաջարկը կարճաժամկետ հատվածում հայտնի մեծություն է: Առաջարկը էական փոփոխությունների կարող է ենթարկվել բնակլիմայական գործոնի ազդեցությամբ և, ամեն դեպքում, թողարկված մթերքը ամբողջությամբ կիրացվի, կամ՝ առաջարկը հավասար է պահանջարկին.

$$q^S = q^D \qquad (1.5)$$

Անդրադառնանք առաջ քաշված հիպոթեզին. քանի որ գնի կախվածությունը պայմանավորող փոփոխականներ են թողարկման ծավալները, ներմուծման կամ միջազգային գները, ապա հավասարումը կստանա հետևյալ տեսքը.

$$p = \beta_1 q \ + \beta_2 p^F + b \qquad (1.6)$$

[2] Տարեկան շաքերի բավարար երկարության դեպքում է միայն ներկայացված հավասարումների համակարգը հնարավոր կիրառել: Այդ պատճառով մյուս քննարկվող շուկաների համար ևս կներկայացվի ընդհանուր տեսքը և այն տարբերակը, որը գնահատման առումով այս պահին առավել նպատակահարմար է:

Հիպոթեզի գնահատման արդյունքները

Աղյուսակ 1-ում ներկայացված են հավասարման գնահատման արդյունքները: Ինչպես տեսնում ենք, դիտարկված կապը բավարար հուսալի է, պայմանավորող փոփոխականների նշանակալիության աստիճանը նույնպես բավարար է: p^{F}_{-1} կապը կախյալ փոփոխականից ուղղակի է, իսկ թողարկման ծավալներինը՝ հակադարձ, ինչը ևս լիովին համապատասխանում է առաջարկվող հիպոթեզի տրամաբանությանը:

Աղյուսակ 1

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
C	78.718	6.5164	12.081	0.0000
q [3]	-0.0028	0.0006	-4.3915	0.0004
p^{F}_{-1} [4]	0.2863	0.0871	3.2907	0.0041

R^2	0.6409	F-վիճակագիր	16.539
Ճշգրտված R^2	0.6010	Հավանականություն (F-վիճակագիր)	0.0000
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	1.4891		

Վիճակագրական հարցման արդյունքները

Համաձայն գյուղմթերքների գնագոյացման վերաբերյալ ՀՀ ԿԲ իրականացրած հարցման արդյունքների՝ ցորենի գնագոյացումը կատարվում է մրցակցային պայմաններում:

Հարցումները ցույց են տվել նաև, որ տնտեսություններում արտադրված ցորենի 60%-ից ավելին թողարկվում է իրացման նպատակով, ընդ որում՝ իրացման նպատակով ցորեն մշակում են հիմնականում խոշոր և միջին տնտեսությունները, իսկ փոքր տնտեսություններում մշակված ցորենը, որպես կանոն, օգտագործում են սեփական սպառման նպատակներով: Խոշոր և միջին տնտեսությունները ցորենը հիմնականում վաճառում են միջնորդին (մոտ 45 %), որի 70%-ն իրացվում է շուկայի առավելագույն գնով:

Կարելի է ասել, որ ցորեն մշակող տնտեսություններն իրենց արտադրանքը շուկայում իրացնում են մրցակցության պայմաններում ձևավորված առավելագույն գնով, որը և P^{E} հավասարակշիռ գինն է:

Հարցված տնտեսությունները գների վրա ազդող գործոններից կարևորել են սեզոնայնության գործոնը և ներմուծվող հացահատիկի գները: Ընդ որում՝ վերջինս կարևորել է հարցվածների 30%-ը:

Ամփոփում

Փաստորեն և՛ վիճակագրական տեստերը, և՛ վիճակագրական հարցման արդյունքները ըստ էության հաստատում են ցորենի գնագոյացման առնչությամբ վերը առաջարկված հիմնական հիպոթեզը, համաձայն որի՝ կարճաժամկետ հատվածում ցորենի ընթացիկ գնի համար որոշիչ են.

- շուկայում տվյալ պահին առկա առաջարկի ծավալները,
- միջազգային շուկայում ցորենի գինը՝ մեկ ամիս լագով:

ԿԱՐՏՈՖԻԼ

- Սպառողական ապրանքների զամբյուղում կարտոֆիլի կշիռը կազմում է 3.3%:
- Վերջին հինգ տարիներին կարտոֆիլի թողարկումը ընդհանուր գյուղատնտեսական մշակաբույսերի թողարկման ծավալներում կազմել է 23%:
- Կարտոֆիլի գների տատանման գործակիցը գյուղատնտեսական մթերքների գների տատանման գործակցի համեմատ կազմել է 121%:

[3] Բոլոր ապրանքների թողարկման ծավալների և գների թվային շարքերը կազմվել են ԱՎԾ տվյալների հիման վրա:
[4] Ցորենի համաշխարհային գների աղբյուրը՝ International Financial Statistics: Գները արտահայտված են դրամով, ինչի պատճառով փոխարժեքի հետ կապը առանձին չի դիտարկվում:

Հիպոթեզի նկարագրությունը

Կարտոֆիլի շուկայի գնագոյացման հիպոթեզի ձևակերպման ընթացքում ենթադրվեց, որ կարտոֆիլի շուկայում զարգացումները որոշակիորեն առանձնանում են՝ հիմնականում պայմանավորված երկարաժամկետ հատվածում եկամուտներից պահանջարկի բացասական առաձգականությամբ: Ենթադրվեց նաև, որ չնայած սպառման հարաբերական կայուն սեզոնայնությանը, և՛ սպառողների, և՛ արտադրողների կողմից պահպանման ցածր ծախսատարությանը՝ տարվա ընթացքում գնի տատանումները որոշակի են, որի հավանական պատճառներից նշվեց ստվերային արտահանումը: Կարտոֆիլի շուկան որակվեց որպես մրցակցային: Այս նկարագրության ներքո կարտոֆիլի շուկայում գնագոյացումը բնութագրող հավասարումները կստանան հետևյալ տեսքը:

Եկամտից գնի բացասական առաձգականությունը ենթադրում է, որ եկամտի փոփոխությունը հանգեցնում է պահանջարկի կառուցվածքային փոփոխության: Որպես պահանջարկի գործոն է դիտարկվում նաև ստվերային արտահանումը, որը իր էությամբ ենթադրում է արտաքին պահանջարկ: Այսպիսով, գնի կախվածությունը պահանջարկից բնութագրող հավասարումը ստանում է հետևյալ տեսքը՝

$$p = \alpha_1 q^D + \alpha_2 y^P + \alpha_3 e + a \qquad \textbf{(2.2)}$$

որտեղ՝

y^P *- ը՝ մասնավոր տնօրինվող եկամուտն է,*
e *- ը՝ արտահանումը (արտաքին պահանջարկը):*

Պարզ տեսքով արտահայտելով առաջարկից գնի կախվածությունը և միավորելով (2.2) հավասարման հետ մեկ համակարգում՝ ստանում ենք.

$$\begin{cases} p = \alpha_1 q^D + \alpha_2 y^P + \alpha_3 e + a \\ p = \beta_1 q^S + b \end{cases} \qquad \textbf{(2.3)}$$

Այժմ կատարենք որոշակի ձևափոխություններ՝ կարճաժամկետ հատվածում հիպոթեզը ստուգելու համար: Նախ այն հանգամանքը, որ արտահանման վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը բացակայում է, գործնականում անհնար է դարձնում արտահանման գործոնի (e) դիտարկումը: Քանի որ կարտոֆիլի սպառումը հարաբերականորեն կայուն է, կամ գոնե այս մթերքը շուկայում առկա է ամբողջ տարվա ընթացքում, ապա գործարքի կողմերը կարճաժամկետ հատվածում գինը որոշելիս կկարևորեն նախորդ՝ t_{-1} պահի գինը: Այսպիսով, կարտոֆիլի համար ևս կիրառելով առաջարկի կայունության վերը ներկայացված (1.5) պայմանը, գնահատման համար կստանանք հիպոթեզի հետևյալ վերջնական հավասարումը՝

$$p = \alpha_1 q^D + \alpha_2 y^P + \alpha_3 p_{-1} + a\,, \qquad \textbf{(2.4)}$$

սակայն այն վերապահումով, որ եկամուտների ազդեցության կարևորությունը կարճաժամկետ հատվածում ցածր է, և հիմնական պայմանավորող փոփոխականներն են՝ t_{-1} պահի գինը և թողարկման ծավալները:

Հիպոթեզի գնահատման արդյունքները

Աղյուսակ 2-ում ներկայացված են (2.4) հավասարման գնահատման արդյունքները: Ինչպես տեսնում ենք, համախառն տնօրինվող եկամուտների՝ y^p_{-1}-ի (դիտարկված է իր նախորդ լագով), կարևորության հավանականությունը շատ փոքր է, իսկ փոխարենը՝ գների վարքագիծը հիմնականում պայմանավորվում է t_{-1} պահի գնով և թողարկման ծավալներով, ինչպես և ակնկալվում էր:

Աղյուսակ 2

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
p_{-1}	0.337578	0.176723	1.910210	0.0722
q	-0.004292	0.001001	-4.290172	0.0004
y_{-1}^{p}	-10.03418	8.336914	-1.203585	0.2443
D2000.2[5]	-43.69669	14.92728	-2.927305	0.0090
C	218.1131	112.8614	1.932575	0.0692
R^2	0.608025	**F-վիճակագիր**		6.980318
Ճշգրտված R^2	0.520919	**Հավանականություն (F-վիճակագիր)**		0.001414
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	2.27454			

Առավել նպատակահարմար է հավասարումը դիտարկել առանց տնօրինվող եկամուտների, որի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
p_{-1}	0.428478	0.169951	2.521190	0.0213
q	-0.004128	0.001088	-3.794636	0.0013
C	82.54541	16.42219	5.026455	0.0001
D2000.2	-36.14962	14.24272	-2.538111	0.0206
R^2	0.563472	**F-վիճակագիր**		7.744815
Ճշգրտված R^2	0.490717	**Հավանականություն (F-վիճակագիր)**		0.001580
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	1.726131			

Գինը պայմանավորող փոփոխականների հետ կախյալ փոփոխականի համապատասխանաբար ուղղակի և հակադարձ կապերի առկայությունը ևս համապատասխանում է հիպոթեզի տրամաբանությանը:

Վիճակագրական հարցումների արդյունքները

Ինչպես և ցորենի դեպքում, համեմատվել են հարցման ընտրանքում ընդգրկված կարտոֆիլ մշակող բոլոր տնտեսությունների (107 տնտեսություն) իրացման գները: Դրանց հավաստիությունը ստուգվել է T-վիճակագրի միջոցով, որը այս դեպքում ևս թույլատրելի միջակայքում է եղել՝ 0.4:

Այն հարցին, թե ինչ գնով են տնտեսությունները վաճառում իրենց արտադրանքը, ինչպես և ցորենի դեպքում, ըստ ընդհանուր հարցվողների 35%-ի և խոշոր տնտեսությունների 70%-ի պատասխանների, իրացման գները սահմանվել են շուկայում ձևավորված առավելագույն հնարավոր գնին համապատասխան:

Փոքր և միջին տնտեսությունների՝ «գնորդի կողմից թելադրվող գնի» և «շուկայում առավելագույն հնարավոր գնի» օգտին տրված պատասխանները գրեթե նույն հարաբերությամբ են՝ 33% և 47%: Այս դեպքում ևս, ինչպես մյուս գյուղմթերքների դեպքում, պետք է նշել, որ փոքր և միջին տնտեսությունների հիմնական տնտեսական գործունեության նպատակը իրացման համար կարտոֆիլ մշակելը չէ: Քանի որ բերքի մոտ կեսը՝ 50%-ը, սպառվում կամ կուտակվում է տնտեսությունում, իսկ մնացածի զգալի մասը՝ 34%-ը, իրացվում է միջնորդի միջոցով, այդ տնտեսությունները, ըստ էության, կարող են առաջնորդվել գնորդի, տվյալ դեպքում՝ միջնորդի թելադրանքով, որոնց դրսևորումները շատ բազմազան են: Սակայն խոշոր արտադրողների վարքագիծը արդեն այլ է. հիմնականում առաջնորդվում են շուկայում հնարավոր առավելագույն գնով:

[5] *D2000.2 փոփոխականը ներառված է 2000 թվականի երկրորդ եռամսյակում գների կտրուկ անկումը ճշգրտելու համար:*

Ամփոփում

Առաջարկվող հիպոթեզը, ինչպես հացահատիկի շուկայի դեպքում, կրկին հաստատվում է: Կարտոֆիլի շուկայում գնագոյացումը իրականացվում է մրցակցային պայմաններում, և գնի վրա ազդող հիմնական գործոններն են՝

- շուկայում տվյալ պահին առկա առաջարկի ծավալները,
- կարտոֆիլի ներքին գինը՝ մեկ ամիս լագով,
- երկարաժամկետ հատվածում տնօրինվող եկամտից կարտոֆիլի գնի առածգականությունը բացասական է:

ՊՏՈՒՂ, ՀԱՏԱՊՏՈՒՂ ԿԱՄ ՄԻՐԳ

- Սպառողական ապրանքների զամբյուղում մրգի կշիռը կազմում է 2.1%:
- Վերջին հինգ տարիներին մրգի թողարկումը ընդհանուր գյուղատնտեսական մշակաբույսերի թողարկման ծավալներում կազմել է 13.5%:
- Մրգի գների տատանման գործակիցը գյուղատնտեսական մթերքների գների տատանման գործակցի համեմատ կազմել է 160 %:

Հիպոթեզի նկարագրությունը

Համաձայն առաջարկվող հիպոթեզի՝ մրգի շուկայում գնագոյացումը կատարվում է մրցակցային պայմաններում: Որպես առանձնահատկություն կարելի է նշել կարճաժամկետ հատվածում գնի ճկունության հանգամանքը: Առաջարկի համեմատաբար ցածր կառավարելիության, խիստ արտահայտված սեզոնայնության և կայուն պահանջարկի առկայության պայմաններում գինը ենթարկվում է կտրուկ տատանումների: Պահանջարկի առածգականությունը եկամտից դրական է, մասնավորապես՝ երկարաժամկետ հատվածում:

Չնայած սպառողական պահանջարկը կարճ ժամկետում, ընդհանուր առմամբ, կայուն է և երկարաժամկետ հատվածում նրա հիմնական որոշիչը եկամուտն է՝ հնարավոր է, որ շուկայում էական նշանակություն ունենա վերամշակող ձեռնարկությունների կողմից ներկայացվող պահանջարկը, որը աճում է ոչ միայն համախառն եկամուտների աճի պատճառով: Արդյունաբերական պահանջարկի աճը պատճառաբանվում է նաև ներմուծման փոխարինմամբ:

Պտղի և հատապտղի շուկայում գնի կախվածությունը պահանջարկից կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$p = \alpha_1 q^D + a \qquad \textbf{(3.1)}$$

Ապրանքախմբի նկատմամբ պահանջարկն իր հերթին կարելի է բաժանել երկու մասի՝ արդյունաբերական (q^I) և սպառողական (q^C) պահանջարկների՝

$$q^D = q^I + q^C \qquad \textbf{(3.2)}$$

Համաձայն արված դատողությունների՝

$$q^C = f(y) \qquad \textbf{(3.3)}$$

$$q^I = f(y, s) \qquad \textbf{(3.4)}$$

որտեղ՝

y – ը՝ համախառն եկամուտն է,

s – ը՝ ներմուծման փոխարինման էֆեկտը արտահայտող ցուցանիշ:

Ներմուծման փոխարինման էֆեկտը (s) արտահայտելու համար նպատակահարմար է գտնվել հաշվարկել ՀՆԱ-ում ներմուծված սննդամթերքի կշռի փոփոխության ցուցանիշը (մասնավորապես այն սննդամթերքի, որի պատրաստման համար որպես հումք է ծառայում պտուղը և հատապտուղը): Այս ցուցանիշը հնարավորություն է տալիս բացառել եկամտի ազդեցությունը ներմուծման ծավալների վրա և արտահայտում է սպառողի հակվածությունը ներմուծվող ապրանքի նկատմամբ:

Ամփոփելով (3.1), (3.2), (3.3) և (3.4) հավասարումները՝ գնի կախվածությունը պահանջարկից կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$p = \alpha_1 y \ + \alpha_2 s + a \qquad (3.5)$$

որտեղ՝ ներմուծման փոխարինման էֆեկտը արտահայտող ցուցանիշը (s) հանդես է գալիս որպես պայմանավորող փոփոխական:

Առաջարկից գնի կախվածությունը կարտահայտվի հետևյալ կերպ.

$$p = \beta_1 q^S + b \qquad (3.6)$$

Այսպիսով, շուկայում գնագոյացումը ներկայացնող համակարգը կունենա հետևյալ տեսքը՝

$$\begin{cases} p = \alpha_1 y + \alpha_2 s + a \\ p = \beta_1 q^S + b \end{cases} \qquad (3.7)$$

Կարճաժամկետ հատվածում եռամսյակային շարքերի միջոցով գնահատելու նպատակով ընդունելով (1.5) պայմանը՝ ըստ էության հանգում ենք պահանջարկի համար առաջարկվող (3.5) հավասարմանը:

Հիպոթեզի գնահատման արդյունքները

Ինչպես տեսնում ենք, աղյուսակ 4-ում ներկայացված գնահատման արդյունքները համապատասխանում են առաջարկվող հիպոթեզին: Մասնավորապես՝ դիտարկվող կապը ամբողջությամբ և ըստ առանձին փոփոխականների բավարար հուսալի է:

Աղյուսակ 4

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
s	-0.384301	0.094401	-4.070944	0.0022
c	21.18992	8.044167	2.634197	0.0250
q	-0.058648	0.030964	-1.894052	0.0875
y_{-2}	0.428578	0.047088	9.101553	0.0000
R^2	0.903135	F-վիճակագիր		31.079
Ճշգրտված R^2	0.874076	Հավանականություն (F-վիճակագիր)		0.0001
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	1.864026			

Պայմանավորող փոփոխականների և կախյալ փոփոխականի միջև կապերի ուղղությունները նույնպես համապատասխանում են առաջարկվող հիպոթեզին: Մասնավորապես՝ ներմուծման փոխարինումը, այլ հավասար պայմաններում, նշանակում է վերամշակող ձեռնարկությունների պահանջարկի աճ, ինչը իր հերթին հանգեցնում է գների աճի: Եկամուտների երկրորդ լագի հետ կախյալ փոփոխականի ուղղակի կապի առկայությունը խոսում է կարճ ժամկետում եկամուտներից մրգի պահանջարկի դրական առաձգականության մասին, քանի որ միրգը, ըստ էության, առաջին անհրաժեշտության ապրանք չէ, և եկամուտների էֆեկտը մրգի դեպքում ավելի արտահայտված պետք է լինի, քան մյուս մշակաբույսերի համար:

Վիճակագրական հարցումների արդյունքները

Մրգի իրացումը ըստ ուղղությունների՝ որոշակիորեն առանձնանում է մյուս մշակաբույսերից: Մասնավորապես, իրացման ծավալները շուկայում և վերամշակող ձեռնարկություններին գրեթե հավասար են և կազմում են 12%: Բերքի զգալի մասը (36%) կուտակվում է տնտեսությունում՝ հավանաբար հաջորդ տարի իրացնելու նպատակով, իսկ մնացածը հիմնականում իրացվում է միջնորդի միջոցով (40%): Ինչ վերաբերում է իրացման գներին, ապա այստեղ պատկերը ևս փոքր-ինչ այլ է: Միջնորդին և շուկայում իրացված ծավալների գները բավականին մոտ են, սակայն էական տարբերություն կա վերամշակող ձեռնարկությանը իրացված գնի համեմատ, որը, համաձայն հարցման տվյալների, նույնիսկ ցածր է ինքնարժեքից: Տնտեսությունների 50%-ը իրենց արտադրանքը շուկայում իրացնում են հնարավոր առավելագույն գնով, իսկ 36%-ը՝ գնորդի կողմից թելադրված գնով, ընդ որում, այս առումով պատկերը կրկնվում է. այս տարբերակով իրացնում են հիմնականում փոքր տնտեսությունները:

Ըստ հարցման արդյունքների՝ կարելի է եզրակացնել նաև, որ մրգի շուկան, չնայած որոշ առանձնահատկություններին, ևս մրցակցային է: Ստացվում է նաև, որ մրգի նկատմամբ պահանջարկը իր բնույթով իրոք կարելի է բաժանել երկու մասի՝ սպառողական և հումքային՝ տարբերելով դրանց վարքագիծը պայմանավորող գործոնները, ինչպես և ենթադրվել էր առաջարկվող հիպոթեզում:

Ամփոփում

Հիմնվելով հարցումների և էկոնոմետրիկական գնահատումների արդյունքների վրա՝ կարող ենք հաստատել մրգի շուկայի գնագոյացման վերաբերյալ առաջարկվող հիպոթեզի իսկությունը, համաձայն որի՝ մրգի գները կախված են.

- եկամուտների երկրորդ լագից,
- ներմուծվող սննդի փոխարինման չափերից,
- մրգի թողարկման ծավալներից, որոնք կարճ ժամանակահատվածում կայուն են:

ԽԱՂՈՂ

- Սպառողական ապրանքների զամբյուղում խաղողի կշիռը կազմում է 0.3%:
- Վերջին հինգ տարիներին խաղողի թողարկումը ընդհանուր գյուղատնտեսական մշակաբույսերի թողարկման ծավալներում կազմել է 10.6%:
- Խաղողի գների տատանման գործակիցը գյուղատնտեսական մթերքների գների տատանման գործակցի համեմատ կազմել է 209%:

Հիպոթեզի ձևակերպումը

Խաղողի շուկայում, համաձայն առաջարկված հիպոթեզի, գինը որոշակիորեն կարգավորվում է սահմանափակ թվով գնորդների կողմից: Դրա մասին են վկայում նաև վիճակագրական հարցման արդյունքները, որոնք մանրամասն կներկայացնենք հաջորդ մասում: Գնորդի կամ սահմանափակ թվով գնորդների կողմից գնի կառավարման պայմաններում իրավիճակը շուկայում որոշակիորեն փոխվում է: Փորձենք պարզաբանել: Գնորդի վարքագիծը այս պարագայում ևս ակնհայտ է և իր տրամաբանությամբ նույնն է, ինչ՝ մրցակցային շուկայում. նա կփորձի ձեռք բերել ապրանքը հնարավորինս էժան: Սակայն տարբերությունն այն է, որ այս դեպքում նա օժտված է գնագոյացման գործընթացը որոշակիորեն կառավարելու հնարավորություններով: Մասնավորապես խաղողի շուկայի դեպքում այդ հնարավորությունը գնորդին ընձեռված է՝ շնորհիվ սահմանափակ թվով գնորդների պահանջարկի՝ համեմատաբար մեծ ծավալների: Ինչևիցե, պահանջարկից գնի կախվածությունն արտահայտող հավասարումն ընդունում է հետևյալ տեսքը.

$$p = \alpha_1 q^D + a \qquad \textbf{(4.1)}$$

Այժմ փորձենք դիտարկել արտադրողի վարքագիծը: Գնորդը, օժտված լինելով շուկայական գնի կառավարման որոշակի հնարավորություններով, ձգտում է արտադրողի եկամուտը հասցնել նվազագույնի: Այսինքն՝ գնորդը կարող է նվազեցնել գինը մինչև այն սահմանը, որի պայմաններում արտադրողի գործունեությանը տնտեսապես արդարացված է: Շուկայական գինը նվազագույն սահմանից չի կարող իջնել, քանի որ գնորդի ցանկացած փորձին կհետևի արտադրության ծավալների կրճատում: Այս դեպքում արդեն շուկայում կառաջանա պակասուրդ, ինչը կդրդի շուկայի մյուս մասնակից գնորդներին ավելի բարձր գին վճարելու: Արդյունքում՝ գինը կվերադառնա իր նախկին մակարդակին: Դատողությունների շրջանակը կարելի է ընդլայնել, առավել մանրամասնել՝ հաշվի առնելով կոնկրետ քննարկվող դեպքի առանձնահատկությունները, սակայն ընդհանուր պատկերը չի փոխվի:

Հետևաբար, երբ սահմանափակ թվով գնորդներ օժտված են շուկայական գնի կառավարման որոշակի հնարավորություններով, շուկայում արտադրողի վարքագիծը պայմանավորող առանցքային գործոնը իր գործունեության տնտեսական արդարացվածությունը գնահատող պայմանների համակարգն է: Այդ պայմանների ամբողջությունը կարող է արտահայտվել այլընտրանքային գործունեության շահութաբերությամբ: Այսինքն արտադրողը, ռացիոնալ վարքագծի դեպքում, իր գործունեության արդարացիությունը գնահատում է՝ համեմատելով իր համար այլընտրանքային գործունեության հետ: Հասկանալի է, որ միայն այլընտրանքային շահութաբերության գործոնը դիտարկելը բավականին պարզեցված տարբերակ է. մասնավորապես՝ չեն ներառվում գործունեության փոփոխման հետ կապված ծախսերը կամ երկար ժամանակահատվածում արտադրողների սպասումների, նրանց տնտեսական գործունեության ռազմավարությունները և այլն: Սակայն բավականին բարդ է նշված գործոններին քանակական գնահատական տալը:

Այնուհանդերձ, առաջարկից գնի կախվածությունը բնութագրելու համար առաջարկում ենք հետևյալ հավասարումը՝

$$p = \beta_1 q^S + \beta_2 \pi + b \qquad \textbf{(4.2)}$$

որտեղ՝

π *- ն այլընտրանքային գործունեության շահութաբերությունն է:*

Հավասարումների համակարգը կստանա հետևյալ տեսքը՝

$$\begin{cases} p = \alpha_1 q^D + a \\ p = \beta_1 q^S + \beta_2 \pi + b \end{cases} \qquad \textbf{(4.3)}$$

Այլընտրանքային գործունեության շահութաբերությունը կարճաժամկետ հատվածում դժվար թե էական լինի, և քանի որ սահմանափակ թվով գնորդներ որոշակիորեն կարգավորում են շուկայական գինը, ապա այլ գործոն, բացի թողարկման ծավալներից, որպես պայմանավորող փոփոխական դիտարկելը նպատակահարմար չէ: Սահմանափակ թվով գնորդների առկայությունը շուկայում որոշակի հիմք է տալիս գնի կարգավորման վերաբերյալ ենթադրություններ անելու: Սակայն չի նշանակում, որ գինը թողարկման ծավալներից լիովին անկախ է: Գնորդների ազդեցությունը շուկայում, այլ հավասար պայմաններում, չեզոքացնում է գնի վրա պահանջարկի հնարավոր ոչ գնային գործոնների ազդեցությունը: Սակայն խաղողի առաջարկը, կարճ ժամկետում կայուն լինելով հանդերձ /պայման (1.5)/, ենթարկվում է բնակլիմայական գործոնի ազդեցությանը և, առաջարկի տատանման որոշակի սահմաններում, գնորդները կարող են թույլ տալ գնի տատանումներ: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է դիտարկել հետևյալ հավասարումը՝

$$p = \beta_1 q + b$$

Այս դատողությունների ճշմարտացիության մեջ համոզվելու համար կարելի է գնահատել այլ հնարավոր տարբերակներ՝ հավասարման մեջ ներառելով հավանական պայմանավորող փոփոխականներ, որոնց գնահատման արդյունքները, համաձայն հիպոթեզի, պետք է բավարար չլինեն:

Հիպոթեզի գնահատման արդյունքները

Գնահատման արդյունքների համաձայն, իրոք, թողարկման ծավալների որոշակիությունը բարձր է և կապը, ընդհանուր առմամբ, հավաստի է:

Աղյուսակ 5

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
q	-0.007478	0.000971	-7.703811	0.0000
C	201.5616	8.586722	23.47364	0.0000
AR(2)	0.348455	0.094627	3.682414	0.0025
R^2	0.725203	F-վիճակագիր		18.47339
Ճշգրտված R^2	0.685947	Հավանականություն (F-վիճակագիր)		0.000118
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	1.32889			

Մեր կողմից գնահատված այլընտրանքային տարբերակներից լավագույնի արդյունքները ներկայացված են աղյուսակ 6-ում, որտեղ ներմուծված նոր փոփոխականը՝ վերամշակող ձեռնարկությունների կողմից թողարկվող հիմնական ապրանքատեսակի՝ կոնյակի նախորդ տարվա արտահանման ծավալներն են:

Աղյուսակ 6

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
q	-0.007890	0.001245	-6.338568	0.0000
Expcog(-4)	0.001371	0.000888	1.543540	0.1467
C	192.2127	10.19836	18.84741	0.0000
R^2	0.761138	F-վիճակագիր		20.71239
Ճշգրտված R^2	0.724390	Հավանականություն (F-վիճակագիր)		0.000091
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	1.541710			

Այս կապը, համաձայն գնահատման արդյունքների, ընդհանուր առմամբ սխալ չէ: Մասնավորապես թողարկման ծավալների կարևորությունը չի չեզոքանում, պայմանավորող փոփոխականների և կախյալ փոփոխականի միջև կապի ուղղությունները նույնպես ճիշտ են, ներկայացված վիճակագրական ցուցանիշների մակարդակները, ընդհանուր առմամբ, ընդունելի են: Սակայն ներմուծված նոր փոփոխականի հանդես գալու հավանականությունը բավարար չէ, ինչը խոսում է նախորդ տարբերակի օգտին:

Վիճակագրական հարցումների արդյունքները

Այս դատողությունները հիմնավորվում են նաև «Ի՞նչ սկզբունքով են որոշվում գները շուկայում» հարցին տրված պատասխաններով: Հարցվածների 75%-ն այն կարծիքին է, որ գինը թելադրվում է գնորդի կողմից, ընդ որում, այդ կարծիքը գրեթե հավասարապես կիսում են և՛ փոքր, և՛ միջին, և՛ խոշոր տնտեսությունները:

Գների վրա ազդող հիմնական գործոններից հարցվողների 26%-ը նշել են գնորդի, վերամշակող ձեռնարկության պայմանների փոփոխությունը: Փաստորեն հարցման արդյունքներով պաշտպանվում է այն հիպոթեզը, ըստ որի՝ խաղողի շուկայում գները կարգավորվում են գնորդի կողմից:

Ամփոփում

Հաստատելով առաջարկված հիպոթեզը՝ ևս մեկ անգամ ընդգծենք խաղողի շուկայում գնագոյացումը բնութագրող հետևյալ առանցքային եզրահանգումները.

- խաղողի շուկայում պայմանները մրցակցային չեն,
- գինը շուկայում կարգավորվում է սահմանափակ թվով գնորդների կողմից, որոնք ներկայացնում են վերամշակող ձեռնարկությունների պահանջարկը,
- այդ պայմաններում գնի կարճաժամկետ տատանումները համահունչ են թողարկման ծավալների տատանումներին:

- Սպառողական ապրանքների զամբյուղում բանջարեղենի կշիռը կազմում է 6.6 %:
- Վերջին հինգ տարիներին բանջարեղենի թողարկումը ընդհանուր գյուղատնտեսական մթերքների թողարկման ծավալներում կազմել է 33.1%:
- Բանջարեղենի գների տատանման գործակիցը գյուղատնտեսական մթերքների գների տատանման գործակցի համեմատ կազմել է 150.4%:

Հիպոթեզի նկարագրությունը

Համաձայն առաջարկվող հիպոթեզի՝ բանջարաբոստանային կուլտուրաների շուկան մրցակցային է, գնի հիմնական որոշիչը տվյալ պահին առաջարկի ծավալներն են: Ենթադրվել է նաև, որ ցանքատարածությունները բավականին ճկուն են օգտագործվում, և նախորդ տարվա գները կարող են պայմանավորել ներկա առաջարկը:

Գնի փոփոխությանը արտադրողի՝ ցանքատարածությունների փոփոխությամբ արձագանքելու փաստը, այլ հավասար պայմաններում, նշանակում է առաջարկի փոփոխություն: Այս դեպքում արտադրողների վարքագիծը կարելի է որակել որպես ռացիոնալ սպասումների դրսևորում, մասնավորապես՝ որոշակի t_1 ժամանակահատվածում գնի աճը կամ նվազումը սպասումներ է առաջացնում նույն ուղղությամբ, արդեն t_{+1} ժամանակահատվածում: Այս պարագայում առաջարկում ենք՝

$$p = \beta_1 q^S + \beta_2 p_{-1} + b \qquad (5.2)$$

որտեղ՝

p_{-1} - *ապրանքի գինն է նախորդ ժամանակահատվածում:*

Պահանջարկից գնի կախվածությունը կարտահայտի հետևյալ հավասարումը.

$$p = \alpha_1 q^D + a \qquad (5.3)$$

Կունենանք հետևյալ համակարգը, որը ևս բաղկացած կլինի երկու հավասարումներից՝ երկու ներծին և մեկ արտածին փոփոխականներից՝

$$\begin{cases} p = \alpha_1 q^D + a \\ p = \beta_1 q^S + \beta_2 p_{-1} + b \end{cases} \qquad (5.4)$$

Կրկին անդրադառնալով (1.5) պայմանին՝ եռամսյակային շարքերով գնահատման համար, դիտարկվող հավասարումը կստանա հետևյալ տեսքը.

$$p = \beta_1 q \ + \beta_2 p_{-1} + b \qquad (5.5)$$

Հիպոթեզի գնահատման արդյունքները

Աղյուսակ 7-ում ներկայացված է նախորդ տարվա գների և թողարկման ծավալների կապի գնահատականը: Ինչպես տեսնում ենք, մեր դատողությունները այդ առումով չեն հաստատվում: Մասնավորապես՝ p_{-4} և q-ի միջև կապը հակադարձ է:

Աղյուսակ 7

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
p_{-4}	-1.049796	0.215174	-4.878828	0.0001
C	12.65633	1.170360	10.81405	0.0000
R^2	0.569409	F-վիճակագիր		23.80296
Ճշգրտված R^2	0.545487	Հավանականություն (F-վիճակագիր)		0.000121
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	1.852406			

Այդ պատճառով առաջարկվող (5.5) հավասարման կազմում նպատակահարմար չէ դիտարկել նախորդ տարվա գները՝ որպես պայմանավորող փոփոխական: Աղյուսակ 8-ում ներկայացված է գների կախվածությունը միայն թողարկման ծավալներից, որի գնահատման արդյունքները լիովին ընդունելի են:

Աղյուսակ 8

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
q	-0.558213	0.104172	-5.358566	0.0000
C	9.307513	0.752897	12.36226	0.0000
R^2	0.566197	F-վիճակագիր		28.71423
Ճշգրտված R^2	0.546478	Հավանականություն (F-վիճակագիր)		0.000022
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	1.744594			

Վիճակագրական հարցումների արդյունքները

Հարցվողների գերակշիռ մասը մշակում է լոլիկ, որի կշիռը բանջարեղենի ընդհանուր ծավալում առավելագույնն է և կազմում է մոտ 20%:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ լոլիկի 73%-ն իրացվում է վերամշակող ձեռնարկություններին, ընդ որում՝ լոլիկ մշակող խոշոր տնտեսությունները բերքի մեծ մասը՝ 98%-ը, վերամշակող ձեռնարկություններին վաճառում են պայմանագրային գնով: Միջին ձեռնարկությունները բերքի կեսը իրացնում են միջնորդի միջոցով՝ հիմնականում շուկայական գնով, իսկ փոքր տնտեսությունները՝ կեսից ավելին վաճառում են վերամշակող ձեռնարկություններին՝ հիմնականում գնորդի կողմից սահմանված գնով:

Փաստորեն լոլիկի բերքի կեսից ավելին իրացվում է վերամշակող ձեռնարկություններին, որոնք ինչ-որ չափով կարող են գնի սահմանման գործում ավելի մեծ դեր խաղալ, քան արտադրողը, քանի որ գնում են անհամեմատ ավելի մեծ քանակությամբ և ավելի վատորակ ապրանք: Իսկ այն տնտեսությունները, որոնք բերքը վաճառում են շուկայում կամ միջնորդին, իրացնում են հիմնականում շուկայական գնով:

Մյուս բոլոր բանջարաբոստանային կուլտուրաների դեպքում գնագոյացումը կատարվում է շուկայական պայմաններում: Այսպես օրինակ՝ այն հարցին, թե ինչ գնով են գյուղացիները իրացնում կաղամբի և վարունգի բերքը, գերակշռել են «շուկայի առավելագույն գնով» պատասխանները: Ընդ որում, եթե, ասենք, մրգի իրացումը կատարվում է հիմնականում միջնորդի միջոցով, որը, այլ հավասար պայմաններում, ենթադրում է գնի ավելի ցածր մակարդակի սահմանում, քան շուկայականն է, քանի որ շուկայականը ներառում է նաև միջնորդի շահույթը, ապա բանջարաբոստանային կուլտուրաներ մշակող տնտեսությունները բերքը իրենք են իրացնում շուկայում՝ տվյալ պահի առավելագույն գնով: Այսպիսով կարող ենք ասել, որ բանջարեղենի գնագոյացումը ևս մրցակցային է:

Ամփոփում

Եթե վերը դիտարկված ապրանքախմբերի դեպքում առաջարկված նախնական հիպոթեզը հաստատվում էր և՛ էկոնոմետրիկական գնահատումների, և՛ վիճակագրական տեստերի, և՛ վիճակագրական հարցումների արդյունքներով, ապա այս դեպքում պատկերը փոքր-ինչ այլ է: Էկոնոմետրիկական գնահատումների արդյունքները ժխտեցին առաջարկվող հիպոթեզի այն հիմնական դրույթը, համաձայն որի՝ նախորդ ժամանակաշրջանի գները որոշիչ են ընթացիկ տարվա թողարկման ծավալների համար:

Այնուամենայնիվ հաստատվեց, որ բանջարեղենի շուկան մրցակցային է, գնահատվեց գների վարքագիծը բնութագրող հավասարում, համաձայն որի՝ բանջարեղենի ընթացիկ գինը կախված է հիմնականում թողարկման ծավալներից:

- Սպառողական ապրանքների զամբյուղում կաթի[6] կշիռը կազմում է 0.4%:
- Վերջին հինգ տարիներին կաթի թողարկումը անասնապահական հիմնական արտադրատեսակների թողարկման ծավալներում կազմել է 70%:
- Գների տատանման գործակիցը գյուղատնտեսական մթերքների գների տատանման գործակցի համեմատ կազմել է 64.4%:

Հիպոթեզի ներկայացումը

Վերամշակող խոշոր ձեռնարկությունների հիմնադրման, վերամշակված կաթնամթերքի տեսականու և ծավալների ընդլայնման պայմաններում սպառողական ու մեծածախ շուկաներում կաթի գների որոշակի տարամիտման փաստերը հիմք հանդիսացան ձևավորելու այնպիսի հիպոթեզ, համաձայն որի՝ կաթի գները մեծածախ շուկայում ձևավորվում են ոչ ազատ մրցակցային պայմաններում և որոշակիորեն կարգավորվում են գնորդների կողմից:

Կաթի գնագոյացման հարցում կա մի առանձնահատկություն, որը արժանի է ուշադրության: Խոսքը վերաբերում է վերամշակող արդյունաբերությունում որպես կաթի փոխարինիչ օգտագործվող կաթի փոշուն: Կաթի փոշին մեծամասամբ ներմուծվում է, և այս դեպքում որպես պայմանավորող փոփոխական նպատակահարմար է դիտարկել փոշու համաշխարհային գինը: Ներմուծման գործոնի առկայությունը ենթադրում է՝ քանի որ թարմ կաթը և կաթի փոշին վերամշակող ձեռնարկությունների համար հանդիսանում են փոխարինիչներ, ապա վերջիններս գին թելադրելուց հաշվի կառնեն կաթի փոշու գինը, որը, ըստ էության, կհանդիսանա թարմ կաթի գների որոշման չափորոշիչ: Իսկ այս երկու ապրանքատեսակի փոխարինիչներ լինելու փաստը վկայում է, որ կաթի փոշու գինը հանդիսանում է պահանջարկի գործոն. օրինակ՝ կաթի փոշու համաշխարհային գնի նվազումը կհանգեցի ներքին տնտեսության թարմ կաթի գների նվազման՝ երկու ճանապարհով.

- կամ հում կաթի պահանջարկը կկրճատվի, որը, այլ հավասար պայմաններում, կհանգեցնի ներքին տնտեսությունում թարմ կաթի գների նվազման,
- կամ, քանի որ մեր դեպքում գնորդը գին թելադրելու հնարավորություն ունի, գները կսահմանի այնպես, որ պահպանի իր նախկին արդյունավետ վիճակը՝ առանց կրճատելու թարմ կաթի նկատմամբ պահանջարկը:

Այսպիսով, ներմուծման գործոնի առկայության պայմաններում, միաժամանակյա հավասարումների համակարգը կունենա հետևյալ տեսքը՝

$$\begin{cases} p = \alpha_1 q^D + a \\ p = \beta_1 q^S + \beta_2 p^F + b \end{cases} \qquad (6.1)$$

Ներկայացված համակարգը կարելի է օգտագործել երկարաժամկետ հաշվեկշռվածությունը գնահատելու համար: Սակայն կրկին նշենք, որ մեր տրամադրության տակ եղած տարեկան շարքերի անբավարարությունը հնարավորություն չի տալիս գնահատելու (6.1) համակարգը: Այդ իսկ պատճառով, ինչպես մյուս գյուղատնտեսական մթերքների դեպքում, ենթադրենք, որ առաջարկը կարճաժամկետ հատվածում տրված է, և թողարկված մթերքը ամբողջությամբ իրացվում է, այսինքն՝ առաջարկը հավասար է պահանջարկին.

$$q^S = q^D = q \qquad (1.5)$$

Այժմ ներկայացնենք գնի կախվածությունը պայմանավորող փոփոխականներից: Վերը արված դատողություններց ելնելով՝ որպես գնի պայմանավորող փոփոխականներ դիտարկենք թողարկման ծավալները և կաթի փոշու գները,

$$p = \beta_1 q + \beta_2 p^f + b \qquad (6.2)$$

[6] *Վերցված է թարմ կաթի կշիռը:*

Հիպոթեզի գնահատման արդյունքները

Աղյուսակ 9-ում ներկայացված են (6.2) հավասարման գնահատման արդյունքները: p -ի կապը թողարկման ծավալներից հակադարձ է, համաշխարհային գներից՝ ուղղակի: Ներկայացված ցուցանիշները վկայում են կապի ընդհանուր հավաստիության մասին, ինչը իր հերթին նշանակում է, որ գնահատված (6.2) տարբերակը ընդունելի է:

Աղյուսակ 9

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
p^f	0.102127	0.050749	2.012404	0.0603
q	-0.026081	0.005272	-4.946844	0.0001
b	97.85031	4.681515	20.90142	0.0000
R^2	0.707249	F-վիճակագիր		13.68991
Ճշգրտված R^2	0.655586	Հավանականություն (F-վիճակագիր)		0.000086
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	1.537778			

Վիճակագրական հարցման արդյունքները

Հարցման արդյունքները վկայում են կաթի վերաբերյալ ձևակերպված հիպոթեզների իսկությունը: Մասնավորապես, եթե ընդհանուր թողարկված կաթի ծավալներից հանենք տնտեսությունում սպառվածը, ապա վաճառվող կաթի 50%-ից ավելին ձեռք են բերում վերամշակող ձեռնարկությունները: Շուկայում և վերամշակող ձեռնարկություններին իրացվող կաթի գների միջև կա միջին հաշվով 30% տարբերություն, ընդ որում, գները տարբերվում են՝ անկախ տնտեսությունների չափերից: Հարցվողների մոտ 60%-ը, անկախ տնտեսության մասշտաբներից, գտնում է, որ գինը թելադրվում է գնորդի կողմից: Փաստորեն առաջարկվող այն հիպոթեզը, որ կաթի շուկայում գինը կարգավորվում է գնորդի կողմից, հիմնավորվում է:

Միևնույն ժամանակ նույն՝ գնորդի կողմից թելադրվող գնի պայմաններում, չի կարելի ասել, թե գործունեության այս ձևը տնտեսապես արդարացված չէ և ավելին՝ շահութաբեր չէ: Համաձայն հարցման արդյունքների՝ վերամշակող ձեռնարկություններին վաճառվող կաթի միջին գինը կազմում է 87.3 դրամ, այն դեպքում, երբ տնտեսությունում սպառված կաթը (այլ կերպ ասած՝ ինքնարժեքը) հաշվարկվում է միջին հաշվով 43.3 դրամ: Այսինքն՝ գնորդը կառավարում է գինը, սակայն նա չի կարող թույլ տալ այնպիսի իրավիճակ, որի դեպքում կաթի արտադրությունը արդարացված չլինի տնտեսությունների համար: Ստացվում է, որ երկարաժամկետ հատվածի համար առաջարկվող հիպոթեզում արտահայտված այն դատողությունը, որ կարգավորվող շուկայում կարևոր գործոն է այլընտրանքային շահութաբերությունը կամ որ նույնն է՝ գործունեության տնտեսական գնահատականը, իրոք կարևոր է:

Ամփոփում

Վիճակագրական տեստը և հարցման արդյունքները ցույց տվեցին, որ կաթի գնագոյացման վերաբերյալ վերը առաջարկված հիմնական հիպոթեզը հաստատվում է, համաձայն որի՝ կարճաժամկետ հատվածում կաթի ընթացիկ գնի փոփոխությունը կախված է՝

- շուկայում տվյալ պահին առկա առաջարկի ծավալներից,
- կաթի փոշու գներից:

- Սպառողական ապրանքների զամբյուղում ձվի կշիռը կազմում է 2.4%:
- Վերջին հինգ տարիներին ձվի թողարկումը անասնապահական հիմնական արտադրատեսակների թողարկման ծավալներում կազմել է 6.3%:
- Գների տատանման գործակիցը գյուղատնտեսական մթերքների գների տատանման գործակցի համեմատ կազմել է 101.6%:

Հիպոթեզի նկարագրությունը

Եթե կաթի և խաղողի շուկաներում գնագոյացման մեխանիզմները համընկան, ապա ձվի շուկայում պատկերը ընդհանուր առմամբ նույնն է, ինչ որ՝ հացահատիկի շուկայում: Մասնավորապես, համաձայն առաջարկվող հիպոթեզի, ձվի շուկան մրցակցային է, որտեղ գնագոյացման գործընթացում կարևորվում է ներմուծումը:

Ցորենի համեմատ՝ ձվի դեպքում հիմնական տարբերությունն այն է, որ ներքին հզորությունները բավարարում են ներքին պահանջարկը, և ազատ մրցակցության արդյունքում գնի նվազման հետևանքով արձանագրվել է ներմուծման ծավալների կրճատում, ինչը չի կարելի ասել հացահատիկի վերաբերյալ:

Ուստի շուկայում ձվի ներմուծման գները ավելի շուտ կհանդիսանան ներքին տնտեսությունում արտադրված ձվի գների համար վերին սահման և, ըստ էության, չեն կարող լինել գնի ընթացիկ տատանումները պայմանավորող գործոն կամ փոփոխական:

Այնուամենայնիվ, երկարաժամկետ հատվածում ներմուծման գործոնի առկայությամբ գնագոյացումը նկարագրող հավասարումների համակարգը կունենա մեզ արդեն ծանոթ տեսքը՝

$$\begin{cases} p = \alpha_1 q^D + a \\ p = \beta_1 q^S + \beta_2 p^F + b \end{cases} \qquad \textbf{(7.1)}$$

Կարճաժամկետ հատվածի համար ընդունելով (1.5) պայմանը՝ նպատակահարմար է գնահատել հետևյալ հավասարումը՝

$$p = \beta_1 q + \beta_2 p_{-1} + b \qquad \textbf{(7.2)}$$

Կրկին առաջնորդվելով այն տրամաբանությամբ, որ, չնայած սեզոնայնությանը, ծուն, ինչպես և ցորենը, կարտոֆիլը և կաթը, ամբողջ տարին առկա է շուկայում, ապա, ծավալներից բացի, որոշիչ է նաև նախորդ պահի, տվյալ դեպքում՝ եռամսյակի գինը: Այլ կերպ ասած՝ գները նախորդ ժամանակահատվածի գներից կտարբերվեն՝ մեծապես կախված գների՝ թողարկման ծավալներից ունեցած զգայունության մակարդակից:

Հիպոթեզի գնահատման արդյունքները

Աղյուսակ 10-ում ներկայացված ցուցանիշները վկայում են, որ (7.2) հավասարման հիման վրա դիտարկված կապը հուսալի է, և պայմանավորող փոփոխականների ու ձվի գների կապի ուղղությունները ճիշտ են:

Աղյուսակ 10

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
p_{-1}	0.576632	0.135455	4.257015	0.0004
q	-0.003847	0.001017	-3.783636	0.0012
b	23.67916	6.299108	3.759129	0.0012
R^2	0.627413	F-վիճակագիր		16.8399
Ճշգրտված R^2	0.590155	Հավանականություն (F-վիճակագիր)		0.00005
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	1.473579			

Քանի որ ձվի վերաբերյալ վիճակագրական հարցումներ չեն անցկացվել, հիմնական հիպոթեզի ստուգման և գնահատման համար ստիպված ենք բավարարվել վիճակագրական տեստի արդյունքներով:

Ամփոփում

Վիճակագրական տեստը ցույց է տվել, որ ձվի գնագոյացման վերաբերյալ վերը առաջարկված հիմնական հիպոթեզը հաստատվում է, համաձայն որի՝ կարճաժամկետ հատվածում ձվի ընթացիկ գնի փոփոխությունը կախված է՝

- շուկայում տվյալ պահին առկա առաջարկի ծավալներից,
- նախորդ ժամանակաշրջանի գնից:

Ընդհանուր առմամբ, ներքին տնտեսությունում արտադրված ձվի գների համար վերին սահման կարող են լինել ներմուծված ձվի գները:

ՄԻՍ

- Սպառողական ապրանքների զամբյուղում մսի[7] կշիռը կազմում է 5.5%:
- Վերջին հինգ տարիներին մսի թողարկումը անասնապահական հիմնական արտադրատեսակների թողարկման ծավալներում կազմել է 21%:
- Գների տատանման գործակիցը գյուղատնտեսական մթերքների գների տատանման գործակցի համեմատ կազմել է 67.3%:

Մսի շուկայում գնագոյացման վերաբերյալ հիպոթեզ առաջարկված չի եղել, քանի որ չի հաջողվել գնի վարքագծի վերաբերյալ որոշակի դատողություններ անել: Այն արդյունքները, որոնք ստացվել են հետազոտության նախնական փուլում, բավարար չէին ամբողջական տարբերակ առաջարկելու համար:

Այդ պատճառով նախ ներկայացնենք հարցումների արդյունքները արդեն ոչ թե հիպոթեզի ստուգման համար, այլ որպես լրացուցիչ տեղեկատվություն, որը հավանաբար հնարավորություն կտա առավել հստակ դատողություններ անել այս շուկայի առնչությամբ:

Վիճակագրական հարցման արդյունքները

Հարցումը առնչվել է միայն տավարի և խոզի մսին, որոնց վերաբերյալ պատասխանները գրեթե չեն տարբերվում: Այդ պատճառով ներկայացնենք միայն տավարի մսին վերաբերող հարցերի պատասխանների արդյունքները:

Թողարկված մսի 52.4%-ն իրացվում է միջնորդի միջոցով, շուկայում իրացման ծավալները կազմում են 20.5%: Հարկ է ընդգծել այն փաստը, որ վերամշակող ձեռնարկություններին վաճառված մսի ծավալները աննշան են՝ 0.5 %: Այն հարցին, թե ինչ գնով է իրացվում միսը, տնտեսությունների 32%-ը պատասխանել է՝ «շուկայի հնարավոր առավելագույն գնով» իսկ մոտ 50%-ը՝ «գնորդի կողմից թելադրվող գնով»: Այնուամենայնիվ չենք կարող ասել, որ շուկան ոչ մրցակցային է, քանի որ միջնորդին իրացնում են հիմնականում փոքր ձեռնարկությունները և այն գնով, որով խոշոր ձեռնարկությունները իրացնում են շուկայում:

Նկարագրությունը

Հիմնվելով հարցումների արդյունքների և դիտարկված նախորդ շուկաներում գնագոյացման գնահատման ընթացքում պարզված օրինաչափությունների վրա, հավանաբար ճիշտ կլինի ենթադրել, որ մսի գները ձևավորվում են մրցակցային պայմաններում, և քանի որ այս ապրանքը շուկայում իրացման կամ թողարկման խորը սեզոնայնությամբ աչքի չի ընկնում, միշտ առկա է շուկայում, ապա դիտարկել այն մոտեցումը, որը հաստատվեց վերը քվարկված որոշ «նույնատիպ» ապրանքների դեպքում:

Մասնավորապես՝

$$p = \beta_1 q + \beta_2 p_{-1} + b \qquad \textbf{(8.1)}$$

[7] *Ներկայացված է տավարի և խոզի մսի կշիռների գումարը:*

Գնահատման արդյունքները

Աղյուսակ 11-ում ներկայացված են (8.1) հավասարման գնահատման արդյունքները: Կապը կարելի է որակել որպես ոչ ամբողջական, սակայն բավարար հուսալի, քանի որ փոփոխականների նշանակալիության աստիճանը բարձր չէ: Այնուամենայնիվ այս կապը, կարծում ենք, կիրառելի է կանխատեսումների համար:

Աղյուսակ 11

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ շեղում	T-վիճակագիր	Հավանականություն
p_{-1}	0.644411	0.162047	3.976693	0.0007
q	-0.001854	0.000839	-2.211177	0.0388
b	330.2302	133.6511	2.470837	0.0226
R^2	0.463358	F-վիճակագիր		8.634401
Ճշգրտված R^2	0.409694	Հավանականություն (F-վիճակագիր)		0.001981
Դարբին-Վաթսոնի ցուցանիշ	1.682561			

Ամփոփում

Հարցումների արդյունքներից ելնելով կարող ենք ասել, որ մսի գնագոյացումը կատարվում է մրցակցային պայմաններում: Իսկ վիճակագրական տեստը հաստատում է այն հիպոթեզը, ըստ որի՝ կարճաժամկետ հատվածում գները կախված են՝

- շուկայում տվյալ պահին առկա առաջարկի ծավալներից,
- նախորդ ժամանակաշրջանի գնից:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՆԵՐԻ ՎՐԱ

Հիպոթեզի նկարագրությունը

Գյուղատնտեսական մթերքների գների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հետազոտելով՝ հանգել ենք այն եզրակացության, որ մինչև 1998 թվականը և 1998 թվականից հետո դեպքերի զարգացման տրամաբանությունները տարբեր են:

Մինչև 1998 թվականը արծանագրված սղաճը մեկնաբանվում է ոչ որպես պահանջարկի աճի հետևանքով առաջարկի կողմից ռեսուրսների գների ճշգրտման արդյունք: Չնայած մինչև 1998 թվականը ամբողջական պահանջարկի աճ արծանագրվել է, այն ավելի շուտ հետհիպերինֆլյացիոն շուկայական համակարգում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերի հետևանք էր, երբ յուրաքանչյուր փոքր ցնցում ուղղակի սրում էր բացասական սպասումները՝ հանգեցնելով փոխարժեքի տատանումների, հետևաբար և՝ սղաճի:

1998 թվականից հետո մակրոտնտեսական միջավայրի կայունացումը հիմք հանդիսացավ տնտեսական գործընթացները պայմանավորող հիմնական, առանցքային գործոնների մի մասի դերի նշանակալի մեծացման: Մասնավորապես, հետաքրքրող ոլորտի առնչությամբ հանգեցինք այն եզրակացության, որ ցյուղի առաջարկում կառուցվածքային տեղաշարժերի բացակայության պայմաններում (խոսքը չի վերաբերում բնակլիմայական գործոնին) գների վարքագիծը հիմնականում պայմանավորվել է ցյուղի պահանջարկով:

Համաձայն կատարված վերլուծության՝ պահանջարկի վրա, 1998 թվականից սկսած, էական ազդեցություն են ունեցել հետևյալ մակրոտնտեսական գործոնները՝

- **արտաքին հատված**
  - էներգակիրների գները,
  - ՌԴ ֆինանսական ճգնաժամը,

- **հարկաբյուջետային քաղաքականություն**
  - անուղղակի հարկերի դրույքաչափերի փոփոխությունը,
  - հարկային վարչարարությունը,
  - բյուջետային գործընթացի թերացումները,

- **դրամավարկային քաղաքականություն**
  - փողի առաջարկի կառավարումը:

Այժմ փորձենք նշված գործոններին տալ քանակական տեսք և կառուցել գյուղատնտեսական արտադրանքի գնագոյացումն արտահայտող հավասարումների համակարգը:

էներգակիրների գները կարելի է դիտարկել բենզինի գների (p^p) օրինակով:

ՌԴ ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը կրել է շոկային բնույթ. այդ պատճառով այն անհրաժեշտ է դիտարկել որպես ձևական փոփոխական (dummy variable)՝ d_1:

Անուղղակի հարկերի դրույքաչափերի փոփոխությունը հանգեցրել է այդ սպառողական ապրանքների գների աճի, որն էլ իր հերթին՝ սպառողների բյուջետային հնարավորությունների սահմանափակման: Այս գործոնի ազդեցությունը որակվում է որպես որոշակի t ժամանակահատվածում միանգամյա ճշգրտող, և պետք է հանդես գա որպես ձևական փոփոխականի ($\beta_1 d_2 + \beta_2 d_2 * p^o$) տարատեսակ:

Վարչարարության ազդեցությունը նպատակահարմար է դիտարկել որպես փաստացի հավաքագրված անուղղակի հարկերի փոփոխություն, ինչը, այլ հավասար պայմաններում, նշանակում է սպառողների բյուջետային հնարավորությունների փաստացի փոփոխություն: Այդ իսկ պատճառով, վարչարարությունը արտահայտող *adm* փոփոխականը կարելի է դիտարկել որպես անուղղակի հարկեր - ՀՆԱ հարաբերակցություն:

«Բյուջետային գործընթացի թերացումներ» և «փողի առաջարկի կառավարում» հասկացությունները, ըստ էության, ընդհանուր գնահատական են, որոնք արտահայտում են պահանջարկի վրա հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ազդեցության բնույթը՝ զսպող, թե՝ խթանող: Այդ ազդեցությունը հարկաբյուջետային քաղաքականության դեպքում կարելի է բնութագրել բյուջեի պակասուրդ - ՀՆԱ հարաբերությամբ՝ *def*:

Ինչ վերաբերում է դրամավարկային քաղաքականությանը, ապա նպատակահարմար է դիտարկել դրամայնացման գործակիցը՝ m, որն իր հերթին արտահայտում է փողի զանգված - ՀՆԱ հաբերակցությունը:

Սակայն, համաձայն կատարված վերլուծության, դրամավարկային քաղաքականության ազդեցությունը առավելապես պատճառաբանվում է փողի առաջարկի կտրուկ տատանումներով, որոնք տեղ են գտել վերջին չորս տարիներին: Այդ իսկ պատճառով, որպես դրամավարկային քաղաքականության ազդեցությունը բնութագրող այլընտրանքային փոփոխական, կարելի է դիտարկել փողի առաջարկի տրենդից շեղումները՝ m^e:

$$\begin{cases} p = \alpha_1 q^D + \alpha_2 p^P + \alpha_3 d_1 + \alpha_4 d_2 + a_5 \left(d_2 * p^O\right) + \alpha_6 adm + \alpha_7 def + \alpha_8 m^6 \\ p = \beta_1 q^S + b \end{cases} \quad (9.1)$$

(9.1) հավասարումների համակարգը վիճակագրական տեստի միջոցով չի հաջողվել ստուգել, քանի որ վերը նկարագրվածը երկարաժամկետ հատվածի համար է, և դրա ստուգումը հնարավոր է միայն տարեկան երկար շարքերի առկայության դեպքում: Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հնարավոր չի եղել գնահատել նաև եռամսյակային շարքերի միջոցով: Այս հանգամանքը որոշակիորեն հիմնավորում է գյուղմթերքների գնագոյացման ապախոշորացված՝ ապրանք առ ապրանք վերլուծության նպատակահարմարությունը:

Ամփոփում

ՀՀ կենտրոնական բանկի մի շարք աշխատանքային փաստաթղթերում առաջարկվող հիպոթեզների գերակշիռ մասը հաստատվեց և՛ իրականացված վիճակագրական հարցումների, և՛ ԱՎԾ պաշտոնական տեղեկատվության հիման վրա կատարված վերլուծությունների արդյունքներով: Մասնավորապես հաստատվեց, որ.

- բացի խաղողից և կաթից, մյուս բոլոր գյուղմթերքների գնագոյացումը կատարվում է մրցակցային պայմաններում,
- այն ապրանքների գները, որոնց սպառումը հարաբերականորեն կայուն է, և որոնք շուկայում առկա են ամբողջ տարին, կախված են նախորդ եռամսյակի գներից և տվյալ ժամանակաշրջանի թողարկման ծավալներից,
- ցորենի և մրգի շուկայում կարևորվում են, համապատասխանաբար՝ միջազգային գները և սննդի ձեռնարկությունների կողմից ներքին թողարկման ծավալները,
- բանջարեղենի դեպքում առաջարկվող հիպոթեզը վիճակագրական տեստերի միջոցով չհաստատվեց. փոխարենը գնահատվեց գնի կախվածությունը թողարկման ծավալներից:

Գյուղմթերքների գնագոյացման վիճակագրական վերլուծությունների արդյունքները

Աղյուսակ 12

Ապրանքի ընդհանրական բնութագիրը	Գյուղմթերքի անվանումը	Գների տատանման գործակիցը[8]	Պայմանավորող փոփոխականներ					
			Ներմուծման փոխարժեքի տատանման նկատմամբ զգայունությունը	Կոմբայնի արտադրանքի տարեկան փոփոխությունը	Սպառողի սպառողական ծախսերի տատանումը	Գների կտրուկ փոփոխությունը[9]	Նախորդ եռամսյակի գները	Ընթացիկ եռամսյակի գները
Մրցակցային. համեմատաբար կայուն սպառմամբ	Ցորեն	211				#[11]		+[10]
	Կարտոֆիլ	441					#	+
	Միս	181					+	#
	Ձու	137					+	#
Մրցակցային. խիստ սեզոնայնություն	Բանջարեղեն	284						+
	Մրգեր	548	#		#			+
Ոչ մրցակցային	Խաղող	285		#				+
	Կաթ	51				#		+

Օգտվելով աղյուսակ 12-ից՝ եզրակացությունները փորձենք ամփոփել ինդուկցիոն տրամաբանությամբ.

- անկախ շուկայի կառուցվածքից՝ թողարկման ծավալները որոշիչ գործոն են.
- նախորդ ժամանակաշրջանի գինը կանորվում է այն դեպքում, երբ ապրանքի սպառումը համեմատաբար կայուն է, կամ շուկայում այդ մթերքն առկա է գրեթե ամբողջ տարի.
- ոչ մրցակցային շուկայում գնի վրա ազդող արտածին գործոնները միայն արտաքին հատվածից են.
- մրցակցային՝ խիստ սեզոնային շուկաների դեպքում արտածին գործոնները ներքին տնտեսության տարրերն են:

Հետազոտության արդյունքներով ևս մեկ անգամ հաստատվեց սեզոնայնություն գործոնի կարևորությունը կարճաժամկետ հատվածում՝ գյուղատնտեսական մթերքների վարքագծի առնչությամբ:

Մասնավորապես՝

- բոլոր ապրանքախմբերի գների տատանման գործակիցը զգալի բարձր է.
- ընդգծված սեզոնայնություն ունեցող մթերքների թողարկման ծավալների կարևորությունը բոլոր ապրանքախմբերում գնագոյացման համար:

Փաստորեն անկախ այն հանգամանքից, որ միկրոմակարդակում կատարված վերլուծությունները հիմք են տալիս որոշակի եզրակացություններ անել գյուղատնտեսական մթերքների գնագոյացման վերաբերյալ, գյուղմթերքների գների վարքագիծը կարճաժամկետ հատվածում (տարվա ընթացքում) էականորեն կախված է սեզոնայնության գործոնից: Եվ եթե աշխատանքի արդյունքները հնարավորություն են

[8] *Հաշվարկված է յուրաքանչյուր մթերքի գնի տատանման գործակիցը՝ ՀՆԱ դեֆլյատորի տատանման գործակցի համեմատ (%):*
[9] *Ցորենի դեպքում՝ համաշխարհային գները, կաթի դեպքում՝ կաթի փոշու գները:*
[10] *<+>Նշանակալիության աստիճանը բարձր է:*
[11] *<#>Նշանակալիության աստիճանը ցածր է:*

տալիս կանխատեսելու գների տարեկան վարքագիծը, ապա տարվա ընթացքում այն էապես կախված է մնում սեզոնայնության գործոնից:

Եթե ըստ ապրանքախմբերի կատարված միկրովերլուծությունը դրական արդյունքներ է տվել, ապա նույնը չենք կարող ասել գյուղատնտեսական մթերքների գների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման մասին (տե՛ս աղյուսակ 13): Սակայն վերը ներկայացված եզրակացությունները անուղղակիորեն հիմնավորում են նման արդյունքը և ընդգծում վերլուծության համար կիրառված ապախոշորացված մոտեցման նպատակահարմարությունը:

Աղյուսակ 13

Գյուղատնտեսական մթերքների գների և պայմանավորող փոփոխականների կապի աստիճանի բնութագրիչները

	Դետերմինացիայի գործակից՝ R^2	Հավանականություն (F-վիճակագիր)	Դարբին- Վաթսոնի ցուցանիշ	Գործակցի նշանը
Գյուղատնտեսության համախառն թողարկում	0.13	0.05	1.2	դրական
Անուղղակի հարկեր/ՀՆԱ	0.02	0.53	1.1	բացասական
Ֆինանսավորում/ՀՆԱ	0.005	0.7	1.2	բացասական
Դրամական զանգվածի շեղում/M2	0.03	0.5	1.1	դրական
Գյուղատնտեսության վարկավորում	0.06	0.2	1.1	դրական
Բենզինի գներ	0.002	0.8	1.2	բացասական

Հարկ ենք համարում նշել, որ թեև ըստ առաջարկված ոչ բոլոր հիպոթեզների է փոխարժեքը ենթադրվում որպես գնագոյացման գործոն, այնուամենայնիվ, դրա կարևորությունը ստուգվել է ըստ ապրանքախմբերի և արձանագրվել, որ փոխարժեքը՝ որպես պայմանավորող փոփոխական, էական դեր չի խաղում:

Հիպոթեզների հաստատումը, մոդելավորումը և գնահատումը՝ որպես այս աշխատանքի հիմնական արդյունք, կարևորվում է այնքանով, որ գործոնային մեկնաբանություն տալու և ՀՆԱ դեֆլյատորն ու ՍԳԻ կազմում գյուղմթերքների գները կանխատեսելու հնարավորություն է տալիս: Վերջինիս կշիռը ինդեքսներից յուրաքանչյուրում կազմում է 23%: Հիմնվելով վերը դիտարկված վիճակագրական տեստերի արդյունքների վրա՝ կարող ենք ասել, որ կանխատեսումները հնարավոր է կատարել բավականին փոքր սխալի հավանականությամբ:

Մասնավորապես նպատակահարմար է, գյուղատնտեսության թողարկման ծավալների վերաբերյալ հիմնավոր տեղեկատվության առկայության դեպքում, այս մեթոդի միջոցով կանխատեսել գյուղատնտեսական մթերքների եռամսյակային գները և օգտագործել կիսամյակի ֆինանսական ծրագրի ճշգրտման շրջանակներում: Այնուհետև, արդեն ունենալով ներկայացված հավասարումների առավել ճշգրտված տարբերակները, մեթոդը կիրառել դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակման շրջանակներում՝ ՀՆԱ դեֆլյատորի և ՍԳԻ կանխատեսման համար:

Կցանկանայինք նշել նաև իրականացված վիճակագրական հարցման նպատակահարմարության և կոնկրետ այս աշխատանքին դրա օժանդակության մասին: Կարծում ենք, վիճակագրական հարցումները և, ընդհանրապես, ՀՀ ԿԲ համար տեղեկատվության հավաքագրման ոչ ավանդական տարբերակները բավականին արդյունավետ կարող են լինել, մասնավորապես՝ դրանց համակարգային կիրառման դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

•

ՀՀ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

Երևան 10,
Վ. Սարգսյան փող. 6
http://www.CBA.am

•

Չափսը՝ 60 x 84 1/8:
17.67 պայմ. տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 120:

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2003

Կաթի իրացման գները նվազում են վերամշակող ձեռնարկությանը հանձնելիս, ինչը միանգամայն բնական է և դիտվում է բոլոր տնտեսությունների մոտ: Ընդհանուր առմամբ, գների տարբերությունները իրացման ուղղություններով տնտեսությունների մոտ այդքան էլ մեծ չէ, ինչը կրկին անգամ վկայում է այն մասին, որ կաթի գները ձևավորվում են ընդհանուր շուկայական միտումների հիման վրա: Նշենք, որ համաձայն հարցման արդյունքների, գների ձևավորման վրա հիմնականում ազդել են »Շուկայում առաջարկվող առավելագույն գին« և »Գնորդի կողմից առաջարկվող գին« սկզբունքները: Նշված սկզբունքների ազդեցությունը մեծ է բոլոր չափի տնտեսություններում, բացի միջին տնտեսություններից, որոնք առաջնորդվում են նաև »Մրցակցի կողմից թելադրվող գին« սկզբունքով:

Կաթի իրացման գինը վերանայվել է կաթի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների 18%-ի կողմից, որոնց 54%-ը կաթի իրացման գինը վերանայել է առավելագույնը երկու անգամ: Ընդ որում, վերանայման հիմնական պատճառներն են եղել սեզոնային առաջարկի և պահանջարկի տատանումները և մրցակցի գների փոփոխությունները:

Այսպիսով, ուսումնասիրելով հետազոտության մեջ ընդգրկված գյուղացիական տնտեսությունների պատասխանները, պարզվում է, որ Հայաստանի Հանրապետությունում գյուղմթերքների գնագոյացումը հիմնված է հիմնականում »Շուկայում առաջարկվող առավելագույն գին« և »Գնորդի կողմից առաջարկվող գին« սկզբունքների վրա: Այսինքն այս ոլորտում գործում է շուկայական գործոնների ազդեցության ներքո գնագոյացման ազդեցությունը, ընդ որում, գլխավոր դերն այստեղ պատկանում է պահանջարկի գործոնին: Անկախ արտադրության վրա կատարված ծախսերից, գյուղացիական տնտեսությունները ստիպված են համակերպվել շուկայի կողմից թելադրվող սկզբունքներին: Այստեղ նշենք, որ շուկայի կողմից թելադրվող սկզբունքներն էլ ավելի ծանր են նստում գյուղացիների վրա հատկապես բնակլիմայական պայմանների ազդեցության ներքո (ֆորս-մաժոր): Այսինքն Հայաստանում գյուղատնտեսությունում գնագոյացումը հիմնված չէ արտադրության վրա կատարված ծախսերի, հետևաբար և առաջարկի գործոնի վրա, ինչը դարձնում է այս ճյուղն ավելի ռիսկային և ոչ արդյունավետ:

Վերը նշվածից ելնելով՝ կարելի է պնդել, որ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար հույժ կարևոր է պետական խիստ միջամտություն և պետական պահպանողական քաղաքականություն՝ ռիսկերի նվազեցման և գնագոյացման կարգավորման նպատակով: